



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հրատարակչությունը, չհետապնդելով որևէ եկամուտ, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի համացանցային կայքերում ներկայացնում է իր հայագիտական հրատարակությունները: Գիրքը այլ համացանցային կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ հրատարակչության համապատասխան թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

ԱՓՅՈՒՌՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

Տ Ա Ր Ե Գ Ի Ր Ք

ԵՐԵՎԱՆ

ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

2012

ՀՏԳ 941 (479.25) : 323 : 06
ԳՄԴ 63.3 (2Հ) + 66.3
Ս 989

Յրատարակվում է ՀՀ սփյուռքի նախարարության աջակցությամբ

Յրատարակության է երաշխավորել Երևանի պետական համալսարանի բանասիրության ֆակուլտետի գիտական խորհուրդը

ԽՄԲԱԳՐԱԿԱԶՄ

Ավետիսյան Յուրի – *գլխավոր խմբագիր, բան. գիտ. դոկտոր*
Ավետիսյան Լևոն – *պատ. քարտուղար, բան. գիտ. թեկնածու*
Դանիելյան Սուրեն – *բան. գիտ. դոկտոր*
Էքմեթի Արտա – *հնագիտության դոկտոր (Բեյրութ)*
Հակոբյան Հրանուշ – *իրավաբ. գիտ. դոկտոր*
Հայտոսյան Փոլ – *աստվածաբանության դոկտոր (Բեյրութ)*
Հովհաննիսյան Պետրոս – *պատմ. գիտ. թեկնածու*
Մելքոնյան Աշոտ – *պատմ. գիտ. դոկտոր, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ*
Սիմոնյան Արամ – *պատմ. գիտ. դոկտոր, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ*
Տազեսյան Անդրանիկ – *քաղաք. գիտ. դոկտոր (Բեյրութ)*

Ս 989 Սփյուռքագիտություն (տեսության և պատմության հարցեր): Տարեգիրք. – Եր.: ԵՊՀ հրատ., 2012. – 298 էջ:

Տարեգրքում գետեղված են 2011 թ. Բեյրութում տեղի ունեցած «Հայաստանի Հանրապետություն-Սփյուռք գործակցություն. երեկ, այսօր և վաղը» գիտաժողովի նյութերը, ինչպես նաև մեկ տարվա ընթացքում սփյուռքի և մասնավորապես հայկական սփյուռքի վերաբերյալ գիտական որոշակի շրջանակներում կատարված ուսումնասիրությունների արդյունքները (տեսական հարցադրումներ և պատմության նյութեր):

Տարեգիրքը նախատեսված է մասնագետների և ընթերցող լայն շրջանակների համար:

ՀՏԳ 941 (479.25) : 323 : 06
ԳՄԴ 63.3 (2Հ) + 66.3

ISBN 978-5-8084-1689-5

© ԵՊՀ հրատարակչություն, 2012

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Հայրենիք-սփյուռք հարաբերությունների առաջընթացի, Հայաստան–Սփյուռք գործակցության ծավալման ու զարգացումների հիմքը փոխադարձ ճանաչողությունն է: Մշակութային, տնտեսական, հասարակական-քաղաքական և այլնայլ առնչությունները, փոխադարձ շփումներն ու փոխայցելությունները երիցս արդյունավետ են, երբ հիմնվում են իրական ճանաչողության վրա: Այս տեսակետից բացառիկ կարևորություն ունեն գիտական նստաշրջանները, մշտապես առկա կամ նոր ծագած խնդիրների վերաբերյալ քննարկումներն ու բանավեճերը, համատեղ ուսումնասիրություններն ու երկուստեք կուտակված փորձի փոխանակումները: Գիտական ճանաչողությունը անպայման երաշխիք է փոխընկալման ու արդյունավոր համագործակցության:

«Սփյուռքագիտություն. տեսության ու պատմության հարցեր» տարեգրքի հիմնարկումը ունի այս տրամաբանությունը: Տարեգիրքը նպատակ ունի ի մի բերելու մեկ տարվա ընթացքում սփյուռքի և մասնավորապես հայկական սփյուռքի վերաբերյալ որոշակի շրջանակներում ստեղծված գիտական արդյունքները (տեսական հարցադրումներ և պատմության նյութեր):

Նոր ժամանակներում երկուստեք և զգալիորեն փոխվեց նաև ճանաչողության չափը, հետևաբար նաև վերաբերմունքը միմյանց նկատմամբ: Հայրենիքը նոր տեսանկյունից և նոր խնդիրներով ներկայացավ Սփյուռքին, իր հերթին՝ Սփյուռքը Հայրենիքում ընկալվեց ու գնահատվեց նոր հայացքով և նոր ու իրական որակներով: Փոխընկալումների և փոխճանաչողության այս տեղաշարժերը թելադրեցին գործակցության արդիական և առավել համակարգված ձևեր ու եղանակներ:

Անկախության երկու տասնամյակներում, մանավանդ վերջին տարիներին՝ Սփյուռքի նախարարության ստեղծումից հետո, էա-

պես մեծացավ հայկական սփյուռքի նկատմամբ հասարակական, պետական և, իհարկե, նաև գիտական հետաքրքրությունը: Կազմակերպվեցին գիտաժողովներ, հրատարակվեցին ժողովածուներ, լույս ընծայվեցին ուսումնական ձեռնարկներ ու դասագրքեր, ստեղծվեցին գիտակրթական նոր կառույցներ:

2008-ին Երևանի պետական համալսարանում բացվեց Սփյուռքագիտության ամբիոն: ՀՀ սփյուռքի նախարարության և ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի աջակցությամբ ամբիոնը ձեռնարկում է այս տարեգրքի հրատարակությունը:

Տարեգրքի առաջին բաժնում զետեղված են ՀՀ անկախության 20-ամյակին և Հայկազյան համալսարանի 55-ամյակին նվիրված **«Հայաստանի Հանրապետություն-Սփյուռք գործակցություն. Երեկ, այսօր և վաղը»** գիտաժողովի նյութերը: Գիտաժողովը, որ կազմակերպել էին ՀՀ սփյուռքի նախարարությունը, Երևանի պետական համալսարանը և Բեյրութի Հայկազյան համալսարանը, տեղի ունեցավ 2011-ի սեպտեմբերին Բեյրութում: Գիտաժողովը իրենց ներկայությամբ և անմիջական մասնակցությամբ պատվեցին ՀՀ սփյուռքի նախարար **Հրանուշ Հակոբյանը**, Լիբանանում ՀՀ դեսպան **Աշոտ Քոչարյանը**, Հայկազյան համալսարանի տնօրեն **Փոլ Հայտոսյանը**, Երևանի պետական համալսարանի ռեկտոր **Արամ Սիմոնյանը**, Հայաստանի և արտերկրի պետական այրեր, գիտնականներ ու մտավորական գործիչներ: Նախապես ծրագրված զեկուցումներից բացի՝ եղան ելույթներ և բուռն քննարկումներ: Տարեգրքի այս համարում զետեղված են միայն զեկուցումները:

Երկրորդ բաժնում՝ **«Հողվածներ և ուսումնասիրություններ»** խորագրով, ամփոփված են ԵՊՀ-ում՝ սփյուռքի գրականության, պատմության ու տեսության հարցերով զբաղվող հեղինակների, մասնավորապես սփյուռքագիտության ամբիոնի աշխատակիցների և հայցորդների աշխատանքները:

Երրորդ բաժինը՝ **«Գրախոսություններ»**, ներկայացնում է արտերկրում և ՀՀ-ում լույս ընծայված հայագիտական հինգ հրատարակություններ, որոնք վերաբերում են հայ իրականությանը, մասնավորապես արևմտահայ և սփյուռքահայ կյանքի ամենաբազմազան կողմերին:

Տարեգիրքը հետագա հրատարակություններում նպատակ ունի ավելի հարստացնելու բովանդակությունը՝ ներառելով հայկական սփյուռքին և առհասարակ սփյուռքներին առնչվող բազմազան խնդիրներ, ընդլայնելու հեղինակային կազմը՝ իր էջերում տեղ տալով Հայաստանի ու արտերկրի բոլոր այն հեղինակներին, ովքեր ասելիք ունեն:

Խմբագրակազմը պատրաստ է շնորհակալությամբ ընդունելու տարեգրքի մասին արված բոլոր շահեկան դիտողություններն ու ցանկությունները:

Խմբագրակազմ

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ-ՍՓՅՈՒՌՔ ԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ. ԵՐԵԿ, ԱՅՍՕՐ ԵՎ ՎԱՂՆ

(ՀՀ անկախության 20-ամյակին և Հայկազյան
համալսարանի 55-ամյակին նվիրված գիտաժողովի կյուրթեր)

ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Ազնուափայլ Տիկ. Հրանուշ Յակոբեան,
Յարգարժան Րեկտոր Արամ Սիմոնեան,
Սիրելի ներկաներ

Հայկազեան Համալսարանի անունով՝ ողջոյն եւ բարի գալուստ
«Հայաստանի Հանրապետութիւն–Սփիւռք Գործակցութիւն» Գի-
տաժողովի բացման հանդիսութեան:

Այս միջոցառումով կը փակենք Հայկազեան Համալսարանի 55-
ամեակի գործունէութիւնները:

Այս գիտաժողովով՝ Հայկազեանն ու Երեւանի Պետական Համալ-
սարանը գործադրութեան կը դնեն գործակցութեան այն համա-
ձայնագիրը որ ստորագրուեցաւ Հոկտեմբեր 2009-ին: Իսկ
Սփիւռքի նախարարութեանը արդիւնաբեր եւ հարազատ գոր-
ծակցութիւնը կը հաստատէ թէ որքան մօտիկ ու հարազատ
կրնան ըլլալ Հայաստան - Սփյուռք կապերը:

Կ'ընդունինք միաժամանակ թէ մեր պատկերացուցածն շատ աւե-
լի լայն են գործակցութեան հնարաւորութիւնները եւ մեր ընդունա-
ծն շատ աւելի բարդ՝ առողջ փոխյարաբերութեան ծալքերը:

Ինչ ալ ըլլայ պարագան, այսօր մենք կը նշենք եւ կը տօնենք հի-
նաւուրց բայց երիտասարդ Հայաստանի Հանրապետութեան 20-
ամեակը, գոհունակութեամբ յիշելով նաեւ ազատ Արցախի 20-
ամեակը:

Այսօր իւրաքանչիւրս կրնայ ներկայացնել հաստատութիւն, հեղինակութիւն, կամ կառոյց՝ սակայն հիմնականը այն է թէ մենք կը ներկայանանք որպէս ողջ ժողովուրդ մը որ կ'ուզէ իր հայաստանեան ու սփիւռքեան ինքնութիւնը հաստատել ամուր մարդկային, հոգեմտաւոր, մշակութային, ընկերային ու քաղաքական բնագաւառներու մէջ:

Սփիւռքի պարծանքը Հայաստանով՝ պէտք ունի հետզհետէ ուճանալու, եւ փոխադարձաբար՝ Հայաստանի պարծանքը՝ Սփիւռքով:

Աստուած մեզի պարգեւած է այնպիսի ճոխ Սփիւռք, եւ այնպիսի ճոխ Հայաստան, որ մեզմէ ոչ ոքի արտօնուած է զանոնք նսեմացնել կամ անոնց սիրոյն եղած անանձնական նուիրումէն ետ կենալ: Աստուծոյ պարգեւները բազմաթիւ են, սակայն կարգ մը պարգեւներ հիւլէական ձեւով կը վերածուին նորանոր պարգեւներ ստեղծելու ակունքներու: Ազգը, եկեղեցին ու ընտանիքը այսպիսի պարգեւներու օրինակներ են: Իսկ մեզի կը մնայ ո՛չ միայն պահպանել, այլեւ՝ վայելել եւ ներկայանալ այլոց հայկական ստեղծագործ դիրքով եւ համաշխարհային մշակոյթները զարգացնելու միտումով:

Մեր մաղթանքն է որ Հայաստան-Սփիւռք գործակցութիւնը տարուէ տարի արմատաւորուի. Սփիւռքը մայր հայրենիքով կը սնանի, ու մայր հայրենիքը իր որդիներով՝ Սփիւռքով կը շարունակէ իր երթը դէպի նոր դարաշրջաններ:

Պիտի ուզեն շնորհակալութիւն յայտնել նախարար Յակոբեանին ու Ռեկտոր Սիմոնեանին, որոնք անձամբ զլխաւորեցին իրենց պատուիրակութիւնները:

Այժմ յայտարարութիւն մը:

Այսօր ուրախ եմ յայտարարելու որ երկար տարիներու երազն ու ծրագիրը կ'իրականանայ հաստատումովը Հայկազեան Համալսարանի «Հայկական Սփիւռքի Ուսումնասիրութեանց Կեդրոն»ին, որուն առաջնահերթ ուշադրութեան առարկան պիտի ըլլայ Միջին Արեւելեան Սփիւռքը: Եւ ուրախ եմ որ այս երազին հաւատացող եւ նեցուկ հանդիսացող առաջին անձը՝ բարերար Տիար Երջօ Սամուէլեանն է, որ յանձնառու եղաւ Կեդրոնին առաջին տասը տարիներու պիւտճէին հիմնական բաժինը հոգալու:

Մեր յոյսն է նաեւ որ ԵՊՀ-ի Սփիւռքագիտութեան բաժանմունքին բնական գործընկերներէն մին ըլլայ մեր նորաստեղծ Կեդրոնը:

Վերջապէս, շնորհակալութիւն նաեւ Փիւնիկ Յիմնադրամին, որու առատաձեռնութեան որպէս արդիւնք այսօրուան այս գիտաժողովին կազմակերպչական աշխատանքներն ու պատրաստութիւնները մեծապէս դիւրացան:

Բարի եկած էք՝ դարձեալ եւ դէպի վաղը, դէպի գիտաժողով ու Աստուծոյ շնորհքով հայկական ապագայ:

**Վեր. Դոկտ. ՓՕԼ ՅԱՅՏՕՍԹԵԱՆ
Նախագահ Հայկազեան Համալսարանի**

Գիտաժողովի հարգարժան մասնակիցներ,
Սիրելի ներկաներ

Ընդունեք իմ ողջույններն ու բարենաղթանքները «Չայաստանի
Չանրապետություն – Սփյուռք գործակցություն» գիտաժողովի
բացման կապակցությամբ:

Խորհրդային Միության փլուզումից և հայկական պետականու-
թյան կերտումից հետո հայագիտության լիարժեք զարգացումը
Չայաստան-Սփյուռք միասնության տեսանկյունից որակապես նոր
փուլ է թևակոխել: Այս գործընթացում իր յուրահատուկ նշանակու-
թյունն ունեցավ Արցախյան ազատամարտը, որի շնորհիվ հայու-
թյան ազգային ինքնագիտակցությունը թե՛ Սփյուռքում, թե՛ Չայրե-
նիքում բարձրացավ նոր աստիճանի: Արցախյան հաղթանակը,
Չայրենիքում պետականության կերտման գործընթացը Սփյուռքի
հայության ազգային կենսագործունեության համար նոր իրավի-
ճակ են ստեղծել:

Այս գործընթացների համատեքստում հայագիտության զարգաց-
ման համար նոր հնարավորություններ են բացվում:

Սփյուռքի և Չայրենիքի արդյունավետ փոխգործակցությունը
միասնական ջանքերով պետք է հանգեցնի ազգային նյութական
և հոգևոր արժեքների ճանաչմանն ու պահպանմանը, ազգային
բարոյական բարձր հատկանիշներով օժտված «հայ մարդու»
ձևավորմանը:

Չպետք է մոռանալ, որ հայ սփյուռքի կենսունակությունն ու հա-
րատնությունը հնարավոր է ապահովել Չայաստանի Չանրապե-
տության հետ նրա կապերի ամրապնդման շնորհիվ:

Ներկայումս օրվա հրամայական են դառնում հայկական քաղա-
քակրթության յուրահատկությունների՝ ազգային լեզվի, պատմու-
թյան, ինքնության, մշակութային արժեքների միջոցով թե՛ Սփյուռք-
քում, թե՛ Չայրենիքում ազգային, բարոյական մտածողությամբ
օժտված մատաղ սերնդի դաստիարակությունն ու կայացումը:
Ազգային արժեհամակարգի պահպանման, հայագիտության

զարգացման առումով մեր քայլերը պետք է լինեն հավասարակշիռ և համահունչ:

Մեր գործունեության մեջ պետք է առաջնորդվել այն գաղափարով, որ առանց Հայրենիքի՝ Սփյուռքը չի կարող հարատևել, ինչպես նաև առանց կայուն և զարգացած հայ համայնքների՝ ժամանակակից մարտահրավերների ծիրում չի կարող իր լիարժեք և կայուն կենսագործունեությունն իրականացնել Հայաստանի Հանրապետությունը:

Գիտաժողովի աշխատանքներին մաղթում են բեղմնավոր և արդյունավետ ընթացք՝ հույս հայտնելով, որ այն կունենա գիտագործնական կարևոր նշանակություն:

ԱՐԱՄ ՍԻՄՈՆՅԱՆ
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ԵՊՀ ռեկտոր

ՀՐԱՆՈՒՇ ՀԱԿՈՐՅԱՆ

ՀՀ-ՍՓՅՈՒՌ ԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Մենք վկան և մասնակիցն ենք աշխարհի գլոբալացման, երբ կենսագործունեության բոլոր ոլորտներում շարունակվում են ինտեգրման գործընթացները, աշխարհը դառնում է փոխկապակցված, արագ փոփոխվում է, դառնում մի ամբողջություն և, իհարկե, շատ արագ փոքրանում է: Մեծանում են կապերը, շփումները ընդլայնվում և տարածվում են: Ստեղծվում է տեղեկատվական մի նոր՝ վիրտուալ աշխարհ, որի առկայության պայմաններում յուրաքանչյուր պետություն վերածնակերպում է իր անելիքներն ու ասելիքները:

Գլոբալացվող աշխարհում նոր որակ, նոր դերակատարություն է ստանձնում Սփյուռքը, որ այսօր դարձել է միջազգային հարաբերությունների կարևորագույն տարր, իսկ սփյուռքագիտությունը հավակնում է իր ընդգծված տեղը գտնելու գիտությունների ներկայանակում:

Հին Հունաստանում **սփյուռք** բառը կիրառվել է նկարագրելու համար իշխող քաղաք-պետության բնակիչների տեղաշարժը, որի նպատակը կողոպուտի և ռազմական ճանապարհով նոր տարածքների նվաճելն էր, դրանք գաղութացնելն ու կայսրությանը ձուլելը¹:

Այսօր անհերքելի իրողություն է, որ սփյուռքները գոյանում են տարբեր պատճառներով՝ եղեռնի զոհ դառնալը, աշխատանքային, առևտրային ու մշակութային գործոնները և այլն²: Աշխարհաքաղաքական զարգացումների, գլոբալացման խորացող միտումների պայմաններում մի կողմից տեղի են ունենում սփյուռքների ուծացման, մյուս կողմից դրանց հզորացման, ինքնակազմակերպման բարդ ու բազմաշերտ գործընթացներ:

¹ Տե՛ս **Cohen R.**, *Diasporas and Nation-State: From victims to Challengers*, *International Affairs*, 1996, 72(3): p. 507-520:

² Տե՛ս **Cohen R.**, *Global Diasporas: An Introduction*, London: Routledge, 1997 (<http://www.diasporastudies.org/whatis.html>):

Սփյուռքը դառնում է սոցիալ-քաղաքական, տնտեսական գործոն, որը մշակութային, գաղափարական զգալի ազդեցություն է թողնում և՛ իր ժողովրդի ու պատմական հայրենիքի, և՛ իր բնակության երկրի ու նրա հասարակության վրա:

Այսօր մասնագիտական գրականության մեջ սփյուռքը ներկայացվում է բարդ, բազմաշերտ, բազմաձև մի երևույթ, և չկան միանշանակ սահմանումներ սփյուռքի մասին:

Մարդկային միևնույն էքնիկ խմբին պատկանող և իր հայրենիքից դուրս հաստատված ո՞ր հատվածն է կոչվում սփյուռք, որո՞նք են նրա առաջացման պատճառները, այն դրակա՞ն, թե՞ բացասական երևույթ է, ինչպիսի՞ն են նրա հեռանկարները, ապագան, կապը մայր հայրենիքի հետ, որո՞նք են նրա վերաբերական գործառույթները, ինչքանո՞վ է այն ինտեգրված ընդունող պետությունում և այլն, և այլն:

Այս և նման հարցերը դեռևս գիտական քննարկումների, ուսումնասիրությունների և ձևակերպումների կարիք ունեն: Սակայն հայկական սփյուռքի ծագումն ու գոյությունն ակնհայտ են:

Մենք պետք է գիտական լուրջ վերլուծության ենթարկենք Հայաստան-Սփյուռք հարաբերությունների տարբեր կողմերը, անցյալը, կենտրոնամանք ներկա գործընթացների վրա և փորձենք ապագայի համար կանխատեսումներ անել:

Խնդրո առարկայի շուրջ հաղորդումները կարելի է բաժանել 3 մասի.

1. Հայաստան-Սփյուռք հարաբերությունների զարգացման փուլերը,
2. 2008-2011 թթ. Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման քաղաքականությունը,
3. Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման հեռանկարները:

1) ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓՅՈՒՔ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԱՐԳԱՅԱԼ ՓՈՒԼԵՐԸ

Ուսումնասիրելով հայկական սփյուռքի պատմությունը՝ այն կարելի է բաժանել հետևյալ ժամանակաշրջանների կամ փուլերի.

1. Մինչև 1895 թ. - Հայկական գաղթաշխարհը ձևավորվել է դեռևս անտիկ աշխարհում. հայ վաճառականների, առևտրականների տեղաշարժերը Եվրոպա, Ասիա և նրանց ազդեցությունը եվրոպական կապիտալի տարածման և արդյունաբերական հեղափոխության վրա: Այն աշխարհի տարբեր երկրներում կերտել է հարուստ պատմամշակութային ժառանգություն՝ հարստացնելով և՛ հայ մշակույթի գանձարանը, և՛ բնակության երկրների մշակույթն ու տնտեսությունը:

2. 1895-1923 թթ. - Երբ Օսմանական կայսրության կողմից սկսվեցին հայկական ջարդերը, տեղահանումները, սակայն հայկական սփյուռքը հիմնականում զոհի կարգավիճակով ձևավորվեց 20-րդ դարի սկզբում մարդկության դեմ նյութված աննախադեպ ոճրագործության՝ 1915 թ. Հայոց ցեղասպանության հետևանքով: Ջոհվեց 1.5 մլն մարդ, 100-հազարավորները տեղահանվեցին և աշխարհասփյուռ դարձան: Ոչնչացվեց, հայրենագրկվեց մի ողջ ժողովուրդ, կորցրեց իր հողը, ունեցվածքը, մշակույթը, կրոնը, լեզուն, կենսակերպը, և նրա իրավունքներն ու շահերը մինչև այսօր չեն վերականգնված:

Այսօր աշխարհի 100-ից ավելի երկրներում ունենք համայնքներ, 30 հազարից ավելի հայկական կառույցներ:

Սփյուռքի հիմնական ձևավորմանը զուգընթաց՝ կազմավորվեց նաև Առաջին հանրապետությունը (1918-1920 թթ.), և գոյատևման պայքարը հաղթահարող Սփյուռքը օգնության ձեռք մեկնեց նորաստեղծ պետությանը: Հայ օգնության կոմիտեն Հովհաննես Թումանյանի գլխավորությամբ Սփյուռքում հանգանակություններ էր հավաքում և փորձում աջակցել հիվանդության ու սովի ճիրաններում տառապող հայ որբերին, մանուկներին ու ծերերին:

Մոտ 10 տարի Հայկական բարեգործական ընդհանուր միությունը իր որոշակի ներդրումն ունեցավ Երևանի համալսարանի, տպարանի, հիվանդանոցի, Նուբարաշենի կառուցման գործում, ապա ստալինյան մամլիչը արգելեց Սփյուռքի օգնությունը Հայաստանին, և Հայաստան-Սփյուռք ծլարձակող առաջին հարաբերությունները, Սփյուռքի կապը հայրենիքի հետ գնալով մարեցին:

3. 1923-1948 թթ. - Հայերը, ցեղասպանությունից հետո հաստատվելով Մերձավոր Արևելքում, սկսեցին տեղափոխվել Արևմուտք:

Խորհրդային պետությունը Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո փոխեց իր քաղաքականությունը և 1946-48 թթ. կազմակերպեց հայերի հայրենադարձություն, որի արդյունքում փոխվեց Սփյուռքի կառուցվածքը. այն քանակական և որակական փոփոխություններ կրեց:

Հայրենադարձները մեծ ներդրում ունեցան Հայաստանի տնտեսական, սոցիալական, մշակութային կյանքում: Այս և հետագա տարիների հայրենադարձությունը ոչ միայն փոխեց Հայաստանի ժողովրդագրական պատկերը, այլև նոսրացան Միջին Արևելքի, Հունաստանի, Ֆրանսիայի հայկական համայնքները:

Թեև հայրենիք վերադառնալու մասին սփյուռքահայերի որոշումների կայացման ամենազխավոր մղիչ ուժը եղել և մնում են ազգային ինքնությունը, մայրենի լեզվով կրթությունը, ուժացումից խուսափելը և, իհարկե, հայրենաշինությանը փաստացի մասնակցելու ձգտումը, այնուամենայնիվ Հայաստանը սփյուռքահայի համար գրավիչ դարձնելը նույնիսկ այսօր մնում է հայոց պետության գերխնդիրը:

Պատերազմից քայքայված, աղետալի վիճակում գտնվող Խորհրդային Հայաստանը պատրաստ չէր ընդունելու այդչափ մեծ թվով հայրենադարձների: Ու թեև այս անգամ խեղճ ու սովահար գաղթականների փոխարեն հայրենիք էին գալիս Արևելքի ու Արևմուտքի երկրների մեծ ու փոքր քաղաքների բնակիչները, իրենց բնակության երկրներում կայացած մասնագետներ՝ արհեստավորներ, առևտրականներ, բժիշկներ ու գիտնականներ, սակայն նրանց սպասում էին օտարվածության, անվստահության ծանր մթնոլորտ, ոգևորություններ ու հիասթափություններ:

Անհերքելի է այն մեծ ավանդը, որ հայրենադարձները հայաստանաբնակների հետ ներդրեցին հայրենիքի վերաշինության գործում: Արդյունքում հետամնաց Խորհրդային Հայաստանը ագրարային հանրապետությունից վերաճեց զարգացած արդյունաբերություն, մեքենայացված գյուղատնտեսություն, ծաղկող մշակույթ ու կրթություն, առաջընթաց ապրող գիտություն ու առողջապահություն ունեցող երկրի:

4. 1948-1991 թթ. - Հայաստան-Սփյուռք գործակցության այս փուլում ծնվեցին ու բարգավաճեցին նոր քաղաքներ ու ավաններ, ո-

րոնք կոչվեցին հայրենադարձների ծննդավայրերի անուններով՝ Նոր Մալաթիա ու Նոր Սեբաստիա, Նոր Արաբկիր ու Նոր Ջեյթուն, Նոր Կիլիկիա ու Նոր Արեշ, Նոր Հաճն և այլն:

Հայաստան-Սփյուռք զարգացման չորրորդ փուլի էական հատկանիշը 1964 թ. Սփյուռքահայության հետ մշակութային կապերի կոմիտեի ստեղծումն էր, ինչի շնորհիվ Հայրենիք-Սփյուռք կապերը, հարաբերությունները համակարգվեցին: Կոմիտեն ձևով հասարակական, սակայն բովանդակությամբ պետական կառույց էր, որը փորձում էր հայկական սփյուռքի միջոցով խորհրդային գաղափարախոսությունը տարածել այլ երկրներ: Այս կառույցը կարևոր օղակ էր Սփյուռքի հետ հարաբերությունների զարգացման համար, որը նպաստում էր հայապահպանությանը, հայրենիքի հետ կամուրջներ և կապեր էր հաստատում:

Մասնագետների պատրաստումը և ուսուցիչների վերապատրաստումը հայրենիքում, մշակութային հանույթների այցերը գաղթօջախներ, գրքերի ու մամուլի առաքումը, Հայաստանի հասարակական, մշակութային, գիտության գործիչների այցելությունների կազմակերպումը ոգևորում, համախմբում էին Սփյուռքի մեր հայրենակիցներին, սերտացնում հարաբերությունները Հայրենիքի և Սփյուռքի միջև:

5. 1991-2008 թթ. – Հայաստանի անկախացումից հետո սկսվեց Սփյուռքի հետ հարաբերությունների զարգացման նոր շրջափուլ: Անկախությունը մեծ ոգևորություն առաջացրեց հայկական սփյուռքում: Փակ սահմանների պայմաններում տարեկան միայն տասնյակ երջանիկներ էին կարողանում այցելել հայրենիք: Անկախության առաջին բերկրանքներից էր այն, որ յուրաքանչյուր հայ առանց դժվարության ցանկության դեպքում տարին քանի անգամ ուզենար, կարող էր այցելել Հայաստան:

Ցավոք, 1990-ական թվականներից սկսվեց արտագաղթ Հայաստանից, որն ուներ և՛ օբյեկտիվ, և՛ սուբյեկտիվ պատճառներ: Երկաթյա վարագույրի բացումը, Սպիտակի երկրաշարժը, Ղարաբաղյան պատերազմը, Ադրբեջանից բռնագաղթվածները, էներգետիկ ճգնաժամը պարարտ հող դարձան ժողովրդագրական տեղաշարժերի:

Հայաստանից հեռացան հիմնականում այն մարդիկ, որոնք՝

- ա. հայրենադարձվել էին տարբեր ժամանակաշրջաններում և չէին հարմարվել խորհրդային վարչակարգին,
- բ. Ադրբեջանից բռնագաղթվածներ էին, փախստականներ,
- գ. չէին հարմարվել տնտեսական և պատերազմական դժվարություններին,
- դ. Արևմուտքում պահանջված մասնագետներ էին, որոնք եական և որակյալ աշխատուժ էին ընդունող երկրի համար:

Սփյուռքը, որը շուրջ 70 տարի իր համար ստեղծել էր երազների, իդեալների Հայաստան, հնարավորություն ունեցավ գալու հայրենիք, սակայն բախվեց մերկ իրականությանը, որը նրա համար ցնցող էր: Հայաստանյան իրականությունը 90-ական թվականներին դառն էր ու դժվարին, փուլ էին եկել երկրի պետական, քաղաքական համակարգերը, չկար բիզնես ներդրումների համար որևէ միջավայր՝ շուկայական տնտեսությանը համահունչ օրենքներ, բանկային, հարկային, մաքսային համակարգեր: Երկիրը թաղված էր տնտեսական, էներգետիկ խոր ճգնաժամի մեջ: Տարածքի 40%-ը Սպիտակի ահավոր երկրաշարժից հետո փուլ էր եկել, մեկ միլիոն մարդ մնացել էր անտուն և ունեզուրկ: Ադրբեջանից 400 հազարից ավելի փախստականներ, Սոււմգայիթի և Բաքվի ցեղասպանությունից ահաբեկված, հասել էին Հայաստան, որն ի վիճակի չէր ամբողջությամբ լուծելու նրանց հիմնախնդիրները: Մյուս կողմում էլ վտանգված էր Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը՝ գտնվելով պարտադրված պատերազմի մեջ: Այս դրամատիկ իրավիճակում Սփյուռքը բռունցքվեց, Սփյուռքը միավորվեց, և հայրենիքին օգնությունը չուշացավ:

Ցավը ցնցեց շատ շատերին, իրենց ինքնությունից, արմատից հեռացած շատ հայորդիներ արյան կանչով սկսեցին օգնել Հայաստանին:

Առաջին գործող մեխանիզմը, որը ստեղծվեց և հաջողությամբ շարունակվում է մինչ օրս, «**Հայաստան» համահայկական հիմնադրամն** է, որի խողովակներով միլիոնավոր դոլարներ հասել են Արցախ, Հայաստան ու նպաստել հայրենաշինության կարևոր գործին:

Նոր կառուցակարգ էր և մեծ ոգևորություն առաջացրեց **3 տարին մեկ անգամ Հայրենիքում համահայկական խաղերի կազմակերպումը**, որն այս տարի և՛ իր ծավալներով, և՛ մասնակիցների քանակով ռեկորդային էր: Գործակցության զարգացմանը նպաստեց մշակութային փառատոնի պարբերաբար անցկացումը: Շարունակվեցին ուսուցիչների պատրաստման, վերապատրաստման աշխատանքները, դասագրքերի, ուսումնական ձեռնարկների տպագրումը և առաքումը Սփյուռք և այլն:

Այս աշխատանքի ձևերը, մեթոդները, միջոցներն առավել են համախմբում Սփյուռքը, կապում հայրենիքի հետ: Ավանդական դարձան Հայաստան-Սփյուռք խորհրդատվությունները (1999, 2002, 2006), բիզնես ֆորումները և այլն:

Պետական մակարդակով կառուցվածքային նոր ձև տրվեց Հայաստան-Սփյուռք զարգացմանը: 1998 թվականին Արտաքին գործերի նախարարությունում ձևավորվեց **Սփյուռքի հետ կապերի գործադիր քարտուղարություն**, այնուհետև՝ գործակալություն, 2008 թվականի ապրիլից սկսեց գործել **Սփյուռքի հետ կապերի պետական կոմիտեն**:

Հայաստանը Սփյուռքի անմիջական օգնությամբ կարողացավ հաղթահարել դժվարությունները և առաջ ընթանալ:

Վիճակը գնալով կայունացավ, Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը սկսեց իր անկախ երկրի կառուցումը: Հայ քաջարի մարտիկները արդարության և ազատության համար մղվող պատերազմում հաղթանակ տարան, քայլ առ քայլ ձևավորվեցին ժողովրդավարական, քաղաքացիական ինստիտուտներ, երկիրը որդեգրեց միջազգային նորմերով առաջ ընթանալու ճանապարհը: Այսօր հպարտ ենք մեր 20-ամյա ազատ ու անկախ երկու պետությունների գոյությամբ, և այս ձեռքբերումները պետք է վերագրել նաև սփյուռքահայերին: Սփյուռքը դարձել է հավերժ ներկայություն Հայաստանում:

6. Հայաստան-Սփյուռք գործակցության նոր փուլ սկսվեց ՀՀ սփյուռքի նախարարության ստեղծումով, և քաղաքական լուրջ տեղաշարժեր գրանցվեցին:

**2) 2008-2011 թթ. – ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓՅՈՒՌՔ ԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ
ՉԱՐԳԱՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

Հայաստան-Սփյուռք հարաբերությունների զարգացման նոր, բեկունճային փուլ արձանագրվեց՝ 2008 թ. սկսած: Հանրապետության 3-րդ նախագահի քաղաքական ծրագրերի կարևոր մասը կազմեց հայկական սփյուռքի հետ աշխատանքների ակտիվացումը: Նախագահը երդման արարողության ժամանակ (2008 թ. ապրիլի 9) հայտարարեց. «Կառուցելու ենք այն Հայաստանը, որը կմիավորի համայն հայությանը, այնպիսի Հայաստան, որը կլինի բոլոր հայերի հայրենիքը: Կառուցելու ենք այն Հայաստանը, որտեղ կտիրի փոխադարձ հարգանքի, սիրո և հանդուրժողականության մթնոլորտ: Ես համագործակցության եզրեր եմ փնտրելու բոլոր քաղաքական ուժերի հետ: Իմ ջանքերն ուղղված են լինելու համազգային նպատակների իրագործմանը, սերունդների միջև կապն առավել ամրապնդելուն, տարբեր սոցիալական խմբերի շահերը համատեղելուն, ազգային փոքրամասնությունների ու հայապահպանության խնդիրներին»³:

Այս դրույթը քայլ առ քայլ դարձավ օրենք, որոշում, ծրագիր և այսօր քաղաքական հստակ ձևակերպում է ստացել Հայաստան-Սփյուռք գործակցությանը վերաբերող պետական քաղաքականության մեջ:

Սփյուռքը ճանաչելով է հնարավոր ճիշտ քաղաքականություն մշակել և իրականացնել:

Եթե փորձենք բնութագրել Սփյուռքը, ապա.

- Սփյուռքը պատմական հայրենիքից և Հայաստանից դուրս ապրող մարդիկ և նրանց սերունդներն են,
- այն զոյացել է հիմնականում ողբերգության, տեղահանությունների արդյունքում, ցեղասպանության հետևանքով,
- հայ ինքնության, հայ արմատի, իր պատմությանը, իր անցյալի մասին հավաքական հիշողության պահպանում, պատմական հայրենիքի նկատմամբ նվիրվածություն,
- ձգտումը պահպանել լեզուն, մշակույթը, պատմամշակութային ժառանգությունը,

³ www.president.am

- հայ ընտանիքում հայկական ավանդույթների, սովորույթների, կենցաղավարության պահպանում և զարգացում,
- հայ եկեղեցու, հավատքի նվիրվածություն և եկեղեցական ցանցի գոյություն,
- հայկական ավանդական կուսակցությունների դերակատարությունը Սփյուռքում, որոնք էական գործունեություն են ծավալում հայապահպանության, հայոց իրավունքների վերականգնման գործում,
- տարբեր մշակույթների, վարչակարգերի ազդեցության և համերաշխության, հուզական կապի առկայություն ոչ միայն Մայր հայրենիքի, այլև ուրիշ երկրներում հաստատված հայկական համայնքների, կառույցների միջև,
- հայկական ցանցերի, ընկերակցությունների ստեղծում, ընդլայնում տասնյակ երկրներում:
- Հայկական սփյուռքը համաշխարհային բավականին բարդ, բազմաբնույթ մի տարածք է, մի իրողություն, որի առջև համայնքային և համազգային բազում մարտահրավերներ են ծառայել.
- ազգային ինքնագիտակցության թուլացում, հեռացում ազգային կյանքից,
- հայոց լեզվի իմացության նահանջ, արևմտահայերենի ուսուցման հիմնախնդիրների ավելացում,
- Սփյուռքի ազգային հաստատությունների գործունեության վերակառուցման դանդաղում Հայաստանի անկախացումից հետո,
- ուժացման գործընթացի ավելացում, խառնամուսնությունների թվի աճ,
- հայկական կրթական հաստատությունների, կիրակնօրյա և ամենօրյա դպրոցների թվի նվազում,
- հայկական դպրոցներում աշակերտների թվի նվազում,
- նոր ձևավորված համայնքների ինքնակազմակերպման դժվարություններ,
- ավանդական և նոր Սփյուռքի միջև տարածայնությունների գոյություն,

- առկա կարծրատիպերի ոչ արագ հաղթահարում,
- միմյանց չվստահելու բարդույթ,
- համայնքային կյանքում չընդգրկված մեծ թվով սփյուռքահայեր,
- ազգային ինքնագիտակցության և պատմական հայրենիք ունենալու գաղափարի թուլացում:

Այդ մարտահրավերներից շատերը բնորոշ են նաև այլ սփյուռքների: Հիմք ընդունելով ներկա իրողությունները՝ Հայաստանը, Սփյուռքի կառույցների, կազմակերպությունների հետ գործակցելով, մշակում է պետական քաղաքականության սկզբունքները, որոնցից կարելի է առանձնացնել՝

1. ՀՀ սփյուռքի նախարարության ստեղծումը (2008 թ.-ի հոկտեմբերի 1-ից)՝ որպես պետական գործիք Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման քաղաքականությունն ամբողջական և արդյունավետ դարձնելու, կատարելագործելու, պետական մարմինների գործունեությունը Սփյուռքի հետ աշխատանքներում համակարգելու, Հայաստանի և Սփյուռքի հետ կապերը ամրապնդելու և զարգացնելու, Սփյուռքի ներուժի հայտնաբերման նպատակով:

ՀՀ սփյուռքի նախարարությունը պետական քաղաքականությունը դարձրեց համակարգված, նպատակային և հրապարակային, Հայրենիք-Սփյուռք հարաբերությունները տեղափոխվեցին նոր հարթություն: Նախարարությունը՝ որպես պետական կառավարման գործիք, կոչված է ուսումնասիրելու Սփյուռքը, Սփյուռք-Հայաստան հարաբերությունները, վեր հանելու գլխավորը, օրինաչափը և դրանց՝ օրենքների, կառավարական որոշումների ուժ տալու, մշակելու համահայկական ծրագրեր, ձեռնարկներ, սփյուռքյան կառույցների հետ փորձելու իրականացնել դրանք:

2. Հայաստանը հռչակվեց բոլոր հայերի հայրենիքը:

Հայաստանը, չնայած իր փոքր տարածքին, պատկանում է 10 մլն-ից ավելի աշխարհասփյուռ հայությանը: Եվ դա նշանակում է, որ յուրաքանչյուր ոք ունի և՛ իրավունքներ, և՛ պարտականություններ իր հայրենիքի նկատմամբ: Հայրենիքի և՛ նվաճումներն են բոլորինը, և՛ դժվարությունները: «Հայրենիքը չես սիրում նրա համար, որ լավն է, Հայրենիքը սիրում ես նրա համար, որ քոնն է»:

3. Հայ է այն անձը, որ իրեն հայ է զգում:

Կան շատ տեսակետներ, կարծիքներ, մոտեցումներ, թե ով է հայը: Շատ կարևոր են հատկապես մայրենիի իմացությունը, քրիստոնեական հավատքը, քաղաքացիությունը, սակայն այսօր պետական քաղաքականությունը հանգում է այն բանին, որ եթե մարդն իրեն հայ է զգում՝ անկախ լեզվի իմացությունից, կրոնից, դավանանքից, սոցիալական ծագումից, ապրելու վայրից, ուրեմն նրա համար հայի և հայրենիքի դռները բաց պետք է լինեն:

Անհրաժեշտ է մշակել ծրագրեր մարդկանց հետ աշխատանքներ կազմակերպելու, հայրենիքի հետ կապերը ամրապնդելու համար: Գործակցության կարևոր սկզբունք պետք է լինեն այլալեզու և այլակրոն հայերի շրջանում ազգային ինքնության արթնացումը ու դրա արմատավորմանը նպաստելը:

4. Աջակցել հայ մարդու ինտեգրմանը այն հասարակությանը, որտեղ նա ապրում է:

Հայաստան պետությունը ողջունում, խրախուսում և հորդորում է հայրենիքից դուրս ապրող բոլոր հայերին դառնալ այն երկրի օրինապաշտ և օրինակելի քաղաքացիներ, որտեղ ապրում են, բարձրանալ այդ երկրի քաղաքական, տնտեսական, մշակութային սանդղղներով, մրցունակ և պահանջված լինել, սակայն շարունակեն հայ մնալ՝ հավատարիմ իրենց ինքնությանը, արմատին: Ինտեգրումը տվյալ հասարակությանն արգելք չէ հայապահպանության համար:

5. Սփյուռքահայը հայրենիքում պետք է շահ ստանա, դրան վաստակի:

Հայաստանի անկախության ողջ ժամանակահատվածում բարեգործական ծրագրերը, Սփյուռքից եկող օգնությունը թեթևացրին էներգետիկ ճգնաժամը, օգնեցին աղքատության կրճատմանը, ուղարկվող գումարների միջոցով էական օգնություն բերեցին հայ ընտանիքներին: Վերջին շրջանում Հայաստանը սփյուռքահայերին առաջարկում է մասնակցել զարգացման ծրագրերին: Հայաստանի նախագահը հայտարարեց, որ եկեք ջարդենք այն կարծրատիպը, թե հայրենիքին միայն օգնություն է պետք. սփյուռքահայը պետք է ներդրում անի Հայաստանի Հանրապետությունում և շահ ստանա, եկամուտ ստանա: Սփյուռքահայի շահը նաև հայաստանցիների շահն է:

Աշխատատեղերի ստեղծումը, ներդրումների ավելացումը կրճատում են գործազուրկների թիվը, համապատասխանաբար նվազում են և՛ աղքատությունը, և՛ արտագաղթը: Աշխատանք ունեցող, իր ընտանիքի հոգսերը լուծող մարդը շատ դժվարությամբ կարող է բռնել գաղթի ճամփան: Հայաստանը դիմում է սփյուռքահայերին և հորդորում. «Եկե՛ք Հայաստան, ներդրում արեք, եկամուտ ստացեք»:

6. Սփյուռքի հետ գործակցությունը իրականացնել ըստ տարածաշրջանների:

Հայաստան-Սփյուռք գործակցության քաղաքական հիմնավորումներից է տարածաշրջանային ռազմավարական ծրագրերի մշակումը՝ հաշվի առնելով դրանց առանձնահատկությունները: Սփյուռքը բազմադեմ է, բազմաշերտ, բազմալեզու, բազմակարծիք և բազմակարիք: Հնարավոր չէ այն դիտարկել որպես մի ամբողջություն: Այս ամենը հաշվի առնելով է, որ մշակվում են ծրագրեր ըստ տարածաշրջանների:

7. Երկքաղաքացիության ինստիտուտի ներդրում, օրենսդրության կատարելագործում:

Սփյուռքահայերի պահանջով և առաջարկությամբ 2005 թ. փոփոխություն կատարվեց ՀՀ Սահմանադրության մեջ, և հանվեց երկքաղաքացիության արգելքը: Արդյունքում, եթե մինչև 2008 թ. քաղաքացիություն է ձեռք բերել 1735 սփյուռքահայ, ապա այժմ՝ մոտ 10000-ը:

Նման խոշոր Սփյուռք ունեցող պետությունը պարտավոր է պայմաններ ստեղծել, որ ցանկություն ունեցողները դառնան Հայաստանի Հանրապետության քաղաքացի, իրավական կապ ունենան պետության հետ և իրենց զգան հայրենիքի իրական տերերը:

Քաղաքականության էական բաղադրիչ են Հայաստան-Սփյուռք գործակցության առանձին խնդիրների օրենսդրական կարգավորումը, կատարելագործումը, ընթացակարգերի, կառուցակարգերի ներդրումը, ծրագրերի մշակումը և իրականացումը:

«Օտարերկրացիների մասին», «Բնակչության պետական ռեգիստրի մասին», «Սահմանված կարգի խախտմամբ պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների մասին» և

ՀՀ այլ օրենքների ընդունմամբ սփյուռքահայերի իրավունքները ավելացել են, իսկ ընթացակարգերը՝ պարզեցվել:

8. Սփյուռքի հետ աշխատանքը կազմակերպել «ճանաչել, վստահել և գործակցել» սկզբունքով:

Աշխարհասփյուռ հայության առջև ծառայած մարտահրավերները պահանջում են նոր որակ, ձև և բովանդակություն հաղորդել Սփյուռքի հետ տարվող աշխատանքներին՝ հենվելով մարդկային, մշակութային և սոցիալական կապիտալի, մրցունակության կռվանների վրա:

Պետական քաղաքականության կարևոր անկյունաքարերից է Սփյուռքի հետ ճիշտ աշխատանքի կազմակերպումը: Սփյուռքի հետ հրամանների, հանձնարարությունների կամ պահանջների լեզվով խոսելն անընդունելի է: Ցանկացած սփյուռքահայ, կառույց կամ կազմակերպություն կարող է չհամագործակցել, չաշխատել հայրենիքի հետ, եթե ղեկավարելու կամ կառավարելու միտում զգա Հայաստանից, մանավանդ որ այդ աշխատանքը արվում է կամավոր, հայրենասիրությունից դրդված:

Տարիների աշխատանքային փորձը հանգեցրել է այն համոզման, որ հարաբերությունները կառուցելիս լավագույն արդյունք կարելի է գրանցել, եթե **միմյանց լավ են ճանաչում**: Շփումները, երկխոսությունը, բանավեճերը, փոխադարձ այցելությունները ընդլայնում են ճանաչողության սահմանները, լուծում են շատ բարդույթներ՝ հոգեբանական, սոցիալական, մշակութային և այլն: Ճանաչումը շատ մեծ լիցք ունի իր մեջ, քանի որ լավ ճանաչելը, միմյանց մասին տեղեկացված լինելը հանգեցնում են վստահության ավելացման:

Վստահությունն է այն բանալին, այն զենքը, որը ստեղծում է գործակցության հնարավորություն: Միայն գործակցությամբ է հնարավոր հարստացնել Հայաստանն ու Սփյուռքը, զորացնել միմյանց: Ուժեղացնել և զորացնել հայրենիքը, նվիրվել հայրենիքի զարգացմանը, նրա առաջընթացը համարել համայն հայության պարտքն ու պատասխանատվությունը հնարավոր են միայն վստահության ու գործակցության պայմաններում: Հետևաբար բանաձևը, որով պետական քաղաքականությունը առաջ է ընթանում Սփյուռքի հետ

հարաբերություններ կառուցելիս, հետևյալն է՝ «ճանաչել, վստահել, գործակցել» հավասար գործընկերային պայմաններում: Սիսայն երեք սկզբունքները, որոնք ներկայացնում են Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման ողջ հեռանկարը:

Այսօր Հայաստան-Սփյուռք հարաբերությունները թևակոխել են որակական նոր փուլ: Այդ գործակցությունը չի կարող զարգանալ, եթե չլինեն փոխընթացում, գործունեության թափանցիկություն, փոխադարձություն, երկխոսություն, խտրականության բացառում, մարդասիրություն, ազգասիրություն, հայրենասիրություն և այլ մոտեցումներ: Հարկ է հաստատականորեն արձանագրել, որ նախկինում առկա կարծրատիպերին քայլ առ քայլ փոխարինում են հավասար գործընկերային հարաբերությունները:

9. Պայքարը Սփյուռքի ուժացման դեմ, հայապահպանման և հայ համայնքների զարգացման համար բարենպաստ միջավայրի ստեղծում:

Սփյուռքը իր գոյության առաջին օրերից նվիրվել է հայապահպանության, ազգային նկարագրի, ինքնության, մայրենի լեզվի, մեր ավանդույթների, սովորույթների, մշակույթի, հավատքի, հոգևոր արժեքների պահպանման և փոխանցման շարունակական ապահովման ամենօրյա աշխատանքին:

Համաշխարհայնացման, ազատականացման, տարբեր մշակույթների ու քաղաքակրթությունների պայմաններում հայկականության, հայ արմատի պահպանումը, հայ ինքնության կերտումը, ինքնագիտակցության խորացումն ու ապահովումն ամենօրյա մաքառումներ են:

Սփյուռքի կրթական, մշակութային, հասարակական-քաղաքական, բարեգործական, կրոնական, կանանց, երիտասարդական, լրատվական և այլ կազմակերպությունների գործունեության մշտական օրակարգում գտնվող այս խնդիրների լուծմանն ուղղված ջանքերին իր հանձնառությունն է բերում Հայաստանի Հանրապետությունը՝ պետականության գործիքների ողջ զինամոցով: Այդ ջանքերի կիզակետում հայ երիտասարդությունն է՝ որպես ազգային ինքնության շարունակականության ապահովման հիմնասյուն ու վահան: Եվ երիտասարդության հետ տարվող աշխատանքն է, որ պետք է դառնա պետության և Սփյուռքի հիմնական նպատակակետը:

Թուլանում է ազգային ինքնագիտակցությունը, մայրենի լեզվի իմացության հարցը դառնում է լուրջ հիմնահարց. 2011 թվականին արևմտահայերենը ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից ստացել է «հաստատապես վտանգված» կարգավիճակ վերջին տարիներին լեզվի լրագրողական, վարչական, կրթական կիրառության կտրուկ անկման պատճառով: Աճում է այն հայերի թիվը, որոնց համար հայերենը սկսել է դադարել մայրենի լեզու ընկալվելուց:

Համալիր ծրագիր է անհրաժեշտ մայրենի լեզվի պահպանման, լեզվամտածողության զարգացման, կրթական հաստատությունների ընդլայնման, մեկօրյա դպրոցների ցանցի ավելացման, հայագիտական կենտրոնների, ամբիոնների հզորացման, դասագրքերի և մասնագետների պատրաստման ուղղությամբ:

Հայկական պետականությունը հայության, Սփյուռքի գոյության միակ երաշխավորն ու պատվարն է:

10. Նոր ձևավորվող համայնքների ինքնակազմակերպմանը նպաստելը:

Նոր ձևավորվող հայկական համայնքները չափազանց խոցելի են: Համայնքային կառույցներ գրեթե գոյություն չունեն կամ գտնվում են սաղմնային փուլում, մեծ թիվ են կազմում համայնքային կյանքում չընդգրկվածները: Շատ երկրներում համայնքների հին ու նոր հատվածների միջև նկատվում են տարածայնություններ:

Հայաստան-Սփյուռք գործակցության առանցքային խնդիրներից է օժանդակել համայնքների ինքնակազմակերպմանը, եկեղեցի, դպրոց կառուցմանը, համայնքային ինքնակառավարման մարմինների ձևավորմանը և Հայաստանի հետ կապերի ամրապնդմանն ու զարգացմանը:

11. Սփյուռքում հայ ներուժի համախմբումը և դրա օգտագործումը Հայաստանի զարգացման համար:

Հայկական Սփյուռքի ճնշող մեծամասնությունը ապրում է զարգացած երկրներում. հայերը կրթված, մրցունակ են տարբեր հասարակություններում: Այդ հսկայական ներուժից օգտվելը հրամայական է 20 տարին բոլորած, դեռևս մեծ կարիքների մեջ գտնվող հայկական երկու պետությունների համար: Վերջին տարիներին ՀՀ սփյուռքի նախարարության կողմից կազմակերպված մասնագիտական համաժողովները իրոք սկիզբ են դրել այն մեծ

գործին, որը կոչվում է Սփյուռքի վերակազմակերպում ըստ մասնագիտությունների:

Միայն Հայաստանի և Սփյուռքի գիտական, կրթական, մշակութային, ճարտարագիտական, բիզնես ներուժի հնարավորությունների մեկտեղմամբ, համատեղմամբ և ներգրավմամբ է հնարավոր երկիրը դեպի առաջընթաց և զարգացում տանել, ստեղծել համահայկական ցանցեր, մասնագիտական հանձնախմբեր, օգտագործել նրանց կապերը, հնարավորությունները Հայաստանի հզորացման համար:

12. Հայրենադարձությանը նպաստող ծրագրերի մշակում և հայրենադարձության խթանում:

Հայաստանը եղել և մնում է համայն հայության հայրենիքը և գլխավոր հանգրվանը:

Հայաստանում և Սփյուռքում աշխատանքի բոլոր ձևերով ու միջոցներով Սփյուռքը պետք է դարձնել հայաստանակենտրոն, նպաստել Հայաստանի անվտանգության ապահովմանը, պաշտպանությանն ու զարգացմանը: Միայն արհավիրքների և դրանց հետևանքների վերացման շուրջ չէ, որ պետք է համախմբվի և միաբանվի հայությունը:

Հայրենադարձության խթանումն ու խրախուսումը, ներուժի համախմբումը այսօր պետական գործունեության կիզակետում են: Հայաստանի ուժեղացումը պայմանավորված է նաև նրա ժողովրդագրական իրավիճակի փոփոխությամբ, հայրենադարձների թվի ավելացմամբ, հայրենիքի շենացմանն առավել շատ հայերի ներգրավմամբ:

Պետական մակարդակով մշակվել են հայրենադարձության խթանման հայեցակարգ, «Հայրենադարձության մասին» օրենքի նախագիծ, ու առաջիկայում և՛ իրավական, և՛ կազմակերպչական առումով ստեղծվելու են անհրաժեշտ պայմաններ հայրենադարձությանը նպաստելու համար: Հայրենադարձությունը յուրաքանչյուր հայի համար Հայրենիքի հետ կենսական և հոգևոր կապի ամենավառ դրսևորումներից է, որը պետք է արտահայտվի տևական ժամանակով Հայրենիքում ապրելու, գործունեություն ծավալելու, կարճաժամկետ աշխատանքներ իրականացնելու և Հայրենիքում հաստատվելու միջոցով:

13. Համահայկական առաջնահերթությունների ձևակերպումը:

Հայկական աշխարհն ունի հիմնախնդիրներ, Հայաստանն ու Սփյուռքը միմյանցից շատ տարբեր են, միաժամանակ՝ նման, ունեն նույն պատմությունը, նույն արմատը: Հայը Հայրենիքում թե Սփյուռքում ունի մեծ նպատակներ, որոնք լուծելու համար պետք է համախմբվել, որոշել համահայկական օրակարգը, համազգային առաջնահերթությունները:

ՀՀ անկախության 20 տարիների ընթացքում միմյանց օգնելով՝ պետություն է կառուցվել, ՀՀ-ն միջազգային իրավունքի սուբյեկտ է դարձել, ԼՂՀ ժողովուրդը իր անկախությունն է կերտում:

Ձարգացման ուղի են ընտրվել շուկայական տնտեսությունը, ժողովրդավարությունը, սահմանադրորեն մարդը դիտվում է որպես բարձրագույն արժեք, կառուցվում է քաղաքացիական հասարակություն: Փորձ է արվել այս ամենին հասնել որքան հնարավոր է արագ, որքան հնարավոր է հայության ուժերը ճիշտ օգտագործելով:

Անկախության 20 տարիները ցույց են տալիս, որ կան համահայկական նպատակներ ու համազգային առաջնահերթություններ, որոնք ձևակերպման, հստակեցման կարիք ունեն:

Մեր կարծիքով, արդի ժամանակահատվածի համահայկական առաջնահերթություններն են.

1. Հայաստանի Հանրապետության զորացում, անվտանգության ապահովում:

Համահայկական պետությունը կիզորանա, կդառնա բոլոր հայերի երազանքների Հայաստանը, եթե հայոց պետականության կերտման գործին նվիրվեն բոլոր հայերը՝ իրենց ամենօրյա աշխատանքով, ընդհանրական նպատակների կենսագործմանն ուղղված հաստատականությամբ, 10 մլն հայերի հնարամիտ ու ստեղծագործ մտքով, մեկ բռունցք դարձած՝ հայրենիքի համար և հայրենիքի շուրջ:

2. ԼՂՀ հարցի խաղաղ կարգավորում:

Ակնհայտ է, որ հայ ժողովուրդը գիտակցում է իր պատասխանատվությունը Արցախի ժողովրդի ճակատագրի առջև, և Հայաստանում, Արցախում ու Սփյուռքում իր ողջ ջանքերը պետք է ա-

ռավել համախմբի՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ժողովրդի անվտանգությունն ապահովելու, ինքնորոշման իրավունքի ճանաչմանը նպաստելու, միջազգային իրավունքի սուբյեկտ դառնալու և միջազգային ընտանիքի մաս կազմելու համար:

3. Հայոց ցեղասպանության ճանաչում, դատապարտում և հետեվանքների վերացում:

Հայ ժողովուրդը ամենուր շարունակելու է իր պայքարը Օսմանյան Թուրքիայում ծրագրված և պետականորեն իրականացված Հայոց ցեղասպանության միջազգային հանընդհանուր ճանաչման, դատապարտման և հետևանքների վերացման համար:

Այն ողջ մարդկության դեմ կատարված եղեռնագործություն է, որի ճանաչումն ու դատապարտումը համամարդկային խնդիր է, որը չունի վաղեմության ժամկետ և ուղղված է ոչ միայն պատմական արդարության վերականգնմանը, հայրենագրված, մշակույթ, ունեցվածք, կենսակերպ, նյութական և հոգևոր արժեքներ կորցրած հայության իրավունքների ճանաչմանը, այլև ապագայում ցեղասպանությունների կանխարգելմանը, ժխտողականության և ցեղասպանության ուրացման բացառմանը, այս ուղղությամբ համաշխարհային արդարախոհ հանրության հանձնառության ավելացմանը:

4. Սփյուռքում հայապահպանության հզորացում և ուժացման դեմ պայքար:

Այսօր Սփյուռքի բոլոր կառույցների գործունեության մշտական օրակարգում գտնվող այս խնդիրների լուծմանն ուղղված ջանքերին իր հանձնառությունն է բերում Հայաստան պետությունը՝ իր բոլոր հնարավորություններով՝ պահպանելու լեզուն, հայ ընտանիքի ավանդույթները և նպաստելու հայ եկեղեցու շուրջ համախմբմանը:

5. Հայ եկեղեցու շուրջ համախմբում և քրիստոնեական հավատքի զորացում:

Հայ ժողովուրդը կարևորում է հայ եկեղեցու դերակատարությունը ազգի պահպանման, Սփյուռքն ու Հայաստանը միավորելու, բազում կանուրջներ ստեղծելու, բոլոր հայերին միմյանց շաղկապելու առաքելությունը:

6. Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման հեռանկարները, վաղվա օրը պայմանավորված են այսօրվա հրամայականներով, դրանք ճիշտ ըմբռնելու, համադրելու, դրանց լուծմանն ուղղված գործողությունների հստակ և նպատակային իրականացմամբ: Գործունեության հեռանկարի գլխավոր հենասյուներ պետք է դառնան համազգային առաջնահերթություններին համապատասխան գործողությունների ծրագրի մշակումը, դրանց իրագործման համար դերերի ճիշտ բաժանումը և յուրաքանչյուրի անելիքի սահմանումը:

Սփյուռքների դերը գնալով աճում է: Այսօր չափազանց բարձր է սփյուռքների դերը Երկիր մոլորակի տնտեսական, էթնոմշակութային, սոցիալական, քաղաքական և նույնիսկ աշխարհաքաղաքական ոլորտներում: Միջազգային դիվանագիտական կառույցներին զուգահեռ ակտիվորեն գործում են սփյուռքների ժողովրդական դիվանագիտության ուժերը, լրբբիստական կառույցները: Սփյուռքը դարձել է կարևորագույն գործոն՝ տիրապետելով ծանրակշիռ ֆինանսատնտեսական, սոցիալ-քաղաքական լծակների:

Համաշխարհայնացումը նպաստում է սփյուռքի անմիջական մասնակցությանը հայրենիքի քաղաքականությանը, այլ երկրների քաղաքական զարգացումներին լրբբիզմի միջոցով:

Սփյուռքի քաղաքական ազդեցությունը գնալով աճում է քաղաքացիական պատերազմների, գունավոր հեղափոխությունների, ժողովրդավարացման գործընթացներում: Միջազգային այնպիսի կառույցներ, ինչպիսիք են ՄԱԿ-ը, Համաշխարհային բանկը, Եվրոպական հանձնաժողովը, ՅՈՒՆԵՍԿՕ-ն, ՅՈՒՆԻՍԵՖ-ը և այլն, սկսել են ավելի շատ արժևորել սփյուռքի դերը համաշխարհային զարգացումներում: Գաղտնիք չէ, որ Հայաստանն ու Սփյուռքը սնվում են պատմամշակութային նույն արմատից և հզոր են մեկը մյուսով: Հայաստանի առջև ծառայած մարտահրավերները Սփյուռքին են, իսկ Սփյուռքի հիմնախնդիրները՝ Հայաստանին: Հայ ժողովրդի հզորությունը բոլոր հայերի հավաքական, միասնական հզորությունն է:

Հետևաբար Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացումն ուղղված է Հայաստանի և Սփյուռքի զարգացմանն ու հզորացման:

նը, հայ ժողովրդի տարբեր հատվածների կարողությունների բազմապատկմանն ու ամրապնդմանը⁴:

Սենք միասին ենք կերտելու մեր պատմությունն ու ապագան՝ հանուն **Հզոր Հայաստանի** և հանուն **Հզոր Սփյուռքի**:

Hranush Hakobyan – Republic of Armenia-Diaspora partnership: yesterday, today and tomorrow – The article is devoted to the Armenia-Diaspora partnership. It reflects the fundamental stages of the Armenian Diaspora formation, mechanisms of resolving issues raised within various situations aimed at the preservation of the Armenian identity, unification of the Armenian Diaspora, establishment and development of social, cultural ties, formation and strengthening of relations between Armenia and the Diaspora. Special attention is devoted to both the principles and new concepts of the state policy on Armenia-Diaspora partnership development in 2008-2011 and current pan-Armenian priorities are defined.

Грануш Акопян – Партнерство Республика Армения-Диаспора: вчера, сегодня, завтра. – Статья посвящена развитию партнёрства Армения-Диаспора, в которой отражены основные этапы формирования армянской диаспоры, разрешены проблемы, возникшие при разных режимах правления, направленные на сохранение армянства, воссоединению армянской диаспоры, установлению и развитию социальных, культурных связей, а также формированию и сближению отношений между Арменией и Диаспорой. Особое внимание уделяется принципам и новым концепциям государственной политики по развитию партнерства Армения-Диаспора на 2008-2011 годы, а также сформулированы современные всеармянские приоритеты.

⁴ Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման հայեցակարգ, հավելված ՀՀ կառավարության 2009 թ. օգոստոսի 20-ի նիստի № 34 արձանագրային որոշման, Եր., 2010, էջ 18:

ՈԱԶՄԻԿ ՓԱՆՈՍԵԱՆ

ՏԵՍԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ ՀԱՅՐԵՆԻՔ-ՍՓԻՒՌ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ. ՀԵՏԵՒՈՒԹԻՒՆՆԵՐ, ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

Սփիւռք (տիասփորա) բառն ու գաղափարը գիտական շրջանակներու մէջ բաւական հիմնական փոփոխութիւններու ենթարկուած է վերջին մի քանի տասնեակ տարիներուն ընթացքին: Բան մը, զոր մենք՝ հայերս, պէտք է նկատի առնենք, թէ՛ գիտական տեսանկիւնէ, թէ՛ ալ քաղաքական: Այսօր հայկական սփիւռքին մասին շատ պիտի չխօսիմ, այլ աւելի լայն տեսական հարցերու մասին պիտի անդրադառնամ՝ սփիւռքի կապակցութեամբ:

Մեր նիւթին անցնելէ առաջ մէկ կէտ եւս աւելցնեմ: Մէկ հայկական սփիւռք չկայ, այլ՝ մի քանի: Երբ դասախօսութեան ընթացքին սփիւռքի մասին խօսիմ միտքս ունիմ արեւմտեան սփիւռքը՝ ամերիկեան, քանատական, եւրոպական սփիւռքները, ու որոշ չափով ալ՝ Սիջին Արեւելքի: Ռուսաստանի, Ուքրանիոյ ու յետսովետական սփիւռքները տարբեր իրականութիւններ են եւ ունին տարբեր մարտահրաւերներ ու տուեալներ որոնց մասին չեմ անդրադառնար ու իմ տեսական կէտերս անոնց վրայ չեն հիմնուած:

Ինչպէս գիտենք, սփիւռքի իրականութիւնը շատ հին իրողութիւն մըն է մարդկութեան պատմութեան մէջ: Ան թերեւս կը սկսի Քրիստոսէ առաջ, դէպի Բաբելոն հրեաներու աքսորէն: Հայերուս պարագային նուազագոյնը հազար տարուան պատմութիւն ունի հայ սփիւռքը. անոր արմատները կը մխրճուին ԺԱ. դարուն մէջ, երբ Անին գրաւուեցաւ Բիւզանդիոնի եւ ապա սելճուքներու կողմէ:

Մինչեւ 1960ականները երբ **սփիւռք** բառը կը գործածուէր (եւ շատ չէր գործածուէր) դասական սփիւռքներու մասին էր խօսքը: Ժողովուրդներ, որոնք իրենց երկրէն արտաքսուած էին, ու չէին կրնար վերադառնալ՝ հրեաներ, հայեր, յոյներ, ապա նաեւ պաղեստինցիներ ու նոյնանման ժողովուրդներ որոնք բռնի ուժով հեռացուած էին իրենց հայրենիքէն: Սփիւռքի իրականութիւնը կը սեպուէր բացասական ու ժխտական իրողութիւն մը: Սփիւռքը դժբախտութիւն

մըն էր, ինչպէս Ստեփանոս Նախավկայի Վանքի Վարդապետը կը գրէ ջուղայեցիներու բռնազաղթին մասին 1604ին.

*Ափսո՛ս քեզ, Հայոց խեղճիկ ժողովուրդ,
Տիրուցան ելած անմեղ, անխորհուրդ,
Գերի գնաման աք դէպի հորասան,
Քաղցած ու ծարավ, տկլոր թշվառական:
Խարյուր ու հազար ցավի դիմացաք,
Ձեր քաղցրիկ երկրեն դուրս չդրաք.
Խիմի ձեր խոր մոր գերեզման թողաք,
Տներն ու ժամը ուրիշին տվաք:*

...

*Աչքս կուրանար, շլինքս կոտրուեր,
Խեղճ Հայաստան, քեզ էսպէս չտեսներ...¹*

Այս էր սփիւռքի իմաստը թէ՛ հայերու պարագային, թէ՛ տեսական մօտեցումներու մէջ: Աքսոր, թշուառ կեանք, հայրենիքի կարօտ, ու յոյս որ օր մը կարելի ըլլայ վերադառնալ: Մենք ալ այսօր կ'ափսոսանք՝ խառն ամուսնութիւն, լեզուի կորուստ, հայրենիքի կարօտ եւն:

Սփիւռքի այս իմաստը հիմնականօրէն փոխուած է, ու սկսած ենք Արեւմուտքի գիտական, քաղաքական ու հասարակական շրջանակներու մէջ խօսիլ սփիւռքի մասին որպէս դրական իրողութեան մը: «Սփիւռքցի». գիտեմ, բառը հայրենի մէջ գոյութիւն չունի, բայց լաւ ձեւով կ'ընդօժէ պատկանելիութիւնը ոչ-պետական ինքնութեան մը. սփիւռքցի ըլլալը կը նշանակէ ունենալ հետաքրքրական եւ թերեւս նոյնիսկ ցանկալի ինքնութիւն մը, կապուած՝ մի քանի կեդրոններու ու մշակոյթներու հետ:

Կարելոր է ընդօժել, որ այս նոր մօտեցումին կամ հասկացողութեան մէջ հայրենիքի գաղափարը կեդրոնական տեղ չի գրաւեր. կէտ մըն է բազմակողմանի ինքնութեան մը մէջ, ոչ-անպայմանօրէն հիմք մը կամ յենարան մը: Չեն ըսեր թէ ասիկա ճիշդ է կամ սխալ, այլ պարզապէս կը ներկայացնեն իրողութիւն մը: Սփիւռքցիի այս նոր երեւակայութեան մէջ, եթէ հայրենիքը գոյութիւն ունի, ապա ան գոյութիւն ունի իբրեւ այլաբանական ու վերացական, ոչ-որոշակի վայր մը: Ու վերադարձի իրողութիւնն ալ գոյութիւն չունի,

¹ Լեւոն, Երկերի ժողովածու, Հատոր III-Ա, Եր., 1969, էջ 247:

այլ պարզապէս կապեր պահելու գաղափարը կ'ընդգծուի: Այս կապերը կրնան ըլլալ ընկերային, ընտանեկան, մշակութային, տնտեսական կամ միայն ելեկտրոնային:

Այս տեսական փոփոխութեան արմատները (բացասականն դրական մօտեցումը սփիւռքի հանդէպ) կը գտնուին 1960ականներուն, մանաւանդ՝ ամերիկեան ենթախորքին մէջ, ինչպէս նաեւ այլ «նոր» երկիրներու մէջ, որոնք հիմնուած են գաղթականութեան վրայ, ինչպէս՝ Քանատան, Աւստրալիան եւն: Ժամանակը չի ներեր որ անդրադառնամ մանրամասնութիւններուն, բայց յիշեմ մի քանի կէտ.

ա) Քաղաքացիական Իրաւունքներու Շարժումը (civil rights movement) սկսաւ մեկնաբանել սեւերու ամերիկեան փորձառութիւնը որպէս սփիւռքի մէկ տարբերակ, օգտագործելով «Ափրիկեան-ամերիկացի» (African-American) եզրը: Փոքրամասնութիւն մը որ բռնութեամբ բերուած էր երկիր մը, բայց «հայրենիք» պիտի չվերադառնար, այլ իր իրաւունքները պիտի պաշտպանէր «նոր» երկրին մէջ, որպէս հաւասար քաղաքացի:

Միւսնոյն ժամանակ, 1967ին, Իսրայէլի պատերազմը աշխուժացուց հրեական սփիւռքը, ի յայտ բերելով սփիւռքի կարեւորութիւնը եւ կարողութիւնը՝ որպէս դրական ուժ մը՝ հայրենիքի պաշտպանութեան ճիգին մէջ:

Ուժի մէջ մտան գաղթի նոր օրէնքներ, որոնք փոխեցին Միացեալ Նահանգներու եւ Քանատայի դիմագիծը. արտօնուեցաւ ոչ-եւրոպացիներու (ոչ-սպիտակամորթներու) գաղթը: Բոլորովին ձուլուիլ մէկ, իշխող մշակոյթի մը կամ ինքնութեան մը մէջ՝ այլեւս ո'չ կարելի էր, ո'չ ալ փափաքելի: Բազմամշակութային քաղաքականութիւնը (multicultural policies) կը ցոլացնէր այս հասարակական իրականութիւնը:

Գիտաուսումնական շրջանակներու մէջ նոյնպէս մերժուեցաւ ձուլուելու, միատարրութեան գաղափարը (homogenization), ու հետագօտութեան միւթերը կեդրոնացան էքնիք փոքրամասնութիւններու վրայ որպէս իրաւական ինքնութիւններ եւ ուսումնասիրուեցաւ ասոնց յարաբերութիւնը ընդհանուր հասարակայնութեան հետ²:

² Այս կէտերը հիմնուած են՝ **Khachig Tololyan**, “Diaspora Studies: Past, Present and Promise,” International Migration Institute, University of Oxford, Working Paper 55, April 2012. Available on <http://www.imi.ox.ac.uk/pdfs/imi-working-papers/wp-55-2012-diaspora-studies-past-present-and-promise>

Ուրիշ խօսքով, էթնիք փոքրամասնութիւններ, ներառեալ սփիւռքացիներ, այս երկիրներու հասարակութեան մնայուն մէկ մասը սկսան սեպուիլ թէ՛ հիւրընկալ երկրին կողմէ եւ թէ՛ սփիւռքին/սփիւռքցիին կողմէ:

բ) Երկրորդ կետը միջազգային յարաբերութիւններու փոփոխութիւնն է: Անցնող 20-30 տարիներու ընթացքին միջազգային յարաբերութիւնները սկսած են փոխուիլ արդիական քաղաքական միաւորումէն դէպի յետարդիական (from modern to post-modern international relations): Այս պատճառով մարդուն ինքնութիւնը որ արդիական ժամանակին վրայ հիմնուած է, կամ հիմնուած էր ազգ-պետութեան գաղափարին վրայ, սկսած է հիմնուիլ աւելի լայն իրողութեան մը վրայ: Ասոր ամենէն յստակ դրսեւորումը Եւրոպական Միութիւնն է:

Երբեք չեն ըսեր որ ազգ-պետութիւնը (nation-state) կարելոր չէ, կամ նոյնիսկ կեդրոնական չէ միջազգային յարաբերութիւններու մէջ: Բայց կ'ուզեմ ընդգծել թէ կան նաեւ ուրիշ ուժեր ու մարմիններ, որոնք պետութեան հետ կը մրցակցին որպէս աղբիւր՝ քաղաքացիի մը ինքնութեան: Համաշխարհայնացումի գործօնները միայն տնտեսական չեն, այլ նաեւ՝ մշակութային ու ընկերային: Ինքնութիւնները կը հաստատուին թէ՛ պետութենէն աւելի փոքր, այսինքն՝ նահանգային, թէ՛ պետութենէն աւելի մեծ, այսինքն՝ շրջանային (regional) ծիրէն ներս եւս:

Հակասական տինամիքներու հետեւանք կրնայ սեպուիլ այս, բայց իրականութիւնն է այն որ, օրինակի համար, Եւրոպացի մը միեւնոյն ժամանակ կը հաստատէ որ ինքնութիւնը կը կապուի ուղղակի Եւրոպական շրջանային կառոյցներու, բայց իր երկրի մայրաքաղաք Մատրիտի հետ շատ գործ չ'ունենար: Հայկական սփիւռքի պարագային զուգահեռ իրողութիւնը պիտի ըլլար այն որ հաստատէ իր պապենական ինքնութիւնը մշակութային ծիրէն ներս, կապուի միջազգային ընթացքներու, ըլլայ քաղաքացի մէկէ աւելի պետութիւններու, որոնցմէ մէկը կրնայ ըլլալ (կամ չըլլալ) ներկայիս իր բնակած երկիրը... Ուրիշ խօսքով՝ բնակավայրի եւ հայրենիքի միջեւ կապը խզուած է:

Ռոպին Քոհէն Սփիւռքի ինքնութիւնը կը կապէ ուղղակի համաշխարհայնացման հետ, նշելով հինգ ընթացք.

ա) միջազգային տնտեսական կապերը ու սփիւռքներու դերը ասոր մէջ,
բ) միջազգային գաղթը. հարիւր հազարաւոր մարդիկ, որոնք մէկ երկրէն կը գաղթեն ուրիշ երկիր ընդհանրապէս տնտեսական պատճառներով,

գ) համաշխարհային քաղաքներ ուր հարիւրաւոր մշակոյթներ ու լեզուներ քով քովի կ'ապրին,

դ) քոզմոփոլիթ/բազմազգ (ոչ-ժխտական իմաստով) մշակոյթներու զարգացումը,

ե) ընկերային ինքնութեան խզումը որոշակի վայրի մը հետ, այսինքն՝ ինքնութիւններ, որոնք հողի հետ չեն կապուած³: Այս իրողութիւններուն դիմաց սփիւռքագէտներ սկսան վերանայիլ իրենց սահմանումները Սփիւռքի մասին: Ամէն մասնագէտ ունի իր մօտեցումը:

Այդուհանդերձ, այժմու մօտեցումները երկու ընդհանուր դպրոցներու կարելի է բաժնել:

Սփիւռքագէտներու առաջին դպրոցը. անոնք, որոնք հիմնուելով նախկին սահմանափակ կամ նեղ սփիւռքի իմաստին վրայ, կ'ընդունին զայն որպէս յենարան, բայց կ'ընդլայնեն գաղափարը ներկայ իրողութիւններու հիման վրայ: Ասոնք ընդհանրապէս հրեայ, հայ եւ այլ սփիւռքներու մասնագէտներ են, որոնք կ'ուզեն կարգ մը գիտական սահմանումներ ընել ու սփիւռքները մեկնաբանել յստակ եւ իւրայատուկ յատկանիշերու վրայ, այսինքն՝ իմաստը կը պահեն քիչ մը սահմանափակ: Ընդհանրապէս սփիւռքցի են ասոնք ու կը դիտեն սփիւռքը ներսէն դուրս: Իրենց համար հայրենիքի գաղափարը տակաւին կեդրոնական տեղ կը գրաւէ:

Օրինակ՝ Ուիլիլմ Սաֆրան կ'ըսէ թէ սփիւռքը կը կազմուի երբ ժողովուրդ մը յստակ կեդրոնէ մը (հայրենիքէն) կը տարածուի երկու կամ անելի ուրիշ տեղեր, կը շարունակէ հաւաքական իր յիշողութիւնը պահել՝ կապուած հայրենիքի գաղափարին (այսինքն՝ կը շարունակէ պահել մշակութային կարգ մը գիծեր), ու ինքզինք կը նկատէ որպէս տարբեր ինքնութիւն մը հիւրընկալ հասարակութենէն⁴:

³ Տես **Robin Cohen**, *Global Diasporas: An Introduction*. London: UCL Press, 1997, էջ 157: Նոյնանման կէտեր կը հաստատէ **Michael Fullilove**, “World Wide Webs: Diasporas and the International System.” Lowly Institute for International Policy (Australia), Paper 22, 2008:

⁴ Տես **William Safran**, “Diasporas in Modern Societies: Myths of Homeland and Return.” *Diaspora* (journal), vol. 1, no. 1, 1991:

Քոհէն այս տեսութիւնը աւելի կ'ընդլայնէ, աւելցնելով՝ կապերու կարեւորութիւնը միեւնոյն ժողովուրդի տարբեր համայնքներուն միջեւ, սփիւռքի երկարատեւ շարունակութիւնը, եւ սփիւռքեան կազմակերպութիւններու ու մտաւորականներու կարողութիւնը սփիւռքեան իւրայատուկ մշակոյթ մը ստեղծելու: Ան կը նշէ թէ կան տարբեր տեսակի սփիւռքներ: **Չոհ սփիւռքներ** (victim diasporas), ինչպէս հայերը, ասիրիկեցիները, հրեաները, իրլանտացիք եւն, **բանուորական** ու **կայսերական** սփիւռքներ (labor, imperial), ինչպէս հնդիկներն ու անգլիական տիրող դասակարգը գաղութներու մէջ, **առեւտուրի սփիւռքներ** (trade diasporas), ինչպէս չինացիք ու լիբանանցիք: Սփիւռքներ որոնք իրենց հայրենիքի վրայ ազդելու համար կը կազմակերպուին, ինչպէս սիխերն ու սիոնիստները, եւ վերջապէս **մշակութային սփիւռքները** (cultural diasporas)՝ քարիպեան շրջանի սփիւռքը⁵: Անշուշտ ասոնք վերլուծական քաթեկորիաներ են, եւ պէտք է ըսել թէ միեւնոյն ժողովուրդի սփիւռքը կրնայ ըլլալ մի քանի քաթեկորիայի մէջ:

Վստահ եմ արդէն նշմարեցիմք որ այս պարագային սփիւռքի ստեղծուելուն պատճառը բռնագաղթը կամ բռնի ուժը չէ:

Սփիւռքին ա՛լ աւելի լայն սահմանում մը կու տան քանատացի մասնագետներ⁶: Իրենց համար սփիւռքը անդրազգային (transnational) բնակչութիւններ է որոնք կ'ապրին (ֆիզիքապէս կամ իրենց երեւակայութեան մէջ) երկու տեղ, գործօն են երկու համայնքներու մէջ միեւնոյն ժամանակ: Սփիւռքը կ'ընդգրկէ ներգաղթողներ, հիւրբանուորներ (guest workers), օտարեկրեայ աշակերտներ, գաղթականներ, գաղթականներու երրորդ սերունդի յետնորդներ եւ նոյնիսկ միջազգային աշխատողներ, որոնք կը պահեն հայրենիքի (երկրորդ տեղի) գաղափարը:

Այս բոլոր մօտեցումները նաեւ կ'ընդգրկեն սահմանի գաղափարը, անշուշտ, ոչ-հողային իմաստով: Սփիւռքը կը պահէ որոշ սահման մը իր ու հիւրընկալ երկրին հասարակութեան միջեւ: Ան կը պահէ նաեւ հայրենիքի գաղափարը որպէս ինքնութեան կարեւոր կէտ մը, առանց անպայման հոն վերադառնալու փափաքին:

⁵ Տե՛ս **Robin Cohen**, *Global Diasporas: An Introduction*. London: UCL Press, 1997:

⁶ Տե՛ս David Carment and David Bercuson (eds.), *The World in Canada: Diaspora, Demography, and Domestic Politics*. Canada: McGill-Queens University Press, 2008 (p. 6-7):

Իմ սահմանումն մօտ է այս մօտեցումին եւ կը կերտուի Կապրիէլ Շեֆրի ու Եոսի Շէյնի⁷ սփիւռքներու հայեացքներուն վրայ: Ըստ իս, սփիւռքը այն իրողութիւնն է որ կը բաղկանայ ժողովուրդէ մը որ կ'ապրի իր հայրենիքէն դուրս (գրեթէ միշտ որպէս փոքրամասնութիւն) ուրիշ երկրի մը մէջ, բայց կը պահէ գօրաւոր զգացական կամ գործնական կապեր հայրենիքին հետ: Հայրենիքը ձգելու պատճառները կարելոր չեն: Ասոր վրայ կ'աւելցնեն հետեւեալ կէտերը⁸.

ա) Սփիւռքը ներքին կապեր կը պահէ, այսինքն՝ միջգաղութային՝ ներքին կապեր կան գաղութներուն միջեւ որոնք մէկ գաղութը միւսին կը կապեն:

բ) Սփիւռքի ինքնութիւնը պարզապէս հայրենիքի մշակոյթին շարունակութիւնը չէ, այլ կառուցուած է որպէս իւրայատուկ սփիւռքեան ինքնութիւն մը. սփիւռքցին չի ծնիր որպէս սփիւռքցի, այլ կը ստեղծէ իր սփիւռքեան իրողութիւնը ու ինքնութիւնը, ինչպէս Խաչիկ Թէօլէեան կը գրէ. «Սփիւռքը պարզապէս արկածի մը ծնունդը չէ»⁹:

գ) Քաղաքական աշխատանքը սփիւռքի գործունէութեան մէկ մասն է, որով սփիւռքը կը զանազանէ պարզ էքնիքական փոքրամասնութենէ մը: Սփիւռքները որոշ քաղաքական դատ մը կը հետապնդեն՝ կապուած իրենց հայրենիքին հետ:

դ) Եւ վերջապէս, շատ կարելոր է նշելը թէ սփիւռքը պատկանելիութեան ենթակայական զգացում մըն է (a subjective sense of belonging): Ինքզինք կը տեսնէ որպէս սփիւռք առանց անպայմանօրէն հայրենիք վերադառնալու գաղափարին, բայց հայրենիքի երեւոյթը, իսկական կամ երեւակայական, կը մնայ իր ինքնութեան կեդրոնական մէկ հիմքը, եւ ոչ միակ հիմքը: Աւելցնեն որ հայերու պարագային, հայրենիքի գաղափարը միայն արդի Հայաստանի Հանրապետութիւնը չէ, այլ պատմական Հայաստանն ալ: Ուրիշ խօսքով,

⁷ Տե՛ս **Gabriel Sheffer**, “A New Field of Study: Modern Diasporas in International Politics” in Gabriel Sheffer (ed.), *Modern Diasporas in International Politics*, London: Croom Helm, 1986 (p. 3). **Yossi Shain**, “Ethnic Diasporas and US Foreign Policy,” *Political Science Quarterly*, vol. 109, no. 5, 1994-5 (p. 814):

⁸ Տե՛ս **Razmik Panossian**, *The Armenians: From Kings and Priests to Merchants and Commissars*, London and New York: Hurst Publishers and Columbia University Press, 2006 (p. 312ff.):

⁹ **Khachig Tololyan**, “Rethinking *Diaspora*(s): Stateless Power in the Transnational Moment,” *Diaspora* (journal) vol. 5, no. 1, 1996 (p. 30).

«հայրենիքը ուր է» հարցումին պատասխանը երկիմաստ է ու բազմակողմանի: Ասոր քիչ էտք կ'անդրադառնամ:

Սփիւռքագէտներու երկրորդ դպրոցը կը բաղկանայ մասնագէտներէ որոնք աւելի կ'օգտագործեն յետարդիական մօտեցումը, ընդհանրապէս կը դիտեն սփիւռքները դուրսէն ներս, ու շատ աւելի լայն սահմանում մը կու տան անոր: Իրենց համար հայրենիքի գաղափարը երկրորդական տեղ կը գրաւէ, առաջնահերթ է կապերու գաղափարը, ընդհանրապէս կ'ուսումնասիրեն «նոր» գաղթականութեան վրայ հիմնուած երկիրները, եւ ենթակայական զգացումը կեդրոնական տեղ կը գրաւէ իրենց մօտեցումներուն մէջ:

Ըստ այս դպրոցին, հետաքրքրական կապը որ առաջնահերթ տեղ կը գրաւէ, ու պէտք է ուսումնասիրուի, սփիւռքի յարաբերութիւնն է հիւրընկալ հասարակութեան հետ: Անոնք կը մերժեն սահմանի/տարածութեան/հեռաւորութեան գաղափարը, կամ աւելի ճիշդ, կ'ուզեն որ այս սահմանը վերանայ սփիւռքի ու ընդհանուր հասարակութեան միջեւ, որովհետեւ սահմանը կ'առաջնորդէ խորունկ տարբերութիւններու/տարակարծութիւններու, պատճառ դառնալով խտրականութեան եւ նոյնիսկ «երկրորդական» քաղաքացիութեան: Այս ըսել չէ որ անոնք կ'ուզեն որ ամէն մարդ միաձուլուի, այլ՝ ամէն ինքնութիւն ու ընկերային յարաբերութիւն դիտուի որպէս հաւասար ու իրաւացի, այսինքն՝ իրաւական:

Անոնք կը հաւատան յետազգային (post-national) քաղաքացիութեան, հիմնուած անհատին միջազգային իրաւունքներուն վրայ, ուր փոքրամասնութիւններ ամէն քաղաքացիական իրաւունք ունին իրենց ապրած երկրին ընդհանուր մշակոյթը ու հասարակական կեանքը փոխելու եւ ոչ միայն յարմարելու մեծամասնութեան փափաքներուն կամ կառոյցներուն: Այսպէսով, քաղաքացիութեան միակ հիմքը պետութիւնը չէ, կան նաեւ այլ աւելի լայն գործօններ¹⁰:

Ըստ այս մօտեցումին, քանի որ հայրենիքի գաղափարը հիմնական չէ, այլ՝ կապերուն գաղափարն է հիմնականը, ապա ուրեմն կարելի է խօսիլ օրինակ, «իսլամ սփիւռքին մասին, անդրազգային (trans-national) կապերը սեպելով այնպէս ինչ սփիւռքի մը կապերը՝ իր հայրենիքին հետ»:

¹⁰ Տե՛ս **Yasemin Soysal**, *Limits of Citizenship: Migrants and Postnational Membership in Europe*, University of Chicago Press, 1994:

Ըստ մասնայատուկ ուսումնասիրութեան մը¹¹, Քանատայի ենթախորքին մէջ, սփիւռքը է «տեղ մը ուր կապեր կան» (a space of connections), ու սփիւռքի առաջնահերթ իրողութիւնը երեւակայութեան տեղ մը ըլլալն է (“diaspora is primarily a space of the imagination”): Զեղինակը կ’աւելցնէ. «Սփիւռքի մէջ ըլլալ կը նշանակէ ինքզինք ընկալել իբրեւ բազմաթիւ տեղերու կապուած անձ եւ ունենալ բարդ ինքնութիւն մը, որ կը հաւասարակշռէ անձին ըմբռնումը այդ տարբեր տեղերուն եւ իր յարմարումը անոնցմէ իւրաքանչիւրին մէջ»¹²: Կապերն են, ուրեմն, սփիւռքի ամենէն յատկանշական բնորոշումը. կապեր՝ «հոստեղ»ի ու «հոնտեղ»ի միջեւ: Զայրենիքը կ’ըլլայ դիւցազնական տեղ մը, վերադարձի գաղափարը, եթէ գոյութիւն ունենայ, միայն երեւակայութեան մէջ, ու սահմանները հիւրընկալ մեծամասնական (mainstream) հասարակութեան հետ կ’ըլլան բաց ու երկկողմանի: Ուրիշ խօսքով, հայրենիք հաւասար է արմատներու, յիշողութեան, կարգ մը մշակութային տուեալներու. բայց հիւրընկալ հասարակութիւնն է «տունը», իր այլազան տեղական ու միջազգային կապերով:

Այս տեսական մօտեցումները ի՞նչ կապ ունին մեզի հետ: Աւելի որոշակի ըլլամ՝ օրինակ մը տալով: 2011ին երբ պատմական Զայաստան կ’այցելէի, հանդիպեցայ տղու մը որ Քանատա ծնած էր: Ան կ’ապրի Չինաստան, չինարէն սորված է ու շատ հանգիստ կը զգայ հոն: Եկած էր Արարատ մագլցելու, պիտի երթար Անին տեսնելու ու անցնէր Զայաստան՝ չորս օրով, վերադառնար Չինաստան, ապա Սփիւռքի մէկ կազմակերպութեան ձեռնարկին երթար Փարիզ: Զուսկ, վերադառնար իր տունը, Չինաստանի մէկ մեծ քաղաքը: Լիուլի հայ էր, Քանատայի քաղաքացի, հինգ լեզու կը խօսէր. ոչ միայն բազմալեզու, այլ բազմա-ամէն-ինչ էր ան:

Անշուշտ, ամէն սփիւռքահայ այսչափ «հարուստ» չէ իր ինքնութեան մէջ, ու կ’ընդունիմ որ օրինակս քիչ մը իւրայատուկ է: Բայց կը ցլացնէ այն իրողութիւնը թէ ԻԱ դարուն, երիտասարդ սերունդին համար հայկական ինքնութիւնը մէկն է իրենց շատ մը այլ ինքնութիւններուն կողքին: Անոնց համար մի քանի հայրենիքներ

¹¹ Rima Berns-McGown, “Redefining ‘diaspora’: The Challenge of Connection and Inclusion,” *International Journal* (Canada), vol. 63, no. 1, Winter 2007-08 (Special issue on diasporas).

¹² Նոյն տեղը, էջ 8:

միեւնոյն ժամանակ գոյութիւն ունին, ու մի քանի պատկանելիութեան ընթացքներ կան: Հայրենիքը կրնայ ըլլալ հիւրընկալ քաղաքացիութեան երկիրը, օրինակ՝ Քանատան, պատմական հայրենիքը՝ Վան, Սասուն, Տիգրանակերտ, Սփիւռքի իրողութիւնը, ներկայ Հայաստանը, ապրած երկիրը, կամ ապագայի կերտուելիք երկիրը... Եւ կամ այս բոլորը միասին:

Հօրս սերունդին կարգախօսն էր «ազգն ու հայրենիքը ամեն բանէ վեր»: Այս նոր, յետարդիական սերունդին համար այսպիսի կարգախօս մը շատ խորթ կը հնչէ: Ասոնց համար ազգը իրենց ինքնութեան ու հետաքրքրութեան միայն մէկ մասն է:

Երիտասարդ տղայէն անցնինք հայագիտութեան: Արեւմուտքի մէջ մեր գիտական վերլուծումները ազդուած են յետարդիական վերլուծումներէ: Օրինակ, Խաչիկ Թէօլէեանը հայերը կը դիտէ իբրեւ անդր-ազգ (trans-nation): Սեպուհ Ասլանեանը իր նոր գիրքին մէջ ջողայեցիներուն մասին կ'օգտագործէ բազմակեդրոն (polycentric) ազգի գաղափարը¹³: Ես իմ գիրքիս մէջ կը վերլուծեմ հայոց ազգային կերտումը բազմատեղի (multilocal) տեսանկիւնէ: Բոլորիս համար ազգ-պետութեան գաղափարը **փրոպլեմաթիք** է որպէս վերլուծական գործօն: Երբեք չենք ըսեր որ հայրենիքը կարելոր չէ, կամ երկրորդական է, այլ հայ իրողութիւնը հասկնալու համար պէտք է շատ աւելի լայն մօտեցում մը ունենանք որուն մէջ Սփիւռքը իր տարբեր իրողութիւններով կեդրոնական տեղ կը գրաւէ:

Եզրափակեմ՝ անդրադառնալով դասախօսութեանս վերնագրին «թելադրութիւններ» բառին: Ի՞նչ քաղաքականութիւն կարելի է մշակել եթէ հիմնովինք այս վերլուծութիւններուն վրայ:

Բախտն ունեցեր են Հայաստան-Սփիւռք երեք ժողովներուն մասնակցելու: Առաջին երկուքին միջեւ (1999 եւ 2002) շատ հետաքրքրական փոփոխութիւն մը կար: Բարձրաստիճան քաղաքական մարդոց դասախօսութիւններուն մէջ մօտեցումը փոխուած էր: Սկզբնական այն գաղափարէն թէ «Սփիւռքը դժբախտ իրողութիւն մըն է որ պիտի կորսուի առանց հայրենիքին», ան եղած էր «Սփիւռքը որպէս լեկիթիմ, կարելոր ու մշտական երեւոյթ

¹³ Տե՛ս **Sebouh Aslanian**, From the Indian Ocean top the Mediterranean: The Global Trade Networks of Armenian Merchants from New Julfa, University of California Press, 2011:

է»¹⁴: Տիկին նախարարին դասախօսութիւնն ալ երէկ այդ հաստատեց: Ի դէպ, աւելցնեն որ հրեաներու պարագային ալ միեւնոյն փոփոխութիւնը տեղի ունեցաւ, եւ տասնամեակներ տեւեց՝ Պէն Կուրիոնէն մինչեւ Արիէլ Շարոն:

Ուրեմն, եթէ երկու հաւասար իրողութիւններ կան, Հայաստան ու Սփիւռք, երկու եւ աւելի ինքնութիւններ ալ կան, իրենց քաղաքական տարբերակներով: Մէկը ունի պետական կառոյցներ, միւսը՝ համայնքային: Մեր քաղաքական եզրակացութիւնները պէտք է ըլլան, տրամաբանականօրէն, բազմակողմանի:

Եօթ կէտեր ըսեն այս առումով, որոնցմով կը փակեն.

1. Ընդունինք որ մէկ կառոյց չկայ որ հայ ազգը կը ներկայացնէ: Սփիւռքը Հայաստանի անունով չի կրնար խօսիլ, ու Հայաստանն ալ Սփիւռքի անունով չի կրնար խօսիլ. իսկ որեւէ մէկը չի կրնար խօսիլ ամբողջական հայ ժողովուրդի անունով:

2. Մէկ «ճշգրիտ» կամ «զուտ» հայկական ինքնութիւն չկայ: Տարբեր ձեւերով կարելի է հայ ըլլալ: Ասիկա թէ՛ պատմական ու թէ՛ արդի իրողութիւն մըն է: Վահէ Օշական Հայաստան-Սփիւռք առաջին համաժողովին ըսաւ. «Հայը այն է որ կ'ըսէ ես հայ եմ, ու կը ձգտի աւելի լաւ հայ ըլլալու»: Առարկայական տուեալներ (հայերէն խօսիլ, հայոց պատմութիւն գիտնալ, եւն) որքան ալ փափաքելի ըլլան, իբրեւ ինքնութեան չափանիշ չդնենք:

3. Հայ ազգը եղած է միշտ ապակեդրոնացած: Մեր ուժն է այս: Մեր քաղաքականութիւնը պէտք է այս իրողութեան վրայ հիմնուի, եւ ոչ թէ փորձ կատարուի կեդրոնացնել մեր տարբեր մասնիկները: Այո՛, բարդ է ապակեդրոնացեալ ձեւով աշխատանքը, բայց աւելի ուժեղ է ան: Կեդրոնացում՝ ո՛չ, բայց համադրութիւն շատ լաւ պիտի ըլլար:

4. Հայաստանի ու Սփիւռքի միջեւ կրնան հակասութիւններ ըլլալ: Այս բնական ու օրինական իրողութիւն է: Սփիւռքը կրնայ ու-

¹⁴ Անցումը բացայայտ էր առաջինէն երկրորդ գիտաժողովին (Սեպտեմբեր 1999, Մայիս 2002) այլազան ելոյթներու ընթացքին, ինչպէս նախագահ Ռոպերթ Քոչարեանի, Վահան Յովհաննիսեանի (1999), Հրանդ Մարգարեանի (2002), ու օգտագործուած կարգախօսներուն մէջ՝ «մէկ ազգ մէկ հայրենիք»էն «Հայաստանը բոլոր հայերի հայրենիքն է»: Այս վերլուծման մանրամասնութիւններուն համար տես՝ **Razmik Panossian**, "Courting A Diaspora: Armenia-Diaspora Relations since 1998" in Eva Ostergaard-Nielsen (ed.), *International Migration and Sending Countries*, Palgrave Macmillan (UK), 2003:

ճենալ իր «արտաքին քաղաքականությունը», որ զուգահեռ չէ Հայաստանի, նկատի առնելով որ Սփիւռքը պետութիւն չէ: Չափսուսանք, այլ փորձենք գտնել ձեւեր յարգալից խօսակցութեան ու բանակցութիւններու:

5. Եթէ կը հաւատանք որ Սփիւռքը պէտք է գոյատեւէ, վերլուծենք ու ի զօրու դարձնենք գործօններ որով Սփիւռքի գաղութները շարունակեն իրենց համայնքային կեանքը: Իրենք իրենց տարեկան վերանորոգումը կատարեն առանց հիմնուելու ներգաղթի վրայ:

6. Մտածենք թէ ինչպէս կարելի է ստեղծել «ելեկտրոնային հայրենիք» մը, վիրտուալ համայնք մը, որ ներգրաւէ երիտասարդ սերունդը:

7. Ու վերջապէս, հեռուն նայելով, ես պիտի ըստի՝ ապագային Սփիւռքի կեդրոնը պիտի ըլլայ Ռուսաստանը: Պէտքը Սփիւռքի «մայրաքաղաքն» էր (եւ կը մնայ կարելոր կեդրոն մը), ապա եղաւ Լոս Անճելըսը: Ըստ իս, «մայրաքաղաքը» Լոս Անճելըսէն պիտի տեղափոխուի Ռուսաստան (անշուշտ այս ըսել չէ թէ Արեւմտեան Սփիւռքը պիտի անհետանայ): Արեւմուտքի ու Միջին Արեւելքի մէջ գրեթէ ոչինչ գիտենք Ռուսաստանի հայ գաղութին մասին: Լաւ կ'ըլլայ եթէ հայերէնով ու անգլերէնով նիւթեր հրատարակուին այս ուղղութեամբ, ու կապեր հաստատուին «արեւմտեան» եւ յետսովետական սփիւռքներու միջեւ:

Razmig Panosyan – *Homeland-Diaspora Relations: Some Theoretical Reflections and Recommendations* – The term "diaspora" has undergone a fundamental shift in its meaning during the past several decades. It has changed from its narrow conception that emphasised forced exile and longing for the homeland, to a much wider notion that underscores the links diasporas have, and even celebrates the multi-dimensionality of diasporan existence. As such, the negative connotations of diaspora have been minimised. The notions of homeland and return to it are no longer central in the contemporary uses of the term. This change in meaning can be traced to social, academic and political changes that took place in the West, mostly the United States of America, 1960s onwards. The theoretical analysis of the paper has several implications for Armenians. Among them: recognition that Armenian identity is multifaceted and there is no one "correct" way of being Armenian; the Republic of Armenia is not necessarily the only (or even principal) homeland for dias-

porans; the decentralised structure of the Armenian diaspora is its strength and not a weakness; and finally, attention needs to be paid to the emergent Armenian communities in Russia, as these will probably be the future centres of the Armenian global diaspora.

Размик Паносян – *Отношения родина–диаспора: теоретические размышления и рекомендации.*

– За несколько минувших десятилетий значение термина «диаспора» претерпело коренные изменения. Узкое понятие, основанное на принудительном выселении с родины и тоске по ней, преобразилось в гораздо более широкое, подразумевающее многомерную жизнь вне отечества. Негативная окраска термина свелась к минимуму. Понятие родины и возвращения в нём уже не преобладает. Изменение смысла обуславливается социально-политическими переменами на Западе, особенно в США, в 1960-е годы. В статье содержится несколько важных для армян положений. Среди них осознание того, что армянство многогранно и не существует единственного «правильного» способа быть армянином; для армян диаспоры Республика Армения не обязательно единственная (или даже главная) родина; децентрализованная структура армянской диаспоры – её сила, а вовсе не слабость; наконец, следует обратить особое внимание на складывающиеся в России армянские общины, поскольку, вероятнее всего, в будущем именно им суждено стать центрами мировой армянской диаспоры.

ԱՆԴՐԱՆԻԿ ՏԱԳԵՍԵԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆՑԻ ՀԱՐՍԵՐՈՒ ՀԱՄԱՐԿՈՒՄԸ ԼԻԲԱՆԱՀԱՅՈՒԹԵԱՆ

Մուտք

Այր ու կին երբ կը գոյացնեն իրենց ընտանիքը, զայն կը հիմնաւորեն երկուստեք համագործակցութեան լռելեայն, համեմատաբար համապարփակ համաձայնութեան մը վրայ: Միացող ամուլի երկու անձերը, սկզբունքով, իրենց բոլոր տեսակի կարողականութիւնը եւ կարողութիւնները կը մէկտեղեն՝ յանուն նորաբնոյթ կեանքի եւ նոր յառաջընթացի: Ընտանիքի յետագայ ընթացքը դրսեւորումն է այդ համաձայնութեան, որ կրնայ զարգանալ՝

1. դրապէս՝ առաջնորդելով ընտանիքի վերելքին,
2. բացասաբար՝ առաջնորդելով ամուլի բաժանման եւ ընտանիքի քայքայման:

Արդ, եթէ ամուլի կողմերէն մին ՅՅ, իսկ միւսը Սփիւռքի ծնունդ է, ապա մենք դէմ հանդիման կը գտնուինք «խառն» ընտանիքի մը, որ իւրայատուկ օրինակ է ՅՅ-Սփիւռք գործակցութեան: Այստեղ ջանացած են լուսարձակի տակ առնել եւ քննել լիբանահայ այսպիսի ընտանիքներու փորձը:

Ներածութիւն

1. Հայ ժողովուրդի պատմութեան ամբողջ ընթացքին միշտ ալ առանձին թէ խմբային տեղաշարժեր եղած են: Ձուտ հայկական առումով, Ի. դարը իր առաջին տասնամեակէն իսկ եղաւ տեղաշարժերու դարաշրջան. նախորդ որեւէ դարու հայ ժողովուրդը կամայ-ակամայ չէ կատարած Ի. դարուն համաչափ եւ համազօր տեղաշարժեր:

Այս տեղաշարժերը համարկում կ'ենթադրեն:

2. Որոշ է որ տարբեր ժամանակներու, տեղական թէ այլեւայլ հանգամանքներու եւ «զաղթականներու» իւրայատկութեանց բերմամբ՝ համարկումը կ'ունենայ տարբեր բովանդակութիւն եւ գործընթաց: Համարկումի գործընթացին համար ելակէտային գործօն

նկատելով միջավայրը ու անոր ածանցեալ աշխարհագրական գործօնը, կ'առանձնացնենք համարկումի երկու տարբերակ.

ա) Ներհայկական, այսինքն՝ ներհայաստանեան¹ եւ ներսփիւռքեան տեղաշարժեր, ինչպէս նաեւ ՀՀ քաղաքացիին Սփիւռք (եւ ոչ թէ արտասահման) արտագաղթը, ու սփիւռքահայուն՝ ՀՀ ներգաղթը եւ համարկումը:

բ) Արտահայկական՝ արտագաղթ ՀՀ կամ Սփիւռքի տուեալ համայնքէն եւ տեղաւորում այլուր եւ համարկումը իր բնական ոչ-հայկական միջավայրին:

Մեր միւթը կը վերաբերի Հայաստանէն Լիբանան հաստատուած հայերու՝ ներհայկական համարկումին:

3. Համարկումը նաեւ համամարդկային այժմեական հրատապ խնդիր է, որովհետեւ մարդկային տեղաշարժերը որեւէ ժամանակէ աւելի ծաւալ եւ թափ ստացած են՝ յառաջացնելով տեղաւորումի եւ համարկումի ընկերային սուր տագնապ: Միւս կողմէն, ի տարբերութիւն նախորդ տասնամեակներուն, ներկայիս աւելի վառ բովանդակութիւն եւ դրսեւորում ստացած է ինքնութեան խնդիրը. այն, որ գաղթող անհատը ի՛նչ ինքնութիւն կը տեղափոխէ եւ ինչպիսի՛ ինքնութեամբ կ'աւարտէ իր տեղաւորումի գործընթացը: Հասկնալի է, որ ինքնութեան խնդիրը այս պարագային կ'արժարժուի նաեւ, որովհետեւ ան կը վերաբերի համարկուող ենթակային ազգային առնչութիւններուն ու յանձնառութիւններուն:

4. Համարկումը այստեղ կը սահմանենք իբրեւ գործընթաց մը որ կ'ենթադրէ անձին/խմբակին տեղաւորումը նոր միջավայր, անոր կարողականութեան դրսեւորումը, անոր նոր ինքնութեան ձեւաւորումն ու պահպանումը (որ կրնայ ընդգրկել շերտեր նախկին եւ նոր միջավայրի մշակոյթներէն ու կենցաղէն), անոր անցեալ եւ նոր միջավայրի առնչութիւններուն յանձնառութիւնը եւ նոր ինքնութեան ժառանգումը յաջորդ սերունդին:

Այս առումով, ինքնութիւնը քարացած վիճակ չէ, այլ կ'ենթադրէ վերակերտումի մնայուն գործընթաց մը: Ան փոփոխական է, կրնայ յեղափոխուիլ ոչ միայն սերունդէ սերունդ, այլեւ նոյն ան-

¹ Այս առումով կարգ մը հայ ազգանուններ լուռ վկան են այս տեղաշարժերուն՝ Այնթապէան, Անեցեան, Ձէյթունցեան, Էրզրումեան, Հաճընեան, Սարաշլեան, եւն:

հատի կեանքի տարբեր հանգրուաններուն²: Ինքնութիւնը հեղիեղուկ ալ չէ, ոչ ալ դիւրափոփոխ. ան ունի իր շերտերը, թաղանթները եւ կորիզ մը, որ ամէնէն դանդաղը կը յեղափոխուի:

Նիւթս

Նիւթս կը վերաբերի 1960ականներու առաջին իսկ կէսէն Լիբանան ժամանել սկսած հայաստանցի հարսերու³, որոնք կողակիցներն էին 1950ականներու վերջին եւ այնուհետեւ Լիբանանէն ՅՅ բարձրագոյն ուսման մեկնած լիբանահայ երիտասարդներու: Անոնց թիւը այսօր անցած է հարիւրը: Այս երեւոյթը տակաւին կը շարունակուի ոչ միայն ուսանողական հարթութեան վրայ:

Սահմանափակ ծաւալի ու տարողութեան այս ուսումնասիրութիւնը չի ներառեր ՅՅ ներգաղթած, ապա Լիբանան վերահաստատուած, կամ՝ անձնական նախաձեռնութեամբ Լիբանան աշխատանքի եկած ՅՅ քաղաքացիներ, կամ ալ ՅՅ ժամանած փեսաներու պարագաներ:

Հանդիպումներ ու տեսակցագրոյցներ ունեցած են այսպիսի քսանէ աւելի հարսերու հետ⁴: Սկզբնական հարցաթերթիկի մը հիմամբ հարցախոյզ կատարելով հանդերձ, ձգած են նաեւ որ իւրաքանչիւր հարսի պարագային միւթը ինք ընթանայ իր բնական հունով:

Սերտողութեանս մէջ ջանացած են բացայայտել ընտանիքի գործակցութեան երկու սկզբնական բաղադրիչներէն հայաստանցի հարսին համարկումը: Ուստի այր ու կնոջ այս գործակցութիւնը փորձած են դիտել երեք օղակներով.

ա. Հարսին համարկումը նոր կազմաւորուող ընտանիքին:

բ. Հարսին կարողականութեան դրսեւորումը միջավայրին մէջ, որ նաեւ գէթ մասամբ կ'արտացոլացնէ այս գործակցութեան արդիւնաւէտ օգտագործումը ընտանիք-միջավայր ծիրին մէջ՝ թէ՛ հաւա-

² Անհատի ինքնութեան կերտման գործօններ են տեղական/շրջանային միջավայրը, անհատի ներանձնական-ընկերային-տնտեսական-քաղաքական-տարիքային իւրախտկութիւնները եւ համաշխարհային միտումները:

³ Շնորհակալութիւն կ'ուզեն յայտնել բոլոր անոնց, որոնք բաւական լայն չափով բաժնեկցեցան իրենց ընտանեւորման ու ընտանիքի պատմութիւնը:

⁴ Հարցախոյզները կատարած ենք յուլիս-օգոստոս 2011ին:

քականութեան (ՀՀ ու տեղական հայ/արաբ) եւ թէ՛ ընտանիքի (հարազատներու) առունդով:

գ. Համարկման յետագայ զարգացումները՝ զաւակներու փոխյարաբերութիւն-դրսեւորումը թէ՛ տեղական եւ թէ՛ ՀՀ միջավայրին հետ:

Փորձած եմ ի յայտ բերել ընդհանրութիւններն ու տարբերութիւնները եւ տալ այսպիսի պարագաներու համարկման գործընթացին իւրայատկութիւնները: Հարկ է նշել, սակայն, որ յառաջացածը տեղայնացուած տեսութիւն մըն է, ոչ-աւարտուն եւ միակողմանի, քանի որ չ'ընդգրկեր ամբողջութիւն մը. թէւ ունի տեսակարար կշիռ, բայց չունի հանդիպակաց կողմի՝ լիբանանցի անուսիներու տեսակէտ-պատումը:

Նախատուեալներ եւ համարկման առաջին օղակ

Ա. Ո՞վքեր են հարսերը

Հարցախոյզիս հարսերը⁵ մեծ մասամբ արեւմտահայ եւ ոչ-խորհրդահայաստանեան արմատներ ունին (Էրզրում, Իգդիր, Կարս, Մալաթիա, Մուշ, Շամախի), եւ կան հայրենադարձներ⁶ են (Անճար, Պէյրութ, Քեսապ ծնած, կան Սիպերիա արքորուած, Հայաստանի մէջ լուսանցքայնացուած, հնչակեան/ռամկավար/ դաշնակցական/ անկուսակցական): Կան նաեւ բնիկ արեւելահայ հարսեր (երբեմն՝ մայրը ռուս), եւ նուազ թիւով՝ ներգաղթած-արտագաղթածի զաւակներ: Հարսերը ընդհանրապէս Երեւանի ծնունդ են՝ կան Երեւան հաստատուած, կան ալ գիւղերէն ու շրջաններէն (Ալավերդի, Գիւմրի, Օծուն) Երեւան բարձրագոյն ուսման եկած: Այս հարսերու ծնողքներուն մեծամասնութիւնը միջակէն վեր, զարգացած, բարձր կրթութեամբ ու լաւ աշխատանքի է:

Բ. Ուսումնական մակարդակ

Բոլոր հարսերը անխտիր երկրորդական ուսումով անձեր են: Կան որոնք Պոլիտեխնիկ/Բժշկական ակադեմիայի թիշկ/ճարտարա-

⁵ Առաջին նման ամուսնութիւնը կնքուած է Վարուժանի եւ Սվետլանայի միջեւ 1961ին:

⁶ 1920ականներու կան 1946ականներու ներգաղթեալներու զաւակներ/թոռներ են անոնք:

պետ/մասնագետներ են, կամ՝ ճագ-էսթրատային քոլեճ կամ Երեւանի առեւտուրի ուսումնարան աւարտած են: Կան ուրիշներ, որոնք համակարգիչի մասնագիտութեամբ թերաւարտ են, Բրիւսովի անուան օտար լեզուներու համալսարան՝ անգլերէն ուսանելու դիմած են, բժշկական ուսանելու երազն ունեցող բայց առիթը չունեցած անձեր են: Անոնց շարքին են նաեւ գործավարներ, ընկերութեան հսկիչ-գանձապահներ, եւն:

Եթէ 1960-90ականներու հարսերուն բացարձակ մեծամասնութիւնը համալսարանաւարտ է, նոյնը չէ պարագան յետ-1990ականներու հարսերուն, որոնց մէջ շօշափելի թիւ են ուսումնարան, երկրորդական վարժարան աւարտած անձերը:

Մատնանշելի է, որ 1960-90ականներու հարսերը ուսումնական գերակշիռ դիրք ունէին Լիբանանի իրենց միջավայրի իգական սեռին դիմաց. «Մի մոռնաք որ այն ատեն (նկատի ունի 1960ականները - Ա. Տ.) [հոս, Լիբանան] Ժ. դասարանաւարտ աղջիկները բարձր ուսման տէր կը նկատուէին»: 1990ականներէն ետքի հարսերը գրեթէ չունին այդ գերակշիռ դիրքը, որովհետեւ լիբանահայ ուսումնական մակարդակը բարձրացած է:

4. Ամուսիններ

Որոշակի տարբերութիւն կայ համալսարանական գրասեղաններուն շուրջ առկայծած երիտասարդական սիրոյ ու այն պարագաներուն միջեւ երբ ենթական աւելի իրատեսօրէն սէր ու ընտանեւորուիլ կը փնտռէ: Բնական է նաեւ, որ հոգեբանական տարբեր ելակէտերէ սկզբնաւորուած սէրերը յետագային իրենց տարբեր դրսեւորումները ունենան: Կայ նաեւ ժամանակի ընկերային ընդհանուր տրամադրուածութիւնը եւ միջավայրի վերաբերումը: Արդարեւ, սփիւռքահայ առաջին ուսանողներուն հանդէպ մարդկայնական, զգացական ուրիշ տեսակի վերաբերում է եղած Երեւանի մէջ. «Մենք բնաւ չփուռ չէինք ունեցել սփիւռքահայու հետ: Մեր վերաբերումը իրենց հանդէպ շատ սրտաբաց, քնքուշ, հոգատար էր. ամէն ճիգ կ'ընէինք, որ օգնենք իրենց, քանի որ հայ էին եւ մեր կորած հարազատներն էին եւ՝ քանի որ մենք «ամէնա» ենք՝ ըստ սովետական մեր դաստիարակութեան»: Յետագային երկուստեք այս մօտեցումը կը փոխուի:

Միւս կողմէն, սփիւռքահայ այս տղաքը ունին ուրիշ գրաւչութիւն՝ հարսնցուին դիտանկիւնէն: Հարսնցուն իր միտքի ծալքերուն մէջ, կը բաղդատէ իր ամուսինցուները. «Լիբանանի տղաները աւելի հոգատար են, հաւատարիմ են, կազմակերպ են, ընտանիք սիրող: Լիբանահայերը շատ կնոջը արժէք չեն տալիս՝ ի տարբերութիւն եւրոպացուց, բայց... այստեղի հայրերը աւելի հոգ տանող են երեխաներին, կնոջ ձեռք բռնող են, շատ օգտակար կ'ըլլան կնոջ՝ զաւակ մեծցնելուն»: Ուրիշ մը կը շեշտէ. «արտասահմանցիների վերաբերմունքն էր. մեղմ խօսել, յարգալից ու կիրթ լինել. ասոնք գրաւչութիւն ունէին ի տարբերութիւն հայաստանցի այրերուն»: Ուրիշ հարս մը կը բացատրէ. «Հայաստան խախտում կ'ընես ամբարտաւան կը հակադարձեն, հոս աւելի հանդուրժողական են, հոս նոյնիսկ կռիւի մէջ չափը չեն անցնիր»: Երբեմն այս բաղդատութիւնը կ'անցնի վերոյիշեալ մարդկային ծիրը՝ «Երեւանի օդը, ջուրը, հայրենիքի շունչը փնտռում են», եւ այնքան ալ դրական գործօն չի հանդիսանար. «Մենք այնպիսի դիրքի էինք Հայաստան որ եթէ մնայինք մենք շատ լաւ տեղ կը հասնէինք. մինչեւ հիմա տղաներս կ'ըսեն երանի հոն մնայինք»:

Ուրեմն, համարկման եւ հետեւաբար առողջ եւ արդիւնաւետ գործակցութեան մէջ իր դերը կը խաղայ միջավայրի վերաբերումը, բարոյահոգեբանական մօտեցումը, ենթականերուն տարիքը, ընտանեւորման ելակետը, ազգային-գաղափարական մթնոլորտը, ինչպէս նաեւ մարդկային յարաբերութեանց ու կենցաղային պայմաններու բաղդատութիւնը:

Գ. Հանդիպման պարագաներ, պսակի գործընթաց եւ խոչընդոտներ

1960-90ականներու առաջին հանդիպումներուն բացարձակ մեծամասնութիւնը կայացած է համալսարանական գրասեղաններուն վրայ. սփիւռքահայ ուսանողները լաւ ռուսերէն պէտք էր սորվէին, որովհետեւ մասնագիտական գրականութիւնը ռուսերէն էր. իսկ ռուսերէն գործածելու լաւագոյն միջոցը հայաստանցի դասընկերուհիներու հետ ռուսերէն խօսելու վարժանքն էր, մանաւանդ որ անոնք նոյն հանրակացարանը կը բնակէին, իսկ «Դասարանը 150 հայաստանցի ուսանողի կողքին 7 սփիւռքահայ ուսանող կար»: Յաճախ ռուսերէնի ուսուցչուհին կը թելադրէր որ

ռուսերէն սորվեցնեն: 1990ականներէն ետք կացութիւնը ունի նաեւ տարբերակներ. այսպէս՝ հանդիպումը կը կայանայ պատահաբար, երբ երկուքն ալ կը գտնուին իրենց ընդհանրական ծանօթի տուն, կամ ապագայ ամուսինը թաղակից տուն կը գնէ Երեւան, իսկ ապագայ հարսնցուն այդ տան դրացիին կ'այցելէ եւ կամ նոյնիսկ՝ «թաղում ծանօթացանք»: Երբեմն այդ հանդիպումները պատահական չեն. «ունէինք ընդհանուր բարեկամ որ մեզ իրար ծանօթացուց՝ ամուսնութեան նպատակով»: Երբեմն մայրական կարգադրութիւններ ուղղակի կամ անուղղակի դեր կը խաղան. «...իր մայրը մօրս հետ գիրք դրկեր էր իրեն: Եկաւ մեր տուն, ծանօթացանք իրար, գիրքը առաւ եւ ընտանեկան յարաբերութիւն յառաջացաւ»: Կան եւ այլ պարագաներ. «բումս սէր՝ առաջին հայեացքից չէ եղած, քանի երկուքս ալ ապտակ կերած էինք, հետեւաբար որոշ հասունութեամբ ու փորձառութեամբ կը մօտենայինք իրարու»: Յատկանշական է եւ այս պարագան. «Ամուսինս արտաքինով գեղեցիկ էր, լեզուն էլ բերանը. ես ռուսական կրթութիւն ունէի, հայերէնից էլ շատ տկար, գրական լեզուից՝ զրօ: Ինք էլ հայոց պատմութիւն կը խօսէր՝ շատ մեծ բան կը թուէր ինձի, մանաւանդ որ ես չգիտէի...: Բնաւորութեամբ մեղմ էր. համակրանք յառաջացաւ, բայց ըսի որ անկարելի է չեմ կրնար [ծօգել Յայաստանը]. երբ որ որոշեմ՝ ես կը գրեմ քեզի ...Միւս կողմէ, եղբայրս ամուսնացաւ աղջկայ մը հետ որ ուրիշ տիպի էր: Սկիզբը առանձին ապրեցին, յետոյ մնացին մեր տուն... ես սկսայ ինքզինքս աւելորդ զգալ տանը... անհամ վիճակ յառաջացաւ ... ուզեցի փախչել տնից, աչքիս ոչինչ չէր երեւում...»:

Ռուսերէն սորվելու ընթացքին թէ գրասեղաններու ետին, կամ ալ այլապէս՝ կը յառաջանայ «փոխադարձ համակրանք» եւ զազսի⁷ գործընթացը սկիզբ կ'առնէ 6 ամիսէն մինչեւ 6 տարի, եւ նոյնիսկ՝ ծանօթացումէն ինն տարի ետք, երբ այրը կը յայտնէ որ կ'ուզէ իր ընկերուիին հետ ընտանիք կազմել: Երբեմն զազսը ի մասնաւորի հայաստանցի ծնողաց կամքին հակառակ կը կայանայ. «դա զազս-առեւանգում էր, առանց ծնողքների ներկայութեան»: Իրենց համար անհասկնալի էր փրօ-Յայաստան շրջանակ՝ Սփիւռքի մէջ: Իր հօրեղբայրը երկու անգամ մերժուելէ ետք չեկաւ եր-

⁷ Քաղաքացիական պսակ:

որո՞ղ անգամ խնդրելու ձեռքս: Ստիպուեցանք երկուսով զագս ընել: Իր ընկերները կային: Ձագսից միառժամանակ ետք զանգեցի տունն թէ՛ էլ տունն չեմ գալու. Փետրուարին մայրը եկաւ եւ վերջապէս պսակը եղաւ Ս. Զռիփսիմէի տաճարին մէջ»: Ահա եւ այլ պարագայ մը. «Ինք գնաց-եկաւ ու միշտ նամակ կը գրէր: Անգամ մըն ալ եկաւ՝ պատրաստուած նշանուելու. ես չէի ուզեր: Մեր ընդհանուր ծանօթները, որոնք Պէյրուսէն իրեն հետ եկեր էին, սկսան առարկել. «Ինչպէս կարելի է... ան Պէյրուս լուր էր տարածեր թէ կ'երթայ նշանուելու... եւ իրենք խայտառակ կ'ըլլան Պէյրուս...»: Ըսի լաւ. շատ մակերեսային մօտեցայ»: Երբեմն, երբ փեսան ուսանող չէ, պսակը չի կայանար Հայաստան այլ՝ փեսայի ծննդավայրը, հարսի ամենամօտիկ հարազատներու՝ ծնողաց, քոյր-եղբօր ներկայութեան: Այլ խօսքով, համարկման նախաքայլերը կը դիմագրաւեն միջավայրի լուրջ խոչընդոտներ որոնք կը լուծուին ամուլին վճռակամութեամբ:

Ե. Առաջին զիջումներ

Ամուլի գոյացման ընթացքին, առաջին շօշափելի զիջումը կը կատարուի հարսին կողմէ. «Ինք պիտի աւարտէր համալսարանը, իսկ ես դիմած էի համալսարան՝ ուսանելու, ինք ըսաւ որ չի կրնար հինգ տարի սպասել»՝ հետեւաբար հարսնցուն կը հրաժարի համալսարանական ուսումէ: Ուրիշ մը թերի կը թողու իր համալսարանական ուսումը (նոյնիսկ ասպիրանտուրան), երբեմն ծնողքի փափաքին կը հակառակի կամ կը ստիպուի իր նախանձելի գործը թողուլ, նոյնիսկ իշխող Համայնավար Կուսակցութենէն հրաժարիլ: Երբեմն հարսը ամէն ինչ իր ետին կը թողու ու կը մեկնի իր ամուսինին ետեւէն. «Ես ընտանիքին միակն էի որ արտասահման հարս գացի. հիմա բոլորը հոն են դեռ»: Երբեմն հարսը անուղղակի պարտադրանքի կ'ենթարկուի՝ որ բնական հետեւանքն է փեսացուին հետ իր յառաջացուցած յարաբերութեան զարգացումին. «Արտասահման գալու գաղափարը չկար մէջս, արտասահման երթալը միտքիս ծայրէն չէր անցներ, քանի գիտէի որ երբ կուսակցական պիտի ըլլայի ես այլեւս դուրս պիտի չելլէի»: Հարսի կողմէն զիջումը յետագային այլ ձեւով եւս կը շարունակուի. «Կեանքիս մէջ իր կամքին հակառակ բան չեմ ըրած. չէի ուզեր զինք նեղացնել. ասիկա զիս չցաւցուց, որովհետեւ իր մօ-

տեղումը, իր սերը այնքան զօրաւոր է որ այս ամէն զոհողութիւնները ըրած են իրեն համար. ամէն տեղ իրեն հետ գացած են»:

2. Փոխադարձ զիջումներ. տեղափոխութիւն Սփիւռք՝ համարկման նոր միջավայրը

Ի տարբերութիւն «համալսարանական» պսակներուն, որոնց պարագային երբեմն ամոլը ուսումը/պրակտիկան/մասնագիտացումը աւարտելու համար միառժամանակ (մէկէն հինգ տարի), երբեմն ծնողքէն անջատ բնակութեամբ կը մնայ 33, այլ պարագաներու՝ քաղաքացիական պսակէն անմիջապէս (կամ՝ երկուքէն ութ ամիս) ետք կը տեղափոխուի փեսայի բնակավայր: Երբեմն, սակայն, թէ՛ համալսարանական եւ թէ՛ միւս պարագաներուն, հարսը միառժամանակ կը մնայ 3այաստան, մինչեւ որ քաղաքացիութեան իրաւունք ձեռք բերուի իրեն համար, կամ ալ բնակարանի կարգադրութիւնները ամբողջացուին: Երբեմն երկրին անկայունութիւնը կը դանդաղեցնէ եւ կը յետաձգէ տեղափոխութիւնը: Այլ խօսքով, կը յառաջանայ փոխադարձ զոհողութեան հանգրուանը, երբ ամոլը իրարմէ հեռու է եւ այրը (աւելի քան կինը) ջանք կը թափէ ընտանիքի վերամիացման, որ նաեւ ամուլի պաշտօնական միացման երկրորդ մարտահրաւերը կը հանդիսանայ: Այլ խօսքով, համարկումի գործընթացը կ'ենթադրէ զիջումներ ամուլէն:

Է. Համագործակցութեան առաջին արդիւնքներ. առաջին զաւակ, համարկման միջավայրային դժուարութեանց հարթում

«Համալսարանական» պսակներուն մէջ կան պարագաներ երբ առաջին զաւակը կը ծնի Երեւան՝ ամուլի ուսումնառութեան տարիներուն (կամ քաղաքացիական պսակէն մինչեւ հինգ տարի ետք): Ընդհանրապէս այս ամուլները կը ծնին երկու զաւակ, որոնց առաջինը՝ Երեւան, մինչ երկրորդը, կամ ընդհանրապէս վերջինը՝ փեսային ծննդավայրը (երբեմն իրերայաջորդ կամ մինչեւ 5-6 տարի տարբերութեամբ), մինչ երրորդ զաւակը (որ հազուադէպ իրողութիւն է⁸)՝ մինչեւ վեց տարի ետք:

Առաջին ծննդաբերութեան, գրեթէ առանց բացառութեան, միշտ ներկայ է հարսին մայրը, երբեմն՝ մեծ մայրը: Յաճախ երկրորդ

⁸ Կան նաեւ չորս զաւակներով ընտանիքներ:

ծննդաբերութեան ալ ներկայ է հարսին մայրը, որ միառժամանակ կը մնայ իր աղջկան մօտ: Եթէ ծննդաբերութեան նուազ ներկայ է փեսային մայրը, ապա կնունքին ներկայութիւն է փեսային ծնողքը: Ձաւակներուն անունները միշտ չէ որ կ'առնչուին ծնողաց անուններուն:

Կը թուի թէ ծննդաբերութիւնը կը փլցնէ հոգեբանական հիմնական պատ մը հարսին ծնողքին՝ ամուսնութեան հանդէպ ունեցած վերապահութեան, իսկ կնունքը նոյնը կ'ընէ փեսային ծնողքին: Հետեւաբար, զաւակի ծնունդը ընտանիքի կառուցման եւ միջավայրին կողմէ ընդունման համար կը դառնայ յատկանշական գործօն, եւ համարկման գործընթացին առաջին հանգրուանի դիւրացման սատարող: Այլ խօսքով, համարկունի դրական արագ արդիւնքները կրնան սահունացնել գործակցութեան եւ համարկման յետագայ գործընթացը:

Ը. Պէտք է ընդգծել կենցաղային ու ապրելակերպի տարբերութիւնը

Կարծէք թէ մշակութային ցնցում կ'ապրին ոմանք, մանաւանդ անոնք որոնք արեւմտահայ արմատներ չունին. այլապէս՝ նիստուկացի եւ կենցաղային աւանդութիւններու առնչութեամբ դժուարութիւն այնքան ալ չի նկատուիր, մանաւանդ ՅՕականներու հարսերու պարագային: Կենցաղային ցնցումը մեծ է ոչ-արեւմտահայ արմատներով հարսերուն քով. «Կենցաղը՝ ինչպէս կ'արթննան, կ'ուտեն, օրէնքները, ճաշերը տարբեր էին: Բոլոր ճաշերուն անծանօթ էի... կեսուրիս հետ հինգ տարի ապրեցայ որպէսզի սորվիմ... Արժէքային համակարգին մէջ ալ տարբերութիւն կայ. հոն տղան բանակէն վերադարձէն ետք կ'ամուսնացնեն, հակուած են աւելի զաւակին օգնելու. հոս՝ կը ձգեն որ մեծնայ, ինքզինք գտնէ, գործ ունենայ, վայելէ մինչեւ ամուսնանալը», «...ամէն ինչ ուրիշ էր. ճիշդ է նոյն հայերն են, բայց ուրիշ են. բարքերը... Երեւանում դուռ կը դակես ու հաց կ'ուզես, այստեղ՝ ոչ:

...Երեւան աւելի բաց միջավայրի մէջ էի. հոս աւելի պահպանողական էին»: Ուրիշ մը կը շեշտէ. «Պատկերացնում էք Պար Իլիասով⁹ գաս ու անցնես Անճար»: Մշակութային/կենցաղային ցն-

⁹ Անճարի մօտակայ, մշակութապէս եւ կենցաղային առումով նուազ զարգացած լիբանանեան մեծ գիւղ:

ցումին զուգահեռ է մակարդակի անկումին փաստը. «Առաջին տարիները շատ դժուար եղան. Հայաստան ապրած այդ բարձրութիւնից ընկանք ոչ թէ գետին, այլ փոս. տարիներ պէտք էր մակերես հասնելու»: Ուրիշ մը կը գանգատի. «Ընդհանուր անմակարդակութիւն կը տեսնեն [բայց] կը հաշտուին»:

Թ. ՀՀ ուսանելու մեկնող լիբանահայ երիտասարդներու մեծ մասին ծնողական նիւթական վիճակը բարեկեցիկ չէր, հետեւաբար ամուլը կը դիմագրաւէ **կենցաղային-տնտեսական դժուարութիւններ**. «դժուարութիւնները ընդհանրական են՝ տնտեսական: Սկիզբը կենցաղային եւ կեցութեան դժուարութիւններ ունեցանք, յետոյ ամուսինս սկսաւ աշխատիլ ու բարելաւուեց մեր վիճակը»: Երբեմն հարսին նպաստը կ'ըլլայ կենսական. «...Ամուսինս կ'աշխատէր բայց իր եկամուտը չէր բաւեր. պարտքերու մէջ էին. հետս բերած ապրանքէս ու դրամէս մաս մը պարտքերուն զնաց. ինն սնտուկ ապրանք-օժիտ բերած էի հետս, նոյնիսկ գունաւոր հեռատեսիլ: Վաճարեցի ու խոհանոցը սարքեցինք»: Նիւթական բարելաւման իբրեւ հետեւանք, ամուլը կ'անցնի անջատ տուն, երբեմն փեսայի ծնողաց կողքին, կամ անոնց տան վրայ (երբեմն նոյնիսկ անոնց նիւթական օժանդակութեամբ) երբեմն ալ ամուլը նիւթապէս կ'աջակցի ծնողաց: Երբեմն կեցութեան պայմանները անկարելի ըլլալով հարսը կը ստիպուի միառժամանակ վերադառնալ ՀՀ, կամ՝ «...Երկու օր կեսուրիս տունը մնացինք, ապա երկու ամիս տեքորիս տունը, որուն խոհանոցը աւելի բարուօք վիճակի մէջ էր», «...նորածինի հոգածութեան եւ մաքրութեան մտահոգութիւնները կային: Կեսուրեմնցս տունը չունէր այդ յարմարութիւնները, յետոյ կեսրայրս վթարի էր ենթարկուել», ու երբեմն փեսային հայրական տունը կ'ընդգրկէ նաեւ փեսային մեծ մայրը, հիւանդ ծնողքը, ամուրի եղբայրն ու քոյրը¹⁰: Երբեմն տունը կ'ունենայ շատ անմխիթար վիճակ. «Երբ հաստատուեցանք Պէյրութ, տունը պասս պարապ էր. դանակ-պատառաքաղից ենք նոր սկսել: ԱՖԷՏԷՆ¹¹ դրամ փոխ առինք ու կահաւորեցինք ծնողական տունը»: Ծնողական տունը լքելու այլ պատճառներ ալ կան. «Ծնողքը հակառակ որ մեզ շատ սիրեց՝ չընդունեց, կարծեցին որ տունը պի-

¹⁰ Ասոնց պէտք է բարդել երբեմն դրացիներու եւ ազգականներու միջամտութիւնը:

¹¹ Լիբանահայ ներհայկական փոխօգնութեան դրամատուն:

տի առնենք»: Երբեմն փեսային եղբայր-քրոջ պսակը, կամ անոնց առանձին ապրելու փափաքը անկիւնադարձ կը հանդիսանայ ամուլին համար եւ ամուլը կ'անցնի կեանքի աւելի լաւ պայմաններու:

Երբեմն, ծնողքէն անջատուիլը կը տեւէ ութ տարի: Կան պարագաներ, երբ ամուլը կը մնայ ծնողքին տուն՝ մնայուն. «Բնակեցանք այս տունը. կեսուրս վեց ամիս հոս է, վեց ամիս՝ հարսին քով՝ Մ. Նահանգներ: Տունը ուրիշ մէկը չկայ»: Երբեմն այս գոյակցութիւնը կը տեւէ մինչեւ փեսային ծնողաց մահը:

Ժ. Կայ նաեւ դժուարութեան այլ՝ մարդկային գործօն մը՝ կարօտը, որ կը նուազի բայց չ'անհետիր, եւ ունի նաեւ այլ՝ նուազ տեսանելի բայց էական դերակատարութիւն ու հետեւանքներ. «Երբ հոս եկայ բացարձակ մէկը չէմ ունեցած: Ծնողքէս հեռու ըլլալը խնդիր էր ինձի համար: Երբ եկայ հսկայական պարապի առջեւ գտայ ինքզինքս: Խորհուրդներու համար կ'երթայի ամուսնուս մեծ քրոջ քով... «Տարիքի հետ յաղթահարեցի կարօտս»: Իսկ միջավայրը դրապէս կ'ազդէ. «Հայկական մթնոլորտին,- կը հաւաստէ հարսերէն մին,- շատ օտար չենք զգար մեզ. պզտիկս առտու կ'ելլէ՝ ապահով կը զգամ»: Ոմանք այս հայկական ազգային երեսակը չեն տեսներ եւ հոգեբանական շեշտակի ու յաւելեալ հակումներ կը դրսեւորեն դէպի իրենց ամուսինները. «Հիմա եզրակացնում եմ որ ես կեանքում շատ մեծ բան եմ շահել՝ անձնական գետնի վրայ, բայց տուել եմ շրջապատս, հայրենիքս. կարող եմ հրաժարուել ամուսնուցս կամ հայրենիքից»: Կան, սակայն հարսեր, որոնք կը դժուարանան:

ԺԱ. Այս եւ նման դժուարութեանց յաղթահարման համար թերեւս մեծագոյն գործօնը ենթակայական է. հարսին բնաւորութիւնը, տրամաբանութիւնն ու զգացումները¹². «Իմ շահերը ինձ թելադրեցին որ ընդունեմ կեանքս. թէ սա՛ է իմ կեանքը, ի՛մ ընտրութիւնն է: Յարմարուեցայ կեանքին, ես աւելի կապուեցի իմ ընտանիքին, ինչ որ չտեսայ շրջապատիցս, փորձեցի առնել երեխաներիցս ու ամուսնուցս ու բաւարարուել նրանց քջով»: Ուրիշ մը կը բացատրէ. «Յարմարիլ միջավայրին, ընտանիքին, որովհետեւ երկրէ մը եկած էի, ուր ապրելակերպը, մտածելաձեւը ուրիշ էր:

¹² Այս մասին, տե՛ս այլուր՝ տարբեր ենթախորքով:

Հարս մտնելու ետք որոշեցի՝ ես իրենց պիտի յարմարիմ. բոլորս ալ այնքապցի էինք: Կետուրս կ'եփէր ճաշը: Ես շատ գէշ ատեն եկայ Լիբանան (նկատի ունի Լիբանանի քաղաքացիական պատերազմի հանգրուանը - Ա.Տ.), բայց երբեք չեմ ուզած երեխաներս առնելով Հայաստան երթալ»: Ոմանց պարագային նկատելի է նաեւ հայրենասիրական դրդապատճառ. «1960ականներու հարսերուն պարագային 1958ի յիշողութիւնները թարմ էին: Ատելութիւնը երկուստեք էր. չեմ ներած որ հայը հայուն կրնայ մորթել»: Եւ քանի որ 1958ին Երեւան եկած սփիւռքահայերը կը պատմէին եղբայրասպանութեան մասին, հարսը կանխատրամադրուած է խնդիր չունենալու մոր միջավայրին մէջ:

Ի յաւելումն այստեղ գրուածին, ոմանք համարկումին յաջողունը կը վերագրեն անձնական ճիգի, հասկացողութեան, գիտակցութեան, ինքնակրթութեան, հայկական միջավայրին. «Բնաւորութեամբ մերուող եմ», «Ես մեջէս ալ ունէի», «գաղափարական հայրենասիրութիւնը պատճառ դարձաւ որ դիւրին մտնեմ իրենց մէջ», «Ես հարս գալէս յետոյ ինձի համար ամուսինս, զաւակներս, յետոյ ծնողքս կու գայ: Հայաստանցիներու մեծագոյն փրոպէնը ատ էր», «Ինձ սկիզբէն համոզեցի. մտածեցի որ աս է իմ երկիրս, բայց մինչեւ հիմա ալ Հայաստանը կը մնայ հայրենիքս: Նոյն չափով ալ Լիբանանը կը սիրեմ, քանի կեանքիս կէտէն աւելին հոս ապրած եմ», «Ընտանեկան կենցաղային փոփոխութիւններու ենթարկուեցայ: Հիմա [Անճարի] բարբառով, թէւ սխալ, բայց կը խօսիմ: Սենք երկուքս (սփիւռքահայերն ու հայաստանցիք - Ա.Տ.) ինչո՞վ տարբեր ենք. շատ համահունչ ենք, արժէչափերու համակարգը մոյնն է՝ երեխայ մեծցնել»:

ԺԲ. Բայց ոչ-բոլոր հարսերը այսպէս են վարուած. անոնցմէ մին կը դիտարկէ. «Լիբանանի մէջ հայաստանավարի ենք մտածուն՝ յարաբերութիւններդ, ընդունելութիւններդ: Սխալ էր. պէտք էր կտրէինք, գոցէինք [Հայաստանը] եւ ապրէինք Պէյրութ: Իսկ երբ հեռատեսիլը սկսաւ, ամբողջովին կտրուեցանք Լիբանանէն, այլապէս թերեւս կ'անցնէինք այս կեանքին: - Ու կը շարունակէ,- Անոնք որոնք կարօտախտը կրցան մէկդի դնել, դադրեցան հայաստանցիի պէս ապրելէ, անոնք որոնք կրցան հայաստանցիութիւնը մէկդի դնել,

կրցան անելի հանգիստ ապրիլ: Անոնք որոնց ամուսինները իրենց կիները հրեցին որ լեզու սորվին, անոնք լաւ են հիմա: ...Հայաստանի գնացքին չնստանք, այստեղի գնացքին ալ ուշացանք: Չմերուիլը ինքնաբերաբար եղաւ. թերեւս հանգամանքները ստիպեցին, ոչ թէ մեր ուզել-չուզելը: Կապ ունի՞ համարկուիլը ինքնադրսետւորման հետ: Ես չեմ կարողացել լիարժէք դրսետւորուել, երազներս իրականացնել. կրնայի շատ լաւ բժիշկ ըլլալ, շատ լաւ օգտակար կրնայի ըլլալ, բայց լեզուական կաշկանդունը խոչընդոտեց»:

ԺԳ. Առաջին հինգ տարին կը թուի ամենէն դժուարն ըլլալ համարկունան գործընթացին մէջ: Քիչերն են որ դժուարութիւն չեն ունենար այդ շրջանին. «Բոլորը զարմացած են, նոյնիսկ մայրս, որ առաջին երկու ամիսը քովս էր. զարմացած են որ դժուարութիւն չունեցայ: Մէկ անգամէն մերուեցայ»: Նման սահուն «մերուելուն» մէջ դէր կը խաղայ տեղական ընդունելութիւնը. «Ձիս ընդունեցին շատ լաւ. օտարութիւն չգագցի. միջավայրի փոփոխութիւն կար. տարբեր էին սովորութիւնները, ապրելակերպը, հիւրասիրման ձեւերը, խօսելակերպը, բայց յարմարեցայ: Կեսրայրս անելի մեղմ էր: Կեսուրս կ'եփէր ճաշը»: 1960ականներու հարս մը կը հաստատէ նոյնը. «Միջավայրիս մէջ բոլորը զիս շատ կը սիրէին, իմ գնումներս իրենք կը սակարկէին, «մեր հայաստանցի հարսը» կ'ըսէին: ...Իրենց ոգետրութիւնը կը վերագրեն իմ հայաստանցի ըլլալուն: Ընտանիքէն հեռու ապրող էքզոթիք կենդանի մըն էի իրենց համար»: Ուրիշ մը կը կրկնէ. «Ինձի համար ծնողքը մեծ հօրս ու մեծ մօրս պէս էին»: Բայց կան եւ այլ պարագաներ. «Երբ բանը բանէն անցած էր, երկրորդ զաւակով յղի էի, մտածեր էի երթալ Հայաստան ու ետ չգալ... շրջան եղաւ երբ երեխայովս ռումբերու տակ քալած եմ եւ աղօթած որ ռումբը գայ ու մեզ կտոր-կտոր ընէ... Որոշեցի չվերադառնալ Պէյրութ, բայց եղբօրս Հայաստանի հարսն ալ համ չէր տար... Յետոյ մտածեցի որ զաւակներս ալ կրնան մեղադրել զիս թէ մեր հայրն է ինչ ալ ըներ պէտք էր դիմանայիր»:

ԺԴ. Սակայն միշտ չէ որ յարաբերութիւնները լաւ կը մնան. «Հարազատներուն հետ սկիզբը լաւ էինք, յետոյ եղան անձնական վիրաւորանքներ. երեւի սպասելիքներ ունէին իրենց զաւակէն. սկիզբը շատ դժուար եղաւ, ընտանեկան սերտ յարաբերութիւնները չմնացին»: Կարելոր է նաեւ փեսայի հարազատներու վերա-

բերումին ժամանակային գործօնը, մանաւանդ որ «Կեանքիս մէջ առաջին անգամ է որ Յայաստանէն դուրս կ'ելլի: Յետոյ սկսան ցնցումները», «Երբ Անճար եկայ միայն զիրենք գիտէի»: Ուրիշ մը կը ցաւի. «Սկզբից կեսուրս չընդունեց ինձ: Իբրեւ մայր՝ ինք մասնակից չեղաւ նշանդրէին, եւ դա իր ազդեցութիւնը ունեցաւ. կար սառնութիւն, անտարբերութիւն»: «Սկիզբը մեզ չընդունեցին, իսկ յետոյ երբ ընդունեցին՝ արդէն ուշ էր», - կը փսփսայ ուրիշ մը:

Կան եւ աւելի ծանր պարագաներ. հարսերէն մին կը բանայ վարագոյրին ծայրը. «Իմ կարծիքովս լիբանանցի մայրերը չեն սիրեր հայաստանցի հարսերը, որովհետեւ մայրերը չեն ընդունիր այդ հարսերուն կարողութիւնը՝ գործի թէ միտքի: Խօսքը իմ սերունդիս մասին է, իմ եկած ատենս հոս աղջիկները [շատերը] չորրորդ դասարանէն կը դադրէին. երբեք նկատի չառին իմ ուսումս: Մայրերը հայաստանցի հարսերու տուն վարելու սիսթեմը չէին հաւնէր, վերէն կը նայէին. կեսուրիս հետ տասնհինգ տարի մայր ու աղջիկ ապրած եմ, որմէ ետք զիս սատանայ տեսաւ, չընդունեց իմ ընտանիք ղեկավարելս, ուզեց իրմէ կախեալ ապրիմ: Հարս ու կեսուր մէկ տղայ կը սիրեն. մայրը անձնասիրաբար զաւակը իրը կը շարունակէ նկատել ամուսնութենէն ետք իսկ, եւ կը պնդէ նաեւ որ ամէն որոշում իրմէ պէտք է ելլէ: Լիբանանցի հարսին պարագային այդպէս չէր, որովհետեւ լիբանանցի հարսը կոմակ ունէր... Մեզ չքաւոր երկիր կը նկատէին, անօթի, աղքատ, իրենք մեզ հազցուցեր, կերակրեր են, իբր թէ մենք չքաւորութենէ կը փախչէինք Յայաստանէն: Իբր թէ ամուսնութիւնը առիթ էր աղքատ երկրէն դուրս ելլելու»:

ԺԵ. Սկզբնական շրջանի դժուարութիւններու հարթման զուգահեռ կը զարգանայ համարկումի գործընթացի առաջին օղակը, որ կը տեւէ չորս-հինգ տարի, երբ կը սկսին «զտուիլ սերերը, նախընտրութիւնները»: Ոմանք համարկուած կը զգան երկրորդ տարիէն եւ այնուհետեւ՝ տարուէ տարի, անձը կը դառնայ աւելի «ինքնավստահ»: Համարկումը իր լայն թափը կ'առնէ երբ զաւակները կը սկսին յաճախել դպրոց ու հարսը կը սկսի ուրիշ, իրեն տարեկից ծնողաց ծանօթանալ, «օրը դասաւորել», այլապէս՝ «երեխու հետ սահմանափակուել էի»: Համարկումը երբեմն այնքան կը խորանայ, որ յառաջ կը բերէ նախկին տեսակետերէ հեռացում: Հարսե-

րէն մին հեզմանքով կը նկատէ. «Ես ամբողջ կեանքս Հայաստան ապրած եմ, միակուսակցական երկիր, միշտ լսած եմ որ դաշնակցները լաւ չեն: Պատերազմի օրեր էին մեկներ էի Երեւան: Գացեր էի օվկր ու երբ ըսի թէ Պուրճ Համուտ կ'աշխատիմ, ըսաւ դաշնակցներու՞ն մէջ, եւ թէ՛ դաշնակցներուն հիւանդները կը բուժեն»:

Համարկման երկրորդ օղակ

1. Տեղական միջավայր

1ա. Կարողականութեան դրսեւորում եւ խոչընդոտներ

Աշխատանքը՝ համարկման գործընթացի իւրօրինակ դրսեւորումը եւ առաւել սատարող գործօնը, միշտ ալ ուշ ներգրաւուած է: Գրեթէ չկան պարագաներ, երբ հայաստանցի հարսը փափաք չունենայ աշխատելու: Կա՛յ այդ փափաքը՝ կա՛մ առանձին աշխատելու իր մասնագիտութեամբ, կա՛մ ալ աջակցելու ամուսինին ձեռնարկելիք ազատ ասպարէզի նոր աշխատանքին՝ ըստ իր գիտելիքի կամ ուսման փորձառութեան: Քիչ են պարագաները, երբ հարսը չփափաքի աշխատիլ. «չաշխատելուս այլ պատճառ մը ներքին բարդոյթս էր որ ե՛ս պիտի նայիմ երեխաներս, առ ի հակադարձութիւն իմ ծնողքիս, որոնք իբրեւ կրթական գործիչ չէին կրցած մեզի հոգալ»: Սակայն կան գործօններ, որոնք կը խոչընդոտեն:

Երբեմն ամուսինը չի թողուր եւ չ'ուզեր որ կինը աշխատի, ինքնաշարժ վարէ¹³: Արդարեւ, միշտ չէ որ ամուսինը կը նախաձեռնէ իր հայաստանցի կողակիցը համարկելու¹⁴: Հարսերէն մին կը շեշտէ. «Իմ շրջանակս ստեղծեր եմ միմակ ինքս»: Ուրիշ մը կը շարունակէ՝ «Հրատարակած եմ գիրքեր, վերջերս ալ կազմակերպեցի իմ գիրքիս գինեծօնը», «Գալէս ի վեր տանտիկին եմ. ամուսինս չու-

¹³ Ակնկալուածը ամուսինի քաջալերանքն է, որ աւելի մտայնութեան խնդիր կը նկատեն հարսերը, մատնանշելով որ ՀՀ ուսման մեկնողները խոնարհ, պահպանողական դասերէ էին:

¹⁴ Պէտք է ենթադրել որ փեսաներուն քով կար նաեւ մտահոգութիւնը եւ անվստահութիւնը իրենց կիներուն հանդէպ. անվստահութիւն՝ որ անոնք կրնան տհաճ վիճակներու մատուցիլ ու վնասուիլ օտար/նոր միջավայրէն, եւ հետեւաբար փեսաները իրենց կիները կրնային միջավայրին փոքրաթիւ անձերու վստահիլ, նաեւ՝ իրենց դպրոցական դասընկերներուն: Երբեմն տեղացի փեսաներու ընկերային-ակումբային դիրքը կ'օգտէ որ հայաստանցի իր կինը առիթ ունենայ դասախօսելու, ասմունքելու, երգելու, նուագելու:

զեց որ աշխատիմ, ըսաւ երեխաներս մեծցուր, չնայած որ շատ կը սիրէի աշխատիլ»: Կը յաջորդէ այլ հարսի մը ափսոսանքը՝ միջոցները չմէկտեղելու. «Ամուսինիս հայրը կօշկակար էր, մայրը դերձակ: Նոր տուն հիմնելու պարագային եթէ կեսուրները աջակցէին, ասեմք երեխաները պահէին, եւ առիթ տային որ կինն ալ աշխատի...»: Գրեթէ միշտ խոչընդոտը զաւակներուն փոքրութիւնն է, մանաւանդ որ տեղացի երէց ծնողքը չ'ուզեր լիաժամ հոգալ թոռնիկը/թոռնիկները¹⁵. «տնեցիք ըսին թէ ով պիտի նայի երեխաներուն... ի՞նչ ընեն, որու՞ ձգեն. երբ գար երեխան՝ ես տունը պէտք էր ըլլայի»: Ու մին ափսոսանքով կը մատնանշէ. «Չայաստանցի հարսեր կան հոս, որոնք պէտք է ամուսնական կեթոյի մէջ բնակին. կին որ Կոմիտասի անուան երաժշտանոցն է աւարտած... ոչինչ կ'ընէ...»: Կայ, սակայն, նաեւ հակառակ պարագան. «ամուսինս որեւէ ձեւով հակառակ չէր եղած ինձի. տան գործերս կը կիսէր»: Ուրիշ մը կը բացատրէ. «Չամարկունս հեզասահ եղաւ, որովհետեւ ամուսինս ալ զիս մղեց»:

1բ. Կայ նաեւ արաբերէն լեզուի իմացութեան խոչընդոտ-գործօնը, ուր դարձեալ ի յայտ կու գայ ամուսինին դերը՝ լեզու սորվիլ չքաջալերելու մէջ (թէև կան պարագաներ երբ հարսը քաջալերանքով թէ այլապէս կը հետեւի լեզուի դասերու). «Ամուսինս կ'ըսէր պէտք չկայ», «չեն ձգեր աչքդ բացուի, որպէսզի իր տիրապետութեան տակ մնաս», «իմ ռուսերէնս ոչինչ ըրաւ», «լեզուի արգելքը մեծ էր», «Միակ դժուարութիւնը լեզուական էր»: Ուրիշ մը, սակայն, կը հաւաստէ. «Չորս երեխաներս ես քշեցի օթոյով դպրոց»:

Արաբերէնի անգիտութիւնը կը յառաջացնէ նաեւ դպրոցական դժուարութիւն, որ կը դրսեւորուի զաւակներու արաբերէնի թուլութեամբ: Ոմանց կը թուի թէ «Անոնք որոնք լեզուական դժուարութիւնները յաղթահարեցին՝ արաբերէն եւ անգլերէն [սորվեցան], լաւ են հիմա. մենք բացարձակ ոչինչ գիտէինք»: Լեզուական դժուարութիւնը միայն անգլերէնն ու արաբերէնը չեն: Բազմաթիւ են պարագաները, երբ կը պարզուի որ հայերէն հաղորդակցելու եւս դժուարութիւններ կան. «Մեծ մայրը երեխային հետ բարբառ կը գործածէր, [ես՝] արեւելահայերէն կը գործածէի, միւսներուն հետ արեւմտահայերէն կը գործածէի»: Ուրիշ մը կը ծիծաղի. «Ու-

¹⁵ Նաեւ որովհետեւ այլ թոռնիկներ ունի:

նեցայ հիպոթիտ լեզու մը, զոր փոխեցի երբ աղջիկս սկսաւ դպրոց յաճախել, մանաւանդ որ ուղղագրութեան սխալներ ալ սկսաւ ընել: Մեր սերունդի լեզուի կէսը ռուսերէն էր, հոս զգացի որ իմ խօսածս մարդիկ չեն հասկնար, ստիպուած էի մաքուր հայերէն բառեր գործածել, որպէսզի հասկցուիմ»:

Հետեւաբար, լեզուի իմացութիւնը եւ լեզուն սորվելու ճիգը կարելոր միջոց կը դառնան աշխատանքի լծուելու՝ անձի կարողականութեան օգտագործման առումով:

1գ. Անձի կարողականութեան դրսեւորման այլ խոչընդոտ է գործազրկութիւնը: Կան պարագաներ, երբ հարսը իր մասնագիտութեամբ աշխատանքի կը լծուի իր ժամանումէն 24 տարի ետք: Այստեղ հարցը մասնագիտութեան դրսեւորման տեղական առարկայական պահանջարկին կ'առնչուի¹⁶: Ասոր առնչուող մանրամասնութիւն մըն է խորհրդային գիտութեան թերագնահատումը (մանաւանդ՝ սկզբնական 1960-70ականներուն). «հայաստանցի մասնագէտներուն ցանցի ետեւէ կը նայէին... 1963ին երբ եկանք, ամուսինս մի քանի ամիս անգործ մնաց. առաջին շրջանաւարտն էր: Հայ գործարանատէրերը քիչ կը վճարէին, 1963-1972՝ պաշտօնեայ էր. արտասահմանէն առաջարկ եղած է, բայց «դուն համայնավար երկրէ եկած ես» [կ'ըսէին ու կը մերժէին]...»: Այս երեւոյթին այլ տարբերակն է երեւանէն շրջանաւարտ բժիշկներու պետական բժշկական պարտադիր քննութիւնը՝ քուլքիում¹⁷: Կան պարագաներ երբ հարսը կը ստիպուի երեք անգամ քննութիւն տալ ոչ թէ գիտելիքի այլ լեզուի անգիտութեան պատճառով: Ահա թէ ինչու սկիզբը, կը թուի թէ հայաստանաւարտ լիբանահայերը կ'աշխատին նուազ վճարումով, երբեմն ոչ-լիարժէք, կամ՝ նոյնիսկ իրենց մասնագիտութեան մասնակի առնչութեամբ գործեր կ'ընեն, մինչեւ որ ճանչցուին իբրեւ մասնագէտ, վարժուին իրավիճակին, կապեր հաստատեն ու սկսին աշխատանքային մագլցումի: Նիւթական անբաւարար պայմաններու բերումով, սկիզբը, նորակազմ ամուլը (գրեթէ բոլորը) կը բնակի ամուսինին ծնողական տունը, ծնողաց հետ:

¹⁶ Աշխատանքի խնդիրը առաւել կը բարդանայ Անճարի մէջ:

¹⁷ Այս առնչութեամբ Լիբանանեան Համալսարան վարժեցման դասընթացքներ կը հաստատուին այսպիսիներուն համար:

1դ. Կարողականութեան դրսեւորման իւրայատուկ ձեւ է կամաւոր աշխատանքը: Երբ չկայ գաղափարական գործօնի խոչընդոտը¹⁸, հարսերը այս կամ այն ձեւով կը դրսեւորեն իրենք-զիրենք, կամաւոր ծառայութեամբ. «հասարակական աշխատանքը կը լեցնէ իմ օրս, եւ դուրս կը բերէ [զիս] լոկ տանտիկինութեան վիճակէն»: Քիչերն են որ չեն մտներ միջավայրի այս կամ այն յանձնախումբին, միութեան մասնաճիւղին, ընկերային մարմնին մէջ: Կամաւոր գործունէութիւնը կը սկսի հարսին ժամանումէն ոչ անմիջապէս ետք: Առարկայական նախնական (տեղաւորումի) ու ենթակայական (վարժեցումի) պայմաններու կարիքը կը թելադրէ նման գործունէութեան ուշացումը. «չմտայ, պարզապէս որովիտեւ դեռ մշակուած չէի»: Ասիկա կը տեւէ մօտ երկու տարի, երբեմն՝ մինչեւ տասներեք տարի: Փոքրաթիւ են անոնք, որոնք ցարդ տունէն դուրս չեն դրսեւորած իրենց կարողականութիւնը:

1ե. Կարողականութեան դրսեւորման այլ պարագայ է տնային գործունէութիւնը. «Կարել սորվեցայ. 1969ին Սուբ Թաուիլէն¹⁹ նուկիով կտոր կը գնէի ու հագուստ կը կարէի, որովիտեւ ամուսնուս եկամուտը բաւարար չէր: Կար կարելս շրջանակս լայնցուց, որովիտեւ այն ատեն ամէն կին իր հագուստը ինք կը կարէր: Պէյրութը շատ բան տուած է ինձի. հոս սորված եմ ձեռագործ, ասեղնագործ, քրոշէ, կար կարել սորված եմ սփիւռքահայ կիներէ: Յոս ես ականատես եղայ Սփիւռքահայ կնոջ հրաշագործ ձեռքերուն: Երեւան ամէն մարդ կ'աշխատէր, ատանկ բանի ժամանակ չունէր»:

1գ. Հարսերէն մին կը բացատրէ. «այլ պատճառ էր նաեւ իմ մարդամօտութիւնս եւ հաղորդականութիւնս», «միշտ լաւատես եղած եմ, եղանակը բարեխառնած է զիս»... «Ես յարմարող եմ»²⁰: Արդարեւ, մարդկային գործօնը դարձեալ իր բարերար դերակատարութիւնը կ'ունենայ: Յամենայնդէպս, զաւակ խնամելը, միութեանական կամաւոր աշխատանք, կամ ուղղակի վճարովի աշխատանք:

¹⁸ 1960-1990ականներու հարսերուն մօտ կայ որոշ վերապահութիւն կուսակցականացալու, որ սակայն յատկանշականօրէն չի տարածուիր իրենց զաւակներուն վրայ: Այսինքն, իրենք չեն արգիլեր որ իրենց զաւակները ոչ միայն ակումբ երթան, այլեւ դառնան կուսակցականներ:

¹⁹ Ատենի Կեդրոնական Պէյրութի նշանաւոր շուկաներէն մին:

²⁰ Այս մասին արելի ետք դարձեալ կ'անդրադառնանք:

տանք կատարելը միջոց էին. «Առիթ մը... որ ես զիս հաստատեմ, ինքզինքս դրսեւորեմ»: Ուրիշ մը կ'ընդգծէ. «Ուստի ոչ թէ շուկայի բացը լեցնել էր, այլ՝ իմ»:

Հետեւաբար, կարողականութեան առաջին իսկ դրսեւորումները առաւել համարկման եւ կարողականութեան առաւել օգտագործման հնարաւորութիւններ կ'ընձեռեն:

1է. Ընդհանրապէս, տպաւորութիւն կը յառաջանայ թէ կազմուած ամուսնեւորում մէջ ամուսինը նախաձեռնողն ու գերիշխողն է, հարսը՝ հետեւողը՝ հակառակ շատ յաճախ հարսին նախաձեռնող ոգիին: Հարսը ընդհանրապէս երկրորդական դիրքի վրայ է, նաեւ որովհետեւ Միջին Արեւելքի ընկերութիւնը այրիշխանական է: Այլ պատճառ մըն է հարսին համար միջավայրի օտարոտիութիւնը, անձանօթութիւնը, ուստի նաեւ անապահովութիւնը, կախեալութիւնը՝ գէթ միառժամանակ. «կը սարսափէի արտաքին աշխարհէն ... գաղափարական ժխտական դաստիարակութիւն առերէնք քափիթալիսք աշխարհի մասին...: Հայկական միջավայրէն դուրս ես հաշմանդամ էի: Երբ ամուսինս որոշեց ծնողքէն անջատ ապրիլ, ես սարսափեցայ, թէ՛ ինչպէս պիտի ապրիմ, եւ թէ ես պէտք է հայկական միջավայրի մէջ ապրիմ»:

Ահա թէ ինչու կը հանդիպինք պարագաներու երբ հարսը ամուսնութենէն միառժամանակ ետք, հասարակագիտութեան մէջ ծանօթ mid life crisis երեւոյթին ալ մղումով, թերեւս, «կ'ընդվզի»: Իրաւ ալ, ամուսին կարողականութեան համագոր դրսեւորում եւ կողմերու զոհացումից բաւարարութիւն չյառաջանալու պարագային ծայր կ'առնէ սկզբնական ամուսնական լռելեայն համաձայնութեան միակողմանի վերատեսութիւնը որ կը սպառնայ ընտանիքին կայունութեան²¹: Այլ խօսքով, բեկում մը յառաջանալու պայմանները կը գերակշռեն ու կը խախտեն տիրող ընտանեկան սթաթիս քօն: Այդ բեկումը յաջող վերահսկելու եւ լաւ վարելու պարագային արդիւնքները կ'ըլլան մեծապէս դրական, եւ հարսին համարկումը կը դառնայ օրինակելի, այլապէս կը կորսուի տան խաղաղութիւնը եւ աւելին:

²¹ Նման ընթացքը, առհասարակ, կ'ենթադրէ ամուսնական շուրջ տասնհինգամեայ ընթացք մը եւ հետեւաբար, այս երեւոյթը կը նկատուի առաւելաբար 1960-1990ականներու հարսերուն պարագային:

1ը. Այսպիսի հարսերը իրենք զիրենք կը նկատեն «հետեւող»: Անոնք մեղաւոր կը գտնեն իրենց դաստիարակութիւնը. «սխալ դաստիարակութեան արդիւնք էր»: Դաստիարակութիւնը երբեմն չէ սերմանած ինքնակերտումի, ինքնադրսելորումի նախածեռնելու հունտերը. «Երբեք դժգոհանք չյայտնեցի, պահանջքներ չդրի: Հաշտուած ձեւով ուզեցի ապրիլ», «Ամուսնանալէս ետք գաղափարականս մէկ կողմ դրած եմ», «Նաեւ այն՝ որ լեզուն չէի գիտեր, չէի կրնար առանձին բան ընել»:

Ոմանք, սակայն, կ'ապստամբին *սթաթիւս քօին* դէմ, եւ արդիւնքը երբեմն կ'ըլլայ տխուր. «Իրօք կորցրի ամուսինս, ընտանիքս, բայց գտայ ես ինձ...»: Հայաստանցի հարսերու կեանքի ընթացքը երեք տեսակ եղած է Լիբանանի մէջ.

ա) անոնք որոնք կեղեւին յաղթած են, կրցած են դրսելորել, իրենց մասնագիտութեամբ փայլիլ, ամուսինին հետ օրինակելի զոյգ գոյացնել,

բ) անոնք որոնք իրենց ամուսիններէն կախեալութեան մէջ մնացին եւ չկրցան դրսելորել. թերեւս ասոնցմէ ոմանց համար հաճելի է կախեալութեան զգացումը,

գ1) անոնք որոնք ուշ պատռեցին իրենց կեղեւը, ուրիշ ձեւով դրսելորեցին իրենց որոշ տարիքէ մը ետք, բայց ասոնց պարագային՝ խախտեցաւ կապը իրենց ամուսինին հետ,

գ2) անոնք որոնք չդիմացան ու բաժնուեցան, կամ ընտանիքը քայքայուեցաւ:

2. Հայաստանեան յարաբերութիւններ

2ա. Քիչ է թիւը այն հարսերուն, որոնք պսակէն ետք չեն գացած Հայաստան: Անոնք ընդհանրապէս 2000էն, եւ աւելի որոշակի՝ 2005էն ետք պսակուածներէն ոմանք են, որոնց նիւթական պայմանները արգելք կ'ըլլան: Անոնք կը գանգատին. «Հայաստանցի հարսերը Հայաստան երթալ-գալ կ'ուզեն՝ տոմսերը սուղ են: Եթէ Սփիւռք կ'ապրիս չի նշանակեր որ տնտեսապէս լաւ ես. այստեղացիք ալ կ'ուզեն երթալ, բայց տոմսերը սուղ են»...: Այլապէս, Պէյրութ տեղափոխութենէն մի քանի տարի ետք հարսը այցելու-

թեամբ կը մեկնի Հայաստան՝ միշտ իր զաւակ/զաւակներով, երբեմն նաեւ աներմօր հետ: Երբեմն անոնց աւելի ետք կը միանայ փեսան, իսկ եթէ Լիբանանի ապահովական կացութիւնը լաւ չէ, անոնք (մանաւանդ հարսն ու զաւակները) Հայաստան կը մնան ամիսներով: Առհասարակ, անոնք կը մնան ծնողաց տուն, երբեմն (եթէ սեփական տուն ունին) իրենց տունը կամ տուն կը վարձեն եւ հազուադէպօրէն պանդոկ կը մնան:

ՀՀ այցելութիւնները բազմաթիւ են եւ բազմակի. հարսերը չորս եւ աւելի անգամ են գացած ՀՀ: Կան պարագաներ, երբ հարսն ու զաւակները ՀՀ գացած են իւրաքանչիւր ամառ՝ երեք ամիս:

2բ. ՀՀ մեկնիլը ունի զանազան դրդապատճառներ. կարօտ, բնակութեան վայրի պատերազմական վիճակ²², ծնողաց անհանգստութիւն/կորուստ/տարելից, զաւակի ուսման խնդիր: Ուրիշ մը կ'ընդգծէ. «Կը կարօտնայի մայրս, հայրս, երկու քոյրերս. այն ատեն քիչ էին ձգող եկողները: Այն ատեն խորթ էր, հիմա սովորական դարձած է: Սփիւռքի մէջ վարժ են դուրս երթալու, հայաստանցիներուս համար այն ատեն ատիկա խորթ էր, մանաւանդ ոչ-ներգադթողներուն համար: Շատ կապուած էինք ընտանիքին»... «Երեւան երբ երթամ՝ դասընկերներս կը գտնեն», կամ, ինչպէս մէկը կ'ըսէ. «Հայաստանը ինծի համար միշտ պահեստ է, այսինքն կրնամ հոգիս լեցնելու, ամբարելու համար երթալ ու վերադառնալ: Կը կշտանայի ու այդ ամբարունով կը վերադառնայի՝ դիմանալու»: Կարօտն ու անցելապաշտութիւնը կը վերաբերին մանաւանդ Սովետական Հայաստանին, քանի որ «հիմա Հայաստանը շատ մնան է եւրոպական երկիրի»²³: Հարսերէն ոմանք աւելի շեշտակի կը նկատեն Հայաստանի առօրեային, կեանքին եւ կենցաղին պակասը իրենց կեանքին մէջ. «Կարօտցած են ամենէն շատ՝ մշակութային կեանքը. հոն եղած ատենս կը փորձէի անպայման Սունդուկեան, Պարոնեան թատրոններ երթալ, բացօթեայ համերգեր ունկնդրել»: Չմեկնիլը եւս ունի դրդապատճառներ՝ նիւթական,

²² Պատերազմը խոցելի պայմաններ կը յառաջացնէ, անապահովութիւն եւ հետեւաբար աւելի ապահով տեղի փնտռուով՝ ՀՀ:

²³ Թերեւս ասիկա պատճառ է, որ հարսերէն ոմանք նախընտրեն այլուր, քան թէ Հայաստան գրօսաշրջութեան մեկնիլ:

բայց նաեւ «անկախութեան վատ տարիներ», այսինքն Լիբանանի աւելի յարմարաւէտութիւնն ու հանգստաւէտութիւնը:

2գ. Այս այցելութիւնները երկուդի են. ոչ միայն լիբանաբնակ հարսը կը մեկնի ԶԶ, այլեւ հայաստանաբնակ հարազատը կու գայ Լիբանան: Ընդհանրապէս մայրերու այցելութիւնն է որ բազմակի է. «Առաջին ծննդաբերութեանս մայրս եկաւ երեք ամիս: Երկրորդ ծննդաբերութեանս՝ 2010ին կեսուրս հոս էր, տաս օր ետք զնաց հարսին ծննդաբերութեան, մայրս եկաւ երեք ամիս»: Կու գան նաեւ՝ «եղբայր/քոյրեր եւ անոնց զաւակները: Մայրս հոս մահացաւ ու հոս թաղուեցաւ»: Մանաւանդ 1960-1990ականներու հարսերու ծնողաց այցելութիւնը զիրենք հանգստացնող բան մըն ալ ունի իր մէջ. «Չայրս եկաւ ... եւ վերջապէս հաշտուեցաւ այն մտքի հետ որ ես լաւ միջավայրի մէջ կ'ապրիմ»: Երբեմն այս այցելութիւնները զբօսաշրջական եւ ամառնային արձակուրդի բնոյթ կ'առնեն, կամ ալ շրջանի այլ երկիրներու մէջ իրենց աշխատանքէն պտոյտի կու գան, իսկ երբեմն՝ կազդուրուելու, մանաւանդ այնտեղ պատահած մահ-կորուստէ ետք: Երբեմն հարազատներ կու գան աշխատանքի (եւ կը հաստատուին գէթ միառժամանակ եւ նոյնիսկ կ'ամուսնանան): Կան եւ հարսեր որոնց ծնողք/հարազատները ցարդ չեն եկած փեսայի տուն, «թէեւ կը փափաքին գալ»:

2դ. ԶԶ երթալը միայն ֆիզիքական մեկնում չ'ենթադրեր. կրնաս ֆիզիքապէս չ'երթալ, բայց այլապէս, գէթ օրուան մէջ որոշ պահերու «հոն ըլլալ»: Արդարեւ այսօր կարելիութիւն է դիտել ռուսական եւ հայկական հեռատեսիլի կայաններ. «Յեռատեսիլը միշտ բաց է՝ ռուսերէն»: **Շանթ, 31, Երկիր Մետիա, Արմենիա** առատօրէն կը հրամցնեն ԶԶ-ն: Լիբանաբնակ հայաստանցի հարսը հիմնականը լուրերը կ'առնէ, կը դիտէ նաեւ ֆիլմաշարերը, խաղերը. տղան՝ «Բանակում»ը եւ նման յայտագրեր, ընտանեօք ֆութպոլ կը դիտեն, նաեւ՝ երեւանեան ֆութպոլ: Չարս մը կը հաւաստէ. «Յեռատեսիլ, անշուշտ Չայաստան կը դիտեն, միշտ բաց կը ձգեն զայն... Միայն ծայնը լսեն Չայաստանի. բայց երբ Չայաստան էի այսքան կապուած չէի. Չայաստան չես զգար: Կ'աշխատէի՝ առօրեան կը տանէր»: Ուրիշ մը կը թելադրէ. «Լաւ կը լինի որ Երեւանի հեռուստակայանները պատանեկան տարիքի յայ-

տագրեր էլ անեն»։ Բայց կան եւ դժգոհներ. «Հայաստանի եւ Ռուսաստանի հեռատեսիլը չըլլային՝ մենք արաբերէն կը սորվէինք»։

Կայ նաեւ *ինթըրնէթ-սքայփը*, որով հարսը յարատեւ կը հաղորդակցի ծնողքին հետ եւ սուրճ կը խմէ, ու «կարօտը կը թեթեւցնէ»։ «Կարօտ շատ կայ. *ինթըրնէթն* ու *սքայփը* օգնում են. քրօջս հետ օրական մէկ ժամ խօսում են», «Երեւանեան յարաբերութիւններս պահած են, իրենց հետ *ինթըրնէթով* ու *սքայփով* կապի մէջ են. կ'աղօթեն *սքայփ* ստեղծողին. երեք տարի է *սքայփով* կը հաղորդակցիմ, այլապէս կը խեղդուէի։ Բայց այդ, հաղորդակցութեան պահուն կ'ուզեմ գրկել-համբուրել եղբայրս բայց ձեռքս չ'անցնիր»։

2ե. Մեզի համար չպարզուած մնաց դէպի ՀՀ այցելութեան շուկայական դրսեւորումը, այլ խօսքով՝ համարկման երկրորդ օղակի տնտեսական երեսակը։ Արդարեւ, ի տարբերութիւն կարողականութեան դրսեւորումներու շօշափելիութեան, ՀՀ-ի հետ կապի պահպանման եւ հարազատներու այցելութենէն ու ոմանց պարագային տուն ու հող գնելէն անդին անցնող դրսեւորումներու շատ քիչ կը հանդիպինք առայժմ։ Կ'ենթադրենք, սակայն, որ եթէ միջավայրը այրիշխանական չըլլար, հաւանաբար այս հարսերը առաւել արդիւնաւէտ դրսեւորէին իրենք զիրենք եւ ՀՀ հետ իրենց յարաբերութիւններուն մէջ ընտանեկանէն անդին անցնող ձեռնարկումներ ունենային՝ աջակցութեամբ երեւանաբնակ իրենց ընկերուհիներուն։ Նոյնպէս եւ անոնց ՀՀ հարազատներուն Լիբանան այցելութեան բնոյթը կրնար աւելի տնտեսական երեսակներ ունենալ։ Միայն 1960ականներու հարս մը, իբրեւ ընդհանրական արտայայտութիւնը այդ ժամանակի հարսերուն, կը մատնանշէ երեւոյթ մը, որ յատուկ կը թուի ըլլալ այդ ժամանակին. «Ես ինքզինքս անպաշտօն դեսպան նկատած եմ, ես Հայաստանի դէմքը նկատած եմ ինքզինքս, ըրած եմ այն ամէնը որպէսզի վատ չխօսին Հայաստանի մասին։ Ոչ ոք չէ հայիոյած ինձի։ Ինձի ցուցաբերուած քնքշանքը կը ստիպէր որ ես ալ միշտ ձիգ մնամ, հասարակական կարծիքը կը կարեւորէի»։

2գ. Այս հարսերու ՀՀ դրսեւորման առնչութեամբ, թերեւս դերակատարութիւն մը ունենալու է Լիբանանի մօտ ՀՀ դեսպանատունը, որմէ ակնկալութիւններ ունին բոլոր հարսերը. «Դեսպանա-

տունը ցարդ կապի մէջ չէ [մեզի հետ]։ ոչ մէկ առիթով հրաւիրուած ենք [դեսպանտուն]։ Մշակութային կապերը թող զօրացնեն։ Երբ Երեւանէն արուեստագէտ կու գայ ինչո՞ւ այդքան սուղ կ'ընեն մուտքը... Դեսպանատունը թերես կ'առնչուի միայն ատենապետերուն։ Բայց ատենապետերէն անդին շատեր կան», «Ես ինքզինքս նախ հայաստանցի կը զգամ։ Մեր պետութիւնը մեզ քիչ մը լաւ պէտք է նայի... տեսակ մը քաջալերանք, քիչ մը մեզի կարելիութիւններ թող տան, անուղղակիօրէն կը ստիպուիս ձգել [այնտեղը]։ Երկուութիւն մը կայ՝ հո՞ս ես, թե՞ հոն ես. տնտեսապէս դժուար կ'ըլլայ»։ Ուրիշ մը կը բաղդատէ. «Սուրիոյ հայերը տարբեր յարաբերութիւն ունին Հայաստանի հետ։ Ինչո՞ւ Պէյրութ ալ այդպիսի յարաբերութիւն չեն մշակեր, ինչո՞ւ տոմսերը այսքան սուղ պիտի ըլլան։ Երեւանի տոմսերը սուղ են։ Սղութիւն ամէն տեղ կայ, գիտենք նաեւ Երեւանի կեանքի սղութիւնը։ Հետեւաբար Երեւան ճամբորդելը շատ անելի սուղ կը դառնայ։ Ուսանողներուն քիչ մը առիթ տան որ երթան ուսանին։ Պէտք է քիչ մը դիւրութիւն տրուի. մայրը Հայաստան ծնած է ինչո՞ւ՞ մուտքի գումար պէտք է վճարել»։ Հոսկ, հարս մը կը գանգատի. «Արի Տուն կոչին տոմսերը շատ սուղ են. 550\$՝ եթէ երկու ամիս առաջ ապահովես։ Եթէ 300\$ լինէր չորսովս կը գնայինք։ Տուպայէն 200\$ տուլար է²⁴։ Հալէպէն միշտ անելի յարմար է։ Հոս այլընտրանք չունինք։ Միւս անգամ պատով եմ գնալու՝ 150\$ [կ'արժէ]։ Այս գանգատը բուլղրիս կողմէ է», «Արի Տուն ծրագրի տնտեսական ծախքերը շատ են. շատ սիրով կը գանք, բայց տոմսերը տրամաբանական թող ըլլան. ասկէ Մոսկուա տոմսը կ'արժէ 300\$, իսկ ասկէ Երեւան տոմսը կ'արժէ 550\$»։ Կայ եւ հպատակութեան խնդիրը. «Մէկ անգամ երեխաներս եւ ես քուէարկած ենք նախագահ Լեւոն Տէր Պետրոսեանի համար։ Դեսպանատունը մեզ չի ճանաչում։ Շատ անտարբեր ենք դարձել փոխադարձաբար։ Մենք մեր մէջ երկքաղաքացիութեան զգացումը ունէինք, բայց կոտրեցին մեր մէջ այդ մէկը»։ Հարսերէն մին քայլ մը եւս կ'առնէ. «Տարիներ ետք, 1984ին, Պէյրութի սովետական դեսպանատուն աշխատողին հարցուցի թէ՛ ինչո՞ւ մեզի ձգեցիք որ երթանք (այսինքն Լիբանան գան - Ա.Տ.) եւ նման դժուարութիւններու մատուցինք, ըսաւ թէ դուք մեզի հոս պէտք էք»։ Ու կը շարունակէ. «Սխալները որ մենք

²⁴ Այս թուանշանները կայուն չեն։

կամ մեզի հանդէպ գործուած են, միւսները [հարսերը] պէտք չէ ընեն, դեսպանատունը ընտանեկան յարաբերութիւններու առումով ուշադիր պէտք է ըլլայ: Միւս կողմէն, արդէն նոր սերունդը դասերը սորված կու գայ. քսան տարուան անկախութիւնը ուրիշ փորձառութիւն եւ բաներ սորվեցուց: Հիմա կու գան, կը նային՝ կրնա՞ն ապրիլ, յետոյ կ'ամուսնանան: Մենք կ'ամուսնանայինք, զաւակ կ'ունենայինք յետոյ կու գայինք Պէյրութ»:

2է. Ինչպէս վերը տեսանք, եթէ ազգականական տեղական կապերն ու յարաբերութիւնները անխուսափելի են մասամբ, ապա անկէ դուրս կարելիութիւնը կայ յառաջացնելու բարեկամական ցանց մը, նոյնիսկ ի գին ազգականական յարաբերութիւններու նուազումին:

Յաճախ բարեկամական ցանցը արդիւնք է վիճակակցութեան. «Դրացուհիս ալ նոր հարս է, երկուքս ալ պզտիկներ ունինք, տարեկիցներ ենք: Կան հայաստանցի հարսերը. բոլորս ալ օտարութիւն ենք: Ասոնց հետ շաբաթը անգամ մը կը հանդիպիմ, առանձին ժողով կ'ընենք, կը խօսակցինք մեր ծնողքներէն, ընտանիքներէն, ինչ լուր անոնցմէ, եթէ լսենք որ հայաստանցի նոր հարս է եկեր առիթ չենք բաց թողնում, անպայման գնում ենք [նրա մօտ]»: Կան անճարցի/պէյրութցի ընկերուհիները, որոնց մէջ աւելի ուրախ եւ հանգիստ կը զգան ոմանք, քանի որ հին յիշողութիւնները, անցեալը չեն խօսուիր այնտեղ. «կը խօսակցինք, տեղական լրատուութեամբ կը զրուցենք»: Կան անշուշտ ազգականները եւ կայ նաեւ շաբաթը անգամ մը տեղի ունեցող թաղային կնոջական ժողովը, երբ դրացիներ կը հաւաքուին դրամ կը հաւաքեն: Այս խումբը 35-65 տարիքի միջեւ անձեր կը համախմբէ, ուր կը խօսուին սահմանափակ տեղական, դպրոցի լուրեր, եւն: Խօսակցութեան միւթը կը տարբերի ըստ ենթակային. «կը խօսինք մեծցնելու հոգերէն, կը բացատրեն մթերման ձեւերը՝ լուլիկի ջուր, շատ կան որ երեւան գացած-եկած են, ընդհանուր միւթերով կը խօսինք, խօսակցութեան առումով տարբերակում չկայ. օրը իր միւթը կը բերէ»: Կան բացառութիւններ... Ամփոփելու համար՝ կան չորս տեսակի յարաբերական հարթակներ. ա՝ ազգականներ, բ՝ դրացիներ, գ՝ հայաստանցի ընկերուհիներ, դ՝ ամուսին եւ ամուսինին գործընկերները:

Համարկման երրորդ օղակ

Ձաւակներ

Ձաւակները այր ու կնոջ համագործակցութեան իւրօրինակ դրսեւորումներն են եւ այս ուսումնասիրութեան համարկման երրորդ օղակի ենթակաները: Այստեղ պիտի ջանանք ներկայացնել զանոնք՝ ըստ իրենց մօր կարծիքին, երեք առումներով. ա՛՝ մայր-զաւակ հաղորդակցութիւն, բ՛՝ զաւակ-միջավայր յարաբերութիւններ, գ՛՝ զաւակ-ՀՀ յարաբերութիւններ: Որոշ զգուշութեամբ պետք է մօտենալ մեզի յայտնուած այս տուեալներուն, նկատի առնելով պարագաներուն առաւել զգացականութիւնը:

ա. Ձաւակ-մայր հաղորդակցութիւն եւ լեզու

Լեզուի գործածութիւնը կարելոր գործօն կը հանդիսանայ զաւակի ինքնութեան կերտման գործընթացին մէջ: Մայր-զաւակ հաղորդակցական լեզուի գործածութիւնը միանշանակ չէ մեր այս հարցախոյզին առումով: Երբեմն մօր՝ իր զաւակին հետ արեւելահայերէնով արտայայտուիլը ապահովութիւն, թերեւս ալ ՀՀ գտնուելու եւ «ոչինչ չի փոխուել»ու պատրանքը կու տայ անոր, մինչ ուրիշներ իրենց զաւակներուն ռուսերէն կը սորվեցնեն:

«Երեւան զաւակներուս հետ արեւելահայերէն կը հաղորդակցէի, Պէյրութ՝ արեւմտահայերէն սկսայ խօսիլ իրենց հետ առաջին իսկ օրէն»: Ուրիշ մը կը բացատրէ. «Հոս արեւմտահայերէն կը հաղորդակցիմ զաւակներուս հետ, որովհետեւ մտածեցի որ ինծի դժուար կ'ըլլայ, բայց պզտիկներս չեն զանազանուիր դպրոցին մէջ»: Ուրիշ հարսեր հակառակ ընթացքն ունին. «Ամուսինս եւ ես արեւելահայերէն կը հաղորդակցիմք, քանի Հայաստան հիմնեցիմք մեր ընտանիքը, երեխաներու հետ եւս կը խօսիմք արեւելահայերէն, իսկ բոլոր միւսներուն հետ արեւմտահայերէն»: Ոմանք տեղացի հայերուն հետ արեւմտահայերէն կը խօսին, իսկ հայաստանցի այլ հարսերու հետ՝ արեւելահայերէն: Եւ կան նաեւ հարսեր, որոնք անցած են արեւմտահայերէնի, բայց՝ «բառապաշարիս մէջ արեւելահայերէն կայ, նաեւ հնչիւնաբանութիւնը արեւելահայերէն է, եւ ոյնիսկ՝ [Անճարի] բարբառ կայ»:

Արաբերէնին նկատմամբ, այս հարսերէն ոմանք եւ իրենց զաւակները «օփսէշըն (յաճախանք - Ա.Տ.) ունին», բան մը որ յատուկ չէ

միայն լիբանահայ աշակերտին: Ուրիշ հարսեր արաբերէն կը սորվին իրենց զաւակներուն հետ, անոնց դասագիրքերէն: Հարս մը կը յայտնէ, թէ «արաբերէն սորվիլ սկսայ, երբ կեսուրս իմ վրաս ձգեց շուկան. 1980էն ի վեր արաբ ժողովուրդը իմ լեզուական սխալներս շտկեց եւ ես արաբերէն սորվեցայ», ու հիմա ընդհանրապէս «եռլա» կ'երթայ: Սակայն այսպիսի ընտանիքներու զաւակներուն մեծ մասը «արաբերէն լաւ գիտեն», գիտեն նաեւ Անճարի բարբառը եւ ունին խառն լեզու՝ բարբառ, արեւելահայերէն եւ արեւմտահայերէն: Այս զաւակներէն քիչեր լիբանանեան ընդհանուր մակարդակէն վար կը մնան. շատեր՝ աւելի վեր կ'առանձնանան: Ոմանք կ'արտայայտեն իրենց ինքնութեան տագնապը. «Աղջիկս կը հարցնէր ինձի. մամա մենք ի՞նչ ենք», «Արաբական միջավայրի հետ երեք զաւակներս ալ հաշտ չեն եւ շատ Հայաստան են», «Չհամակերպեցաւ հոս: Պատերազմի պատճառով գացինք ու եկանք, քաղաքական անկայունութիւնը զաւկիս վրայ շատ ազդեց. ան ծնած է 1976ին»:

բ. Չաւակները կը յաճախեն հայկական դպրոցներ, ուրիշներ ՀՀ կ'աւարտեն իրենց երկրորդականը ու հոն ալ կը շարունակեն համալսարանական կրթութիւնը: Կան նաեւ որ Լիբանան երկրորդական աւարտելէ ետք կամ կը մեկնին ՀՀ՝ համալսարանական ուսման (եւ երբեմն պրակտիկայի), կամ կը յաճախեն տեղական համալսարաններ²⁵ (մանաւանդ երբ նիւթական կարելիութիւններ կան. «Քանի պայմաններս ներեցին, զաւակներս հոս ուսանեցան, չուզեցի զիրենք ինձմէ հեռացնել»): Կան զաւակներ, որոնք լիբանահայ վարժարանէ թերաւարտ կ'անցնին պետական վարժարան, ու աւարտելէ ետք ձեռք կ'առնեն համալսարանական ուսման ճամբան: Ոմանք թերաւարտ համալսարանական ուսումը կը շարունակեն Մ. Նահանգներ, ու կը վերադառնան Լիբանան, կամ կը հաստատուին հոն եւ առաւել կը համարկուին ու անզանազանելի կը դառնան ամերիկահայ իրենց սերնդակիցներէն:

Մասնագիտութեան առումով, այս զաւակները չեն դրսեւորեր որոշ ուղղութիւն մը. այլ կ'ընտրեն որեւէ մասնագիտութիւն եւ

²⁵ Ոմանք կը յաճախեն Լիբանանեան Համալսարան, ուր դասաւանդման լեզուն արաբերէն է:

կ'աշխատին Լիբանան թէ արաբական երկիրներ, դարձեալ՝ միւս բոլորին նման: Ասպարէզային դրսեւորումի առումով, անոնք տեղական միջին օդակին մէջ են մեծ մասամբ:

գ. Ձաւակները կը դիտեն թէ՛ լիբանանեան եւ թէ՛ հայաստանեան հեռատեսիլ: Ոմանք մաս կը կազմեն միութենական-ակումբային պատանեկան ձեռնարկներու. «Երկու զաւակներս ալ պարախումբի եւ սկաուտութեան մէջ են, աղջիկս գծագրութեան դասերու ալ կը հետեւի, տղան ֆութպոլի անձնական դասերու կը հետեւի»: Անոնք «կուսակցական չեն, չեն ուզած որ ըլլան, շատ լաւ հայ են, հօր կուսակցութեան համար խենթ կ'ըլլան, բայց չեն օծուած», «լաւ յարաբերութեան մէջ են իրենց համագիւղացիներուն,- ինչպէս նաեւ,- Յայաստանի հետ, բայց նրանք այնտեղ չեն կարող ապրել, մտածելակերպը տարբեր եղաւ», «Ձաւակներս հաղորդակցութեան մէջ են այնտեղի սերնդակիցներուն հետ: Անոնք նորմալ լիբանանցիի պէս են, բայց հայաստանեան հակում ունին»:

Ձաւակներուն այցելութիւնը ՀՀ դիտումնաւոր է. անոնց մայրն է որ կը մղէ զիրենք ՀՀ՝ պտոյտի. «Հայրս հնարաւորութիւններ ունէր, շատ պտտցուց զաւակներս. ես ալ զիրենք տարբեր տեղեր տարի Հայաստան որով կապուեցան հայրենիքին»: Բայց կայ եւ զգուշաւորութիւնը՝ եւ զաւկի հիասթափութիւնը. «Հայրենիքը շատ կը սիրեն. դուրսէն են, չեն գիտեր իրականութիւնը: Գնաց որ Հայաստան պիտի հաստատուի, բայց եղած իրականութեան հետ չկրցաւ հաշտուիլ»:

Հայաստանցի մայրերու զաւակներէն ոմանք՝ Հայաստան իրենց համալսարանական տարիներուն կամ աւարտելէ անմիջապէս ետք կ'ամուսնանան հայաստանցի հարսերու հետ: Ուրիշներ կը կնքեն օտար՝ արաբ եւ այլ ամուսնութիւններ: Հայաստանցի հարս/մայր մը կ'ըսէ. «Չէի մտածեր զաւակս ամուսնութեան մղել՝ 23 տարեկան էր, բայց հագիւ աւարտեց՝ նշանուեցաւ: Մտածեցի հայաստանցի հարս առնել, բայց ինք չպատասխանեց, քանի ուրիշի հետ էր արդէն»: Ուրիշ մը էական չի նկատեր հարսին ազգութիւնը. «[Կարելոր է] հարս մը որ տղայիս սիրէ, յարգէ ոչ մէկ հարս մեզի հետ պիտի ապրի, սերունդ մըն են որ իրենք պիտի սիրեն, որոշեն ապրին: Իմ տղաքս հայաստանցի հարս չեն ուզեր, կ'ըսեն

որ օտարութիւն չքաշեն ինչպէս իրենց մայրը քաշեց²⁶, հարսին ընտանիքը նոյն երկրին մէջ պէտք է ըլլայ. եթէ հարսը արաբ ըլլայ, վարժուած ենք՝ չուզելով կ'ընդունինք. պայքարը կը տանիմ, բայց մինչեւ ուր՝ չեն գիտեր», «Զմտածեցի որ աղջիկս հայաստանցի փեսայ ունենայ ինծի համար նոյնիսկ ռուսը/օտարը ընդունելի է, բայց ոչ թուրքը», «Զաւակներս տարօրինակ զգացում ունին որ իրենց կիները հայ պէտք է ըլլան, հոս միասին պէտք է սկսին»: Բայց կայ եւ կսկիծը. «Կ'ուզէի հայաստանցի հարս բերել եւ հետս ապրի, իմ աղջիկս ըլլայ եւ ընէի այն ինչ ինծի չեն ըրած»:

Փաստօրէն հայաստանցի հարսերու զաւակները գրեթէ չեն զանազանուիր եւ կարծէք լիարժէք համարկուած են երկրին եւ միջավայրին:

դ. Ինքնութեան փոփոխութիւն կ'ապրին նաեւ այն հարսերը, որոնք արդէն տասնամեակներէ ի վեր հաստատուած են Լիբանան: Բայց ինքնութեան այս փոփոխութիւնը, յատկանշականօրէն, անպայման համարկում չի նշանակեր. «Հիմա ես պիտի երթամ: Շատ վախով պիտի երթամ Հայաստան, օտարի պէս պիտի երթամ Հայաստան. եթէ եղբայրներս-քոյրս չըլլան՝ թերեւս չերթամ Հայաստան: Ես Ամերիկա գացի՝ շատ հանգիստ զգացի, բայց Պէյրութ երբեք հարազատ չզգացի», «Ես ինքզիմքս նախ հայաստանցի կը զգամ, ապա քեսապցի, ապա ներգաղթած, ապա ամերիկացի, բայց Լիբանան կ'ապրիմ»: Ուրիշներ սակայն, այլապէս կը զգան. «Ես այստեղ աւելի ազատ եմ քան Երեւանում. Անճարը իր ապահովական առաւելութիւններն ունի, այստեղ աւելի թեթեւ ենք ապրում»: Այլ հարսերու կեանքի փորձառութիւնը, սակայն, չհամարկուելու, խառնակ ինքնութեան մը մասին կը խօսի. «Ես ինձ գտայ ողբերգական վիճակի մէջ. կեանքիս 21-22 տարիները ապրած եմ Հայաստան, 49-50 տարիները՝ Լիբանան, վերջին 10 տարիները՝ Մ. Նահանգներ եւ Պէյրութ, 2011ին՝ ամերիկայի քաղաքացի ալ եղանք: Բայց Հայաստանի քաղաքացիութիւն չունինք», «Ընտանիքը Լիբանան է. հոս ապրեցանք, այո՛, բայց խել-

²⁶ Ոմանք քողարկեալ ձեւով կ'ակնարկեն տան մէջ տիրող խառնակ վիճակի անդրադարձներուն՝ իրենց զաւակներուն վրայ:

քով Հայաստան ենք: Շատ աննորմալ վիճակ յառաջացաւ. չյարմարուեցանք»: Ուրիշ մը, սակայն, չի բանար հին էջեր. «Դառնութիւնս գոցել են. անդրադառնալը ցաւ կը պատճառէ, յիշողութիւններս ցաւ կը պատճառեն»: Այլ հարս մը տարբեր ձեւով կը նկարագրէ իր վիճակն ու յարաբերութիւնը ՀՀի հետ. «Մայրամուտս Հայաստան չեն տեսներ, թէւ մինչեւ 2008 միայն Հայաստան էր, միշտ կը քաշէր Հայաստանը ատոր համար ալ չկրցայ լրիւ համարկուել. բայց երբ ծնողքս կորսնցուցի, յատկապէս երբ մայրս, ալ շրջանակ չունեմ, օտարացած է ինծի համար Հայաստանը. օտարական զգացի ինքզինքս Երեւանի մէջ, ընկերուհիներս ալ չկան. ամէն մէկը Սփիւռքի մէկ ծայրը. հոս ես աւելի հանգիստ կը զգամ, հոն ետ այբէն պիտի սկսիմ, նորէն մարդ փնտռէ... Հոս քեզ մարդկանց մէջ ընդհանուր աւելի հանգիստ կը զգաս, հոս մեղմ են, քեզ չեն վիրաորեր, սպասարկումը հաճոյքով կ'ըլլայ. Հայաստան մարդիկ կոշտ են հիմա. մեր տարիներուն ասանկ չէր, թէւ միշտ ալ Կովկաս եղած էր, բայց հիմա մէջերնին չկանութիւն մը կայ, նախանձ յառաջացած է. հոն պազարէն վիրաւորուած կու գային. էստեղ են մենակ, էնտեղ էլ»:

Ամփոփում

Ամփոփելու համար պէտք է ըսել, թէ այսպիսի ընտանիքներու ընթացքը, որ արդիւնքն է անոնց բաղադրիչներուն համագործակցութեան, շեշտակիօրէն կ'ազդուի դերակատարներուն ինքնութենէն, անոնց արժեքային համակարգէն: Գործակցութիւնը կ'ամրապնդուի փոխադարձ զոհողութիւններով ու կը զօրանայ առաջին իսկ դրական արդիւնքներու յառաջացումով:

Այս գործակցութեան յետագայ արդիւնաւետութիւնը եւ ազդեցութիւնը մօտակայ ու հեռակայ միջավայրին վրայ սերտօրէն առնչուած է կենցաղային, ներանձնական, ընկերային գործօններու, ինչպէս նաեւ ազդուող միջավայրի պատրաստակամութենէն, յարմարաւետ-հանգստաւետ-ընդունելի եւ գրաւիչ պայմաններու գոյացումէն:

Antranik Dakessian – *The integration of native-Armenian brides to Lebanese Armenian families* – As of the late 1950s several young Lebanese Armenians enrolled in Soviet-Armenian universities and graduated as doctors, dentists, engineers, philologists, etc. Some of these graduates returned to Beirut married with their Soviet-Armenian classmates.

Based on a broad survey and field work conducted in July-August 2011 with a number of such families, the author analyses the make-up of such families, the integration of the Soviet-born bride to this new family and the adopted country. The author discusses the difficulties and achievements these women had in their life as housewives and as career-women. The author uncovers certain impediments which disabled these women to work in their businesses beyond their capacity, and how their performance impacted their social links with their homeland and relatives.

The author sheds light as well on the children of these families and the extent of their integration to both local Armenian and Lebanese communities.

Eventually the author details the evolution of their identification with Armenia.

Андраник Дакесян – *Интеграция невесток из Армении в армянские семьи Ливана*. – С конца 1950-х годов молодые армяне из Ливана учились в вузах советской Армении, стали врачами, стоматологами, инженерами, филологами и т. д. Некоторые из них вступили в брак со своими советскими однокурсницами и по завершении образования увезли их в Бейрут. На основе обследования и представительного опроса, проведённых в июле–августе 2011 года, в статье показано, как советские армянки интегрировались в своих новых семьях и адаптировались в стране. Говорится о трудностях и успехах этих женщин и в семейной жизни, и в деловой карьере. Указываются обстоятельства, помешавшие им в полную силу применить свои профессиональные навыки, и то, как сказалась их трудовая деятельность на связях с родиной и родственниками. Речь идёт и о детях, появившихся в этих семьях, и степени их интеграции как в местную армянскую общину, так и ливанское общество. Прослеживается также эволюция их отождествления своей судьбы с судьбой Армении.

ՇԱՀԱՆ ԳԱՆՏԱՀԱՐԵԱՆ

ՍՓԻՒՌԱՅԱՅ ՄԱՍՈՒԼԻ ԴԻՄԱԳՐԱԿԱԾ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ՝ ՀՀ-ՍՓԻՒՌ ՏԵՂԵԿԱՏՈՒԿԱՆ ԾԻՐԻՆ ՄԷՋ. ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԿՏՐՈՒԱԾՔՈՎ

Ա. Նախ թեմային մասին

Առաջադրուած թեմայի մասին պատրաստուած զեկուցում` նման գիտաժողովի սահմաններուն մէջ տեղաւորելը որոշակի դժուարութիւններու կը հանդիպի: Պարզ այն պատճառով, որ որեւէ գիտաժողովի ներկայացուելիք զեկուցում կ'ենթադրէ առարկայական տուեալներու եւ նախադրեալներու վրայ հիմնուած միաժամանակ թէ՛ տեղեկատուական եւ թէ՛ վերլուծական բովանդակութիւն: Այս պարագային, տրուած ըլլալով որ ոլորտը ժամանակակից առումով սերտօրէն առնչուած է ներկայ արհեստագիտութեան ապրած արագընթաց զարգացումներուն հետ, իբրեւ այդպիսին` հիմնովին ձեւափոխուած է ան: Առ այդ, այս բոլորովին նոր եւ առօրեայ կշռոյթով անընդհատ նորացուող ոլորտին պարագային կը պակսին առարկայական տուեալները առ հասարակ հայաստանեան եւ սփիւռքահայ զանգուածային լրատուամիջոցներու ներկայ դաշտին ամբողջական պատկերացումը ունենալու:

Մենք բնականաբար չենք խօսիր զանգուածային լրատուամիջոցներու միայն դասական տարբերակներուն մասին, այլ ինչպէս ըսուեցաւ, անընդհատ նորացուող ելեկտրոնային տարբերակներուն մասին: Իսկ այստեղ արդէն կը տիրէ խայտաբղէտ իրավիճակ, չկանոնակարգուած դաշտ: Հետեւաբար հայկական մամուլին այսօրուան խնդիրներուն եւ համագործակցութեան ուղիներու նախանշումին մասին այս հանգրուանին կարելի է բաւարարուիլ համապատկերին մասին մշումներ կատարելով եւ անոնց հիմամբ փորձել հեռանկարային կէտեր շօշափող խորհրդածութիւններ կատարել:

Հայկական լրատուադաշտը` իր հայաստանեան եւ սփիւռքեան բաժիններով համախմբելու ամենալուրջ նախաձեռնութիւնը եղաւ 2010ին, Ստեփանակերտի մէջ, ուր Սփիւռքի Նախարարութեան եւ

Հայաստանի ժուրնալիստներու Միութեան նախաձեռնութեամբ համախմբուեցան թէ՛ Հայաստանի Հանրապետութեան, թէ՛ Արցախի Հանրապետութեան եւ թէ՛ Սփիւռքի կարելորագոյն լրատուամիջոցներու խմբագիրները, հրապարակագիրները, մամուլոյ աշխատակիցները: Ներկայացուածութեան եւ համընդգրկուածութեան առումով այս մէկը աննախադէպ էր:

Վերոյիշեալ փաստն ալ նկատի ունենալով, կարելի է ըսել, որ առաջին այս հանգրուանին համար ան կոչուած էր ծառայելու փոխճանաչման: Ստեփանակերտի համաժողովը անկախ իր արձանագրած համընդգրկուածութենէն եւ փոխճանաչման համար ընձեռած հնարաւորութենէն, կարելի է ըսել որ նախագծեց նաեւ գործի շարունակականութեան քայլերը: Համակարգող խորհուրդի կազմութիւնը, Սփիւռքի Նախարարութեան կազմակերպած տեսաժողովներն ու տարածաշրջանային մակարդակի լրագրողներու հանդիպումները եւ մանաւանդ երիտասարդ լրագրողներու պատրաստութեան առաջին փուլի կայացումը նախադրեալներ են որ համաժողովներու միջեւ ինկող ժամանակահատուածը լիարժէք օգտագործելու միտումներ կան: Ի հարկէ, տակաւին ճամբայ ունինք կտրելիք, այսուհանդերձ կարելի է արձանագրել որ այս ուղղութեամբ ծրագրած աշխատանք ծաւալելու մտադրութիւնը կայ. կայ նաեւ ատոր գործնականացումը:

Բ. Ժամանակակից ընդհանուր իրավիճակը

Տեղեկատուական համաշխարհայնացումի իւրօրինակ կացութեան մը մէջ կը գտնուի զանգուածային լրատուութիւնը այսօր, ուր գլխապատոյտ պատճառող արագութեամբ կը գործէ լրատուական արտադրողականութիւնը: Փաստօրէն չէ կանոնակարգուած դաշտը, չկան ընդունուած եւ չընդունուած նորմեր, չկան յղումներ կատարելու պարտաւորութիւններ, քննարկումի առիթ տալու-չտալու հարցեր: Այս դաշտին մէջ (կամ անելի ճիշդ պիտի ըլլար բնութագրել բոլորովին բաց հրապարակին վրայ) անհեթեթ կը դառնան գրաքննութիւն կամ ինքնագրաքննութիւն յղացքները: Տուեալ կայքէջի մը վրայ երեւցած լրատուութիւնը, տեղեկութիւնը կամ մեկնաբանութիւնը կրնան կայծակնային արագութեամբ քննարկումի նիւթի վերածուիլ՝ համացանցային հարիւրաւոր ծառայութիւններու կողմէ հրամցուած ելեկտրոնային տարածքներու վրայ:

Այս արագակշռոյթ ընթացքը կը գլէ կ'անցնի աշխարհագրական տարածքները եւ միաժամանակ աշխարհի չորս ծագերուն կը հասցնէ անհրաժեշտ պատգամը, երբեմն՝ պարզ գուտ լրատուական-տեղեկատուական տարազին տակ, երբեմն մեկնաբանական բովանդակութեամբ, յաճախ ալ ապատեղեկատուութեամբ:

Թերեւս կանուխ է հաստատելը, սակայն հետզհետէ կը թուի, թէ համացանցային կայքէջը, համակարգչային տարբեր ծառայութիւնները իրենց գրաւոր թէ լսատեսողական միջոցներով հետզհետէ կը թեւակոխեն հաղորդակցութեան կամ լուրի փոխանցման այս պարագային, անցեալ սերունդի հանգրուանը:

Հաղորդակցութեան կամ մեր պարագային լրատուութեան հասանելիութեան աւելի յարձակողապաշտ դրութիւն մը կ'որդեգրուի տակաւ, որ կը հալածէ մարդը, չի սպասեր որ ան ինք դիմէ տուեալ կայքէջին, կը հասնի անոր, կը տեղեկացնէ, հետաքրքրաշարժութիւն կը ստեղծէ: Լրատուական հասանելութեան համակարգը անցունի փուլի մէջ է: Փոխանակ անհատը, ինք դիմելու՝ կայքէջին, տուեալ ծառայութիւնը ինք կը հասնի անհատին. ուր որ է ինչ պայմանի մէջ որ է: Կը գտնէ մարդուն ելեկտրոնային հասցէն, կ'ուղարկէ գրութիւնը կամ կը յայտնուի անոր բջիջային հեռաձայնի պաստառին վրայ:

Կայծակնային արագութեան այս դրութիւնը չի սիրեր երկարապատում լուրերը, յօդուածները, վերլուծումները: Կը փոխանցէ խորագիրը, զգայացունցը, ահագանգայինը: Ըսել կ'ուզուի, որ ներկայ արհեստագիտութիւնը կը կեդրոնանայ հեռախօսներու եւ հաղորդակցութեան այլ միջոցներու, ընդ որում լրատուական ծառայութիւններու համատեղման եւ անհատականացման համակարգին վրայ:

Դասական մամուլը, իր նախնական առաքելութեամբ ետ կը մնայ գուտ լրատուութիւն թողարկելու այսօրուան մրցավազքէն: Ձուտ տպագիր մամուլը՝ նոյնիսկ աշխարհի ամէնէն հռչակաւոր տպագիր թերթը ուշացած է իր այս առաքելութեան մէջ:

Ահա՛ այս տեսակ պայմաններու մէջ է կամ նման չկանոնակարգուած դաշտի մէջ, լրատուական առումով անտառի օրէնքով դեկավարուող միջավայրի մէջ, ուր Սփիւռքի մեր թերթերը կամ այս պարագային լիաբանանահայ մամուլը պէտք է շնչէ, ապրի, գոյա-

տելէ: Այսօրուան լրատուադաշտի խաղի կանոնները գլխիվայր շրջած են նախկին դրութիւնը: Նուրբ է կացութիւնը: Ան կը պահանջէ աշխատանքի արդիւնաւէտութեան համար պահել հաւասարակշռութիւնը: Պահպանել էութիւնը, խորքը, բարեփոխել ձեւը, տարագը, կեղեւը միայն: Լայնօրէն եւ առաւելագոյն չափերով օգտուիլ արհեստագիտութեան այսօրուան ընձեռած բոլոր կարելիութիւններէն, հայութեան եւ Հայաստանին կապուած խնդիրներու առարկայական լուսաբանումը հայ ժամանակակից ընթերցողին հասանելի դարձնելու առաջադրանքով:

Գ. Այլընտրանքային ոչ պաշտօնական հայկական լրատուամիջոցը

Այսօրուան բաց համակարգին, համացանցային հաղորդակցութեան, տեսակէտեր փոխանակելու, բանավէճեր կազմակերպելու ներկայ դրութիւնը բոլորին կարելիութիւն տուած է կարծիք յայտնելու, հաստատում կատարելու, իր տեսակէտերով հասանելի դառնալու զանգուածներուն:

Անհակակշռելի, անվերահսկելի ոլորտ է այս մէկը, ուր հասանելիութեան բազմապատկումը տեղի կ'ունենայ կայծակնային արագութեամբ եւ ուր խիստ խնդրոյ առարկայ կը դառնայ հանրային կարծիքին վրայ ազդելու պաշտօնական եւ անպաշտօն հաղորդագրութիւններու եւ գրութիւններու տարողութիւններուն տարբերութիւնը:

Այսպէս է նաեւ, որ ցարդ զանգուածային լրատուամիջոցներու գծած սահմանները կը հատուին արագօրէն եւ այլընտրանքային լրատուամիջոցը կը գործէ արդիւնաւէտ եւ արագ: Այնքան արագ, որ մամլոյ նշանաւոր ներկայացուցիչներ յատկապէս երիտասարդ ընթերցողին հասանելի դառնալու համար անհրաժեշտութիւնը կը զգան իրենց պաշտօնական կայքէջերուն առընթեր տեղ գրաւելու ընկերային ցանցերու վրայ: Օրուան օրինաչափ կշռոյթն ու եղանակը ասոնք են, որոնց հետ պէտք է քայլ պահել անկասկած:

Խնդիրը կը բարդանայ, երբ ելեկտրոնային այս տարածքներուն վրայ կը հատուին այն սահմանները, զորս ցարդ տպագիր թէլեկտրոնային կամ այլ լրատուամիջոցներ լռելեայն գծած էին իրենց հաղորդումներուն բովանդակութիւնները սահմանափակելու առումով: Ոչ անպայման «թապու» նիւթեր չարծարծելու մասին է

խօսքը: Այլ՝ մեր ազգային ու հոգեւոր արժեհամակարգի բաղադրիչ-խորհրդանիշերուն մասին պատշաճութիւնները յարգելու:

Այդ արժեհամակարգին բաղադրամասերէն՝ հայոց բանակի պատահարները, «եութիւն»ի ճամբով ցուցադրուեցան համայն աշխարհին, նաեւ մեր թշնամիներուն, եւ ոգի ի բռին շատեր շաբաթներով խոշորացոյցները կեդրոնացուցած պահեցին հայոց սպայակազմին եւ հայ զինուորին բարոյալքունը շեփորելու համար: Սխալ չհասկցուինք: Պատահարները արդարացում չունէին: Յանցաւորները անպայման պատասխանատուութեան պէտք է կանչուէին: Այսուհանդերձ համացանցի ճամբով տեսանիւթը տարածելը, պլոկներու ճամբով պաշտօնատարներու հրաժարական պահանջելը եւ բանակի մարտունակութիւնը կասկածի տակ առնելը նուազագոյն ըսելածեւով առողջ ներշնչումներ չունին:

Համացանցի շուկայի սպառման այլ թեմա էր հայրենի կրթական համակարգը, որուն վարկն ու հեղինակութիւնը կը հարուածուէին հիմք ունենալով ուսուցիչ-աշակերտ բռնութեան դէպք մը, որ կը ցուցադրուէր, կը տարածուէր, կը մեկնաբանուէր, կ'ընդհանրացուէր: Հայ դպրոցը եւս բնականօրէն մեր ազգային ընդհանուր արժեհամակարգին մէկ կարեւոր բաժինն էր: Հարուածները ուրեմն բանակին եւ դպրոցին ճամբով մեր արժեհամակարգին ուղղուած էին:

Այլընտրանքային այս լրատուամիջոցներու ցանցէն դուրս չմնաց նաեւ հայ եկեղեցին, որուն պատասխանատուներուն նկատմամբ եղած քննադատութիւնները գէթ իրենց ոճով աննախադէպ էին: Եւ եթէ բանակի հեղինակութիւնը հարուածած պահուն պլոկի կամ ընկերային ցանցի մասնակիցը պարտաւոր է մտածելու հակառակորդի խաղին ներքաշուած ըլլալուն մասին, ապա հայ եկեղեցին ա՛յս ոճով քննադատողը պիտի մտածէ, թէ մեր հոգեւոր ու բարոյական անվտանգութեան սպառնացող բազմաթիւ աղանդները ինչպէ՞ս կ'օգտուին նման իրավիճակներէ:

Քննադատելի եւ սրբագրելի շատ խնդիրներ ունինք ազգովին: Այս իրականութիւնը պէտք չէ անտեսել: Կառուցողականութիւնը սակայն պարտադիր մօտեցում է եւ ցուցանիշ՝ մեր հաւաքական գիտակցութեան: Մանաւանդ համընդհանուր արժեհամակարգի խնդիրներու հրապարակային քննարկումներուն ընթացքին:

Դ. Արտաքին ճակատ

Հայ տեղեկատուական դաշտին առջեւ իբրեւ հրամայական հարց կանգնած է արտաքին այլ խնդիր մը: Համացանցային անսահման տարածքներու վրայ հայկական հարցերը խեղաթիւրելու, պատմական ճշմարտութիւնները նենգափոխելու, այժմէական ամենէն հրատապ գործընթացներուն մասին ապատեղեկատուութիւն կատարելու պետական քաղաքականութիւններու իրողութիւնը: Փաստօրէն բաւական աշխատունակ վիճակի մէջ է թուրքեւազրպէյճանական միացեալ քարոզչամեքենան, հայկական ամենէն այժմէական խնդիրներուն մասին յերիւրանքներ արտադրելու տեսակետէն: Աշխատանքը ոչ թէ անուղղակի մասնակցութիւնը կը մատնէ պետութիւններուն, կամ թէ պետական հովանաւորութեամբ կը տարուի, այլ՝ ուղղակի պետութեան նախաձեռնութեամբ, պետական ամենէն բարձրաստիճան պաշտօնատարներու ճամբով եւ անոնց ստորագրութիւններով: Նախապէս տպագիր պրակներով, այժմ համացանցի կայքէջերով, ելեկտրոնային նամակարշաւներով, ելեկտրոնային զանազան ծառայութիւններու վրայ տեսանիւթեր տեղադրելով, ապատեղեկութիւն ողողելով: Հայկական կողմէն համարժէք եւ համաչափ չէ այս բոլորին դիմաց տարուող աշխատանքը: Եւ երբ կը խօսինք պետական մակարդակներով տարուող աշխատանքի մասին, կ'ակնկալուի բնականաբար պետական համապատասխան պատրաստուածութիւն, հակադարձութիւն բայց նաեւ՝ նախաձեռնութիւն: Այստեղ կրնան լծակից դառնալ թէ՛ հայաստանեան եւ թէ՛ սփիւռքեան մամուլի կամ առ հասարակ զանգուածային լրատուամիջոցներու ներկայացուցիչները, ինչ որ ակնհայտ կը շեշտէ համակարգուած հայկական միասնական տեղեկատուական դաշտ ձեւաւորելու անհրաժեշտութիւնը:

Այս առումով ողջունելի է Հայաստանի Հանրապետութեան նախագահին կողմէ նախաձեռնուած տեղեկատուական անվտանգութեան հայեցակարգի մշակումը, որ կրնայ ուղենշային կարելորութիւն ունենալ թէ՛ տեղեկագիտական եւ թէ՛ բովանդակային առումներով: Տեղեկատուական պատերազմը, միայն հայկական, ազրպէյճանական եւ թրքական տարածքներու վրայ կիրարկուող պատերազմ չէ. միջազգային է ամէն բանէ առաջ, որովհետեւ սանձազերծուած ապատեղեկատուութիւնը նախ ուղղուած է մի-

ջազգային հանրութեան եւ կը ծառայէ անոր կարծիքի ապակողմնորոշման քաղաքականութեան:

Պարզ է ուրեմն, որ նման քայլերու դիմաց հակակշիռ գործողութիւններ կազմակերպելու համար աւելի քան անհրաժեշտ են սփիւռքեան հայատառ եւ ոչ հայատառ լրատուամիջոցներու՝ վերլուծական կեդրոններու ընդհանուր գործին մասնակցութիւնը: Բայց գործէն առաջ նաեւ՝ ռազմավարութեան մշակման աշխատանքին եւ անոր յատկացուած քննարկումներուն մասնակցութիւնը:

Տեղեկատուական այս ոլորտին մէջ մէկ կարեւոր ենթաբաժին եւս ուղղակի կը կապուի հայկական լրատուամիջոցներուն: Արդէն թուրքիան եւ Ազրպէյճանը տեղեկատուական համակարգ ունին հայերէնով: Հարցը, արագ հայեացքով, կը դիտարկուի թուրքիոյ ազգային փոքրամասնութիւններու իրաւունքները յարգելու եւ եւրոպական կառոյցներու ընդառաջ թրքական պետութեան համարկումի քաղաքականութեան ծիրին մէջ: Այս յայտագիրներու արբանեակային հեռաձարկումները, համացանցային տարբերակները եւ հասանելիութեան սահմանները կը նախանշեն, որ քաղաքականութիւնը եթէ մէկ կողմէ իբրեւ թէ փոքրամասնութիւններուն իրաւունքները յարգելով եւրոպական համարկումի ճիգերուն կը ծառայէ, միւս կողմէ՝ նաեւ հիմնականին մէջ հայ գանգուածներուն քարոզչական ալիք հասցնելուն կը միտի: Մանաւանդ որ հակառակ եունեսքոյի թէ նոյնինքն եւրոպական կառոյցներու կողմէ արեւմտահայերէնը վտանգուած լեզուներու դասակարգումին տակ տեղադրելու յայտարարութիւններուն, թրքական կառավարութիւնը առաւելաբար արեւելահայերէնը կ'ընտրէ այս առումով իբրեւ քարոզչական հաղորդակցութիւններու լեզու:

Իսկ հայերէնով կատարուած թուրքեւազրպէյճանական լրատուութիւնը հիմնովին կը տարբերի անոնց թրքատառ տեղեկատուական բովանդակութենէն՝ չըսելու համար ապատեղեկատուութենէն՝ հայկական հարցերուն մասին: Նուրբ ու մշակուած յատուկ քաղաքականութիւն կայ այնտեղ հասկնալիօրէն հայ գանգուածները չվիրաւորելու, անոնց համար գրաւիչ դառնալու եւ բարեկամական մթնոլորտ ձեւաւորելու: Այս առումով գրեթէ խոպան է մեր դաշտը, յատկապէս թուրք եւ ազրպէյճանական գանգուածներուն հասանելի դառնալու: Թէեւ պէտք է արձանագ-

րել որ կարգ մը լրատուամիջոցներ թրքերէն բաժինը աւելցուցած են իրենց կայքէջերուն վրայ:

Թէ՛ հայաստանեան եւ թէ՛ սփիւռքեան մամուլը կամ աւելի լայն ըմբռնումով լրատուադաշտը այս անգամ հայատառ հրապարակումներուն հետեւելու եւ անպայման հակազդելու խնդիր ունի իր առջեւ: Այստեղ է ահա, որ սփիւռքահայ լրատուամիջոցները իրենց ճիգերը, ներուժն ու ռազմավարութիւնները համակարգելու անհրաժեշտութիւնը ունին, անհրաժեշտութիւն, որուն ձեռնարկունը պէտք չէ ուշանայ: Միաժամանակ արեւմտահայերէնի պահպանման եւ զարգացման ու տակաւին քաղաքական հրապարակագրութեան համապատասխան բառակերտման եւ Հայ Դատին հետ կապուած իրաւաբանական եզրաբանութեան արեւմտահայացման առաջնահերթ խնդիր:

Յատուկ պէտք է անդրադառնալ նաեւ Միջին Արեւելքի մէջ թրքական գործօնի աշխուժացման երեւոյթին առընթեր թուրքեւագրպէյճանական միացեալ քարոզչամեքենայի սարդեցուցած լրատութիւններուն՝ արաբական եւ մասնակի օրինակներով լիբանանեան մամուլի էջերուն: Թուրքիոյ արտաքին գործոց նախարարին փակ հանդիպումները լիբանանեան զանգուածային լրատուամիջոցներու ամէնէն նշանաւոր ներկայացուցիչներուն հետ պարզապէս այս նպատակին կը ծառայեն: Այստեղ ընտրուած է յատուկ մարտավարութիւն. ապատեղեկատուութիւնը զանց առած է հայ-թրքական յարաբերութիւնները կամ աւելի մասնակիօրէն Ցեղասպանութեան ժխտումի քաղաքականութիւնը եւ կեդրոնացած՝ դարաբաղեան թեմային վրայ, ուր փորձ կը կատարուի յատկապէս հարցի կրօնական բնութագրումին, հայերը ջարդար եւ նախայարձակ ներկայացնելուն: Վերստին արաբական մամուլի բառապաշարին մէջ մուտք գործած են «անջատողական», «ջարդարար», «Քրիստոնէայ հայեր ընդդէմ ազրպէյճանցի իսլամներու» բառակապակցութիւնները:

Մէկէ աւելի են արաբական մամուլի օրինակները, որոնք հայագրպէյճանական շփման գիծի երկայնքին արձանագրուած հրադադարի խախտումները լուսաբանելու համար կ'որդեգրեն ազրպէյճանական աղբիւրը, մինչ խնամքով անուշադրութեան կը մատնեն Արցախի Պաշտպանութեան Նախարարութեան՝ շրջանառութեան մէջ դրած տեղեկատուութիւնը:

Այս բոլորին կը նպաստէ նաեւ իսլամական վեհաժողովներու ընդունած ամէնէն հակահայ բանաձեւերը, եւ անոնց ներշնչումով արաբական եւ այս պարագային լիբանանեան մամուլի արձագանգումները: Ցեղասպանութեան ժխտումի գործօնը զանց առնելու եւ դարաբաղեան թեմային վրայ կեդրոնանալու մարտավարութիւնը յստակ է ու թափանցիկ: Աշխատանք կայ միջպետական համակարգուածութեամբ իսլամ ազգաբնակչութիւններուն եւ հայ համայնքին միջեւ ներհասարակական անջրպետներ յառաջացնելու:

Այս բոլորը կը կատարուին երկիրներու մէջ, ուր հայութիւնը երկար տասնամեակներէ ի վեր կայք հաստատած է, համարկուած տեղւոյն հասարակութեան, աշխուժ մասնակցութիւն բերած երկրի քաղաքական, մշակութային եւ տնտեսական բնագաւառներուն: Փորձ կը կատարուի շրջելու արաբ հասարակութեան մէջ հայ կերպարին նկատմամբ ստեղծուած տպաւորութիւնը, համոզումը: Խնդիրը ուրեմն, ոչ միայն Ղարաբաղեան հարցի առնչութեամբ թուրք եւ ազրպէյճանական ապատեղակատուութիւններուն հակազդելու մասին է այլ նաեւ տեղւոյն հայ հասարակութեան նկատմամբ ստեղծուած համոզումները անսասան պահելու եւ ներհասարակական պառակտումները կանխարգիլելու:

Մեր հակառակորդին կողմէ նուրբ մարտավարութեամբ մշակուած վտանգաւոր խաղ սկսած է հայութեան դէմ: Հակակշիռ եւ հակադարձ տեղեկատուական գործողութիւններ պէտք են: Եւ եթէ կայ թուրք-ազրպէյճանական առանցքի տեղեկատուական բաժանմունքը, ինչո՞ւ պէտք չէ ձեւաւորուի եւ գործէ Հայաստան-Սփիւռք-Արցախ տեղեկատուական ոլորտի համակարգուած աշխատանքը: Նման ճիշդ մեքենականութեան մը յառաջացումով մենք յստակ առաւելութիւններ ձեռք կը ձգենք մեր հակառակորդին վրայ, նկատի ունենալով մանաւանդ հայկական աշխարհատարած զանգուածային լրատուամիջոցներու գոյութիւնը:

26 օգոստոս 2010ին Պաքուի մէջ նախագահ Ալիեւի աշխատակազմի քաղաքական վերլուծութեան և տեղեկատուական ապահովման բաժնի ղեկավար Էլնուր Ասլանովը հիւրընկալած էր 36 երկիրներու մէջ իրենց բարձրագոյն ուսումը պետական աջակցութեամբ ստացող ազրպէյճանցի երիտասարդներ եւ անոնց կոչ ըրած Ղարաբաղի հարցով ապատեղակատուութեան թափ տալու: Ազրպէյճանական թէկուզ ժամանակաւոր սփիւռքի երիտա-

սարդ տարրերը համախմբելու Պաքոյի այս փորձը ուշացած հակադարձութիւն է Ստեփանակերտի համաժողովին: Իսկ այս հարթութեան վրայ թէ՛ մարդուժի, թէ՛ որակի եւ թէ՛ կազմակերպութեան առումով հայկական կողմի առաւելները ակնբերւօրէն շատ են: Կը մնայ մեքենականութիւնները արդիւնաւէտ բանելու աշխատանքի կազմակերպումը:

Խնդիրները շատ են, զարգացումները՝ աննախադէպօրէն արագ: Օրը կը պահանջէ մասնագիտական պատրաստութիւն, արհեստավարժ աշխատանք, այսօրուան ընձեռած կարելիութիւններու լիարժէք օգտագործում:

Ե. Անմիջական վտանգ

Ինչպէս Հայաստան-Սփիւռք համագործակցութեան տարբեր ուղորտներուն, այնպէս ալ տեղեկատուական ոլորտին պարագային համագործակցութիւնը անհրաժեշտ է բոլոր իմաստներով: Այս պարագան յատկապէս առաւել կեդրոնացումի եւ անյետաձգելիութեան անհրաժեշտութեան առջեւ է սակայն: Եթէ ռազմական ճակատի վրայ դիւրաբեկ հրադադար է, տեղեկատուական ճակատի վրայ պատերազմական վիճակ է: Այստեղ ոչ թէ հրադադարի խախտումներ են այլ սանձազերծուած պատերազմի ահագնացում: Իսկ պատերազմական իրավիճակի մէջ ուժերու տարտղնումը, չհամախմբուիլը եւ ռազմավարութիւն չճշդելը մեղմ ասած հակառակորդին առաւելներ ապահովելու համազօր է:

Հայ լրագրողական ներուժի կուտակումը, համախմբումն ու արդիւնաւէտ աշխատիլը, համոզուած են կրնան լուրջ հարուած հասցնել թուրքեւազրպէյճանական միացեալ քարոզչամեքենային եւ ռազմականին առընթեր նաեւ տեղեկատուականէն պատուով դուրս բերել հայկական կողմը:

Shahan Kandaharian – *Challenges of the Lebanese Armenian media in the context of Republic of Armenia-Diaspora information dissemination* – In broad lines the author assesses the current affairs of the media and their electronic versions. He notes that it is too early to have a full-fledged survey as the field is too diverse and still growing.

Kandaharian shares some of the characteristics of this new mode of information dissemination and is in little doubt that it will make the conventional media loose the contest due to its extensive availability, accessibility and speed.

In this context, Kandaharian is satisfied with the 2010 Armenian media conference held at Stepanakert, as the first step in the right direction. He highlights the fact that the Armenian e-media is not canonized and lacks any rules and regulations which would formalize it and give a further qualitative boost. He argues that due to lack of any restraints and accountability a number of irresponsible news stories are being disseminated.

In this regard the author underlines a number of news stories which bear a high degree of democratic importance and touch upon human rights issues, nonetheless, are security-sensitive. He notes that such news articles and campaigns cause collateral damage and undermine the psychological aspects of certain values which may have dire consequences.

On another note Kandaharian highlights the Turkish and Azerbaijani e-media with their Armenian language outlets and calls for joining the Armenian effort to address their falsifications.

Шаан Гандахарян – Проблемы армянских СМИ Ливана в контексте обмена информацией между Республикой Армения и Диаспорой. – Автор вкратце оценивает нынешнюю ситуацию в печатных СМИ и их электронных версиях, отмечая, что время для полноценного анализа последних ещё не настало, поскольку число разнообразных электронных медиа продолжает расти. Гандахарян не сомневается, что в силу своего количества, доступности и скорости этот новый способ распространять информацию сделает традиционную прессу неконкурентоспособной.

Гандахарян полагает, что состоявшаяся в 2010 году в Степанакерте конференция армянских электронных СМИ – первый шаг в правильном направлении. В статье подчеркнуто, что электронные издания фактически не узаконены, поскольку нет правил, которые регулировали бы их деятельность и способствовали повышению её качества. В отсутствие каких-либо ограничений, утверждает автор, в ряде случаев безответственно распространяется непроверенная и ложная информация.

В этой связи автор подчеркивает, что некоторые новости, чрезвычайно важные с точки зрения развития демократии и прав человека, всё-таки конфиденциальны. Их обнародование, полагает он, психологически ущербно и способно подорвать определённые ценности. Кроме того, Гандахарян перечисляет турецкие и азербайджанские электронные СМИ, работающие и на армянском языке, и призывает присоединиться к усилиям Армении по разоблачению распространяемых ими ложных сведений.

ՅՈՒՐԻ ԱՎԵՏԻՍՅԱԼ

ՍՓՅՈՒՔԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

2008 թ. Երևանի պետական համալսարանում հիմնադրվեց սփյուռքագիտության ամբիոնը: Մեկ տարի հետո ամբիոնին կից բացվեց մագիստրատուրա՝ սփյուռքագիտություն մասնագիտությամբ: Նպատակը գիտաուսումնական այնպիսի միավորի ստեղծումն էր, որի գործունեության հիմնական ուղղվածությունը սփյուռքագետների պատրաստելն է: Նրանք զբաղվելու են սփյուռքի և մասնավորապես հայկական սփյուռքի ուսումնասիրությամբ: Ամբիոնը այսօր ամբողջական կառույց է, որի գործունեության հիմնական որակը կրթական գործն է՝ գիտական գործունեությանը զուգահեռ:

Ամբիոնի գործունեության և նպատակների մասին առավել ամբողջական և ճշգրիտ պատկերացում տալու համար կփորձեն պատմական մի փոքրիկ ակնարկ անել Հայաստանում մինչև այժմ եղած և այսօր գործող գիտակրթական նմանատիպ կառույցների վերաբերյալ:

Հայաստանի առաջին Հանրապետության պատմությունը կարճ ընթացք ունեցավ: Հայրենիք-Սփյուռք հարաբերությունները, առավել ևս գիտական ու կրթական համագործակցությունը քիչ թե շատ կանոնավոր արդյունք ըստ էության չունեցան:

Խորհրդային տարիներին առաջին կազմակերպությունը, որ համեմատաբար ակտիվ գործունեություն ծավալեց մեզ հետաքրքրող բնագավառում, Սփյուռքահայության հետ մշակութային կապերի կոմիտեն էր: 1964-ին հիմնադրված հասարակական այդ կազմակերպությունը իր գործի կարևոր բաղադրիչներից մեկն էր համարում աջակցությունը Սփյուռքի կրթական գործին. սփյուռքահայ դպրոցներին պարբերաբար առաքվել են հայոց լեզվի, հայ գրականության և աշխարհագրության դասագրքեր, կազմակերպվել է սփյուռքահայ մոտ 200 դպրոցականների ամառային հանգիստը Հայաստանի ճամբարներում: Առաջին անգամ մեկամսյա ժամկե-

տով անցկացվում են սփյուռքահայ ուսուցիչների որակավորման ամենամյա դասընթացներ. յուրաքանչյուր տարի մոտ 50 ուսուցիչ մասնակցել է օգոստոսյան խորհրդակցությունների և կամընտրական դասընթացների: Կոմիտեն նաև մասնակցություն է ունեցել սփյուռքահայ ուսանողների ընտրության մեջ՝ նրանց ուսումնառությունը հայրենիքում կազմակերպելու համար:

Սկսած 1960-ականներից՝ Չայաստանի տարբեր բուհերում անվճար ուսում են ստացել ավելի քան 1000 ուսանողներ: Ըստ որում, դրանցից 300-ից ավելին եղել են լիբանանահայ երիտասարդներ: 1992-ին պետական ֆինանսավորման դադարեցումից հետո կոմիտեն փաստորեն զրկվեց իր կանոնադրական խնդիրները կատարելու հնարավորությունից, իսկ 1998-ին դադարեց գործելուց:

Չայկական համայնքների այսպես կոչված գիտական կազմակերպված ուսումնասիրության սկիզբը դրվեց 1980-ին, երբ Չայաստանի գիտությունների ակադեմիայի համակարգում ստեղծվեց «Սփյուռքահայ համայնքների պատմության և մշակույթի բաժին»՝ ինստիտուտի կարգավիճակով: Բացվեց ԽՍՀՄ Կենտկոմի վերին աստիճանների հատուկ որոշումով: Այդ միավորի գործունեությունը հատկապես ակտիվացել է Կառլեն Դալլաքյանի ղեկավարման տարիներին: Բաժինը կազմել և հրատարակել է ուսումնասիրություններ Բուլղարիայի, Իրանի և մի շարք այլ երկրների հայկական համայնքների պատմության վերաբերյալ: 1987-ի աշնանը կազմակերպված միջազգային գիտաժողովը՝ «Չայ համայնքները Արևմուտքի և 3-րդ աշխարհի երկրներում» խորագրով, ըստ էության իր տեսակի մեջ առաջինն էր Չայաստանում և առաջիններից մեկը խորհրդային տերության սահմաններում:

Ի՞նչն է սակայն ուշագրավ. ակադեմիայի կազմում ստեղծված այդ կառույցը զբաղվում էր միայն հայ գաղթավայրերի պատմությամբ. հայկական սփյուռքի պատմությունը, սփյուռքահայ համայնքների կյանքը այդպես էլ ուսումնասիրության նյութ չդարձան: Բաժինը փակվեց 1995-ին՝ անկախության տարիներին:

Մեկ տարի անց՝ 1996-ին, հավանաբար նախորդ բաժնի գիտական ներուժի հենքի վրա Չայաստանի ազգային ակադեմիայում ստեղծվեց «Գաղթավայրերի և սփյուռքի պատմություն» բաժինը՝ Վլադիմիր Բարխուդարյանի ղեկավարությամբ: Բաժինը այս մե-

կուկեն տասնամյակների ընթացքին ունեցավ արդյունավոր գործունեություն՝ ուսումնասիրելով ԱՄՆ-ի, Սկանդինավյան երկրների, Ռուսաստանի, նաև Ադրբեջանի և հայկական այլ համայնքների պատմությունը, ինչպես նաև առանձին միությունների, կուսակցությունների, կազմակերպությունների գործունեությունը: Դրանց մի մասը ներկայացվել է գրքի տեսքով: Հատուկ ուզում են շեշտել, որ այդ աշխատանքների մի զգալի մասը վերջին տարիներին կյանքի է կոչվել նորաստեղծ Սփյուռքի նախարարության աջակցությամբ ու հովանավորությամբ:

1996-ին ՀՀ կրթության և գիտության նախարարության համակարգում իր գործունեությունը սկսեց «Սփյուռք» գիտաուսումնական կենտրոնը՝ որպես Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ուսումնական առանձին ստորաբաժանում: Կենտրոնի կրթական հիմնական ուղղությունը սփյուռքահայ և հայաստանցի ուսուցիչների վերապատրաստությունն է արևմտահայ լեզվի և գրականության գծով, ինչպես նաև դասագրքերի, մասնագիտական, պատմական և գրական ծրագրային գրքերի հրատարակությունը: Տարիների ընթացքում կենտրոնում կազմակերպվող ամենամյա վերապատրաստությանը մասնակցել են աշխարհի 36 երկրներից շուրջ 750 ուսուցիչներ: Ձուգահեռ կազմակերպվել են հանդիպումներ պետական, քաղաքական, մշակութային գործիչների հետ, այցելություններ տուն-թանգարաններ, ճամփորդություններ: Պայմանագրային սկզբունքով դասընթացները վարել են ինչպես հայաստանցի մասնագետներ, այնպես էլ արտերկրի ճանաչված հայ գիտնականներ ու մանկավարժներ: Կենտրոնը 2002 թվականից անցկացրել է նաև ՀՀ և Լեռնային Ղարաբաղի 480 ուսուցիչների վերապատրաստություն՝ խորացնելով նրանց գիտելիքները արևմտահայերենի և արևմտահայ-սփյուռքահայ գրականության վերաբերյալ: Ծավալվել է նաև հրատարակչական գործունեություն. լույս են տեսել Սփյուռքին վերաբերող կրթական, հայագիտական, գեղարվեստական 35 անուն գրքեր, այդ թվում՝ Վահան Թեքեյանի, Ռոպեր Հատտեճյանի, Վազգեն Շուշանյանի, Ջարեհ Խրախունու գեղարվեստական գործերը, մենագրություն Պողոս Նուպար փաշայի մասին:

Արևմտահայերենի և արևմտահայ-սփյուռքահայ գրականության նկատմամբ հետաքրքրությունը ակնհայտորեն մեծացավ նախորդ դարի 80-ականներից: Առաջինը ԵՊՅ-ում, ապա և մի շարք այլ բուհերում արևմտահայերենը սկսեց դասավանդվել որպես առանձին առարկա: Զգալի չափով ավելացվեցին արևմտահայ և սփյուռքահայ գրականությանը հատկացված ժամերը: Ստեղծվեցին և հրատարակվեցին արևմտահայերենի վերաբերյալ ուսումնասիրություններ, դասագրքեր, սփյուռքահայ գրականության ժողովածուներ, առանձին հեղինակների երկերի ամբողջական ակադեմիական հրատարակություններ և այլն: Արևմտահայերենը, սփյուռքահայ գրականությունը, իսկ վերջին շրջանում նաև հայկական սփյուռքի համառոտ պատմությունը առանձին բաժիններով զետեղվեցին դպրոցական հանրակրթական դասագրքերում:

Ինչպես գիտության ու մշակույթի բոլոր ասպարեզներում, խորհրդային տարիներին այս ոլորտներում նույնպես ամենամեծ դերակատարություն ունեցել են անհատ մասնագետները: Աշոտ Աբրահամյան, Օնիկ Թոփուզյան, Յրաչիկ Սիմոնյան, Յովիկ Մելիքսեթյան, Լենդրուշ Խուրշուդյան, Կառլեն Դալլաթյան, Էդուարդ Մելքոնյան և ուրիշներ. ահա հայաստանյան մասնագետների մի հոծ խումբ, որ մեծ ներդրում է ունեցել հայ գաղթօջախների ու համայնքների պատմության, արտերկրի հայկական կազմակերպությունների և կուսակցությունների գործունեության ուսումնասիրության մեջ:

Պատմական այս համառոտ ակնարկից էլ ակնհայտ է դառնում, որ կրթական գործը, ավելի ստույգ՝ Հայաստան-Սփյուռք կրթական գործակցությունը ունեցել է առավել քիչ կազմակերպված բնույթ և ընթացել է, մեղմ ասած, վայրիվերումներով: Առավել արդյունավետ է եղել գիտական գործը: Թեև սա էլ ընթացել է միակողմանիորեն՝ հետաքրքրության հիմնական առարկա ունենալով նախասփյուռքյան հայկական գաղթօջախները: Բուն Սփյուռքի ուսումնասիրությունը մի տեսակ դուրս է մնացել տեսադաշտից:

Պատճառները տարբեր էին: Խորհրդային տարիներին, չնայած կատարվող աշխատանքներին, մեր ժողովրդի երկու հատվածները շարունակեցին ապրել իրարից մեկուսացած ու անջատ: Տասնամյակների ընթացքին ավելի խորացան տարրնկալումները:

Պատկերը փոխվեց անկախության տարիներին: Հայրենիք-Սփյուռք հարաբերությունների զորացմանը ազդակ հանդիսացավ ՀՀ սփյուռքի նախարարության ստեղծումը. նախարարությունը ընդհանուր ուղղություններով կազմակերպող-համակարգող դերով որոշակի կանոնական բնույթ հաղորդեց թվարկված տարբեր կառույցների գործունեությանը: Ստեղծվեցին նոր միավորներ. ազգային ակադեմիայի արվեստի և գրականության ինստիտուտներում հիմնադրվեցին սփյուռքի բաժիններ: Էապես ակտիվացավ արդեն գործող միավորների աշխատանքը. սփյուռքի նախարարության հետ համատեղ տեղեկատվական հետազոտությունների մի ամբողջ շարք է սկսել «Նորավանք» գիտակրթական հիմնադրամը:

Արդյունքներից մեկը եղավ այն, որ ԵՊՀ-ում բացվեց սփյուռքագիտության ամբիոն: Նմանատիպ կառույց ստեղծելու գաղափարը համալսարանում արդեն կար: Բայց դա ունենալու էր առավելապես հայերենագիտական ուղղվածություն, ծառայելու էր արևմտահայերենի պահպանության ու զարգացման գործին: Սփյուռքագիտության ամբիոնը ստեղծվեց ԵՊՀ-ի և Սփյուռքի նախարարության համագործակցության արդյունքում: Կենտրոնացված գիտակրթական, մասնավորապես կրթական գործունեություն կազմակերպելու և վարելու համար անհրաժեշտություն կար ունենալու կառույց, որը պիտի համակարգեր այս ոլորտի աշխատանքները:

Ամբիոնը, ինչպես ասվեց, հիմնադրվել է նախարարության ստեղծումից անմիջապես հետո: Բուն գործունեությունը ծավալել է 2009 թվականից՝ կազմակերպելով մագիստրատուրայի բաժնի ընդունելություն: Ամբիոնը այսօր ունի ութ դասախոս՝ չորսը որպես հիմնական, մյուս չորսը՝ համատեղությամբ: Մեր գիտության մեջ և կրթական համակարգում ճանաչված լեզվաբաններ և պատմաբաններ են՝ գիտության դոկտորներ և թեկնածուներ: Ամբիոնն ունի նաև տասնյակից ավելի հրավիրված դասախոսներ՝ ամենատարբեր մասնագիտությունների գծով՝ պատմաբան, հոգեբան, ազգագրագետ, մանկավարժ, արվեստաբան, սփյուռքահայ մամուլի, հայ եկեղեցու պատմության մասնագետներ և այլն:

Մագիստրատուրայի առաջին և երկրորդ կուրսերում ունենք 25 ուսանող: Լավագույնները սովորում են անվճար. ամեն տարի 10 ու-

սանողի ուսման վարձը փոխանցում է սփյուռքի նախարարությունը: Մագիստրատուրա են գալիս համալսարանի տարբեր ֆակուլտետներից՝ հայ բանասիրություն, պատմություն, քաղաքագիտություն, ռոմանագերմանական բանասիրություն, արևելագիտություն, և տարբեր բուհերից՝ պետական մանկավարժական համալսարան, Բրյուսովի անվան լեզվաբանական համալսարան և այլն: Ընտրության սկզբունքը հետևյալն է՝ բակալավրատում բարձր առաջադիմություն, օտար լեզուների լավ իմացություն, սփյուռքի պատմության և արևմտահայերենի բավարար չափով ճանաչողություն: Դասընթացները ներառում են Սփյուռքի հայ համայնքների կյանքի տարբեր ոլորտները՝ պատմական, քաղաքական, տնտեսական, մշակութային և այլն: Դասավանդվող առարկաների մասին ընդհանուր պատկերացում տալու համար թվարկեն դրանցից մեկ-երկուսը՝ «Ավանդական ուղղագրություն», «Արևմտահայերենի արդի վիճակը. հնչյունաբանություն, բառագիտություն», «Ժամանակակից էթնոհոգեբանության հիմունքները և հայ սփյուռքը», «Ցեղասպանությունների պատմություն», «Սփյուռքի հայ համայնքների դերը Հայաստան-արտերկրի հարաբերություններում», «Ռուսաստանի և հարակից տարածքների հայ համայնքները», «Սփյուռքի հասարակական-քաղաքական, բարեգործական, մշակութային, հայրենակցական կազմակերպությունները», «Սփյուռքի հայ քաղաքական կուսակցությունների պատմություն», «Հայաստան-Սփյուռք հարաբերությունների արդի փուլը»: Ուսումնական ծրագրում պարտադիր և կամընտրական դասընթացներ կան նաև Սփյուռքի էլեկտրոնային լրատվամիջոցների, մամուլի պատմության, արևմտահայ-արևելահայ գրական աղբյուրների, սփյուռքահայ գրականության հիմնախնդիրների վերաբերյալ:

Անգլերենին համեմատաբար լավ տիրապետողների համար անցկացվում է անգլերենի խորացված ուսուցում: Լրացուցիչ պարապմունքների հավելյալ վճարը փոխանցում է Սփյուռքի նախարարությունը:

2011-ին ունեցանք առաջին շրջանավարտները. մագիստրոսի կոչում ստացան 11 ուսանողներ: Ավարտական աշխատանքների թեմաները գերազանցապես վերաբերում էին Հայաստան-Սփյուռք հարաբերությունների արդի հիմնախնդիրներին, հայկական հա-

մայնքների պատմության չուսումնասիրված կամ քիչ ուսումնասիրված ոլորտներին, ինչպես՝ «Կալիֆոռնիայի հայ համայնքների պատմություն», «ԱՄՆ-ի Հայ դատի հանձնախումբը», «Հրանտ Դինքի հրապարակախոսությունը», «Հայ ինքնության պահպանման խնդիրները և Կ. Պոլսի «Մարմարա» օրաթերթը», «Ավանդական (դասական) Սփյուռքի կազմակերպական-կառուցվածքային բնութագիրը», «Բեյրութի «Ազդակ» պարբերաթերթը և արդի գրական արևմտահայերենի զարգացման միտումները» և այլն:

Մագիստրատուրայի կրթական ծրագրում առանձնահատուկ տեղ ունի արևմտահայերենը: Առարկան դասավանդվում է չորս տարբեր դասընթացներով՝ ուղղագրությունից, հնչյունաբանությունից մինչև շարահյուսություն: Արևմտահայերենի նկատմամբ այսօր մեծ է նաև գիտական հետաքրքրությունը: Վերջին տասնամյակներին գրվել և գրվում են դասագրքեր, ուսումնասիրություններ, ատենախոսություններ, մագիստրոսական թեզեր: Ստեղծվում են արևելահայերեն-արևմտահայերեն փոխվերծանող ծրագիր, արևմտահայերենի էլեկտրոնային բառարան և այլն: Գործածության մեջ են արևմտահայերենի բուհական դասագրքերը՝ Ռուբեն Սաքապետոյան՝ «Արևմտահայերենի դասագիրք», Նույն հեղինակի՝ «Արևմտահայերենի նոր բառարան»՝ վերանշակված և համալրված տարբերակով, Յուրի Ավետիսյան՝ «Արևելահայերենի և արևմտահայերենի զուգադրական քերականություն», «Արևմտահայերենի գործնական աշխատանքների ձեռնարկ», Մանուկ Ֆելքեյան՝ «Ավանդական ուղղագրություն» ուսումնամեթոդական ձեռնարկ: Տպագրության ընթացքի մեջ է «Արևելահայերենի և արևմտահայերենի զուգադրական հնչյունաբանություն» դասախոսությունների շարքը (հեղ.՝ Յու. Ավետիսյան), որը, ի դեպ, կարելի է համարել ԵՊՀ և Հայկազյան համալսարան անմիջական համագործակցության առաջին օրինակներից, քանի որ գիրքը խմբագրվել է Հայկազյան համալսարանի աշխատակից և «Հայկազյան հայագիտական հանդեսի» պատասխանատու քարտուղար դոկտոր Անդրանիկ Տազեսյանի կողմից: Ստեղծվում է հայոց լեզվի բուհական դասագիրք ԱՊՀ ուսանողների համար: Թվարկած գրքերի հրատարակության մեջ Սփյուռքի նախարարությունը ունի իր անմիջական մասնակցության և նյութական օժանդակության մեծ բաժինը:

Քանի որ խոսք եղավ ամբիոնի գիտական գործունեության մասին, ավելացնենք, որ Սփյուռքին և հայ համայնքների պատմությանը նվիրված գործեր են ստեղծել պատմաբաններ Էդուարդ Մելքոնյանը, Արման Եղիազարյանը, Պետրոս Յովհաննիսյանը և ուրիշներ: 2011-ին լույս տեսավ դոկտոր Մելքոնյանի «Հայ բարեգործական ընդհանուր միության պատմություն» ուսումնասիրության ռուսերեն տարբերակը: Առանձին ժողովածուներով հրատարակվել են նաև տարբեր գիտաժողովներում կարդացված զեկուցումներ: Կարծում եմ՝ շատ արդյունավետ էր անցյալ տարի հունիսին Ծաղկաձորում կազմակերպված գիտաժողով-քննարկումը, որը նվիրված էր արևմտահայերենի միասնական դասագրքի ստեղծման խնդիրներին և արևմտահայերենի զարգացման հեռանկարներին: Մասնակցում էին շուրջ երկու տասնյակից ավելի երկրների հայագետներ: Իր տեսակի մեջ աննախադեպ հավաք: Ակնհայտ է, որ արևմտահայերենի պահպանման և զարգացման խնդիրը այսօր լուրջ մտահոգությունների առիթ է տալիս: Բայց դա առանձին քննարկման նյութ է:

Առիթը օգտագործելով, սակայն, ուզում եմ մի քանի խոսքով մտահոգություններս հայտնել Սփյուռքում և Հայաստանում արևմտահայերենի արդի վիճակի վերաբերյալ: Ըստ վիճակագրության՝ Սփյուռքի 7 միլիոն մեր հայրենակիցներից արևմտահայերենով հաղորդակցվում է շուրջ 2 միլիոնը: Իսկ հայկական ամենօրյա կամ մեկօրյա դպրոց հաճախում է նրանց ընդամենը 5 տոկոսը: Վիճակն իհարկե անհանգստացնող է: Հեռանկարում կտրուկ նվազելու է նաև այս թիվը: Դպրոցների չզոյությունը, ուսուցիչների պակասը, ծնողների, նաև հայ հանրության որոշակի անտարբերությունը և ճանաչման հայեցի կրթություն ստանալու անհեռանկարը է՛լ ավելի են ծանրացնում վիճակը:

Սփյուռքի մեր հայրենակիցները երբեմն մեզ մեղադրում են լեզվի հարցում օտարասիրության մեջ՝ նկատելով, որ արևելահայերենը անհարկի խճողվում է ռուսաբանություններով և հաճախ դյուրընկալ չէ սփյուռքահայի համար: Դա, իհարկե, այդպես է: Խոսակցական արևելահայերենը էապես ազդեցություններ է կրել ռուսերենից, իսկ վերջին տարիներին՝ նաև անգլերենից: Սակայն արևելահայերենի վաղվա օրվա համար որևէ լուրջ վտանգ ես չեմ տես:

նում: Եթե մոտ անցյալում արևելահայերս առիթը ունեինք տագ-
նապելու, որ ռուսերենի ուժեղ ազդեցությամբ և տարվող հատուկ
քաղաքականությամբ հայերենը կարող է կորցնել հայեցի ինչ-ինչ
հատկանիշներ, ապա այսօր՝ անկախ պետականության պայման-
ներում, վտանգը մեծ չէ, և արևելահայերենի զարգացման ճիշտ
ճանապարհը բնավ էլ մաքրամոլությունը չէ, ինչպես մեզ երբեմն
առաջարկվում է զանազան կազմակերպությունների կողմից:
Մենք հաճախ հանիրավի փորձում ենք արդեն իսկ լայն շրջանա-
ռության մեջ մտած և հանրության կողմից ընդունված փոխառյալ
հաջող բառը փոխարինել հայերեն անհաջող տարբերակով:
Պետք է նկատի ունենալ մի շարք հանգամանքներ՝ բարեհնչու-
թյունը, հասկացության բովանդակությունը ամբողջությամբ ար-
տահայտելու հնարավորությունը, կիրառելի, գործածական լինե-
լու հանգամանքը և այլն: Հազիվ թե կարելի է հաջողված համա-
րել, օրինակ, **ալիբի** բառի փոխարեն **այլուրեքությունը**, **կոն-
սերվատորիայի** փոխարեն **երաժշտանոցը**, **շտաբի** փոխարեն
սպայանոցը, **տանկի** փոխարեն **հրասայլը**, **Ֆինանսիստի** փո-
խարեն **ելևտագետը**, **բանկի** փոխարեն **դրամատուներ** և այլն:

Խնդիրը փոքր-ինչ այլ է արևմտահայերենի պարագային: Խոսակ-
ցական արևմտահայերենը լրջորեն վտանգված է օտար լեզուներ
ի ազդեցությամբ: Նույնիսկ մտավորական սփյուռքահայի խոս-
քում երբեմն հնչում են անգլերենով համեմված արտահայտու-
թյուններ, ինչպես՝ **օբոս փարքինգ** ըրի հոն, մեկ քանի խոսք ի-
րարու հետ **չենք** ըրինք, գործ մը **թեքեր** ըրինք, **մյուզիք** կը լսեի,
ֆրիվեյը էկզիթ ըրավ և այլն:

Հայրենիքից հեռու միջավայրում սա իրական վտանգ է ինչպես
խոսակցական, այնպես էլ գրական արևմտահայերենի համար:
Մենք այս ճանապարհով կորցնում ենք լեզուն:

Արևմտահայերենը որչափով և ովքեր պիտի սովորեն վաղը՝
դժվար է ասել: Արևմտահայերենի վաղվա օրվա այս կողմը հու-
սադրող քիչ բան ունի: Մանավանդ, երբ ժամանակ առ ժամանակ
տեղի է տալիս նաև մաքառման ոգին:

Քանի դեռ հայկական որևէ համայնքում (այս դեպքում ես նկատի
ունեմ Գերմանիայի հայ համայնքը) Պոլսից նոր գաղթած հայը,
հայերենին և գերմաներենին տիրապետելով հանդերձ, Եղեռնի

տարելիցին նվիրված հանդիսության ժամանակ հայ լսարանի առաջ գերադասում է հիշատակի խոսք ասել թուրքերենով, նշանակում է, որ վտանգված է ոչ միայն լեզուն:

Արևմտահայերենի հեռանկարը կարելի է սահմանել հետևյալ կետերով.

- Արևմտահայերենը պետք է ծառայի որպես գիտական ուսումնասիրությունների հարուստ աղբյուր:
- Արդի արևմտահայ գրական լեզուն պիտի մշակվի և պատշաճ մակարդակով ներկայացվի դասագրքերով:
- Արևմտահայերենը բավարար չափով պիտի ուսուցանվի նաև Հայաստանի համապատասխան կրթօջախներում: Արևմտահայերենը կենդանի պահելու հիմնական օջախը ի վերջո լինելու է հայրենիքը:
- Արևմտահայերենը պիտի շարունակի մնալ Սփյուռքի հայության արևմտահայ հատվածի բանավոր և գրավոր ընդհանուր հաղորդակցության լեզու, դպրոցի, լրատվամիջոցների, գեղարվեստական, մասամբ նաև գիտական գրականության լեզու:
- Եվ վերջապես, արևմտահայերենը պետք է պահպանել ու զարգացնել ոչ միայն որպես զուտ լեզվական հարստություն, այլև որպես ազգային ինքնության պահպանման կարևորագույն գործիք Սփյուռքում և Հայաստանում:

Մի երկու խոսք կուզեի ասել ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի կազմում գործող արևմտահայերենի մասնագիտացված խմբի մասին: Այն գոյություն ունի 2009-2010 ուսումնական տարվանից: Այստեղ, բացի բանասերների համար նախատեսված պարտադիր առարկաներից, դասավանդվում են նաև հատուկ մասնագիտական առարկաներ, ինչպես՝ «Արևմտահայ գրական աշխարհաբարի ձևավորումը», «Հայ գաղթօջախների պատմություն», «Բառապաշարային տեղաշարժերը արևելահայերենում և արևմտահայերենում», «Արևմտահայ մամուլի պատմություն», «Հայ ազգագրություն» և այլն: Այս դասընթացները հնարավորություն են ստեղծում մեզ համար կատարելու հաջորդ քայլը. բացել սփյուռքագիտություն մասնագիտությամբ բակալավրատ: Դա կապահովի կրթության շարու-

նակականությունը. կնախապատրաստի ուսանողների մուտքը մագիստրատուրա: Լավագույնները ուսումը կշարունակեն սփյուռքագիտության ասպիրանտուրայում:

Սփյուռքագիտության ամբիոնը համահամալսարանական է: Ասել է թե՛ սպասարկում է որոշակի ֆակուլտետների և ունի իր, այսպես կոչված, ազդեցության ոլորտները:

Որքան էլ զարմանալի է, մինչև վերջերս Երևանի պետհամալսարանի պատմության և արևելագիտության ֆակուլտետներում, իսկ ավելի ուշ նաև միջազգային հարաբերությունների ֆակուլտետում հայկական սփյուռքին վերաբերող առանձին դասընթաց չուներինք: Ավելին, հայ գաղթօջախների պատմությունը դասավանդվում էր հայոց պատմության դասընթացի շրջանակներում՝ աննշան ժամաքանակով: Համալսարանի ղեկավար կազմի անմիջական աջակցությամբ կարողացանք հասնել նրան, որ արևելագիտության և միջազգային հարաբերությունների ֆակուլտետների անցյալ տարվա աշխատանքային ծրագրերում ներառվեցին մի քանի նոր առարկաներ՝ «Ժամանակակից սփյուռքի պատմություն», «Սփյուռքագիտության հիմունքներ» և այլն: Նախատեսում ենք արևմտահայերենի առանձին դասընթաց ունենալ աստվածաբանության ֆակուլտետում:

Ի դեպ, պետք է նկատել, որ Սփյուռքի և սփյուռքագիտության վերաբերմամբ ԵՊՀ-ում ծավալվող այս աշխատանքները էապես անդրադառնում են Հայաստանի այլ բուհերի գործունեության վրա. օրինակ՝ Երևանի լեզվաբանական համալսարանում այս ուսումնական տարվանից մտցված է արևմտահայերենի մասնագիտական դասընթաց, մանկավարժական համալսարանում արևմտահայերենը արդեն դասավանդվում է նաև մագիստրատուրայում: Դասավանդման և ծրագրերի կազմման գործում մենք համագործակցում ենք մյուս բուհերի հետ: Այս ընթացքով ԵՊՀ սփյուռքագիտության ամբիոնը հեռանկարում օրինաչափ կերպով կարող է ստանձնել Հայաստանում սփյուռքին առնչվող կրթական կառույցների գործունեությունը համակարգող կենտրոնի դեր:

Ինչ վերաբերում է ուսուցիչների վերապատրաստությանը, ապա պետք է ասել, որ Սփյուռքի հայկական վարժարաններում մասնագիտացում ստացած ուսուցիչներ չկան, ուստի վերապատ-

րաստությունը բնութագրիչ որակ չի կարող կազմել: Հետևաբար խնդիրը պետք է դրվեր այլ կերպ, այն է՝ անցնել արևմտահայ ուսուցչի համալսարանական պատրաստության: Սա նշանակում է, որ մեզ մոտ ուսանելու հնարավորություն պիտի ստեղծվի սփյուռքահայ ուսանողների համար, որոնք, ստանալով մասնագիտական կրթություն, ժամանակ առ ժամանակ ընդամենը կլուծեն վերապատրաստման խնդիր: Հասկանալի է, որ այս ծրագիրը կարող է գործել նաև հայաստանցի ուսանողների համար:

Համալսարանը նախարարության հետ համատեղ ծրագրեր է կազմում ամառային դպրոց ունենալու համար, որտեղ Սփյուռքին առնչվող տարաբնույթ բաժինների հետ միասին՝ երիտառաջնորդներ, երիտասարդ լրագրողներ, արվեստագետներ, սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստություն, մենք կունենանք նաև հայոց լեզվի ուսուցիչների համար հատուկ դասընթացներ:

Առկա են հետևյալ դժվարությունները.

1. Հայաստանում բավարար չափով չեն ճանաչում հայկական սփյուռքը: Պատճառները բազմաթիվ են ու տարաբնույթ: Մեզանում դա սկսվում է հանրակրթական դպրոցից: Դպրոցներում հայկական սփյուռքի վերաբերյալ տեղեկատվություն բավարար չափով չի տրվում: Արդեն ասվեց, որ դպրոցական ծրագիրը նախատեսում է ընդհանուր ծանոթություն արևմտահայերենին: 10-րդ դասարանի դասագրքում առանձին բաժնով ներկայացված է համապատասխան նյութ՝ մոտ 6 դասի սահմաններում: Հայոց պատմության վերջին դասագրքերում համապատասխան բաժնով ներկայացված է նաև հայկական սփյուռքը: Սակայն մեր ունեցած տեղեկություններով, որոնք կարծես թե հավաստի են, գործող դասագրքում տեղ գտած նույնիսկ այդչափ ծանոթությունը արևմտահայերենին գրեթե չի մատուցվում աշակերտներին: Աշակերտների մեծ մասը, առանձին ուսուցիչներ անզամ տեղյակ չեն, որ կա ծրագրով արձանագրված այդպիսի պահանջ: Դրա պատճառը ոչ միայն մեզանում դպրոցական կրթության, մեղմ ասած, անմխիթար վիճակն է, այլև հայոց լեզվի ուսուցիչների մի մասի անտեղյակությունը արևմտահայերենին, արևմտահայերենի ուսուցման հետ կապված մի շարք դժվարություններ և այլն: Սփյուռքագիտության ամբիոնը այս գործը կազմակերպելու խնդիր ունի:

2. Մեզ չի գոհացնում սփյուռքահայ գործընկերների հետ մեր համագործակցության չափը: Առայժմ չի ստացվում գործուն կապ հաստատել հայկական սփյուռքի գիտակրթական կառույցների հետ: Արևմտահայերենին նվիրված վերջին գիտաժողովներից մեկում, անկեղծ ասած, զարմանքով նկատեցի, որ բացարձակ անտեղյակություն (չասեմ՝ անհմացություն) կա Հայաստանում ստեղծվածի նկատմամբ: Մյուս կողմից էլ, հայաստանցիներս քիչ ենք ծանոթ Սփյուռքում հայերենի և հայոց պատմության մասին վերջին շրջանում ստեղծված գրականությանը, մանավանդ օտարալեզու աշխատանքներին: Կարծում ենք՝ իրավիճակը մեծ չափով կարող է փոխել Երևանի պետիանալսարանում Վիրտուալ հայագիտության նորաստեղծ կենտրոնը: Անպայման պիտի համագործակցենք, հակառակ դեպքում մեր գործը դատապարտված է: Լուրջ վնաս կարող է հասցվել նաև Սփյուռքում կրթական գործին:

3. Ունենք սփյուռքագետ մասնագետների պակաս. երբեմն չենք հաջողում համապատասխան մասնագետ գտնել այս կամ այն դասընթացը վարելու համար: Որքան էլ զարմանալի է, հայ գաղթօջախների և սփյուռքի պատմությամբ զբաղվողները մեզանում շատ չեն, քիչ են նաև արևմտահայերենի մասնագետները: Հույս ունենք, որ մի քանի տարում կունենանք արդյունքներ: Այս ոլորտում ակնկալում ենք Սփյուռքի մեր գործընկերների աջակցությունը: 2010-2011 ուսումնական տարում մեզ մոտ՝ մագիստրատուրայում, դասախոսություններ են կարդացել Սիացյալ Նահանգներից Ամերիկյան համալսարանի աշխատակից Հայկ Մսրյանը, Բեյրութից Կարո Առաքելյանը, Անդրանիկ Տազեայանը, Տիգրան Ճինբաշյանը, Պոլսից «Ժամանակ» պարբերաթերթի խմբագիր Արա Գոչունյանը, Ֆրանսիայից Դնի Դոնիկյանը, Շվեդիայից Արամայիս Միրզախանյանը, Չեխիայից Հակոբ Ասատրյանը: Բայց այս հանդիպումները տեղի են ունենում դեպքից դեպք՝ հիմնականում Սփյուռքի մեր գործընկերների՝ հայրենիք այցելելու առիթներով: Չունենք կանոնավոր գործող համակարգ: Պատճառները նախ և առաջ նյութական են:

4. Չունենք ուսանողների գործուղումներ: Անհնար է Սփյուռքը հեռվից ճանաչել և ուսումնասիրել: Պրակտիկայի յուրօրինակ ձև

է, իհարկէ, մեր ուսանողների մասնակցությունը ամառային «Արի տուն» ծրագրին: Սակայն մեր գործը շատ կհաջողէր Սփյուռքի հայաշատ համայնքների գործուղումներ ունենալու պարագային:

Այսպիսով, ԵՊՀ սփյուռքագիտության ամբիոնը, ապահովելով կրթության շարունակականություն բակալավրատից մագիստրատուրա և ասպիրանտուրա, ինչպես նաև ուսուցիչների ամենամյա վերապատրաստություն, մեր մտածմամբ պիտի դառնա Սփյուռքին առնչվող կրթական գործի համակարգող կենտրոն: Գիտական ներուժի առկայության դեպքում հետագայում ԵՊՀ հայագիտության ինստիտուտի շրջանակներում այն կարող է դառնալ նաև Սփյուռքի գիտական ուսումնասիրության հայաստանյան կենտրոններից մեկը: Մեր ձգտումները միգրացե փոքր-ինչ հավակնոտ են, սակայն մենք տոգորված ենք լավատեսությամբ և կարծում ենք՝ հեռանկարում պայմաններ կունենանք մեր ծրագիրը իրականացնելու համար:

Yuri Avetisyan –*Armenia-based Scientific and educational institutions related to the Armenian Diaspora*–

The report presents a summary of the scientific and educational structures related to the Armenian Diaspora in the Republic of Armenia. Such structures, which were more or less effective, were established in Soviet Armenia starting from the 1960s. In this context, the author considers the first one-and-a-half decade of independence as relatively effective. He singles out certain innovative and significant developments, like the inclusion of Western Armenian language courses in the curricula of general education schools and several universities; the establishment of the Department for Armenian Communities and Diaspora History at the RA National Academy of Sciences; the organization of teacher training courses for Diaspora Armenian teachers, etc. The author notes that the picture changed considerably after the establishment of the Ministry of Diaspora in 2008. It led to the establishment of different scientific and educational structures within several institutes of the National Academy of Sciences and different educational institutions, including the founding of the Department of Diaspora Studies at Yerevan State University. Established three years ago, the Department carries out scientific and educational activities and has a Master's degree program. It is expected that with the growth in the number of researchers, in the future the Department may become one of the pan-

Armenian centers for scientific research on the Diaspora within the framework of the Institute of Armenian Studies at Yerevan State University.

Юрий Аветисян – *Научно-образовательные структуры занимающиеся вопросами армянской диаспоры в Армении* – В отчете кратко представлены научно-образовательные структуры, существующие в Армении и занимающиеся вопросами армянской диаспоры. В Советской Армении такие структуры, проводящие более или менее эффективную деятельность, начали создаваться начиная с 1960-х годов. Первые 15 лет после провозглашения независимости оказались в этом смысле относительно результативными; в ряде общеобразовательных школ и ВУЗах начали проводиться учебные курсы по западноармянскому языку, в Национальной Академии РА был создан отдел истории диаспоры и армянских общин, стали организовываться курсы по переподготовке учителей-представителей диаспоры и т.д. Картина значительно изменилась с 2008 года, который ознаменовался созданием Министерства по вопросам диаспоры. Далее были созданы различные научно-образовательные структуры в институтах Национальной Академии и в ряде образовательных учреждений. Одним из таких структур явилась кафедра по изучению истории армянской диаспоры, созданный в пределах Ереванского Госуниверситета. Кафедра существует с 2008. Здесь проводится научно-образовательная деятельность, действует магистратура. При наличии достаточного научного потенциала в будущем в рамках института армяноведения, данная структура претендует стать одним из общеармянских научно-исследовательских центров по вопросам диаспоры.

ԵՂՈՒՐԴ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐՐՈՐԴ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՓՅՈՒՌՔԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՓՈԽՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ¹

1988-1991 թթ. հանրահավաքների կարևոր կարգախոսներից էին Հայաստանի և Սփյուռքի միջև սերտ ու բազմապիսի հարաբերություններ հաստատելու անհրաժեշտությունը, միացյալ ուժերով համազգային նպատակների հետապնդումը: Հրաժեշտ տալով պատմության խորհրդային շրջանին և նպատակադրվելով հետագա զարգացման ընթացքում հետևելու Արևմուտքի երկրների օրինակին՝ Հայաստանի ժողովուրդը ակնկալում էր սփյուռքահայության օժանդակությունը: Նման՝ մեծ մասամբ հուզական և չափազանցված սպասումները և հույսերը բխում էին ոչ իրատեսական պատկերացումներից, որոնց համաձայն, օրինակ, որևէ տարբերություն չէր դրվում հայաստանաբնակ հայի և, ասենք, երրորդ սերնդի ամերիկահայի կամ ֆրանսահայի միջև, և կամ՝ սփյուռքահայերը իրենց ֆինանսատնտեսական ողջ ներուժը անմիջապես պետք է ծառայեցնեին Հայաստանին և այլն: Կարևորն այն է, որ հանրահավաքները տեղի էին ունենում մի ժամանակաընթացքում, երբ երկրի խորհրդային իշխանությունները կաթվածահար էին, և երբ վաղվա իշխանությունները նույն այդ հանրահավաքների գլխավոր բանախոսներն էին: Այլ կերպ ասած՝ նոր առաջնորդները ժողովրդի իսկական զավակներն էին այնքանով, որքանով ունեին նույն թերի պատկերացումները Սփյուռքի մասին: Նրանց թվում էր, որ խորհրդային իշխանության վերաց-

¹ Իմ նախորդ հրապարակումներից մեկը նվիրված էր Հայաստանի և Սփյուռքի քաղաքական փոխհարաբերություններին XX դարում, որում քննարկվել էր նաև դրանց ընթացքը Լ. Տեր-Պետրոսյանի նախագահության շրջանում (Էդ. Մելքոնյան, Հայաստան-Սփյուռք հարաբերությունների փոխակերպումները XX դարում. քաղաքական իշխանության խնդիրը // Սփյուռքի հեռանկարները գլոբալացվող աշխարհում: Միջազգայն գիտաժողով, զեկուցումների ժողովածու: ՀՀ Սփյուռքի նախարարություն, Երևան, 2012, էջ 101-122): Այս հոդվածի շարադրանքի տրամաբանությունը պահանջում է, սակայն, վերստին անդրադառնալ այդ շրջանին:

մանը ինքնին կհետևի Հայաստանի և Սփյուռքի լայնածավալ համագործակցությունը ամենատարբեր ոլորտներում:

Առանձնահատուկ սպասումներ ունեին Սփյուռքում գործող Հայ հեղափոխական դաշնակցություն (ՀՅԴ), Ռամկավար ազատական (ՌԱ) և Սոցիալ-դեմոկրատ հնչակյան (ՍԴՀ) կուսակցություններից: Հայաստանի ժողովրդի գիտակցության մեջ հենց նրանք էին ազգային-քաղաքական իդեալների կրողներն ու պահպանողները, ուստի և նրանց վերադարձը դիտվում էր որպես պատմական արդարության հաղթանակ: Բացի այդ՝ թվում էր, թե Արևմուտքի երկրներում իրենց գոյության ընթացքում այդ կազմակերպությունները, դառնալով քաղաքական որոշակի արժեքների և ավանդույթների՝ քաղաքական մշակույթի կրողներ, դրանք կներմուծեն Հայաստան: Իր այդ սպասումներում Հայաստանի ժողովուրդը, կամա թե ակամա, նրանց վրա էր տարածում իր պատկերացումները Արևմուտքի դասական քաղաքական կուսակցությունների մասին՝ գիտակցելով հանդերձ, որ հայկական կուսակցությունները որևէ դեր չեն խաղում այս կամ այն երկրի քաղաքական կյանքում:

Նման սպասումները ունեին ևս մեկ բացատրություն: Թեև Հայոց համազգային շարժումը (ՀՀՇ), որը գլխավորել էր ժողովրդական շարժումը հանուն Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման, ապա նաև Հայաստանի անկախացման, այդ օրերին վայելում էր մեծ ժողովրդականություն, այնուամենայնիվ երկրի բնակչության մի մասը գաղափարական կամ անձնական պատճառներով նշված կուսակցությունների վերադարձի հետ էր կապում քաղաքական այլընտրանքային գործունեության հնարավորությունը: Նման տրամադրությունները հայտնի էին Սփյուռքի կուսակցություններին և լիովին համապատասխանում էին Հայաստանում ինքնահաստատվելու նրանց ձգտումներին: Ուշագրավ է, սակայն, որ Խորհրդային Միությունում տեղի ունեցող արմատական փոփոխությունների սրընթաց զարգացումը հանկարծակիի բերեց նրանց:

Դեռևս 1988 թ., երբ երկրի կենտրոնական իշխանությունները հակազդեցին Ղարաբաղյան շարժմանը, ՀՀՇ և այլ ընդդիմադիր ուժերը ակնկալում էին Սփյուռքի աջակցությունը: Սակայն վերջինի արծազանքը եղավ անսպասելի: 1988 թ. նոյեմբերին ՀՀԴ, ՌԱ և

ՍԴՅ կուսակցությունները հանդես եկան իրենց համար հազվադեպ համատեղ հայտարարությամբ, որում, իրենց աջակցությունը հայտնելով Լեռնային Ղարաբաղի միացմանը Խորհրդային Հայաստանին, միաժամանակ կոչ էին անում Հայաստանի ժողովրդին ցուցաբերել զսպվածություն, հրաժարվել այնպիսի գործողություններից, որոնք կարող են խարխուլել Խորհրդային Միության ղեկավարության վստահությունը: Նման դիրքորոշումը, որն այդ օրերի հայ իրականության չինացության հետևանք էր, Ղարաբաղյան շարժման մասնակիցների մոտ առաջացրեց ոչ միայն հիասթափություն, այլև անվստահություն Սփյուռքի կուսակցությունների հանդեպ:

Նման տրամադրությունները էլ ավելի ուժեղացան նշված կուսակցությունների՝ Հայաստան վերադառնալուց հետո: Ձգտելով հնարավորինս արագ ինքնահաստատվել քաղաքական դաշտում՝ նրանք ծավալեցին տենդագին գործունեություն՝ իրենց շարքերը նոր անդամներով համալրելու նպատակով: Եվ քանի որ սկզբնական շրջանում նրանք դեռ չունեին ո՛չ սեփական կառույցներ, ո՛չ էլ գործիչներ, նշված գործունեությունը հիմնականում ղեկավարում էին Սփյուռքից գործուղված կուսակցական գործիչները: Որքան Հայաստանի ժողովուրդը անտեղյակ էր Սփյուռքի իրականությանը, այդչափ էլ մակերեսային էին ժամանած «ենիսարների» պատկերացումները Հայաստանի մասին: Ուշագրավ է, որ անկախ քաղաքացիությունից, նրանք ծնունդով հիմնականում Արևելքի երկրներից էին՝ Սփյուռքի ազգային գործիչների այդ յուրատեսակ դարբնոցից՝ իրենց ներհատուկ արմատականության և իրականության պարզունակ ընկալման զուգակցությամբ: Նպատակադրվելով ամեն գնով ստվարացնել իրենց կուսակցությունների շարքերը՝ նրանք չհասկացան, հաճախ չէին էլ կարող հասկանալ «նորահավատների» իրական շարժառիթները: Ամեն դեպքում, նշված և այլ հանգամանքների բերումով ԳՅԴ-ն և ՌԱԿ-ը (ՍԴՀԿ-ն սկզբից ևեթ հանդես եկավ որպես ԶԶԾ-ի հավատարիմ կողմնակից) շատ շուտով հայտնվեցին առաջատար՝ ԶԶԾ-ից հետո կուսակցությունների շարքում:

Ավելին, մոլորության մեջ ընկնելով նման՝ իրենց իսկ համար անպասելի հաջողությունից՝ կուսակցությունների, նախ և առաջ

ՀՅԴ-ի առաջնորդները դրսևորեցին մեծ հավակնություններ և դիմեցին գործողությունների, որոնք կարևոր հետևանքներ ունեցան ինչպես երկրի ներքաղաքական զարգացման, այնպես էլ Հայաստան-Սփյուռք հարաբերությունների համար:

Խոսքը 1991 թ. վերջին Հայաստանում կայացած նախագահական առաջին ընտրությունների մասին է: Թեև ՀՀԸ-ի առաջնորդներից մեկի՝ Լ. Տեր-Պետրոսյանի հաղթանակը սպասելի էր և ակնհայտ բոլորի համար, ՀՅԴ առաջադրեց սեփական թեկնածուին՝ թատրոնի և կինոյի ճանաչված դերասան, մեծ ժողովրդականություն վայելող Սոս Սարգսյանին: Այդ փաստը ինքնին վկայում էր, որ ՀՅԴ այն ժամանակ Հայաստանում իր շարքերում չունեին այնպիսի մի կուսակցական գործիչ, որը կարող կլիներ մրցելու ՀՀԸ-ի թեկնածուի հետ:

ՀՅԴ-ի այս քայլը ՀՀԸ-ն գնահատեց որպես մարտահրավեր, այն էլ մի կուսակցության կողմից, որը նոր-նոր էր հաստատվել Հայաստանում, որը անմասնակից էր անկախության համար վարած պայքարին, և որը ղեկավարվում ու ֆինանսավորվում էր արտասահմանից: ՀՀԸ-ն, որի ժողովրդականությունը այդ օրերին հասել էր իր գագաթնակետին (ընտրություններում Լ. Տեր-Պետրոսյանի օգտին քվեարկեց ընտրողների 83%), ընդունեց մարտահրավերը և դիմեց կոշտ գործողությունների բոլոր ընդդիմադիր ուժերի դեմ: 1992 թ. կառավարության քաղաքականության դեմ քայքայիչ գործունեություն վարելու համար երկրից արտաքսվեց ՀՅԴ-ի ղեկավարներից մեկը՝ Հունաստանի քաղաքացի Հ. Սարուխյանը: Դա լուրջ ազդանշան էր թե՛ ՀՅԴ-ին և թե՛ ողջ Սփյուռքին առ այն, որ Հայաստանի իշխանությունների համար անընդունելի է որևէ միջամտություն երկրի ղեկավարման գործում: Երկրի նախագահն այդ առիթով հատուկ նշում էր, որ փոխադարձ անհասկացողությունն ու անվստահությունը կպահպանվեն այնքան ժամանակ, քանի դեռ Սփյուռքի առաջնորդները չեն հաշտվի այն մտքի հետ, որ քաղաքականությունը արվում է Հայաստանում²: Սակայն ՀՅԴ շարունակեց իր աշխույժ ընդդիմադիր գործունեությունը, և իշխանությունները դիմեցին ավելի վճռական քայլերի: 1994 թ. ղեկտեմբերին երկրի նախագահը կասեցրեց ՀՅԴ-ի գործունեությունը Հայաստանում, քանի որ,

² Armenian International Magazin. Los Angeles, March 1994, p. 32.

հակառակ գործող օրենքի, նրա ղեկավար կազմում ընդգրկված էին այլ երկրների քաղաքացիներ: Բացի այդ, որոշ ժամանակ անց տարբեր մեղադրանքներով («Դրոյի գործը», «Երեսունմեկի գործը») դատապարտվեցին կուսակցության որոշ գործիչներ: Այլ կերպ ընթացան հարաբերությունները ՌԱԿ-ի հետ: Նոր վարչակարգի համար նա ի սկզբանե վարկաբեկված էր խորհրդային իշխանությունների հանդեպ իր «մեղմ» ընդդիմադիր կեցվածքի պատճառով: Հաստատվելով Հայաստանում՝ ՌԱԿ-ը, ի տարբերություն ՀՅԴ-ի, իրատեսորեն գնահատեց սեփական կարողությունները, չդրսևորեց իշխանական հավակնություններ և ընդհանուր առմամբ խնդիրներ չուներ իշխանությունների հետ: Սակայն նույնիսկ նա, չնայած ՀՅԴ-ի հետ իր բարդ հարաբերություններին, անհրաժեշտ համարեց դեմ արտահայտվել վերջինի հանդեպ կիրառած պատժամիջոցներին՝ դիտելով դրանք վտանգավոր նոր-նոր ձևավորվող ժողովրդավարական հասարակության համար:

Այս դեպքում, օգտվելով կուսակցության շարքերը համալրելու ընթացքում ցուցաբերած անսկզբունքայնությունից, իշխանությունները գործեցին այլ կերպ: Նրանց հնուտ գործողությունները պսակվեցին հաջողությամբ. ՌԱԿ-ը պառակտվեց (այն էլ մի քանի անգամ) և հայտնվեց խոր ճգնաժամի մեջ: Մինչդեռ սպասելի էր, որ ռամկավար-ազատական կամ լիբերալ-դեմոկրատական արժեքներով առաջնորդվող կուսակցությունը իր պատվավոր տեղը կունենար Հայաստանի քաղաքական դաշտում: Սակայն, զուրկ լինելով գաղափարաբանական, քաղաքական և կազմակերպական հստակ դիրքորոշումից և տոկունությունից, նա հայտնվեց երրորդական կազմակերպությունների շարքում:

Այս ամենի նկատմամբ Սփյուռքի արձագանքը հասկանալու համար անհրաժեշտ է նշել մի կարևոր հանգամանք: Ազգային այս երեք կուսակցությունները, վերսկսելով գործունեությունը Հայաստանում, միևնույն ժամանակ պահպանեցին իրենց բոլոր կառույցները Սփյուռքում, որոնք էլ, փաստորեն, այդ տարիներին ղեկավարում էին կուսակցությունների գործունեությունը Հայաստանում: Ուստի բնական է, որ ՀՅԴ-ի տարբեր կարգի գործիչները իրենց բազմաթիվ ելույթներում ու կուսակցական մամուլում հրապարակած հողվածներում շուրջ երեք տարի անընդմեջ խստորեն

դատապարտեցին Հայաստանի իշխանությունների, ըստ իրենց, «հանցավոր քաղաքականությունը», «բռնաճնշումները» ԶՅԴ-ի հանդեպ: Ավելին, ի պատասխան՝ նրանք դիմեցին ծայրահեղ քայլի. դադարեցրին կամ ընդհանրապես չեղյալ հայտարարեցին Հայաստանի հետ իրենց համագործակցության գրեթե բոլոր ծրագրերը, ինչը բացասաբար գնահատվեց Սփյուռքի տարբեր շրջանակների կողմից:

Այլ էր ՌԱԿ-ի արձագանքը: Նրա սփյուռքյան հատվածը գիտակցում էր, որ կուսակցության անհաջողությունների պատճառները Հայաստանում ներքին բնույթի էին և մի հայտնի չափով էլ պայմանավորված էին կուսակցության անմխիթար վիճակով հենց Սփյուռքում՝ պառակտում, փոխադարձ հրապարակային մեղադրանքներ, իսկ արդյունքում՝ հեղինակության ակնհայտ և անդառնալի նվազում:

Ստեղծված իրավիճակում Հայաստանի իշխանությունները, ի դեմս ԶՀԾ-ի, որոշեցին հակամարտությունը տեղափոխել նաև Սփյուռք՝ ազգային կուսակցությունները լրիվ չեզոքացնելու նպատակով: Հայեցակարգային առումով խնդիր դրվեց հիմնավորել, որ կուսակցությունների՝ որպես քաղաքական կազմակերպությունների գոյությունը Սփյուռքում ընդհանրապես անիմաստ է ու ավելորդ: 1994 թ. Նյու Յորքում Ամերիկայի հայկական համագումարի պատվին կազմակերպած ընդունելության ժամանակ հնչեց Լ. Տեր-Պետրոսյանի ձայնագրված ելույթը: Բարձր գնահատելով այդ կազմակերպության օժանդակությունը Հայաստանին՝ նա հակադրեց այն Սփյուռքի մի շարք կազմակերպությունների՝ հատկապես նկատի ունենալով քաղաքական կուսակցությունները, որոնց գոյությունն իսկ, ըստ նրա, արդեն ժամանակավրեպ էր: Նա հատուկ նշեց նաև, որ կուսակցությունները պետք է ծնվեն, գործեն և դադարեն գործել Հայաստանում³:

Կարելի է, իհարկե, համաձայնվել այս թեզի հետ, եթե խոսքը կուսակցությունների դասական սահմանման մասին լիներ. այսինքն՝ քաղաքական կազմակերպություններ, որոնք ձգտում են իշխանության՝ երկրի զարգացման վերաբերյալ սեփական ծրագիրը իրագործելու նպատակով: Ակնհայտ է, որ Սփյուռքի կուսակցու-

³ «Ազգ», 9 հուլիսի, 1994:

թյունները չեն համապատասխանում այս սահմանմանը: Այս կարգի կազմակերպությունները (անկախ նրանից՝ կոչվո՞ւմ են նրանք «կուսակցություն», թե՞ ոչ) հատուկ են հատկապես ազգային այն փոքրամասնություններին, որոնք առաջացել են քաղաքական արտագաղթի հետևանքով (օրինակ՝ 1917 թ. բոլշևիկյան հեղափոխությունից հետո քաղաքական կուսակցությունները ռուսական գաղթաշխարհում): Այս երևույթի հայկական տարբերակի յուրահատկությունը այն է, որ վերոնշյալ կուսակցությունները գործում էին հայ գաղութներում մինչև բուն Սփյուռքի ձևավորումը: Բոլոր հիմքերը կան ենթադրելու, որ նրանք չէին գոյատևի մինչև մեր օրերը, եթե Առաջին հանրապետությունը չփոխարինվեր Երկրորդ (Խորհրդային) հանրապետությամբ:

Այսօր նման քաղաքական կազմակերպությունները (նրանք մեծ թիվ են կազմում հատկապես Արևմուտքում՝ քաղաքական փախստականների այդ յուրահատեսակ ապաստարանում) ընդունված է անվանել էթնոքաղաքական: Էթնոքաղաքական էր և է նաև կուսակցությունների գործունեությունը Սփյուռքում՝ նրանց դիրքորոշումները Հայաստանի հանդեպ՝ իրենց տարատեսակ դրսևորումներով, նրանց բազմապիսի աշխատանքը՝ միջազգային հանրության կողմից Օսմանյան կայսրությունում հայերի ցեղասպանությունը ճանաչելու և դատապարտելու նպատակով: Անտեսելով դա՝ այն օրերի արտաքին գործերի նախարար Վ. Փափազյանը, զարգացնելով երկրի նախագահի գաղափարները, պնդում էր, որ Սփյուռքում քաղաքական կյանք ընդհանրապես չի կարող լինել, որ այն կարող է գոյություն ունենալ միայն Հայաստանի Հանրապետությունում⁴: Ուշագրավն այն է, որ այս ամենի հետ մեկտեղ ՀՀԸ-ն, կարծես հետևելով Խորհրդային Հայաստանի 1920-1930-ական թթ. իշխանությունների օրինակին (նկատի ունեն ՀՅԿ-ը), փորձեց (առանց քիչ թե շատ շոշափելի արդյունքների) Սփյուռքում, մասնավորապես ԱՄՆ-ում ստեղծել սեփական կառույցներ՝ որպես այլընտրանք գործող կուսակցությունների⁵:

Այսպիսով, Երրորդ հանրապետության առաջին իսկ օրերից իշխանության հարցը, ինչպես և Առաջին հանրապետության ժամա-

⁴ «Հայք», 2 դեկտեմբերի, 1994:

⁵ «Հայաստանի Հանրապետություն», 11 օգոստոսի, 1994:

նակ, դարձավ մի կողմից՝ երկրի ղեկավարության և մյուս կողմից՝ Սփյուռքի որոշ շրջանակների բացահայտ առճակատման պատճառ: Նման պայմաններում տրամաբանական է, որ Հայաստանի իշխանությունների հիմնական գործընկերները դարձան ոչ կուսակցական կազմակերպությունները՝ Հայկական բարեգործական ընդհանուր միությունը և Ամերիկայի հայկական համագումարը:

Նույն 1990-ականների կեսերին Հայաստանի ղեկավարության ուշադրության կենտրոնում հայտնվեց Հայ առաքելական եկեղեցու միասնության վերականգնման հարցը: Նկատի առնելով եկեղեցու բաժանման պատճառները, թվում էր, թե Խորհրդային Միության փլուզումը, սառը պատերազմի ավարտը, Հայաստանի անկախացումը պետք է վերացնեին բոլոր խոչընդոտները եկեղեցու միավորման ճանապարհին:

Անկախության առաջին տարիներին եկեղեցու հետ առնչվող հարցերը այնքան էլ հրատապ չէին, անհամեմատ ավելի կարևոր էին իրադրությունը Լեռնային Ղարաբաղում, փախստականների հոսքը Ադրբեյջանից, երկրի շրջափակումը և այլ խնդիրներ: Եկեղեցու հանդեպ հետաքրքրությունը ակնհայտորեն աճեց Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինի մահից հետո՝ 1994 թ., երբ առաջ եկավ նրան փոխարինողի հարցը: Կայացման դժվարին փուլում գտնվող պետությունը արդարացիորեն ակնկալում էր եկեղեցու օժանդակությունը, ուստի և չէր կարող անտարբեր լինել այդ հարցում, առավել ևս՝ որ դարեր անց առաջին անգամ կաթողիկոսը ընտրվելու էր ինքնիշխան Հայաստանում:

Ընտրություններից մոտ մեկ ամիս առաջ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը այդ հարցին նվիրված հարցազրույցում ասաց. «...իր աստվածաբանական պատրաստությամբ, հայագիտական հմտությամբ և վարչական կարողություններով այսօր Ամենայն Հայոց կաթողիկոսի ամենաարժանի թեկնածուն, իմ կարծիքով, Կիլիկիո աթոռի հայրապետ Գարեգին Բ վեհափառն է»: Եվ հետո՝ «Այս ընտրությունը, վստահ եմ, կարող է շրջադարձային դեր խաղալ Հայ առաքելական եկեղեցու նվիրապետական միասնության վերականգնման, ինչպես նաև ավելի լայն առումով՝ Հայաստան-Սփյուռք հարաբերությունների կարգավորման հիրավի համագ-

գային գործուն»⁶: Հայաստանում և Սփյուռքում տարբեր կերպ արձագանքեցին դրան: Հայաստանի ժողովրդի բացարձակ մեծամասնությունը, 70 տարի շարունակ օտարված լինելով Սփյուռքից, պատկերացում չունեին ո՛չ Կիլիկիո կաթողիկոսության, ո՛չ Հայ եկեղեցու բաժանման, ո՛չ էլ Սփյուռքում գոյություն ունեցող երկու հակադիր եկեղեցական-կուսակցական խմբավորումների մասին: Նրանք իրապես ողբում էին սիրված կաթողիկոսի մահը և, կլանված լինելով քիչ թե շատ արժանավայել գոյության համար ամենօրյա պայքարով, անուշադրության մատնեցին նախագահի կարծիքը:

Լրիվ այլ էր Սփյուռքի արձագանքը: Հատկապես ՌԱԿ-ի և ՍԳՀԿ-ի անդամները և համակիրները, որոնք տասնամյակներ շարունակ հավատարիմ էին մնացել Սբ. Էջմիածնին, մեծ ջանքերի և զոհողությունների գնով հակազդել էին Կիլիկիո կաթողիկոսության՝ Սփյուռքում գործող թեմերն իրեն ենթարկելու փորձերին: Նրանց համար անհասկանալի էր Հայաստանի ղեկավարության դիրքորոշումը հօգուտ Գարեգին Բ-ի՝ եկեղեցու բաժանման կամ պառակտման հիմնական գաղափարախոսներից մեկի: Ավելին՝ նրանք դիտեցին դա որպես քամահրական վերաբերմունք Սփյուռքի այն հատվածի հանդեպ, որը նույնիսկ սառը պատերազմի տարիներին հայրենիքի՝ Խորհրդային Հայաստանի կողքին էր, իսկ այժմ ամեն կերպ օժանդակում էր նորանկախ Հայաստանի կայացմանը: Նախագահի նախընտրությունը բացասաբար ընդունվեց հայ հոգևորականների կողմից նաև Հայաստանում, սակայն նրանց տեսակետը գրեթե չհնչեցվեց՝ իշխանությունների հետ անցանկալի դիմակայությունից խուսափելու համար:

Իշխանությունների, անձամբ Լ. Տեր-Պետրոսյանի համար նման արձագանքները սպասելի էին, և ուրեմն նա լուրջ հիմքեր ուներ դրանք անտեսելու: Կասկածից վեր է, որ նա, ինչպես և շատ շատերը, անկեղծորեն ցանկանում էր հայ եկեղեցին տեսնել միավորված՝ Սբ. Էջմիածնի գլխավորությամբ: Իսկ որպես երկրի նախագահ՝ նա գիտակցում էր ինչպես իր պարտականությունը, այնպես էլ հնարավորությունները այդ խնդրի դրական լուծման առումով: Դրա հետ մեկտեղ՝ նա, ի տարբերություն շատերի, տե-

⁶ «Հայք», 8 մարտի, 1995:

ոյակ էր եկեղեցու բաժանման քաղաքական պատճառներին, թե որքան մեծ է Կիլիկիո կաթողիկոսության դերը Սփյուռքում ընդհանրապես և ՀՅԴ-ի հեղինակությունն ու ազդեցությունը պահպանելու համար մասնավորապես:

Նկատի առնելով իշխանությունների վերոնշյալ կոշտ դիմակայությունը վերադարձած կուսակցությունների հետ՝ եկեղեցու վերամիավորումը Սբ. Էջմիածնի գլխավորությամբ ստանում էր նոր՝ արդեն քաղաքական նշանակություն: Մի կողմից դա զգալի կթուլացներ ՀՅԴ-ի դիրքերը նախ Սփյուռքում, բայց նաև Հայաստանում, իսկ մյուս կողմից՝ կթուլացներ ՌԱԿ-ի ազդեցությունը Սբ. Էջմիածնի սփյուռքյան թեմերի վրա: Այսպիսով, հայ եկեղեցու վերամիավորումը երկրի նախագահի համար դառնում էր գերխնդիր:

Կարելի է ենթադրել, որ այդ գերխնդրի ի հայտ գալը մեծապես պայմանավորված էր 1988 թ. երկրաշարժից հետո Գարեգին Բ-ի՝ Հայաստան կատարած այցելություններով, երկրի նախագահի և հատկապես Կաթողիկոս Վազգեն Ա-ի հետ նրա հանդիպումներով: Եկեղեցու վերամիավորման անհրաժեշտության մասին երկու կաթողիկոսների հայտարարություններից հետո երկրի նախագահը 1993 թ. ՀՀԾ-ի համագումարում մեղադրեց Սփյուռքի քաղաքական կուսակցություններին, թե եկեղեցու պառակտման մեջ և թե այն բանում, որ «...նրանց ջանքերով այսօր էլ վիժեցվում է եկեղեցու վերամիավորման հրամայականը, չնայած զույգ վեհափառների մերժեցման ամենալուրջ միտումներին»⁷: Եվ երբ մեկ տարի անց՝ 1994-ին՝ Վազգեն Ա-ի մահից հետո, ծագեց նրա փոխարինողի հարցը, Գարեգին Բ դիտվեց որպես ամենահարմար թեկնածուն: Նա, որ ժամանակին եկեղեցու վերամիավորման հակառակորդներից էր, այժմ, նախագահի կարծիքով, ոչ միայն ձգտում էր դրան, այլև ի զորու կլիներ արդեն որպես Ամենայն հայոց կաթողիկոս իրականացնելու միավորումը:

Եկեղեցու շուրջ ծավալվող այս պատմության մեջ կա շատ կարևոր մի հանգամանք, որը, գիտակցաբար թե ոչ, անտեսվեց նախագահի ընդդիմախոսների կողմից: Իր վերոհիշյալ հարցազրույցում խոսելով եկեղեցու վերամիավորման մասին՝ նա ասել էր. «Կիլիկյան աթոռը, որպես պատմական հաստատություն, թերևս դեռ երկար

⁷ «Հայաստանի Հանրապետություն», 29 հուլիսի, 1993:

ժամանակ կպահպանի իր գոյությունը, սակայն, դրա հետ մեկտեղ, անվերապահորեն ընդունելով Էջմիածնի գերակայությունը և աստիճանաբար սահմանափակվելով իր նախկին եկեղեցական վիճակներում՝ Լիբանան, Սիրիա, Կիպրոս: Գարեգին Բ հարմարագույն անձն է՝ այս դժվարին գործընթացը սկսելու ունակ»⁸: Փաստորեն դրանք այն պայմաններն էին, համապատասխան որոնց պետք է կատարվեր միավորումը: Եթե նշված պայմանները համաձայնեցված չէին Գարեգին Բ-ի հետ (ինչը դժվար է պատկերացնել), ապա նա բավականին ժամանակ և առիթներ ուներ համապատասխան հայտարարություն անելու համար, բայց Գարեգին Բ-ն միայն համաձայնվեց առաջադրել իր թեկնածությունը և որևէ ձևով չմեկնաբանեց նախագահի խոսքերը:

Այսպիսով, տեղի էր ունենում հայ եկեղեցու արդի պատմության համար շատ կարևոր իրադարձություն: Երկրի նախագահի կողմից առաջարկած՝ հայ եկեղեցու վերամիավորման ծրագիրը և Կիլիկիո կաթողիկոսի համաձայնությունը նույն այդ ծրագրին իրական էին դարձնում արմատական փոփոխությունները հայ եկեղեցու կազմակերպական կառուցվածքում: Մասնավորապես, Կիլիկիո կաթողիկոսության նոր կարգավիճակը փոխելու էր նրա դերն ու նշանակությունը ոչ միայն հայ եկեղեցու ընդհանուր համակարգում, այլև Սփյուռքի կյանքում ընդհանրապես: Նրա իրավասության նախկին՝ մինչև 1956 թ. գոյություն ունեցող սահմանների վերականգնման հետևանքով զգալիորեն նվազելու էին նաև ԶՅԴ-ի ազդեցությունն ու հեղինակությունը սփյուռքահայ համայնքներում:

1995 թ. ապրիլին ազգային-եկեղեցական ժողովը Սբ. Գրիգոր Լուսավորչի աթոռի գահակալ ընտրեց Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Բ-ին, այդուհետ՝ Գարեգին Ա Ամենայն հայոց կաթողիկոս: Սակայն մոտ երեք տարի անց նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը ստիպված էր հայտարարել իր հրաժարականի մասին, իսկ դրանից մեկ տարի անց երկարատև հիվանդությունից հետո վախճանվեց կաթողիկոսը: Սակայն այդ կարճ ժամանակահատվածն էլ բավական եղավ, որ ի հայտ գան նրանց ծրագրի անկատարության առաջին նշանները: Ակնհայտ էր, որ նրանք գե-

⁸ «Չայք», 8 մարտի, 1995:

րագնահատել էին սեփական հնարավորությունները և թերագնահատել ՀՅԴ-ի ու Կիլիկիո կաթողիկոսության կարողությունները: Մեծի Տանն Կիլիկիո Արամ Ա նորընտիր կաթողիկոսը հետևողականորեն շարունակեց իր նախորդների քաղաքականությունը՝ մասնավորապես նոր թեմեր հիմնելով տարբեր երկրներում:

Այսպիսին էին երկու, իմ կարծիքով, առավել կարևոր իրադարձությունները Հայաստան-Սփյուռք քաղաքական հարաբերություններում երրորդ հանրապետության առաջին շրջանում: 1998-ին՝ Լ. Տեր-Պետրոսյանի հրաժարականից հետո, Հայաստանի հարաբերությունները Սփյուռքի հետ կրեցին որոշակի փոփոխություններ:

1998 թվականի փետրվարի 3-ին նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը հեռուստաէթերով հայտարարեց իր հրաժարականի մասին. «Իշխանության ձեզ հայտնի մարմինների կողմից ինձ ներկայացվել է հրաժարականի պահանջ: Նկատի ունենալով, որ ստեղծված իրավիճակում նախագահի սահմանադրական լիազորությունների կիրառումը հղի է երկրի ապակայունացման լուրջ վտանգով, ես ընդունում եմ այդ պահանջը և հայտարարում իմ հրաժարականը»: Նա չմեկնաբանեց հրաժարականի դրդապատճառները (ինչպես ինքն ասաց՝ «իրադրությունը չսրելու նպատակով»), նշեց միայն, որ իշխանության ճգնաժամում Արցախի հարցի արժարժուն ընդամենը պատրվակ էր: Սակայն շատ շատերը այլ կարծիքի էին: Դեռևս 1997 թ. սեպտեմբերին կայացած մամլո ասուլիսի ժամանակ նա հրապարակավ իր համաձայնությունը հայտնեց միջազգային միջնորդների առաջարկած Լեռնային Ղարաբաղի հարցի կարգավորման, այսպես կոչված՝ փուլային ծրագրին: Կարգավորման այդ տարբերակը, սակայն, մերժվեց հայ հասարակության կողմից ինչպես Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում, այնպես էլ Սփյուռքում: Այն մերժեց նաև երկրի ղեկավարության մի մասը, ներառյալ այնպիսի ազդեցիկ դեմքեր, ինչպիսին էին վարչապետ Ռ. Քոչարյանը, պաշտպանության նախարար Վ. Սարգսյանը, ներքին գործերի ու ազգային անվտանգության նախարար Ս. Սարգսյանը: Նրանք առաջարկում էին վերադառնալ մինչ այդ մերժված «փաթեթային» տարբերակին, համաձայն որի՝ Ադրբեջանին էին վերադարձվում հայկական զինված ուժերի հսկողության տակ գտնվող հինգ շրջանները, իսկ փոխարենը Լեռ-

նային Ղարաբաղը ստանում էր Ադրբեջանից անկախ կարգավիճակ: Ստեղծված լարված իրավիճակում նախագահի հակառակորդները կարողացան իրենց կողմը քաշել նաև նրա որոշ կողմնակիցների, վերախմբավորեցին իրենց ուժերը Ազգային ժողովում, ինչն էլ, ի վերջո, Լ. Տեր-Պետրոսյանին ստիպեց հրաժարական տալ:

Սփյուռքը ընդհանուր առմամբ դրական արձագանքեց իշխանավորությանը՝ հատկապես նկատի առնելով նոր առաջնորդների դիրքորոշումը Լեռնային Ղարաբաղի կարգավորման հարցում: Սակայն առավել ոգևորիչ էր այն ՅՅԴ-ի համար: Նախագահի հրաժարականից մի քանի օր անց վարչապետի որոշմամբ ՅՅԴ վերստին իրավունք ստացավ գործելու Հայաստանում: Ռ. Քոչարյանի նման վերաբերմունքը ՅՅԴ-ի նկատմամբ սպասելի էր ու բացատրելի: Դեռևս 1990-ական թթ. սկզբին ՅՅԴ զգալի դեր էր խաղում Լեռնային Ղարաբաղի քաղաքական կյանքում: Այն առաջինն էր, որ անհնարին համարեց սահմանազատումը Ադրբեջանից լոկ խաղաղ ճանապարհով: 1991 թ. ՅՅԴ մեծամասնություն էր Գերագույն Խորհրդում, իսկ 1992-ին աջակցեց Պաշտպանության պետական կոմիտեի ստեղծմանը, որն էլ պատերազմի ընթացքում իր ձեռքում կենտրոնացրեց Լեռնային Ղարաբաղի գործադիր, օրենսդիր և ռազմական ողջ իշխանությունը: Պաշտպանության պետական կոմիտեի նախագահն էր Ռ. Քոչարյանը, և, բնականաբար, թե՛ այդ ժամանակ և թե՛ հետագայում նա մշտապես համագործակցեց ՅՅԴ-ի հետ: Իսկ արդեն 1993 թ.՝ Փարիզ և Բրյուսել կատարած իր այցի ընթացքում, նա ոգևորիչ հանդիպումներ ունեցավ տեղի հայ համայնքների, այդ թվում նաև դաշնակցական գործիչների հետ: Այսքանից հետո զարմանալի չէ, որ, ի տարբերություն Հայաստանի կառույցների, 1994-1997 թթ. Լեռնային Ղարաբաղում ՅՅԴ-ի հանդեպ պատժամիջոցներ չկիրառվեցին:

1997-ին ՀՀ իշխանությունների նախաձեռնությամբ Ռ. Քոչարյանը (1994-ից նա արդեն Լեռնային Ղարաբաղի նախագահն էր), տեղավորվելով Երևան, ստանձնեց ՀՀ վարչապետի պաշտոնը: Կարելի է միայն ենթադրել, թե ինչ դեր էր նախատեսել Լ. Տեր-Պետրոսյանը Ռ. Քոչարյանի համար Հայաստանի քաղաքական կյանքում: Դատելով հետագա իրադարձություններից՝ մի բան հաս-

տատ է. նա թերագնահատեց Ռ. Քոչարյանի քաղաքական հավակնությունները, նրա վճռական և հետևողական գործելաճիճը՝ այդ հավակնությունները իրականացնելու համար: Ռ. Քոչարյանի՝ Հայաստանում որպես քաղաքական գործչի գործողությունները (հատկապես առաջին տարիներին) բացատրելիս հարկ է նկատի առնել հետևյալ հանգամանքը: Նա եկավ Հայաստան որպես ոչ միայն Լեռնային Ղարաբաղում և Հայաստանում, այլև նրանց սահմաններից դուրս հայտնի և հեղինակավոր գործիչ, իսկ այժմ նա պետք է ինքնահաստատվեր որպես այդպիսին արդեն Հայաստանում: Անշուշտ, երկրի ղեկավարության մեջ նա ուներ համախոհներ և կողմնակիցներ, ինչն էլ հնարավոր դարձրեց 1998 թ. իշխանափոխությունը: Բայց ոչ պակաս, եթե չասենք՝ առավել բարդ խնդիր էր ձեռք բերած իշխանության պահպանումը: Դրա համար նրան անհրաժեշտ էր ոչ միայն և ոչ այնքան առանձին անհատների, որքան որևէ կայացած քաղաքական ուժի օժանդակությունը: Այդ պահին որպես այդպիսին առավել «հարմարը» Հանրապետական կուսակցությունն էր, որը, սակայն, գլխավորում էր երկրում ամենաազդեցիկ Վազգեն Սարգսյանը:

Ստեղծված իրադրությունը բնավ էլ անսպասելի չէր Ռ. Քոչարյանի համար. լավ շախմատիստի նման նա հաշվարկել էր այն և արագ կատարեց իր հերթական քայլերը: Նախ, ինչպես նշվեց, թույլատրվեց ՀՀԴ-ի գործունեությունը: Ապա բանտից ազատ արձակվեցին «Դրոյի» և «Յ1-ի» գործերով դատապարտված ՀՀԴ-ի առաջնորդներ Վ. Հովհաննիսյանը և Հ. Սարգսյանը (վերջինս, ի դեպ, ներգաղթել էր Հայաստան Իրանից 1990 թ.): Նույն 1998-ի ապրիլին՝ ՀՀ նախագահ ընտրվելուց հետո, Ռ. Քոչարյանը չեղյալ հայտարարեց Լ. Տեր-Պետրոսյանի՝ 1994 թ. դեկտեմբերի 28-ի հրամանագիրը՝ ՀՀԴ-ի գործունեությունը ժամանակավորապես կասեցնելու մասին: Ավելին՝ նույն կուսակցության երկու անդամներ նոր կառավարությունում զբաղեցրին նախարարական պաշտոններ, ևս մեկը նշանակվեց մարզպետ, իսկ Վ. Հովհաննիսյանը ստանձնեց նախագահի խորհրդականի պաշտոնը: Իր հերթին՝ ՀՀԴ դարձավ նախագահի հավատարիմ դաշնակիցը և պաշտպանեց նրա թեկնածությունը հաջորդ՝ 2002 թ. նախագահական ընտրություններում: Նման՝ փոխադարձ հավատարմության տրամաբանական արդյունքը եղավ

այն, որ 2003 թ. Խորհրդարանական ընտրություններից հետո ՅՅԴ դարձավ ՅՅ նախագահ Ռ. Քոչարյանի «աջակցությամբ» ստեղծված իշխող քաղաքական կոալիցիայի երեք անդամներից մեկը: Մյուս երկու կուսակցություններն էին՝ Օրինաց երկիրը և Հանրապետականը: Վերջինս Վ. Սարգսյանի և 7 այլ պատգամավորների՝ Ազգային ժողովում սպանությունից հետո՝ 1999 թ. հոկտեմբերին, դարձել էր Ռ. Քոչարյանի հիմնական քաղաքական հենարանը:

Մեզ հետաքրքրող հարցի համատեքստում Հայաստանի քաղաքական դաշտի այս վերադասավորումները կարևոր էին մի քանի առումներով: Ռ. Քոչարյանը վարպետորեն օգտագործեց իշխանափոխությունից հետո ստեղծված իրավիճակը. ՅՅԴ-ին դարձնելով իր դաշնակիցը՝ նա չեզոքացրեց նրա իշխանական հավակնությունները, ավելին՝ վայելեց այդ կուսակցության աջակցությունը իր նախագահության 10 տարիների ընթացքում: Դրա հետ մեկտեղ և շնորհիվ դրա՝ նա դաշնակից ձեռք բերեց հենց Սփյուռքում՝ ի դեմս տարբեր երկրներում գործող ՅՅԴ-ի կառույցների ու նրա համակիրների:

Իր հերթին՝ ՅՅԴ, ինչպես նշվեց, դառնալով նախագահի և իշխող քաղաքական ուժի հենասյուներից մեկը, հրաժարվեց իր նախկին՝ ոչ չափավոր հավակնություններից: Գործելակերպի նման վերափոխման արդյունքում ՅՅԴ-ի ներկայացված լինելը երկրի իշխանության տարբեր օղակներում չէր նշանակում, սակայն, որ նրա «հայաստանյան» հատվածը, իսկ վերջինի միջոցով կուսակցության սփյուռքյան շրջանակները (էլ չասած՝ ընդհանրապես Սփյուռքը) քիչ թե շատ լուրջ մասնակցություն ունեին երկրի ղեկավարման գործում: Դեռևս 1998-ին, կարծես կանխազգալով նման՝ «կրտսեր գործընկերոջ» անցանկալի կարգավիճակը, կուսակցության ներսում՝ և Հայաստանում, և՛ Սփյուռքում, ոչ բոլորն էին կողմ իշխանության մաս կազմելուն: Սակայն հաղթեց այն տեսակետը, թե ՅՅԴ չպետք է ընդմիշտ մնա ընդդիմադրի դերում և պետք է իրական մասնակցություն ունենա երկրի քաղաքական կյանքում: Գայթակղությունը իսկապես մեծ էր, քանի որ մտնելով իշխանություն՝ ՅՅԴ ստացավ իր որոշակի մասնաբաժինը նաև իշխանության հետ սերտաճած ֆինանսատնտեսական համակարգում՝ իր բոլոր անդառնալի բացասական հետևանքներով:

Դրա դրսևորումներից էր կուսակցության ժողովրդականության նվազումը, մասնավորապես նրա ցածր ցուցանիշները խորհրդարանական ընտրություններում: Ինչպես նշվում էր մի հոդվածում, «Դաշնակցության առաջնորդներից ոմանք բանտից դուրս եկան առանց որևէ իրավական հիմնավորման... Պարզապես մի գեղեցիկ օր բացվեցին բանտախցերի դռները և Դաշնակցության առաջնորդները ազատ արձակվեցին միմիայն Ռ. Քոչարյանի կամքով, ինչի շնորհիվ ողջ կուսակցությունը դարձավ նրա կամքի պատանդը: Դաշնակցականների համար այդ «պատմական օրը» ժողովրդի հանդեպ նրանց «կուսակցության պարտավորությունը» սկսեց փոխարինվել «պարտավորությամբ» իշխանության հանդեպ»⁹: Այսպիսով, Ռ. Քոչարյանը, ի տարբերություն Լ. Տեր-Պետրոսյանի, ոչ թե գնաց ՅՅԴ-ի հետ առձակատման, այլ հակառակը՝ իր բարեկամական ամուր գրկում չեզոքացրեց ՅՅԴ-ին, ստիպեց նրան բավարարվել եղածով և մի կողմ դնել իր իշխանական հավակնությունները:

Մինևույն ժամանակ, ինչպես ասվեց, նա վայելեց Սփյուռքի զգալի մասի աջակցությունը: Դա ինքնին հետաքրքրական է երկրի ներսում տիրող իրավիճակի առումով (սոցիալական անարդարություն, շարունակվող արտագաղթ, մենաշնորհային տնտեսություն, համատարած կոռուպցիա և այլն), ինչը կարծես թե պետք է ունենար իր համապատասխան բացասական արձագանքը նաև Սփյուռքում: Սակայն սփյուռքահայերը ընդհանուր առմամբ հրապարակավ չէին անդրադառնում կամ խուսափում էին անդրադառնալուց Հայաստանի ներքին բարդ և չլուծված խնդիրներին, որոնց մասին, ի դեպ, ժամանակ առ ժամանակ խոսում էին նույնիսկ Հայաստանի իշխանությունները: Դա մի երևույթ է, որը ընդհանրապես բնորոշ է ազգային փոքրամասնություններին և նրանց էթնոհայրենասիրության յուրահատուկ դրսևորումներից է: Մեր դեպքում նման մոտեցումը առավել բացատրելի է՝ նկատի ունենալով առնվազն երկու հանգամանք՝ շարունակվող հակամարտությունը Ադրբեջանի հետ և Հայաստանի իշխանությունների քաղաքականությունը միջազգային հանրության կողմից 1915 թ.

⁹ **Грайр Казарян**, Дашнакский гамбит. Armenia Today, 24.04.2008: www.armtoday.info/default.asp?Lang=Ru&NewsID=3815&SectionID=1&PagePosition=1&search=дашнакский%20гамбит&mode=allwords

ցեղասպանությունը ճանաչելու և դատապարտելու ուղղությամբ: Այս վերջինը, սակայն, շատ շուտով որոշակիորեն ազդեց Հայաստան-Սփյուռք հարաբերությունների վրա:

Դեռևս 1990 թ. օգոստոսի 23-ի Հայաստանի Անկախության հռչակագրում նշվում էր. «Հայաստանի Հանրապետությունը սատար է կանգնում 1915 թվականին Օսմանյան Թուրքիայում և Արևմտյան Հայաստանում Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործին»: Հայաստանի երրորդ Հանրապետության բոլոր նախագահները հետևողականորեն ձգտեցին իրագործել Հռչակագրի վերոհիշյալ դրույթը, թեև տարբեր շեշտադրումներով: Ցեղասպանության ճանաչման հարցը, ինչպես հայտնի է, ուղղակիորեն կապված է հայ-թուրքական հարաբերությունների հետ: Թուրքիան, 1993 թ. ապրիլին փակելով իր սահմանը Հայաստանի հետ, հետագա տարիներին փորձել և փորձում է տնտեսական ճնշման միջոցով ստիպել Հայաստանին զիջումների գնալ թե՛ ցեղասպանության ճանաչման և թե՛ դարաբաղյան հակամարտության հարցում: Հայաստանը իր հերթին ձգտում է միջնորդավորված՝ Բյուրսելի և Վաշինգտոնի միջոցով ստիպել Թուրքիային, որ նա փոխի իր դիրքորոշումը և բացի սահմանը: Դրա հետ մեկտեղ, սկսած 1990-ականների վերջից, Հայաստանի համար Ցեղասպանության ճանաչման հարցը դարձավ կարևոր, եթե ոչ միակ, ազդու միջոցը, որպեսզի ստիպի Թուրքիային հրաժարվելու նշված նախապայմաններից: Ավելին, Ռ. Քոչարյանի օրոք Ցեղասպանության ճանաչման հարցը ընդգրկվեց Հայաստանի արտաքին քաղաքականության օրակարգում՝ որպես առաջնահերթ խնդիրներից մեկը:

Սփյուռքի համար դա ուներ առանձնահատուկ կարևորություն, քանի որ մինչ այդ տասնամյակներ շարունակ նա միայնակ էր հետապնդում համազգային նշանակություն ունեցող այդ նպատակը: Այժմ նա, շնորհիվ Հայաստանի Հանրապետության հետ համագործակցության, հնարավորություն էր ստանում նորովի և առավել արդյունավետ օգտագործելու իր քաղաքական ազդեցությունը, իր լրբիստական կազմակերպությունների, հատկապես ՀՅԴ-ի Հայ դատի հանձնախմբերի կարողությունները տարբեր երկրներում: Հենց այդ տարիներին՝ 1997-2010 թթ., շուրջ 20

երկրների խորհրդարաններ ընդունեցին հատուկ որոշումներ 1915 թ. Օսմանյան կայսրությունում հայերի ցեղասպանության ճանաչման և դատապարտման մասին:

2008 թ. փետրվարին կայացած նախագահական ընտրություններից հետո նախագահ դարձավ Սերժ Սարգսյանը՝ մինչ այդ երկրի վարչապետը, Ռ. Քոչարյանի համախոհն ու երկար տարիների հավատարիմ գործընկերը, և սպասվում էր, որ նա կլինի իր նախորդի քաղաքականության լուկ շարունակողը: Սակայն շատ շուտով պարզ դարձավ, որ նա ունի ոչ պակաս հավակնություններ, ինչը իր տարբեր դրսևորումներն ունեցավ երկրի ներքին և արտաքին քաղաքականության մեջ: Այսպես, որպես նախագահ ինքնահաստատվելու նպատակով նա հետևողականորեն սկսեց չեզոքացնել իր նախորդի ակնհայտ ազդեցությունը քաղաքական, բայց նաև ֆինանսատնտեսական համակարգերում: Մեզ հետաքրքրող հարցի կապակցությամբ առավել կարևոր եղան նրա նախաձեռնությունները հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման ուղղությամբ:

2009 թ. ապրիլի 22-ին Հայաստանի, Թուրքիայի և Շվեյցարիայի արտաքին գործերի նախարարները հանդես եկան համատեղ հայտարարությամբ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման «ճանապարհային քարտեզի» համաձայնեցման մասին: Իսկ օգոստոսի 31-ին հրապարակվեցին երկու նախաստորագրված արձանագրությունները՝ դիվանագիտական հարաբերությունների հաստատման և երկկողմ հարաբերությունների զարգացման մասին¹⁰: Հայաստանում և Սփյուռքում այս փաստաթղթերը, ինչպես հայտնի է, տարբեր կերպ մեկնաբանվեցին: Այստեղ հատկապես կարևոր է նշել սփյուռքահայերի արձագանքը: Ընդհանուր առմամբ այն եղավ բացասական. նրանք համարեցին, որ արձանագրությունները ոտնահարում են Ցեղասպանության զոհերի և նրանց ժառանգների իրավունքները, հակասում են հայ ժողովրդի ազգային շահերին և չեն կարող արդարացվել ինչ-ինչ քաղաքական ու տնտեսական շահերով: Ստեղծված իրավիճակում երկրի նախագահը Հայաստանի իշխանու-

¹⁰ А. Искандарян, С. Минасян, Прагматичность политики сквозь реалии исторических ограничений: анализируя армяно-турецкий процесс, Ереван, Институт Кавказа, 2010.

թյունների դիրքորոշումը պարզաբանելու նպատակով ուղևորվեց արտասահման և հանդիպումներ ունեցավ Բեյրութի, Փարիզի, Նյու Յորքի, Լոս Անջելեսի և Դոնի Ռոստովի հայ համայնքների հետ: Հանդիպումները անցան լարված մթնոլորտում, իսկ Փարիզում տեղի ոստիկանությունը նույնիսկ ստիպված եղավ ուժ գործադրել հայ ցուցարարներին ցրելու համար: Դա աննախադեպ մի երևույթ էր. Հայաստանի Հանրապետության իշխանությունների արտաքին քաղաքականության դեմ, այն էլ արտասահմանում, հրապարակավ հանդես էին գալիս տարբեր քաղաքական կողմնորոշումների, տարբեր տարիքի, սոցիալական տարբեր կարգավիճակ ունեցող սփյուռքահայեր:

Չնայած այս ամենին՝ հայ-թուրքական արձանագրությունները պաշտոնապես ստորագրվեցին նույն տարվա հոկտեմբերի 10-ին, ու թեև վավերացումը երկու երկրների խորհրդարանների կողմից դադարեցված է, նրանց բացասական ազդեցությունը Հայաստան-Սփյուռք քաղաքական հարաբերությունների վրա ակնհայտ է: Ինչպես 1919 թ., այնպես էլ 90 տարի անց Հայկական հարցի խնդիրը ի հայտ բերեց սկզբունքորեն տարբեր մոտեցումներ մի կողմից՝ Հայաստանի իշխանությունների և մյուս կողմից՝ Սփյուռքի հայության միջև: Հայ-թուրքական արձանագրությունները ունեցան մեկ այլ կարևոր հետևանք և՛ արդեն երկրի ներսում: Դաշնակցություն կուսակցությունը, հետևելով սփյուռքյան գործընկերների օրինակին, թե՛ իր անհամաձայնությունը հայտնեց վերին իշխանության քաղաքականությանը ու դուրս եկավ քաղաքական կռիվից, և թե՛ այդուհետ ձգտեց հանդես գալ ընդդիմադրի վաղուց մոռացված դերում:

Համաշխարհային պատմության փորձը վկայում է, որ որևէ պետության ղեկավարություն, ի տարբերություն արտասահմանում ապրող հայրենակիցների առաջնորդների, անհրաժեշտաբար ստիպված է լինում նման հարցերը դիտարկել իր արտաքին հարաբերությունների համատեքստում: Այլ հարց է, թե որքանով և ինչպես է հաջողվում համատեղել ազգային նպատակները և միջազգային իրողությունները: Հայաստանի Հանրապետության ղեկավարության համար Սփյուռքի նման արձագանքը, ըստ ամենայնի, եղավ անսպասելի: Հատկապես մտահոգիչ էր այն, որ այս անգամ Սփյուռք-

քում անվտանգության մթնոլորտ էր ձևավորվում ՀՀ իշխանությունների հանդեպ՝ կապված համազգային այնպիսի կարևոր խնդրի հետ, ինչպիսին Հայկական հարցն է: Սփյուռքահայերի նման տրամադրությունները չեզոքացնելու (եթե չասենք՝ նրանց սիրաշահելու) նպատակով Երևանը դիմեց շատերի համար անսպասելի քայլի: 2011 թ. հունվարին ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը Կալիֆոռնիայի հայ համայնքի հետ տեղի ունեցած հանդիպման ժամանակ հնչեցրեց նախագահ Ս. Սարգսյանի մտադրությունները. «Հայաստանի նախագահը կարծում է, որ սփյուռքի ներկայացուցիչները պետք է դառնան ՀՀ կառավարության մասը: Նա նաև առաջարկել է երկու պալատ ունեցող խորհրդարան», - ասել է Հակոբյանը: Նրա խոսքերով, «Վերին պալատը Սենատը կլինի, որտեղ պետք է ընդգրկվեն Սփյուռքի ներկայացուցիչները»¹¹: Այս դեպքում նույնպես եղան տարբեր, շատ անգամ հուզական գնահատականներ ու մեկնաբանություններ: Իսկ իրապես առարկայական վերլուծությունները Սփյուռքի ներկայացուցիչների ընտրության սկզբունքների առումով վկայում էին մեկ բան. Սփյուռքը այսօր ի վիճակի չէ կազմակերպելու նման ընտրություններ: ՀՀ իշխանությունները, իրենց հերթին, կարծես հասկանալով, որ հնչեցրած առաջարկությունը բավարար չափով նախապատրաստված չէ, այլևս չհանդրադարձան դրան:

Նախագահ Ս. Սարգսյանը 2012 թ. մայիսի 16-ին «Московские новости» թերթին տված հարցազրույցում ասում էր. «Հայերը հեշտությամբ են ինտեգրվում իրենց ապրած երկրների հասարակություններում: Երևի թե դրա շնորհիվ է, որ նրանք լուրջ հաջողությունների են հասնում տարբեր բնագավառներում: Բնական է, որ նման մարդիկ քննադատորեն են վերաբերվում այն խնդիրներին, որ կան մեզ մոտ: Չէ՞ որ նրանք իսկապես ցավում են Հայաստանի համար, պատրաստ են ապրել մեր խնդիրներով և իրենց ներդրումը ունենալ երկրի զարգացման մեջ: Ցավոք, մենք մինչ այժմ չենք կարողացել լիարժեք օգտագործել նրանց հնարավորությունները: Ինչու: Այդ հարցի պատասխանը ես ինքս չեմ կարողանում գտնել արդեն երկար տարիներ»¹²:

¹¹ www.panarmenian.net/arm/politics/details/61991/

¹² www.mn.ru/blog-20-years=ussr/20110516/301913855.html

Հայաստանի և Սփյուռքի փոխճանաչման արդի գործընթացը սկիզբ առավ սրանից 20 տարի առաջ. այդ ընթացքում տարբեր հարթությունների վրա ընթացող աշխույժ հարաբերությունների դրական հետևանքները, անշուշտ, ակնհայտ են: Սակայն այդ հարաբերություններին այսօր էլ հատուկ են մի կողմից՝ փոխըմբռնման պակասը ու անհրատեսական սպասումները, իսկ մյուս կողմից՝ շտապողականությունը՝ բարդ խնդիրներն արագ լուծելու ձգտումը, իսկ որպես հետևանք՝ անհամաձայնեցված և ոչ արդյունավետ գործողությունները: Մինչդեռ թվում է, որ շտապողականությունը անհրաժեշտ է (եթե չասենք՝ պարտադիր) երկու գերխնդիր լուծելու համար: Սփյուռքի պարագայում դա ինքնակազմակերպման որակապես նոր ձևերի մշակումն ու կիրառումն է, իսկ Հայաստանի պարագայում բազմաթիվ ճգնաժամային երևույթների հաղթահարումն է, որոնց պատճառների և դրսևորումների մասին, ի դեպ, խոսել էր նաև երկրի նախագահը իր վերոնշյալ հարցազրույցում: Դրանով են պայմանավորված լինելու թե՛ նրանց ապագա գոյակերպը և թե՛ փոխհամագործակցության արդյունավետությունը, այդ թվում և քաղաքական ոլորտում:

Eduard Melkonian – *Political Relations between the Third Republic of Armenia and the Spuyrk* – Since its proclamation in 1991, the independent Republic of Armenia has been actively cooperating with the *Spuyrk* (the Armenian Diaspora) in a wide variety of spheres. This paper looks at some aspects of the political relations between Armenia and the Spuyrk, including the involvement of the Spuyrk in Armenia’s political life. The author compares the contrasting approaches of the two actors vis-à-vis Armenia-Turkey relations, and highlights the efforts to restore the structural unity of the Armenian Apostolic church following its disruption in the Cold War era.

Эдуард Мелконян – *Политические взаимоотношения Третьей Республики Армения и Спюрка* – После образования суверенной Республики Армения в 1991 г. между ней и Спюрком (армянской диаспорой) началось широкое сотрудничество в разных сферах жизнедеятельности. В статье рассматриваются некоторые аспекты политических взаимоотношений – вовлеченность Спюрка в политическую жизнь страны, различия подходов к армяно-турецким взаимоотношениям, восстановление организационного единства Армянской Апостольской Церкви, нарушенного в годы холодной войны.

ՍԵՐԺ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ԼԻԲԱՆԱՆԱՅԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՍՓՅՈՒՌՔԱՅԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՊԱՏԿԵՐՈՒՄ

Հայ գրականությունն ի սկզբանե (V դարից) ունեցել է երկատված լինելու դժվարին պարտադրանքը՝ պայմանավորված ժողովրդի նույնքան դժվարին ճակատագրով: Հայտնի են երկրի բաժանումները տարբեր ժամանակներում տարբեր գավթիչների կողմից, իսկ պետականության բազմադարյան չգոյությունը իր կնիքը դրեց նաև գրականության վրա և՛ թեմատիկայի, և՛ ինքնադրսևորման, նաև ձևի ու բովանդակության, նպատակադրումների առումով: Մինչ XX դարասկիզբը, արդեն 15-րդ դարից սկսած, Թուրքիայի տիրապետության տակ հայտնված հայ ժողովուրդը, ստեղծելով իր մշակույթը, մասնավորապես գրականությունը, արդեն որոշակիորեն կրում էր այսօրվա ընթերցումով սփյուռքի գրականության բնորոշ հատկանիշներ: Ասվածը տարօրինակ կարող է թվալ: Մեր հասկացողությամբ կամ, որ ավելի ճիշտ է, այսօրվա մեր ընթերցումներում, Սփյուռք հասկացությունը վերաբերում է 20-րդ դարի 20-ական թթ.:

Սա բացարձակ ճշմարտություն է: Սակայն, եթե նկատի ունենանք Սփյուռքի գրականության հիմնական հատկանիշները՝ կարոտ, ազգապահպանություն, ինքնափրկության թեմաներ, ապա նման որակները նկատելի են դառնում նաև ավելի վաղ շրջանում, միայն այն տարբերությամբ, որ ժողովուրդը և չնչին բացառությամբ նաև մտավորականությունը ապրում էին սեփական հողի վրա՝ զրկված այդ հողը ու նաև սեփական ճակատագիրը տնօրինելու հնարավորությունից: Այլ կերպ ասած՝ մինչև 20-րդ դարի 20-ական թվականները քաղաքական կեցությունն ու կացությունը գրականությանը արդեն պարտադրում էին ազգապահպանության ու ինքնափրկության թեմատիկան, ինչն էլ դառնում է գրականության տարակերպության պատճառներից մեկը: Այսպես, պատմական Հայաստանում, ավելի կոնկրետ՝ Արևմտյան Հայաս-

տանում «սփյուռքացման գործընթացը» (նկատի ունենք բացառապես թեմատիկան և նպատակադրումները) խորացավ արդեն 15-րդ դարից. հայտնվելով Թուրքիայի տիրապետության տակ՝ ժողովուրդը իր պատմական հայրենիքում վերածվեց համայնքի՝ պետականության դրսևորման միակ կերպը տեսնելով նորաստեղծ հայոց պատրիարքարանի մեջ: Նույնը կարելի է ասել նաև Իրանի հյուսիսային հատվածի՝ պատմական Պարսկահայքի մասին, որտեղ շարունակ հայեր են ապրել, բայց և համալրվել են այլ աշխարհներից արտագաղթած հայերով, և ունեին գաղթօջախում ապրողների կարգավիճակ, նաև պետք չէ մոռանալ, որ XVIII դարի II կեսից սկսած ոչ պատմական հայրենական հողերում՝ կոնկրետ Իտալիայում, ձևավորվեց Մխիթարյան միաբանությունը, որի գրական-մշակութային գործունեությունը դժվար է գերազնահատել, բայց դա արդեն Սփյուռք էր բառի գրեթե այսօրվա ըմբռնումով: Նույնը կարելի է ասել Հնդկաստանում՝ Մադրասում և Կալկաթայում, ստեղծված հայ գաղութի մասին: XIX դարի սկզբից աշխուժանում են նաև Ռուսաստանում ստեղծված հայ գաղութները: Ցուցակը կարելի է շարունակել: Բայց ասվածն արդեն ապացույցն է այն բանի, որ Սփյուռք հասկացությունը (անշուշտ ոչ նույն եզրաբանությամբ և իմաստի բացարձակ նույնականությամբ) մեզանում սկսվել է ավելի վաղ, քան XX դարասկզբի Սև դեպքերը, և միանգամայն ճիշտ է նկատվել, որ «Սփռվել բայից կազմված այս գոյականը դարձել է յուրօրինակ տեղանուն, որ աշխարհի քարտեզի վրա հնարավոր չէ ցույց տալ: Սփյուռքը Հայաստանից դուրս մնացյալ աշխարհն է, ուր հայեր են ապրում: Սփյուռքը տարագիր հայության բնակավայրերի ընդհանուր խորհրդանշային անվանում է»¹:

Ասվածը վկայում է, որ հայ գրականության առջև ծառայած գերխնդիրը դարեր շարունակ եղել է ինքնափրկության և ցեղափրկության խնդիրը, ինչն առավել տեսանելի դարձավ անցյալ դարի սկզբներին: Բայց և դրանից չի հետևում, թե էական տարբերություններ նախորդ դարերի և XX դարասկզբին տեղի ունեցած իրողությունների արդյունքում ձևավորված գրականությունների միջև չկային: Կային և այն էլ շատ էական:

¹ Վ. Գաբրիելյան, Սփյուռքահայ գրականություն, Եր., 2008, էջ 6:

Նախ. չնայած այն բանին, որ սկսած XVIII դարից՝ մշակույթը, մասնավորապես գրականությունը ստեղծվում էր օտար հողի վրա (վերը նշվեց՝ Իտալիայում, Յնդկաստանում, Ռուսաստանում, Վրաստանում և այլուր), սակայն այն ստեղծող և կրող ժողովուրդը կար, գոյատևում էր իր պատմական հայրենիքում և գլխավոր խնդիրը պետականության, ասել է թե՛ ազատության վերականգնումն էր: Օտարներն էին ժամանակավոր և ոչ մենք: Կար այդ ըմբռնումը, որը կայուն հոգեբանություն էր: Նույնիսկ ոչ հայրենական հողում հաճախ ստեղծվում էր հայկական ավելի բարձր մշակույթ, քան տերերինը: Վկան՝ XIX դարավերջից XX դարի 20-ականների Թիֆլիսը, որ ավելի շատ հայկական, քան վրացական մշակութային կենտրոն էր:

Ապա. դրսում ապրող և ստեղծագործող հայ մշակութակիր անհատի հիմնամաստակը հայրենիքի ազատության և փրկության խնդիրն էր, նաև վերադարձի հնարավորության ստեղծումը. օրինակները բազմաթիվ են՝ Շահամիրյանների ու Բաղրամյանների գործունեությունը Յնդկաստանում կամ, ասենք, Ավ. Իսահակյանի, Դ. Վարուժանի, Սիամանթոյի ու այլոց՝ Եվրոպայում ապրած կյանքի տարիները: Դրսում ստացած լույսը բերվում էր հայրենիք, ծառայեցվում ժողովրդին և հայրենիքի փրկության սրբազան նպատակին:

Լավագույն օրինակը արևելահայ հատվածում Խաչատուր Աբովյանն է, իսկ XX դարասկզբին, ինչպես նշվեց, արևմտահայ գրականության գրեթե բոլոր մեծերը՝ Սիամանթոն, Դ. Վարուժանը, Ռ. Սևակը, Ա. Զոպանյանը, ուրիշները եվրոպական կրթության լույսը բերին հայրենիք, փորձեցին դնել մեծ կայացման ընթացքի սկիզբը:

Այս մոտեցմամբ XX դարասկիզբը բնորոշվեց հայ գրական և գիտական մտքի վիթխարի թռիչքով: Արևելահայ հատվածում Աբովյանից հետո Աղայանը, Պռոշյանը, Պատկանյանը, հատկապես Րաֆֆին նախապատրաստեցին Թումանյան, Իսահակյան, քիչ ուշ նաև Տերյան պոռթկումը: Արևմտահայ հատվածում Դ. Ալիշանը (Նահապետը, ի միջի այլոց, նաև արևելահայերի համար անվերապահ ուսուցիչ էր), Ն. Ռուսինյանը, Մ. Պեշկոպաշյանը հիմք դրեցին Սիամանթո, Դ. Վարուժան, Ռ. Սևակ, Մ. Մեծարենց, Ինտորա, Պեշկոպոյրյան պոռթկումին: Մինչ այդ իրապաշտական շարժումը նախանցյալ դարի 80-ականներին միտում էր արդեն եվրո-

պական բարձունքների Ա. Արփիարյանի, Գ. Ջոհրապի, Երուխանի, Լ. Բաշալյանի, այլոց գրականությամբ:

Բայց, ցավոք, կյանքը, մասնավորապես գրական կյանքը, թևատվեց հենց թռիչքի պահին: Նախ. կայացման ընթացքի մեջ դադարեց կամ գրեթե դադարեց արևմտահայ իրապաշտական գրականությունը: 1884-96 թթ. մարդկության պատմության մեջ նախադեպը չունեցող ջարդերը դարձան դրա գլխավոր պատճառը: Թեև վերոնշյալ գրական գործիչները զոհ չզնացին ջարդերին, սակայն դադարեցին ստեղծագործելուց՝ ասպարեզը թողնելով նորերին: Պատճառը, անշուշտ, պայմանավորված էր հասարակական մտքի պահանջով: Ջարդերը, որքան էլ տարօրինակ թվա, եկան վավերացնելու վիպապաշտ (ռոմանտիկական) գրականության անհրաժեշտությունը: Այս դպրոցին բնորոշ երազը, տեսիլը, ձգտումը թվում էին ավելի արդիական ու անհրաժեշտ, քան իրապաշտականը: Ու նորերը զնացին հենց այդ ուղիով: Այս նորերը չէին ձևավորվում հայրենի եզերքում: Նրանք, նախապես լիցքեր ստանալով հայրենիքում, այսինքն՝ արքեպիսկոպոս մնալով խորապես հայրենական, նոր ու թարմ մտածողությամբ կայանում էին Եվրոպայում, համաշխարհային, մասնավորապես ֆրանսիական գրականության ոլորտում: Պատճառն այն էր, որ բուն երկրում բռնադատվում էին և՛ միտքը, և՛ ոգին, քանի որ «Հայերն ապրում էին թուրքիայում՝ ամենաբռնակալ ու ավազակային պետության մեջ, որ մի կողմից ստրկացել էր Եվրոպայի առաջ, մյուս կողմից ստրկացնում էր իր ժողովրդին և առավելապես՝ այլազգիներին»²: Ահա թե ինչու «Հայ մտավորականներեն անոնք, որ ապագայի մը կատարելիություն ունեին արտասահմանի մեջ, կը հեռանային Պոլսեն, շատ երիտասարդներ արդեն մեկնած էին Փարիզ...»³: Կարևոր պատճառներից էր նաև այն, որ մտավորականության բացակայությամբ Պոլսում ստեղծվել էր մի իրավիճակ, երբ «Փոքր մտածումները կը տիրապետեին»⁴: Այսպիսով, XX դարասկզբին հանգամանքները դարձյալ պարտադրեցին, որ մեր գրականությունը կամ, ավելի ճիշտ, նրա նորագույն փուլը վերստեղծվի եվրոպաներում՝ Ջոենոսի, Թենզայի, Սենայի և Լենմանի ավերին:

² Հր. Թամրազյան, Երկեր, հ. Գ, էր., 2010, էջ 161:

³ Անայիս, Գուշեր, Փարիզ, 1949, էջ 197:

⁴ Նույն տեղում:

Քաղաքական տարբեր պատճառներով, կյանքի պարտադրանքներով, սակայն, բուն հայրենական հողի վրա չէր ստեղծվում նաև արևելահայ գրականությունը: Ինչպես վերը նշվեց, նրա կենտրոնն էլ Թիֆլիսն էր, և հայ գրականությունը շարունակում էր երկփեղկվել: Ու ոչ միայն սոցիալ-քաղաքական կեցության խնդիրների թելադրանքով: Արդեն ձևավորման ակունքները տարբեր էին: Հիմնական հող ունենալով հայրենական գրականությունը՝ հայ գրական կյանքը կառուցողները, այդուամենայնիվ, տարբեր ազդեցությունների ուղորտում էին: Թուրքական իրականությունը, իր մշակութային ամանցյալ բեռով հայ մտածողին ոչինչ տալ չէր կարող, և հայ մտածողը հայացքը հառում էր աշխարհի մշակութային զանձարանին, մասնավորապես՝ ֆրանսիականին: Ու պատահական չէ, որ արևմտահայ ցանկացած մտավորական մայրենի լեզվի հմտությամբ տիրապետում էր ֆրանսերենին կամ որևէ այլ եվրոպական լեզվի, հաճախ՝ երկուսին էլ միասին: Նրանք առանց միջնորդ լեզվի էին յուրացնում եվրոպական մտքի նվաճումները, հասնում համամարդկայնության նվաճումների մեծ ուղորտները: Թե՛ արձակի և թե՛ բանաստեղծության մեջ դարասկզբի արևմտահայ գրականությունը ազատ մրցակցության էր զնում եվրոպականի հետ:

Այլ էր պատկերը ռուսահայ հատվածում: 19-20 դդ. ռուս գրականությունը անցել էր մեծ ճանապարհ: Մանրամասների մեջ չխորանալով՝ նշեն, որ այն աշխարհի գրականության առաջավոր ջրկատներից էր, և իր քաղաքական համեմատական ժողովրդավարությամբ, ազատ մտքով և բազմազանությամբ չէր կարող իր կնիքը չդնել ռուսահայ գրականության վրա: Տերյանը հիացած էր ժամանակի ռուսական նորագույն չափածոյով, Թումանյանը սիրում էր ու թարգմանում Ա. Պուշկինին, Յու. Լերմոնտովին: Դրա փոխարեն՝ Տերյանը վատ գիտեր, իսկ Թումանյանն էլ քիչ էր ծանոթ ժամանակի արևմտահայ գրողներին: Համաշխարհային գրականությանն էլ նրանք ծանոթանում էին ռուսաց լեզվի միջնորդությամբ, քանի որ քչերը գիտեին եվրոպական լեզուներ: Նշանակում է՝ համաշխարհային գրականությունը յուրացվում էր միջնորդավորված՝ ռուսական ազդեցությամբ:

Երկփեղկումը շարունակվում էր: Երբեմն տարակարծություններ էին ծնվում այս կամ այն խնդրի շուրջ: Երկփեղկման գագաթը

դարձավ 1915-ը՝ Մեծ եղեռնը, ապա, այն չավարտված, 1920-ը՝ Ռուսահայաստանում խորհրդային կարգերի հաստատումը: Քաղաքական ըմբռնումների ու կարգերի կտրուկ շրջադարձը Արևելահայաստանում և ժողովրդի բնաջնջումը Արևմտահայաստանում ոչ միայն խորացրին երկփեղկումը, այլև այն տարան օտարման՝ մղելով դեպի առճակատում: Երևույթը հաստատող բազմաթիվ փաստեր ու վկայություններ այսօր արդեն գաղտնիք չեն: Եվ ոչ էլ դրա փաստարկման կարիքը կա: Եվ, սակայն, պարզ է մի կարևոր հանգամանք. արևմտահայ գրականության հիմնական ուժը գլխատվել էր. հատուկենտ խլյակները ամեն ինչ պիտի սկսեին նորից, նոր տեղից՝ առանց գլխավոր ներուժի: Արևելահայ գրողներն էլ կան թողել էին երկիրը (Ավ. Ահարոնյան, Ավ. Իսահակյան և այլք), կան հրաժարվելու էին հին գաղափարներից՝ որդեգրվելու նոր, իրենց համար հաճախ խորթ ու անհարազատ գաղափարների, կան հեռանալու էին ասպարեզից: Այս օտարման խորացումն էլ արդի հայրենական հետազոտողին իրավունք է վերապահում գրելու, թե. «...Անցեալ դարի առաջին տասնամեակներից մեր գրականութիւնն առ հասարակ ազգային-քաղաքական սուր յարաբերութիւնների թոհուբոհում դարձել է խրամատների համակարգ, ուր երկկողմ համազարկերի խլացող ձայները այսօր էլ ողբերգականօրէն արձագանգւում են մեր ունկերում»⁵:

Այս ամերկբայելի ճշմարտության դիտանկյունից էլ ինձ շատ ընդունելի է թվում վաղամեռիկ Գր. Հակոբյանի մի մոտեցումը՝ նվիրված հայ գրականության երկու թևերի տարանջատմանը. «Քսաներորդ դարի հայ գրականութիւնը պատմական առարկայացման իրողութիւնների պատճառով, նախ, արտայայտուեց իբրև տարաշխարհիկ և բնաշխարհիկ (արեւմտահայ-արեւելահայ զուգահեռումներով, ներառեալ մեր առաջին հանրապետութեան փուլը), ապա՝ խորհրդահայ և սփիւռքահայ (արտերկրի) գրականութիւն: Արդի շրջանում գոյաւորւում է հայ գրականութեան 20-րդ դարի պատմութեան երրորդ զուգահեռը՝ Հայաստանի Հանրապետութեան գրականութիւն-Սփիւռքի գրականութիւն»⁶:

⁵ Ս. Դանիէլեան, Միջուկի տրոհումը, Սփիւռքահայ գրականութեան պատմութիւն, գիրք 1, եր., 2011, էջ 9:

⁶ Գ. Յակոբեան, Յօդուածներ եւ ուսումնասիրութիւններ, Սբ. Էջմիածին, 2007, էջ 491:

Ամեն ինչ ճշգրիտ է ասված: Միայն մի վերապահություն, սակայն, անհրաժեշտ են համարում. ինչպես վերը նշեցինք, մեր գրականության սփյուռքացումը (ներքին բովանդակության դիտանկյունից) սկսվել էր ավելի վաղ՝ միջնադարից, երբ հայ գրողը վարում էր թափառիկ կյանք՝ բախտ որոնելով օտար եզերքներում, և մշակութային օջախներն էլ ստեղծում էր օտար հողի վրա, օտար երկրների տակ: Ահա թե ինչու այդ գրականությունը տարաշխարհիկ էր, բնաշխարհիկ չէր և որոշակիորեն տարբեր: Ահա թե ինչու թեմատիկայի՝ կարոտի, երկրի գոյավորման ու կայացման ազատասիրական գաղափարների, հերոսացումների տրամադրությունների դրսևորումները հավասարապես բնորոշ են ինչպես վերը նշված, այնպես էլ այսօրվա Սփյուռքի գրականությանը:

* * *

Սփյուռքահայ գրականությունը գրական պատմաբանների ու գրաքննադատների ուշադրության կենտրոնում է եղել հենց ձևավորման սկզբից: Լևոն Շանթը, Նիկոլ Աղբալյանը, Հակոբ Օշականը, Կարո Սասունին, Մինաս Թեոլոյանը, Գրիգոր Պըլտյանը, Գեղամ Սևանը, Վազգեն Գաբրիելյանը, Արծրուն Ավագյանը, Սուրեն Դանիելյանը, Գրիգոր Հակոբյանը և շատերը անվերջ ու ազնիվ քննությանը բարձրացրել են հարցեր, որոնել և բնութագրել շատ յուրահատկություններ. շատ խնդիրներ ու հարցեր էլ սպասում են իրենց պատասխանին: Չնայած տարաբնույթ, հաճախ իրարամերժ կարծիքներին ու նոտեցումներին՝ ընդհանուր միտումն այն է, որ «ճիշտ չէր լինի սկիզբը (սփյուռքահայ գրականության - Ս. Ս.) հաշվել 1915-ից (Մեծ եղեռնի թվականը) և ոչ էլ 1918-ից (պատերազմի ավարտը): Նախ՝ մինչև պատերազմի ավարտը (նաև հետո) աքսորյալների քարավանները դեռ քայլում էին, չէին անրակայվել գաղթօջախում, ապա՝ արևմտահայ գրականությունը գրեթե մեռած էր: Սփյուռքի բուն պատմությունը սկսվում է Համաշխարհային առաջին պատերազմից հետո, ավելի ճիշտ՝ 1920-ական թթ.: Սփյուռքահայ գրականությունը ձևավորվում է այդ նույն ժամանակ, այսինքն՝ Սփյուռքի հետ, որպես հայ կյանքի նոր իրողության գրական արտացոլում»⁷: Եվ, սակայն, այս դեպքում պետք է խոսել ոչ թե և ոչ միայն նույն ժողովրդի գրականության երկու ճյուղավոր-

⁷ Վ. Գաբրիելյան, նշվ. աշխ., էջ 11:

րունների մասին, այլ արդեն նրա երկու նույն ճյուղերի տարբեր ենթաճյուղերի՝ ֆրանսահայ, ամերիկահայ, եգիպտահայ, սիրիահայ, լիբանանահայ, պարսկահայ գրական ճյուղերի մասին: Սակայն դա նշանակում է արդյոք, որ գործ ունենք նոր ու միանգամայն իրարից տարբեր գրական երևույթների հետ: Նոր. այո՛: Տարբե՞ր. թերևս: Հակադի՞ր. բնավ՛:

Այս առումով իրավացի է հայրենի գրագետներից Ս. Դանիելյանը, երբ հակադրվում է ամերիկահայ գրագետ եր. Ազատյանի այն կարծիքին, թե «Հայաստանը Կովկասին է պատկանում, Սփիւռքը՝ իր պոլսահայ արմատով և զանազան ազդեցութիւններով՝ բոլորովին ուրիշ աշխարհ է: **Մեզանից անկախ երկու տարբեր ազգութիւններ են ստեղծուել** (ընդգծ.- Ս.Ս.): Արիւնով միեւնոյնը, լեզուով՝ գրեթէ նոյնը, բայց աշխարհայեացքներով գրեթէ հակոտնեայ»⁸: Այս կարծիքը ծայրահեղորեն անարդար է: Ս. Դանիելյանի հակադրումը⁹ նույնպէս սպառնիչ չէ: «Յարաբերականօրէն ինքնուրոյն ճիւղաւորումներ»-ը դեռ չի նշանակում հակոտնյա կամ իրարամերժ գրականութիւններ: Եվ լավ է, որ գրագետը չի կորցնում իրատեսութիւնը, երբ արձանագրում է անուրանալի իրողութիւնը, թե «ճանաչողական եզրագծին է մօտենում արեւմտահայ գրականութեան՝ գրեթէ երկու դար տեւած ճանապարհը, թվում է՝ փակուելու վրայ են սփիւռքահայ գրականութեան պատմութեան դարպասները»¹⁰:

Մի քիչ մտայլ կանխագուշակութիւն է անշուշտ, սակայն այդ գրականութեան ազգապահպան վիթխարի դերն ու նշանակութիւնը դեռ ամբողջովին չեն բացահայտված ու ներկայացված, և, իհարկէ, դեռ վաղ է մահերգը գրելու, մանավանդ այսօր՝ Ազատ ու Անկախ Հայրենիքի գոյության պայմաններում: Եվ նորից համաձայնենք գրագետի հետ, որ անհրաժեշտ է համարում «գոնե հնարաւորի սահմաններում բոլորագծել գրեթէ ժամանակային առումով մէկ դար ձգուած Սփիւռքի գրականութեան լոյսն ու ստուերը, ազգային-քաղաքական նախահիմքերը, գեղարուեստական խօսքի փոփոխական սլացքները՝ մայր գրական նախորդ և ժամանակակից ընթացքների հակադրման լոյսի ներքոյ»¹¹:

⁸ Ս. Դանիելյան, նշվ. աշխ., էջ 26:

⁹ Տե՛ս նույն տեղը, էջ 27-29:

¹⁰ Նույն տեղում, էջ 35:

¹¹ Նույն տեղում:

* * *

Լիբանանահայ գաղութը հայ գաղթաշխարհի՝ համեմատաբար արագ ստեղծված ու առավել կառուցիկ գաղութներից է: Ասել է թե՛ մշակութային կյանքը ընդհանրապես, գրական կյանքը մասնավորապես, այստեղ առավել արագ են ձևավորվել և կայացել: Ընդհանրապես ճիշտ է նկատված, որ «Չայկական համայնքները համալրուում էին յախումն թափով, արագընթաց ընդարձակում էր նաեւ նրանց «աշխարհագրութիւնը», ինչի հետեւանքով արեւմտահայ միասնական գրականութիւնը տրոհուում էր մեծ ու փոքր կղզեակների»¹²: Եվ այս կղզյակների մեջ, ինչպես նշեցի, առավել կենսական լիցքերով և կազմակերպվածությամբ, զարգացման արագընթացով առանձնանում էր լիբանանահայ գաղութը: Պատճառները մի քանիսն էին:

Պատճառներից մեկը ամենից առաջ այս դրախտային աշխարհի մարդկանց՝ բնիկների բարեհաճ ու կարեկից վերաբերմունքն էր դժոխքի պարունակներով անցած հայության նկատմամբ: Դավիթխարի նշանակություն ունեցավ հոգեբանական դիտանկյունից: Մարդու և մարդկայնության նկատմամբ հավատն ամբողջությամբ կորցրած և գաղթականի վերածված հայ մարդը՝ մտավորականը, առևտրականը, հերկվորը, սերմնացանն ու բնակորույս կինը, նորից տեսավ իր տեսակին՝ Մարդուն՝ թեև հոգսով բեռնավոր, բայց սրտով ցավակից: Նորից ծնվեց ապրելու, հարատևելու հույսը, որ կարևոր էր, մանավանդ այն պարագայում, երբ հրաշքով փրկված հայրենական հողի մի փոքրիկ հատվածը՝ Խորհրդային Չայաստանը, մեղմ ասած, բարեհաճ վերաբերմունք չէր դրսևորում նրանց նկատմամբ:

Մյուս կարևոր գործոնը, որ նպաստեց լիբանանահայ գաղութի արագ ու հայեցի կայացմանը, մեր կարծիքով, այն էր, որ այստեղ հաստատվեցին արդեն դասականի համբավ ու կշիռ ունեցող գրական գործիչները՝ Նիկոլ Աղբալյանը, Լևոն Շանթը, Կոստան Ջառյանը: Սա մշանակում է, որ որոշ վերապահությամբ պիտի ընդունել գրաքննադատության այն պնդումը, թե «սփյուռքահայ գրականութիւնը արեւմտահայ գրականութեան շարունակութիւնն է»¹³:

¹² Ս. Դանիէլեան, նշվ. աշխ., էջ 41:

¹³ Նույն տեղում, էջ 45:

Լ. Շանթի մասին պնդումը, թե նա արևմտահայ գրող է, բացարձակ ճշմարտություն չէ: Իմ կարծիքով՝ նրա տեղը լավագույնս բնութագրել է Դ. Օշականը՝ նկատելով, որ նա «երկու գրականութեանց բարեխառնութիւն մըն է»: Սա ճշմարիտ է նաև Ն. Աղբալյանի (որը, ի դեպ, ուղղակի արևելահայ է) և Կ. Ջարյանի վերաբերմամբ: Ուրեմն՝ Սփյուռքի գրականությունը կամ գոնե լիբանանահայ (իսկ պարսկահայի մասին արդեն չեմ խոսում) գրականությունը զուտ կամ զտարյուն արևմտահայ գրականություն չէ, այլ «երկու գրականութեանց բարեխառնութիւն»: Հակառակ դեպքում՝ կկորցնենք նրա համահայկական որակի հայտնության ու ընթացքի խորհուրդը և կհաստատենք եր. Ազատյանի՝ երկու տարբեր ազգերի մասին տեսությունը:

Զնայած լիբանանահայ գաղութը ներքին կյանքի քաղաքական դրսևորումներով որոշ խայտաբղետություն ուներ (այստեղ գործում էին հայ ազգային-քաղաքական գրեթե բոլոր կուսակցությունները՝ ԶՅԴ, ՌԱԿ, Սոցիալ-դեմոկրատ, Հնչակյան, Համայնավար), սակայն մեծ հաշվով այստեղ տիրապետողը համազգային շահն էր, ինչին նպաստում էին տարբեր ժամանակներում և տևողությամբ այստեղ լույս տեսած պարբերականներն ու թերթերը՝ «Ազդակ»-ը, «Ակօս»-ը, «Անի»-ն, «Արարատ»-ը, «Բագին»-ը, «Հայկազեան հայագիտական հանդես»-ը (վերջին երկուսը հատկապես առանձնանում էին հայրենիքում իրենց հայտնիությամբ), «Ձարթօնք»-ը, «Կանչ»-ը, «Յառաջ»-ը, «Նաիրի»-ն, «Շիրակ»-ը, ուրիշները: Դրանում իր մեծ դերն ուներ նաև Լիբանանի պետական համակիր վերաբերմունքը, ինչը շատ չափով նպաստում էր նման հզոր ծաղկմանը: Եվ պատահական չէր, որ լիբանանահայ գաղութի ձևավորումից ընդամենը 2-3 տասնամյակ անց՝ 50-70-ական թթ., այնտեղ այցելած հատուկեմտ հայաստանցիներն այն անվանում էին երկրորդ Հայաստան, իսկ գաղութի ամբողջ գոյության ընթացքի մեծ դասականն ու գեղարվեստական տարեգիրը՝ Մուշեղ Իշխանը, «Տաղ Լիբանանին» ձոներգում Լիբանանը համարում է իրական հայրենիք:

Լիբանանահայ գաղութի արագ ձևավորմանն ու ծաղկումին պակաս նպաստ չբերեց և այն, որ այստեղ էր գործում նաև Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունը, որը, հոգևոր գործառություններից բացի, փաստորեն իր վրա էր վերցրել նաև հայկական պե-

տականության ուրույն դերակատարում¹⁴:

Տարբեր ժամանակներում լիբանանահայ գրականության կայացման ու զարգացման գործում իրենց անգնահատելի դերն են ունեցել տաղանդավոր շատ գրողներ՝ Մուշեղ Իշխանը, Արմեն Դարյանը, Գառնիկ Ադդարյանը, Վեհանուշ Թեքեյանը, Գևորգ Աճեմյանը, Անդրանիկ Ծառուկյանը, Ժագ Հակոբյանը, Սարգիս Կիրակոսյանը, Էդուարդ Բոյաջյանը, Հայկ Նազգաշյանը, Արամ Սեփեթճյանը, Պեպո և Սիմոն Սիմոնյանները, Վահե Վանյանը, Սմբատ Փանոսյանը, Վահե Օշականը: Անուններն էլի կարելի է շարունակել:

Սակայն բոլորին չես կարող անդրադառնալ: Մանավանդ մի հաղորդման ընթացքում: Ուստի բավարարվենք մի քանի խոսուն և սպառիչ-բնութագրական անուններով:

Մուշեղ Իշխան: Գաղթի ու որբ մանկության ամբողջ դառնությունը ցմրուր ճաշակած ապագա մեծ գրագետը (որ սեփական ծննդյան թվականն անգամ (1914, միշտ կարծել է 1913) ճշտել է բաժանունից ամբողջ 37 տարի անց՝ մորը գտնելուց հետո), չնայած ծանր կյանքի ընթացքին, բախտավոր կամ ավելի ճիշտ՝ հաջողակ էր ուսուցիչների առումով:

Կիպրոսի Մելքոնյան վարժարանում նրան դասավանդել է Հակոբ Օշականը, իսկ 1930-ից արդեն Փալանճյան ճեմարանում աշակերտել է Լ. Շանթին ու Ն. Աղբալյանին: Ասել է թե՛ բնական ձիրքին միացել է նաև տաղանդավոր ուսուցիչների մեծ ներդրումը՝ ձևավորելով ապագա գրողին: Նրա վերջին՝ «Իրիկնալույս ռունբերու տակ» գիրքը, լույս տեսավ 1991-ին, ետմահու (բանաստեղծը մահացել է 1990-ին, 76 տարեկան հասակում, Լոս Անջելեսում, ուր գտնվում էր բուժման նպատակով): Նրա մասին գրել և գրելու են շատերը, սակայն բացառիկ ջերմությամբ է արտահայտվել Գարեգին Բ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսը. «Ողջո՛ւյն քեզ, Մուշեղ, Իշխան Հայ Գիրին»:

¹⁴ Դա լայնորեն դրսևորվեց հատկապես 70-90-ական թթ.՝ ընդհատումներով ընթացող լիբանանյան արյունալի քաղաքացիական պատերազմի շրջանում, որը լիբանանահայության թիվը շուրջ 250 000-ից նվազեցրեց մինչև 60 000-ի, երբ շատ շատերի հետ երկիրը լքեցին նաև բազմաթիվ հայտնի գրողներ ու մտավորականներ: Դժվար է գերազանհատել այս շրջանում երկու կաթողիկոսների՝ երջանկահիշատակ Գարեգին Բ (հետագայում Գարեգին Ա Ամենայն հայոց կաթողիկոս) և Արամ Ա-ի վիթխարի դերը լիբանանահայության պահպանման և գոյատևման դիտանկյունից:

«Ցավատանջ մատներով դողդոջ» երբ գրեցիր՝ «ձեզմով ապրեցա ես օր ու ցերեկ», հիմա իրենք՝ գիրքերդ հոգի՝ հոգիդ կ'ապրեցնեն հոգիներուն մեջ ոգիի երաշտեն այնքան հաճախանքով այցելված այսօրվան ապրողներուս և դեռ անվերջ գալուց շարաններուն Հայկա զավակներուն, որոնց աչքերուն մեջ հավետ կենդանի ու վառ կը մնան տեսիլքն ու սերը քու քերթողագրած «Հայ լեզուին», զոր իշխանաբար հռչակեցիր «Տունը հայուն»՝ աշխարհի չորս ծագերուն»¹⁵:

Ձարմանալի է, բայց տարօրինակ զուգադիպությամբ հայրենի ականավոր գրականագետներից մեկը՝ Հր. Թամրազյանն էլ խոստովանում է, որ Մուշեղ Իշխանի աշխարհն իր համար բացել են Սփյուռքի մանուկները՝ նրանք, որոնց ուղղված է ու առավել նշանակություն ունի հայրենանվեր գրողի խոսքը: Թեև զուսպ, սակայն դիպուկ է նրա խոսքը սիրված բանաստեղծի հանդեպ: «Անարատ հոգիների աշխարհը գրաված» բանաստեղծը՝ Մուշեղ Իշխանը, «...չի պատկանում բազմազան ու բազմերանգ աշխարհ ունեցող բանաստեղծների շարքին, ավելի շուտ՝ նա մի երգիչ է, որի մեղեդիները հյուսվում են գերազանցապես մի էական նյութի և աշխարհի ոլորտում, ու անվերջ աշխատում է նվաճել խորքը և այնտեղից, պատահում է, հանում է քանակով ոչ շատ, բայց իսկական գլուխգործոցներ, իսկական գոհարներ»¹⁶:

Մ. Իշխանը, իրավամբ, իր մեջ խտացնում է Սփյուռքի հայ գրականության ամբողջ տարեգրությունը: Փոքր-ինչ ձևափոխելով մեծ բանաստեղծի՝ Պ. Սևակի հայտնի միտքը Պ. Դուրյանի մասին՝ «Նա առաջինն էր և միշտ կմնա վերջինի կողքին»՝ վստահաբար կարելի է ասել, որ Մ. Իշխանը վերջինն էր առաջինների մեջ և միշտ կմնա առաջինը վերջինների մեջ: Գրականագետները (Վահե Վահյան, Հր. Թամրազյան, Վ. Գաբրիելյան, Ս. Դանիելյան, Գ. Սևան և այլք) նշել են Լ. Շանթի, Հ. Օշականի¹⁷, Ն. Աղբալյանի գեղագի-

¹⁵ Մուշեղ Իշխան, Ուխտագնացություն, Եր., 1994, էջ 215:

¹⁶ Հր. Թամրազյան, նշվ. աշխ., էջ 790:

¹⁷ Ինքը՝ Իշխանն էլ խոստովանում է Հ. Օշականի տիրական ազդեցությունը իր գրական մտքի ձևավորման վրա՝ գրելով. «Արիեստ սովորելու ձախողակ փորձերն ետք, հաջողեցա ինքզինքս նետել Կիպրոսի Մելգոնյան վարժարանը, ուր մնացի դպրոցական երկու տարեշրջան, աշակերտելով Հ. Օշականին: Ուսուցիչներես միայն իր անունը կը հիշատակեմ, որովհետև իր անունին հմայքն էր զիս հոն քաշողը և իր գրական ըմբռնումներն ալ հետագային խոր ազդեցություն ունեցան իմ կազմավորմանս մեջ» (ընդգծ.- Ս. Ս.), Մ. Իշխան, Ինքնակենսագրություն, Պեյուրթ, 1988, էջ 5:

տական ըմբռնումների և մանավանդ Վ. Թեքեյանի գեղարվեստի ազդեցությունների մասին: Փաստերն անշուշտ տեսանելի են և անառարկելի: Բայց սրանով արդյո՞ք չենք գնում մի այլ ծայրահեղության, արդյո՞ք չենք ուրանում Իշխանական ուրույն, բացառապես տարբեր աշխարհի ինքնության փաստը: Կարծում եմ՝ բազմավաստակ այս բանաստեղծի, արձակագրի, վիպասանի, հրապարակագրի, թատերագրի բարձրարժեքությունը նախ և առաջ նրա բացառիկության և ինքնուրույնության մեջ է, ու այս պարագայում ավելի շատ և շուտ պիտի խոսել գրական ազգակցության, քան ազդեցության մասին: Ահա մի փոքրիկ համեմատություն.

*Կյանքս ըրած կայարան, շուրջս՝ աղմուկ ու մարդիկ,
Կապած ծրար, պայուսակ, տեսած ամեն հաշվետակ՝
Անկյուն մը լո՛ւռ, ձեռնածակ՝ ես կը սպասեմ շարունակ
Երջանկության և բախտի ճեպընթացին բացառիկ:*

(Մ. Իշխան, «Սպասում», «Կրակը» գրքից)

*Անցա երկրներ, կտրեցի ծովեր,
Տեսա պերճ վայրեր, քաղաքներ չքնաղ,
Բայց ավա՛րդ. երբեք-երբեք չհասա
Իմ ճիպոտ-ձիով ոտք դրած շքեղ
Աշխարհներն հեռու և հեթիաթաջիղ:*

(Ավ. Իսահակյան,

«Երբ մանուկ էի, ընկերներիս հետ»)

Նման չե՞մ արդյոք սպասման տրամադրությունները, պերճ ու շքեղ տեսիլները: Մանավանդ որ Իսահակյանը իր երգը գրել է Փարիզում 1935-ին, երբ, դատելով նամակներից, մորմոքում էր հայրենիքի կարոտից, օտար ափերում չէր գտնում դարձի ճանապարհ, քանի որ դաշնակցական էր ու անցանկալի անձ հայրենի գաղափարագարների համար: Եվ, ի վերջո, անմարելի կարոտն էլ նրան պարտադրեց ամենավտանգավոր պահին, երբ արդեն սկսվելու էր 1937-ի հայտնի սպանդը, բռնել տունդարձի ճանապարհը՝ որոշ իմաստով հաշտվելով հնարավոր մահվան մտքի հետ: Մ. Իշխանի «Կրակը» գիրքը գրվել է նույն շրջանում, լույս է տեսել 1938-ին: «Սիրտս կ'արյունի աշխարհի ցավով»,– մորմոքում է Մ. Իշխանը, Ավ. Իսահակյանի քնարական հերոսը մորմոքում է «հիվանդ» ու «քրքրված» սրտի վերքերի ցավերից, «որ

տիեզերքի հըսկա վերքերի Կաթիլներիցն են»: Ընդհանրություններ կարելի է էլի գտնել, և ոչ միայն Մ. Իշխանի և Ավ. Իսահակյանի, այլև Մ. Իշխանի և Վ. Թեքեյանի, Սիամանթոյի, Գ. Վարուժանի¹⁸, Եղ. Չարենցի և էլի ուրիշների ստեղծագործություններում: Պարզապես ժամանակի պարտադրած կենսական, ինչպես նաև ազգային մտածողության ընդհանրությունները տաղանդով ու աշխարհայացքով միմյանցից տարբեր բանաստեղծներին ստիպում են երևույթները տեսնել միևնույն դիտանկյունից, մեկնաբանել հաճախ նույն մոտեցմամբ, անգամ երբեմն մոտ կամ նման պատկերներով: Մուշեղ Իշխանը և՛ նման, և՛ տարբեր է նախորդներից և ժամանակակիցներից, ինչպես վայել է ճշմարիտ բանաստեղծին: Եվ այս առումով, կարծում եմ, ավելի ճիշտ է մատնանշել տարբերությունները, քան ընդհանրությունները: Նա չունի Սիամանթոյի հզոր ու ողբերգական պոռթկումները, Իսահակյանի արտասովոր շիկացումները, Վարուժանի ու Չարենցի՝ աշխարհներ հայտնագործելու ձիրքը: Նա ստեղծում է իր տեսիլների յուրօրինակ աշխարհը, որ որքան տեսլային է, նույնքան էլ իրական, շոշափելի: Այդպիսին էր արդեն կորսված տան մորմոքով ապրելուն հավերժորեն դատապարտված քնարական հերոսը՝ հայ գաղթականը, որ կյանքի երազից անվերջ անցնում է երազի կյանքին ու չի գտնում սահմանագիծը, և ինչպես քերթողն է ասում.

*Կյանքն իր երազ մը եղավ, ինչպես երազն՝ իրեն կյանք
Չամատարած, մտերմիկ, բայց հավետ նոր ու անհուն.
Իր աչվներն անժանոթ ճաճանչներով հմայուն
Չբաժնեցին իրարմե ճշմարտություն ու հմայք:*

(«Կյանք և երազ» գրքից)

Առաջին գրքից՝ «Տուներու երգը»-ից, մինչև վերջինը՝ «Իրիկնալույս ռումբերու տակ» գիրքը, բոլոր ինը բանաստեղծական գրքերում («Կրակը», «Չայաստան» պոեմ, «Տառապանք», «Արևամար» և այլն) Իշխանն ստեղծում է իր անկրկնելի աշխարհը, որ կարճ կարելի է բնութագրել իբրև քնարական խոհ և խոհական քնարերգություն: Տարբեր առիթներով նա բնութագրել է հայրե-

¹⁸ Այսպես, Գ. Վարուժանի «Մեռնող բանվոր» և Մ. Իշխանի «Ալևոր պանդուխտը» բանաստեղծություններն ընդհանրություններ ունեն ոչ միայն թեթև ընդգծված դիպաշարի, այլև բանաստեղծական հարցադրումների, նպատակադրումների և զգայությունների առումով, բայց դարձյալ դժվար է խոսել ազդեցությունների մասին:

նական գրողներին՝ Աբովյանին, Ռաֆֆուն, Շիրվանզադեին, Տերյանին, Չարենցին: Միշտ անաչառ ու դիպուկ: Իսկ Յովի. Թումանյանի մասին գրել է. «Բանաստեղծն ամբողջ հոգիով թաթախված է հայկական արժեքների մեջ և օտար ազդեցություն գրեթե չի կրած: Ատոր համար ալ ամենեն հայ բանաստեղծն է՝ ոգիով, ոճով, նյութով և **զգալու եղանակով**» (ընդգծ. – Ս.Ս.): Վստահաբար կարելի է ասել, որ Մ. Իշխանը Հայ Սփյուռքի ամենեն հայ բանաստեղծն է: Մանավանդ՝ «զգալու եղանակով»:

Մ. Իշխանի մահից անցել է 2 տասնամյակից ավելի: Եվ, կարծում եմ, հայրենի գրականագիտությունը դեռ չի մարել իր պարտքը մեծ գրողի հանդեպ: Նրա ստեղծագործությունը, որի մի մասը շարունակում է սփռված մնալ մամուլի էջերում, դեռ սպասում է իր հմուտ ու պարտաճանաչ հետազոտողին՝ ապրեցնելու համար ոչ թե իրեն՝ անմահության ուղին մտած քերթողին, այլ նրա կերտած հերոսին՝ հային:

Անդրանիկ Ծառուկյան (ծնվ. է 1913-ին): Կյանքի վերջին տասնամյակը (1980-1989) անցկացրեց Փարիզում: Ծառուկյանը լիբանանահայ գրականությանը նոր գույն ու երանգ էր հաղորդում՝ ամբողջացնելով նրա դիմագիծը: Իր բանաստեղծական երկու գրքերով («Առազաստներ» և «Թուղթ առ Երևան» պոեմ) նա հաստատվեց իբրև բանաստեղծ, ապա անցավ արձակին՝ գրելով «Մոխրաման» վիպակը 1935-ին, որ վկայությունն էր նրա ծիրքի: Շուտով՝ 1955-ին, տպագրվեց նրա «Մանկություն չունեցող մարդիկ» ինքնակենսագրական վեպը, որը ավելի ուշ՝ 1980-ին, լրացվեց «Երազային Հալեպ» նույնատիպ, նախորդը շարունակող վեպով: 1960-1987 թթ. տպագրվեցին նրա «Հին երազներ, նոր ճամփաներ», «Վերջին աննեղը», «Սերը եղեռնի մեջ» վեպերը: «Մեծերը և ... մյուսները» հուշագրության ժողովածուն լույս տեսավ հետմահու՝ 1993 թ.: Թվարկումն արդեն վկայում է, թե Անդ. Ծառուկյանը կես դարից ավելի՝ 1930-ականներից մինչ մահը՝ 1989 թ., եղել է գրական դիրքերում՝ շատ բան տալով հայրենի գրականությանը: Ի տարբերություն Մ. Իշխանի՝ Ա. Ծառուկյանը առավել ընդունված և ճանաչված էր Մայր հայրենիքում: Նրան հռչակ բերեց հատկապես բանավիճային «Թուղթ առ Երևան» պոեմը՝ գրված Երկրորդ աշխարհամարտի ավարտին: Խորհրդահայ գրական գործիչ և բանաստեղծ Աբովը, որ հայտնի էր իր ծայրա-

հեղ ձախ թեքումներով և գաղափարների կտրուկ փոփոխություններով, 1943-ին հրատարակեց «Ճակատում և թիկունքում» կռվազան ժողովածուն, որում ներառված էր «Մենք չենք մոռացել» պլակատային բանաստեղծությունը: Նրանում Գ. Աբովը ուղղակի կոչ էր անում անդուլ պայքար մղել դաշնակցության դեմ, ՀՀԴ գաղափարախոսությունը համարում էր «Սև ֆաշիզմի» գաղափարաբանություն: Խառնվածքով տաք ու բորբոքուն Ա. Ծառուկյանի պատասխանը արդարացի ու ճշմարիտ բողոք էր՝ ուղղված խորհրդահայ ծայրահեղականի դեմ: Եվ նրա բանաստեղծական հարցադրումները պարունակում են ոչ միայն ընդվզման, այլև վիթխարի ցավի ու հուսահատության զգացողություն:

*Խփել է արդեն մեր կարկամ ուսին
Բռունցքը բախտի
Ու նորի՞ց բռունցք, ու նորի՞ց արյուն,
Եվ այն էլ, այն էլ երկրի՞ց հայրենի...¹⁹:*

Ծառուկյանի ձգտումը՝ «կարոտահար եղբայրների տաք սրտով» ճաքեցնելու «հայրենի երկրի սրտի սառույցը», որ «իբրև կարոտած մայր» հայրենիքն «Իր սիրտը բացի» բոլորի հանդեպ, չեղավ: Պատճառները հասկանալի են: Բայց ճաքեց հայրենի երկրի անտեղյակ «սրտերի սառույցը»: Գևորգաբովների փոխարեն, որ խորացնում էին Սփյուռք-Հայրենիք վիհը, նորերն արդեն գիտակցում էին ծառուկյանական ցավի ակունքը, ձգտում հասկանալ ու ցավակից լինել: Կարելի է ասել՝ Ծառուկյանը կամուրջ էր նետում Հայրենիքի և Սփյուռքի միջև: Անհրաժեշտ էր ավելի խորացնել մոլոր ու անտեղյակների համար անհայտ ցավի՝ եղեռնագարկ մարդկանց ողիսականի ճանաչման ընթացքը: Այս հարցում անգնահատելի է Ծառուկյանի և Մ. Իշխանի կենսագրական վեպերի դերը: «Մանկություն չունեցող մարդիկ» վեպը ողբերգության բացահայտման առումով, նաև այսպես կոչված կարոտի գրականության ամբողջացման իմաստով ունեցավ այն նույն նշանակությունը, ինչ նահանջի գրականության ստեղծման մեջ Շ. Շահնուրի հայտնի վեպը: Մ. Իշխանի «Հացի և լույսի համար», «Հացի և սիրո համար», «Մնաս բարով, մանկություն» և Ծառուկյանի վերոնշյալ վեպերը ոչ միայն եղեռնագարկ սերնդի գեղարվեստա-

¹⁹ Ա. Ծառուկյան, Թուղթ առ Երևան, Եր., 2001, էջ 30:

վավերագրական կենսապատումն են, այլև հայ ինքնակենսագրական վեպի ժանրային յուրահատկությունների հարստացման լավագույն նմուշները: Չնայած թեմատիկայի ընդհանրությանը (կարոտ, կորուստների ցավ, գալիքի պայծառ տեսիլներ և հույս, մարդասիրություն և այլն)՝ Լիբանանահայ գրականության այս երկու դասականները տարբեր էին միմյանցից: Նուրբ ու քնարական խառնվածքի տեր էր Մուշեղ Իշխանը, որի քնարականությունը խորքում բերում էր էպիկականության լայն խորհուրդ, տաք ու բորբոքուն խառնվածքի տեր Ծառուկյանի գրականությունը էպիկականության արտաքին քողի տակ բերում էր քնարականության նուրբ ու հուզիչ իրողություններ:

Լիբանանահայ գրականության մեջ իր ուրույն տեղն ու դերն ունի նաև **Էդուարդ Բոյաջյանը**, որի գրական ժառանգությունը ինչպես ծավալի, այնպես էլ գեղարվեստի առումով չունի նախորդ գրողների ընդգրկումը, սակայն «Ծննդավայր կորուսյալ» բանաստեղծությունների գրքով, մանավանդ «Չողը» պատմվածքների ժողովածուով, նաև «Տոմար տարագրի» գրքով եկավ լրացնելու Համաստեղի, Մնծուրու հողապաշտ գրականությունը: Բոյաջյանի արձակում ևս, ինչպես Մնծուրու մոտ, հայրենի հողը անձնավորված է, կենդանացած. զարմանալի կենսասիրություն բերող, իր մեջ ցավի, վշտի, կորստի, հոգի ու մարմին ունեցող կենդանի էակ, որ զարմանալիորեն ներծուլված է իր կենսականությունն ապահովող, իրենով ապրող իրական մարդկանց հետ:

Անցյալ դարի Լիբանանահայ գրականության բարձրակետը 50-70-ական թթ. էին, երբ ստեղծագործական ծաղկուն ընթացքի մեջ էին Մուշեղ Իշխանը, Անդրանիկ Ծառուկյանը, Էդուարդ Բոյաջյանը, Արմեն Դարյանը, Վեհանուշ Թեքեյանը, Ջարեհ Մելքոնյանը, Հայկ Նազգաշյանը, Սիմոն Սիմոնյանը, Վահե Վահյանը, Էդուարդ Տարոնյանը, Սմբատ Փանոսյանը, Վահե Օշականը: Նրանք իրենց նվիրումով ու տաղանդով ստեղծեցին գրական վիթխարի մի ժառանգություն՝ անվերջ կենդանի պահելով հայ ոգին ու լեզուն, ազգային դիմագիծը, որքան էլ բարեհաճ, բայց օտար ավերում:

Դժբախտաբար, ինչպես վերը նշվեց, Լիբանանի քաղաքացիական բախումները 70-90-ական թթ. ծանր ազդեցին Լիբանանահայ ընկերային և մշակութային կյանքի վրա: Գաղութն արագ մարման էր

զնուն: Բայց հարուստ ավանդներ ունեցող կյանքը թեև դժվարությամբ, բայց շարունակվում էր: 60-ականներին արդեն հներին են միանում նորերը՝ Չայկ Նագգաշյանը, Ջարեհ Մելքոնյանը, Արմեն Դարյանը: Իր տևական ստեղծագործական ուղին այսօր էլ շարունակվում է գրական կյանքի նահապետը՝ **Պողոս Սնաայանը**, որի ստեղծագործությունը վերածվել է լիբանանահայ գրականության ուղենիշի և չափորոշիչի: Նշված ժամանակում շարունակվում էր աչքի ընկնել **Գառնիկ Աղդարյանը** իր բանաստեղծության յուրահատկությամբ: Սակայն, ինչպես վերը նշեցինք, չնայած նահանջին՝ վաղ է մահախոսական գրել: Լիբանանահայ գաղութը թեև դժվարին ընթացքով, սակայն շարունակվում է մաքառել գոյատևման իր իրավունքի համար: Շարունակվում է նաև գրական կյանքը: Ասպարեզ են եկել նոր ու շնորհալի, խոստումնալից ուժեր: Արդեն բանաստեղծի լուրջ հայտ է ներկայացրել երիտասարդ **Սագո Արեյանը** իր երկու «Տարտան տողեր» և «Կանայի հարսանիքը» գրքերով: Նյութ ունենալով նախորդների թեման՝ օտար ափերում հայ թափառիկ մարդու որոնումներ, նահանջ հայկականությունից և այլն, Արեյանը նաև անդրադառնում է արաբական պայքարին՝ իբրև համամարդկային խնդիր: Սա, ինչպես նաև ավանդական ու արդի բանաստեղծական ձևերի միաձուլումը, նորություն է լիբանանահայ չափածոյում: Սակայն լուսեղեն երագները՝ դեռ Ս. Իշխանից եկող, շարունակվում են: Արեյանի քնարական հերոսն էլ մղվում էր դեպի երագների լուսեղեն հեռուն, «դեպի աղբյուրը լուսին»:

Լոյսերուն տակ երագելէն կը քալեն...

Պիտի փլի պատերազմի հին արձանը

Պիտի մեռնին յիշողութիւններս տխուր...

Ու լոյս պիտի ըլլայ ամէն ուր: (ընդգծ. – Ս.Ս.)

Գրական լուրջ հայտ է ներկայացնում նաև Սոնա Գրիգորյանի մուտքը: Առաջին գիրքը՝ «Եզերք» (լոյս տեսած 2006-ին), արդեն որոշակի ձիրքի վկայությունն է: Նրա արձակի նյութը՝ ներկայացված անսեթևեթ ոճով ու պարզ լեզվով, յուրօրինակ կենսապատում է արդի մարդու և կյանքի:

Նորերի հետ երիտասարդական ավյունով շարունակվում են քայլել նաև միջին և ավագ սերնդի գործիչները՝ Սարգիս Վահագնը, Արա Արծրունին, որոնց արձակ և դրամատիկական գործերը լուրջ նպաստ են լիբանանահայ արդի գրականությանը:

Արդեն նշել եմ, որ լիբանանահայ հարուստ ու բազմազան գրականությանը լիարժեք և ամբողջական, սպառիչ գնահատական տալ մեկ հողվածի շրջանակում դժվար է, գրեթե՝ անհնար²⁰: Այն լուրջ ու տևական տքնանք է պահանջում, որի կարիքն այսօր անպայման կա, մանավանդ այն պարագայում, որ Ազատ ու Անկախ Հայաստանի գոյությունը և հարատևությունը շատ չափով պայմանավորված են նաև նրանով, թե ինչպես կգարգանան կապերը Սփյուռքի հետ: Եկել է ժամանակը նաև, որ արդեն հայրենիքն էլ պիտի օգնի Սփյուռքին՝ իր և նրա զոյատևման համար: Առաջին քայլերն արդեն արվում են: Հրատարակվում են սփյուռքահայ գրողների երկերը, կատարվում են փոխայցելություններ, գործում է Սփյուռքի տակավին երիտասարդ նախարարությունը հայրենիքում: Սկիզբը խոստումնալից է: Հուսանք՝ նաև գալիքը:

Serj Srapionyan – *The Formation of the Armenian Diaspora and the Lebanese Armenian Literature* – This article tackles the problem of the formation of the Armenian Diaspora, its historical bases and reasons and similarities with the pre-genocide Armenian migrants.

The author assesses the significant role the Lebanese-Armenian literature played in characterizing the process of the formation and stabilization of the Lebanese Armenian as a community. The author draws parallels and uncovers the similar features of Mushegh Ishkhan and Andranik Tsarukyan, their bonds with the past, as well as with Western and Eastern Armenian literature, and the national image in the context of world literature with an eye to their humanistic essence. The article is an attempt to view the literature of the Lebanese Armenians in its broad and general terms.

Серж Срапионян – *Формирование армянской диаспоры и армяно-ливанской литературы* – В статье рассматриваются основы формирования армянской диаспоры и ее влияние на армянскую культуру, в частности, на литературу. Автор указывает на сходства и различия исторической и современной диаспоры, особенности произведений армяно-ливанских писателей Мушега Ишхана и Андраника Царукяна и их основательное влияние на формирование и развитие армяно-ливанской литературы.

Подчеркивается преэминентность литературы диаспоры, сформированной после геноцида, с восточно-армянской и западно-армянской.

²⁰ Միտումնավոր չմանրամասնեցիք Վահե Օշականի գրական գործունեության և վաստակի խնդիրը: Նկատի ունենալով նրա վիթխարի ու հիմնարար նշանակությունը լիբանանահայ գրական կյանքում՝ այն համարում եմք առանձին հետազոտության մյուս և թողնում հետազային՝ առավել հիմնավոր քննության ենթարկելու նպատակով:

ՄՅԵՐ ՀՈԿՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՄԱՑԱՆՑԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓՅՈՒՌՔ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Հայաստան-Սփյուռք գիտակրթական գործակցության համատեքստում իր ուրույն տեղն է զբաղեցնում ազգապահպան կարևոր գործոններից մեկը՝ հայագիտությունը: Մեր ժամանակներում, երբ հայության մեծ մասը սփռված է հայրենիքից դուրս, ու ազգային արժեքների պահպանումը խիստ անհրաժեշտություն է դարձել, ոչ միայն կարևոր է հայագիտության համահունչ զարգացումը, այլև հայագիտական արժեքների արդյունավետ մատուցումը: Այստեղ է, որ օգնության է գալիս համացանցը: Այն իր հնարավորություններով նպաստում է և՛ հանրությանը հայագիտության արժեքները անաչառ ներկայացնելու, և՛ այդ արժեքները խեղաթյուրելու գործին: Հաշվի առնելով այս զարգացումները՝ դիտարկենք համացանցում հայագիտության արժեքների թե՛ հավաստի, թե՛ խեղաթյուրված կամ լիովին կեղծված խնդիրներն ու անհրաժեշտության դեպքում հակադարձելու հնարավորությունները:

Վերջին շրջանում ավելանում և տարաբնույթ նյութերով են համալրվում Հայոց ցեղասպանության ու Լեռնային Ղարաբաղի հակամարտության խնդիրները գիտականորեն լուսաբանող կայքերը թե՛ ՀՀ-ում, թե՛ ԼՂՀ-ում, թե՛ Սփյուռքում: 2011 թ. հունիսից 2012 թ. հունիսը ընկած ժամանակահատվածում իրականացված մոնիթորինգի արդյունքում վեր են հանվել հայագիտական թեմաներով գիտահանրամատչելի բնույթի նյութեր պարունակող ոչ պաշտոնական 24, գիտահետազոտական կազմակերպությունների 19 և ՀՀ ու ԼՂՀ պետական կառույցների 15 հայկական կայքեր: Նախընտրությունը տրվել է առավել հիշատակվող կայքերին:

Պետական կայքերում հայագիտական բնույթի նյութերը ընդհանուր առմամբ համառոտ հոդվածների տեսքով են ու հիմնականում կոչված են ընդհանուր տեղեկություններ տալու Հայաստանի պատմության, Արցախյան հիմնահարցի ու Հայոց ցեղասպա-

նության խնդիրների վերաբերյալ: Հարկ ենք համարում նշել ՀՀ պետական համակարգի երկու կառույցների դերը, որոնք, համաձայն իրենց գործառնության, համեմատաբար ավելի նախանձախնդիր են իրենց համացանցային ռեսուրսներում հայագիտական բնույթի խնդիրները ներկայացնելու համար:

Առաջինը ՀՀ արտաքին գործերի նախարարության պաշտոնական կայքն է¹, որի նոր համալրված տարբերակում առկա է տեղեկատվության շաղկապված մատուցման մեթոդը: «Արտաքին քաղաքականություն»² բաժնում հայագիտական բնույթի տեղեկատվությունը ներկայացված է քաղաքագիտականի համատեքստում. «Ցեղասպանության ճանաչում»³ և «Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիր»⁴ ենթաբաժիններում բավականին սպառնիչ է մատուցված: Տպագիր տեղեկատվությանն էլ կից առկա են թեմային առնչվող էլեկտրոնային նյութեր, կայքերի հղումներ:

Մյուսը ՀՀ սփյուռքի նախարարության համացանցային ռեսուրսներն են: Եթե նախարարության պաշտոնական կայքն⁵ ու «Հայերն այսօր» համացանցային նախագիծը⁶ հիմնականում նախարարության գործունեության, Սփյուռքի վերաբերյալ տարաբնույթ տեղեկատվություն են տալիս, ապա համացանցային գրադարանը⁷ պարունակում է մեծ թվով հայագիտական գրականություն:

Ոչ պաշտոնական կայքերը բավականին համապարփակ են ներկայացնում հայագիտական թեմաները: Սակայն չլինելով գիտահետազոտական կազմակերպությունների հեղինակած կայքեր և չունենալով համապատասխան գիտական ներուժ՝ այս համացանցային ռեսուրսներում հայագիտական ուսումնասիրությունների փոխարեն ավելի շատ տեղադրվում են հրապարակախոսական ու լրատվական բնույթի հոդվածներ: Այս խմբի մեջ Սփյուռքի համացանցային ռեսուրսները հիմնականում հանդես են գալիս համայնքների պաշտոնական կայքերի ձևով: Այստեղ հարկ է առանձ-

¹ www.mfa.am

² www.mfa.am/hy/foreign-policy/

³ www.mfa.am/hy/what-is-genocide/

⁴ www.mfa.am/hy/artsakh/

⁵ www.mindiaspora.am

⁶ www.hayernaysor.am/

⁷ www.lib.mindiaspora.am

նացնել երկու կայք: Առաջինը 2006 թ. գործող «Հայ ազգ» հիմնադրամի նախագիծն է⁸, որին կանդրադառնանք համացանցի հանրագիտարանային ռեսուրսների դիտարկման ժամանակ: Իսկ ահա երկրորդը Վիկտոր Կոնոպլովի⁹ և Արթուր Մուրադովի 2010 թ. հեղինակած «Армяне в мире» նախագիծն է¹⁰: Այս ռուսալեզու պորտալը ոչ միայն ներկայացնում է հայկական Սփյուռքի անցուդարձը, այլև ունի բավականին գրագետ կառուցված հայագիտական ուղղվածության համացանցային գրադարան, որում ներկայացված է նաև Մոսկվայում ԼՂՀ ներկայացչության «Карабахский курьер» տեղեկատվական-վերլուծական ամսագիրը:

Գիտահետազոտական կայքերի խմբից հայագիտական ուսումնասիրությունների էլեկտրոնային հարուստ պաշարներ են պարունակում Մատենադարանի¹¹, ՀՀ ԳԱԱ «Հիմնարար գիտական գրադարան»-ի¹², Երևանի պետական համալսարանի Սարգիս և Սարի Իզմիրլյանների անվան գրադարանի¹³, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի պաշտոնական կայքը¹⁴ և համացանցային հայագիտական նախագծերը («Հայոց պատմություն»¹⁵, «Հայկական հնագիտություն»¹⁶, «Հայոց լեզու և գրականություն»¹⁷, «Հայկական նշակույթ»¹⁸, «Հայկական կրոն»¹⁹, «Հայոց ցեղասպանություն»²⁰, «Հայկական սփյուռք»²¹), Հայաստանի ազգային գրադարանի²², Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի²³, Հայաստանի Ազգային արխիվի²⁴, «Հայ մատեն-

⁸ St u hayazg.info

⁹ St u kanepyan.ru/

¹⁰ St u diaspora-world.info/index.php?option=com_content&view=article&id=2766&Itemid=62&lang=ru

¹¹ www.matenadaran.am

¹² www.flib.sci.am

¹³ lib.yasu.am/

¹⁴ www.armin.am

¹⁵ www.historyofarmenia.am/

¹⁶ www.armenianarchaeology.am/

¹⁷ www.armenianlanguage.am/

¹⁸ www.armeniaculture.am/

¹⁹ www.armenianreligion.am/

²⁰ www.armeniansgenocide.am/

²¹ www.armeniandiaspora.am/

²² www.nla.am

²³ www.genocide-museum.am

²⁴ www.armarchives.am

նագրության թվանշային գրադարան»-ի²⁵, «Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող» ՀԿ-ի պաշտոնական²⁶ և հայկական ճարտարապետության գիտահետազոտական²⁷ կայքերը:

Սփյուռքի հայագիտական կենտրոնների, գրադարանների համացանցային ռեսուրսները դիտարկելիս կցանկանայինք մատնանշել wordpress բլոգ հարթակում ստեղծված «haybook» համացանցային գրադարանը²⁸, որը լավագույնս կենտրոնացրել է հայագիտական ուսումնասիրություններ պարունակող տարբեր կայքերի թեմատիկ հղումները:

Առանձին կարելի է խոսել համացանցում Հայաստան-Սփյուռք գիտակրթական գործակցության համատեքստում իր ուրույն տեղը զբաղեցնող Հայկական վիրտուալ համալսարանի²⁹ մասին, որը համացանցի միջոցով հայեցի կրթությունը հասու դարձրեց աշխարհասփյուռ հայությանը:

Քննության առնելով նշված համացանցային ռեսուրսները՝ անշուշտ պետք է արձանագրել օրեցօր նկատվող որակական աճը, սակայն կան խնդիրներ, որոնք շարունակում են մնալ չլուծված, չնայած համացանցում հայագիտության ներկայացվածության շղթայի մեջ կարևոր և բաղկացուցիչ տարրեր են:

Հիշյալ հայկական կայքերում բավականին թույլ է դրված նույն խնդրով զբաղվող հայկական այլ կայքերի հղումները ներկայացնելու գործընթացը: Առաջին հայացքից այս անցան բացթողումը լրջորեն խոչընդոտում է հայագիտության արժեքների համացանցային քարոզչությանը: Ավելին, որոնողական համակարգերը, ինչպես օրինակ՝ google-ը, իր որոնման էջերում որևէ կայք տեղաբաշխելիս մեկ կայքի հղումը մյուս կայքում ունենալու ցուցանիշը ևս շատ է կարևորում³⁰: Այս հանգամանքը նպաստում է անհրաժեշտ կայքի տեղը վարկանիշային սանդղակում տեղաբաշխելու

²⁵ www.digilib.am

²⁶ www.raa.am

²⁷ www.armenianarchitecture.am

²⁸ Տե՛ս haybook.wordpress.com

²⁹ Տե՛ս www.avc-agbu.org

³⁰ Տե՛ս §Основные сведения о Google| -www.google.com/support/webmasters/bin/answer.py?hl=ru&answer=70897

գործին: Ուստի կցանկանայինք առանձնացնել մի շարք համացանցային ռեսուրսներ, որոնցում հնարավորինս ամբողջական են տրված հայագիտությանը առնչվող կազմակերպությունների համացանցային հղումները: Առաջին հերթին նշենք wikipedia-ի անգլերեն բաժնում տեղ գտած «Հայագիտություն» հոդվածը³¹, որում ոչ միայն նշված են անցյալի և ներկայի նշանավոր հայագետների անունների ցանկն ու նրանց կենսագրական տվյալները, այլ նաև ներկայացված են հայագիտական մեծ թվով կազմակերպություններ, որոնց անվանումներին կցված արտաքին հղումներով հնարավոր է մուտք գործել վերջիններիս պաշտոնական կայքերը: Հաջորդը ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի պաշտոնական կայքն է, որի «Հղումներ» բաժնում³² ներկայացված են համացանցում հայագիտական ուղղվածության նյութեր պարունակող, ինչպես նաև նեղ մասնագիտական ավելի քան 70 կայքերի հղումներ: Իր տեսակի մեջ ուրույն տեղ է զբաղեցնում wordpress բլոգ հարթակում ստեղծված «Հայկական գրադարաններ ու գրադարանային հավաքածուներ» համացանցային նախագիծը³³: Այս կայքում տեղ են գտել Հայաստանում և ևս 9 այլ երկրներում առկա հայկական գրադարանների մասին ընդհանուր ու կոնտակտային տվյալներ, ինչպես նաև առանձին գրադարանների համացանցային ռեսուրսների հղումներ: Հայաստանյան և Սփյուռքի հայկական հայագիտական գիտակրթական կառույցների համացանցային ռեսուրսների հղումները ամբողջացնող մեծ պաշար ունի հայկական կայքերի վարկանիշավորում և վիճակագրություն անցկացնող «Circle.am» համացանցային վիճակագրական կայքը, որում գրանցված են ավելի քան 100 հայագիտական գիտակրթական և Սփյուռքի 30-ից ավելի կազմակերպությունների կայքերի հղումներ³⁴:

Հայագիտական ուղղվածության նշված կայքերից շատերը չափազանց ժլատ են էլեկտրոնային գրականության հասանելի տարբերակները իրենց կայքերում տեղադրելու հարցում: Եթե

³¹ Տե՛ս «Armenian studies» - en.wikipedia.org/wiki/Armenian_studies

³² Տե՛ս www.armin.am/am/links

³³ Տե՛ս www.gradaran.org

³⁴ Տե՛ս www.circle.am

հայ դասական մատենագրության աշխատությունների մեծ մասի տարբեր հրատարակությունները այսօր հնարավոր է համացանցում գտնել, ապա նոր ուսումնասիրությունների հարցում վիճակը գոհացուցիչ չէ: Հայագիտական ինստիտուտներից շատերը բավարարվում են կա՛մ իրենց հրատարակած գրքի կազմի նկարն ու մեկ-երկու տող մեկնաբանություն տեղադրելով, կա՛մ էլ դրանց կողքին ավելացնում են շատ աննշան թվով հասանելի գրքեր ու հոդվածներ: Սրանց կողքին առկա են նաև վճարովի սկզբունքով հայագիտական ուսումնասիրությունների էլեկտրոնային տարբերակները մատուցող կայքեր:

Համացանցում իրականացվող հակահայ «գիտական» կեղծարարությանը անդրադարձող մեր դիտարկումները ցույց են տալիս, որ վերջին տարիներին, առավել քան թուրքական կողմը, ակտիվացել են Ադրբեջանի կեղծարարները: Երեք տարվա մեր ուսումնասիրությունները վկայում են, որ համացանցում հակահայկական «գիտական» քարոզչություն իրականացնող կայքերի թիվը տարեկան ավելանում է 2-3-ով: Կան կայքեր, որոնք փակվում կամ տարվա ընթացքում նոր նյութերի համալրման հարցում առաջընթաց չեն արձանագրում: Այս գործընթացին զուգահեռ հատկապես ադրբեջանական դաշտում հանդիպում ենք կայքերի, որոնք ապատեղեկատվության գլխավոր մատակարարներ են: Օրինակ՝ արցախյան թեմատիկայում որպես գլխավոր ուղեմիջային կեղծարար հանդես է գալիս www.karabakh-doc.azerall.info կայքը: Այն պարունակում է բավականին մեծ թվով հակահայ տպագիր նյութեր, որում արցախյան թեմատիկան ընդգրկող բաժիններից բացի՝ կարելի է առանձնացնել «Հայություն» բաժինը³⁵, որը յուրօրինակ հակահայկական «հետազոտությունների» շտեմարան է: Նմանատիպ բաժինները ադրբեջանական կայքերում հետզհետե սկսել են ավելանալ, որոնց նյութերը, սակայն, հիմնականում կա՛մ այս, կա՛մ էլ ադրբեջանական «IRS-ժառանգություն» անսագրի պաշտոնական կայքից³⁶ են: Եթե այս ամենին ավելացնենք այն, որ 2010 թ. օգոստոսին Բաքվի պետական համալսարանում հայտարարվեց «Հայկական հետազոտություններ»

³⁵ Տե՛ս www.karabakh-doc.azerall.info/ru/armyanstvo/armyanstvo-cont.htm

³⁶ Տե՛ս www.irs-az.com

րի կենտրոն» բացելու որոշման մասին³⁷, ապա պարզ է դառնում, թե ինչքանով է ադրբեջանական կողմը հետաքրքրված հայագիտության բնագավառում սեփական «հետազոտությունները» անցկացնելու ուղղությամբ: Այս հարցում հետ չեն մնում նաև թուրքերը, որոնք համացանցում հանդես են գալիս հիշյալ բնագավառի վերաբերյալ առնվազն թուրքալեզու և անգլալեզու երկու կայքերով: Մեկը պատկանում է Անկարայի Հայկական հետազոտությունների ինստիտուտին (The Institute for Armenian Research)³⁸, իսկ մյուսը՝ Թուրքիայի պատմական ընկերությանը (Turkish Historical Society)³⁹: Ի տարբերություն ադրբեջանական նշված կայքերի՝ այս երկու թուրքական կայքերը հասանելի էլեկտրոնային գրականության ավելի համեստ պաշար են ներկայացրել, չնայած թե՛ անգլերեն, թե՛ թուրքերեն կայքերում հրատարակված բազմաթիվ ուսումնասիրությունների վերնագրեր կան:

Հակահայ «գիտահանրամատչելի» բնույթի նյութեր կարելի է տեսնել նաև wikipedia-ում: Այստեղ Հայոց ցեղասպանության և արցախյան թեմատիկայով շրջանառվող հոդվածների մեծ մասը, որոնք հիմնականում անգլերեն, ռուսերեն, ֆրանսերեն, իտալերեն ու գերմաներեն, մասամբ արաբերեն ու պարսկերեն են, հայամետ է, սակայն ժամանակ առ ժամանակ այստեղ ևս հանդիպում են թե՛ հակահայ հոդվածներ, թե՛ հայամետ հոդվածներում առանձին խմբագրումների փորձեր: Wikipedia-ում լրջորեն քննարկվում են նաև պատմագիտական կեղծարարությունների թեմայի շուրջ առկա հարցերը: Երբ 2008 թ. հանրագիտարանի ռուսերեն մասում հայտնվեց բավականին հիմնավորված ու ադրբեջանական կեղծիքների ընդհանուր կողմերը լուսաբանող «Фальсификация истории в Азербайджане» հոդվածը⁴⁰, ադրբեջանական կողմը որպես «պատասխան» ներկայացավ իր՝ դեռևս ուսումնասիրության կարող «Ревизионистские концепции в армянской историографии» վերնագիրը կրող հոդվածով⁴¹: Շարունակելով քննարկում-

³⁷ Տե՛ս «В БГУ начнет функционировать центр Армянских исследований» - bsu.edu.az/ru/news/v_bqu_nacnet_funkcionirovaty_centr_armanskix_issledovaniy

³⁸ Տե՛ս www.eraren.org

³⁹ Տե՛ս www.ttk.org.tr

⁴⁰ Clck.ru/W/1FO4h (հղումը սեղմ տարբերակով է)

⁴¹ Clck.ru/W/1FO5n (հղումը սեղմ տարբերակով է)

ները՝ հայկական կողմի խմբագիրները, նորից նախահարձակ լինելով, հրապարակեցին «Ревизионистские концепции в азербайджанской историографии» վերնագրով նոր հոդված⁴²: Սա լավագույն օրինակ է այն պարզ ճշմարտության, որ միայն մեր նախահարձակ քայլերը կարող են լավ հենք հանդիսանալ հետագա քարոզչական գործողությունների համար: Այնուամենայնիվ, Wikipedia-ն շարունակում է մնալ որպես ոչ արժանահավատ աղբյուր ունեցող համացանցային ռեսուրս թեկուզ միայն այն պատճառով, որ այստեղ հնարավոր է խմբագրել ցանկացած նյութ: Wikipedia-ի զուգահեռ կիրառման հետ միասին որպես հարցի լուծում տեսնում ենք Wikipedia-ի հարթակի վրա ստեղծված ու արդեն հիշատակված «Հայ ազգ» ռուսալեզու հանրագիտարանային պորտալի առավել ակտիվացումը: Առաջին հերթին ուրախալի է այն փաստը, որ պորտալը ստեղծվել է հայկական սփյուռքի հենակետերից մեկում՝ Դոնի Ռոստովում, «Հայ ազգ» հիմնադրամի կողմից⁴³: Ի տարբերություն Wikipedia-ի՝ hayazg.info-ում կան ադմինիստրատորներ, որոնք միայն իրենք են կարող պորտալում նյութեր ավելացնել և խմբագրել, իսկ ցանկացած օգտատեր իր հերթին կարող է նրանց պորտալի էլ-փոստի համակարգի միջոցով նյութեր ուղարկել և վրիպակների մասին տեղեկացնել: Դրա շնորհիվ ունենք հայագիտական ուղղվածության բազմահազար նյութեր: Առհասարակ պետք է նշել, որ այս պորտալը սփյուռքի՝ մեր ուսումնասիրած համացանցային ռեսուրսներից միակն է, որ իր ուղղվածությամբ զուտ հայագիտական է:

Վերադառնալով հակահայկական «գիտահանրամատչելի» քարոզչության խնդիրներին՝ նշենք, որ ադրբեջանական համացանցային տիրույթում կրկին շարունակվում են ի հայտ գալ հայալեզու հակահայկական կայքեր: Տխրահոռչակ www.armenia.az-ի կողքին 2011 թ. մարտից ավելացել է նաև այսպես կոչված «Լեռնային Ղարաբաղի ադրբեջանական համայնք»-ի պաշտոնական կայքը՝ www.karabakh.az-ը: Այստեղ ևս չեն մոռացել «գիտական» կեղծիքների մասին՝ «քննության առնելով» արցախյան թեմատիկային վերաբերող պատմամշակութային բնույթի բազում հարցեր: Ադրբեջանական կողմն իր կեղծիքներին հավաստիության

⁴² Clck.ru/W/1FO6N (հղումը սեղմ տարբերակով է)

⁴³ Տե՛ս www.whois.net/whois/hayazg.info

փայլ տալու համար շարունակում է ավելացնել օտարազգի գիտնականների ու գիտահետազոտական ինստիտուտների հետ համատեղ ուսումնասիրությունների հրատարակումը: Այսպես, 2009 թ. ապրիլի 1-3-ը Ադրբեջանի գիտությունների ակադեմիայի և Գերմանիայի հնագիտական ինստիտուտի հետ համատեղ կազմակերպած «Ադրբեջան՝ արևելքը և արևմուտքը կապող երկիր: Գիտելիքների և տեխնոլոգիաների փոխանակումը «առաջին գլոբալիզացիայի» շրջանում մ.թ.ա. 7-4-րդ հազ.» խորագիրը կրող գիտաժողովի արդյուքները ամփոփող 100 էջի հասնող անգլերեն և ռուսերեն մի պատկերազարդ գրքույկ ստեղծվեց, որն այսօր էլ տեղադրված է գերմանական ինստիտուտի պաշտոնական կայքում⁴⁴ և այնտեղից էլ որպես սկզբնաղբյուր հղված է wikipedia-ում ադրբեջանցիների հեղինակած «Археология Азербайджана»⁴⁵ հոդվածում, որը լի է աղաղակող կեղծիքներով:

Այսպիսով, ի մի բերելով համացանցում հայագիտական ուղղվածության նյութերի ներկայացվածությունը ապահովող կայքերի ներկա դրական և բացասական կողմերը՝ նշենք, որ, չնայած նման կայքերի առատությանը, ինչպես նաև բավականին հաջող կայքերի առկայությանը, այնուամենայնիվ, կարծում ենք, որ մեր արձանագրած խնդիրները համալիր ու համակարգված լուծում են պահանջում:

Այս դաշտը Հայաստան-Սփյուռք հարաբերությունների մեջ համագործակցության լուրջ և համատեղ խթանի կարիք ունի: Անհրաժեշտ է նախ և առաջ գործել փոխհամաձայնեցված: Թե՛ Հայաստանում, թե՛ Սփյուռքում գոյություն ունեցող ու պատրաստման փուլում գտնվող համացանցային ռեսուրսները անհրաժեշտ է փոխադարձ ճանաչելի դարձնել շնորհանդեսների, սոցցանցերի ընձեռած հնարավորությունների միջոցով: Դրանք կապահովեն Հայաստանում և Սփյուռքում հայամետ կայքերի հեղինակների ուղղորդումն ու համատեղ նախագծերի իրականացումը: Արդյունքում հայագիտական ուղղվածության կայքերը փոխկապակցված կլինեն ու ավելի հասու հնարավոր լսարանի համար:

⁴⁴ Տե՛ս «Азербайджан – страна, связывающая восток и запад. Обмен знаниями и технологиями в период «первой глобализации» VII-IV тыс. до н. э.» - www.dainst.org/medien/de/Baku.pdf :

⁴⁵ «Археология Азербайджана» - clck.ru/W/1FO6h :

Mher Hovhannisyán – *Armenological sources of the Internet in the context of Armenia-Diaspora educational collaboration.* – The article speaks about the problems of representation of Armenological materials on the Internet in the context of Armenia-Diaspora educational collaboration. The author highlights the thematic materials represented on the websites of state, unofficial, scientific-educational institutions, as well as on blogs and Wikipedia. The achievements and lapses of the most-visited websites of Armenological sites are pointed out and assessed.

Мгер Оганнисян – *Арменоведческие интернет-ресурсы в контексте научно-образовательного сотрудничества Армения-Диаспора.* – В статье рассматриваются вопросы представления арменоведения в интернете, занимающие особое место в научно-образовательном сотрудничестве Армения-Диаспора и являющиеся важным фактором в вопросе сохранения нации. Были рассмотрены интернет-ресурсы государственных, негосударственных, научно-исследовательских учреждений, также различные блоги и тематические материалы в Википедии. В результате мониторинга выявлены более посещаемые сайты и указаны существующие достижения и упущения в этой сфере.

2. ՀՈՒՎԱԾՆԵՐ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՐԾՐՈՒՆ ԱՎԱԳՅԱՆ

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԵՔԸ

Աշխարհի շատ ժողովուրդների համար գրականությունը գեղեցիկը պատկերելու միջոցներից մեկն է՝ պերճացում, կյանքի արտահայտություն, ժամանցի պարագա: Հայ մարդու համար այն հոգևոր սնունդ է, հոգեկան հաց, մեր ժողովրդի էությունն ու կոչումը այս աշխարհում հաստատող միջոց, հայ ոգու գոյատևման կարևոր ազդակ, հային հայ պահող խարիսխներից մեկը, աշխարհի անարդարությունների դեմ ընդվզող աղաղակ, նաև ապրել ուզող ժողովրդի հուժկու կանչ: Պատմությունը ժողովրդի անցած մարմնավոր կյանքի իրողություններն է փաստում, գրականությունը ժողովրդի ոգեղեն արժեքներն է արձանագրում, նաև ոգու՛ն պատմությունը, մեր պարագայում՝ **հայ ոգու** պատմությունը: Այն ոգու, որ Վահան Թեքեյանն անվանում էր «հողմակոծ ծառը վսեմ», այն ոգու, որ մերթ «անյոյս լացալ» ու մերթ «մրկաթել մինչև ի փառք խոյացալ», այն ոգու, որ «զերդ զինուոր մ՛ որ կը կռուի անդադար»¹:

Հայ գրականությունը իր սկզբնավորման օրվանից եղավ ու մնաց հայ կյանքը ուղղորդողներից մեկը: Նա է, որ զարկ տվեց աշխարհիկ մտածողությանը, վերածնության սկիզբը դրեց (Նարեկացուց մինչև Քուչակ), նա է, որ ձև ու մարմին տվեց և գեղարվեստական խոսքի մակարդակին բարձրացրեց աշխարհաբարը, տարածեց լուսավորական գաղափարներ: Սրա շնորհիվ է, որ մեր գրակա-

¹ Տես Վ. Թեքեան, Կեսգիշերէն մինչև արշալոյս, Փարիզ, 1919, էջ 40:

նությունը, այսինքն՝ գեղարվեստական խոսքը, ներառում է ժողովրդական զգացումների, մտքերի, ազգային բաղձանքների ու լեզվական արտահայտչամիջոցների բարձրագույն դրսևորումները, որ իր լուսավոր մատյաններում պատասխանել է այն հարցերին, թե ով ենք մենք, որտեղից ենք գալիս և ուր ենք գնում: Հարցեր, որոնք պայմանավորել են ոչ միայն մեր գրականության բովանդակությունը, այլև նրա արտահայտման ձևերը: Փաստ է, որ Կորյունի, Եղիշեի, Խորենացու, Ագաթանգեղոսի, Բուզանդի, Փարպեցու և մեր մյուս պատմիչների գրքերը որքան պատմություն, նույնքան էլ գրականություն են բառի ամենալայն առումով, Խորենացու խոսքերով ասած՝ «փոքր ածուխ»՝ «... բոլոր հյուսիսային ազգերի մեջ վեհագույնի»՝ հիշատակման արժանի գործերի **ընտրովի, մշակված ու նպատակադիր** գեղարվեստականացված շարադրանքներ:

Այո՛, գեղարվեստական հանդերձավորում, մտքի թռիչք, ընդհանրացումների խտացում, պատկերավորման բազմաձևություններ: Այսուհանդերձ, որքան էլ զարմանալի է, հետագայում մեզանում ստեղծված գրականությունը ավելի քիչ զբաղվել է հենց գեղարվեստի մտահոգություններով, որը բացատրվում է մեկ միակ պատճառով՝ պետականության բացակայությամբ, որը հայ գրականությանը ստիպել է զարգանալ յուրահատուկ մի առաքելության՝ տալ ժողովրդական ընդհանուր մտահոգությունների ու ազգային-քաղաքական կյանքի ոչ այնքան գեղագիտական, որքան գաղափարական պատկերը: Սկսելով «հասարակ լեզվով» ու «պատմածների ճշմարտությամբ» ներկայացվող ասքերի ու բանահյուսական չափածոյի օգտագործումներից (Խորենացի)՝ այդ գրականությունը բարձրացավ մինչև ազգային ինքնուրույնության ու ազատաբաղձության գաղափարների արծարծումներ (Աբովյան), հասավ անցնելիք ուղիների որոնման ու գործունեության հստակ մատնանշումների (Րաֆֆի), ժողովրդական իմաստնության (Թումանյան) ու հայրենամվիրման պատգամների տարփողումների (Վարուժան, Սիամանթո, Չարենց, Դեմիրճյան):

Գրականությունը, եթե հաշվի չառնենք ժողովրդական բանահյուսական նյութը, իր բնույթով անձնական ստեղծագործության արդյունք է, սակայն անկախ այն բանից, թե ինչ է գրել հայ գրո-

ղը, թե ում է դարձրել իր հերոսը և ինչ գաղափար ու նվիրում է շոշափել, իր ընդհանրության մեջ նրա համար հարցերի հարցը եղել ու մնացել է հայրենիքի ճակատագիրը, այլ խոսքով ասած՝ **հայրենիքը հայ գրականության գլխավոր հերոսն է**: Ամեն բանից վեր և ամեն բանից առաջ Հայրենիքն ու նրա ճակատագիրը. սա հայ գրականության ամենաբնորոշ առանձնահատկությունն է, որը նրան գատում է աշխարհի շատ ժողովուրդների գրականություններից: Այն հայրենիքը, որն այնքան տարուբերվել է կյանքի ու մահվան միջև, բզկտվել տառապանքի բավիղներում, այն հայրենիքը, որը որպես մշտական ուղեկից ունեցել է սովը, թշվառությունը, թալանն ու բռնությունը: Բայց միշտ կամ գրեթե միշտ հայ գրողը հնչեցրել է ապրելու և հարատևելու իր հավատը, որն այնքան համահունչ է եղել իր ժողովրդի կյանքի ընթացքին՝ միշտ դեպի վեր, **դեպի Ազատն Մասիս**, այսինքն՝ Արարատն ի վեր՝ մեր ազգային գոյության ու ոգու մարմնացման այդ բարձրագույն խորհրդանիշը: Եվ պատահական չէ, որ Արարատը մեր գրականության մեջ պանծացվել է բազում երանգավորումներով: Այն Արարատը, որ Րաֆֆու «Սամվել» վեպում պատկերվել է որպես Արարատյան դաշտի իմաստ, ասել է թե՛ կյանքի հավերժացում, Կոստան Ջարյանի վեպում՝ «Մեծ պարոն», Համաստեղի պատմվածքում՝ «աշխարհի ամենազեղեցիկ լեռը», Չարենցի պոեմում՝ «անհաս ու վեհանիստ», մեր «գոյության խորհուրդը», մեր ողջ պոեզիայում՝ ամեն մի հայի համար՝ կյանքի տեսիլք ու իմաստ, թաքնված երգ, շողացող լույս, քարացած մեղեդի ու ներդաշնակություն:

Մեր լավագույն գրողներից մեկը՝ նույն Կ. Ջարյանը, գրել է. «Արարատը և Հռիփսիմեն Հայոց աշխարհի հոգեկան այն երկու բևեռներն են, որոնց միջև ընթանում է ամբողջ հայ ժողովրդի պատմությունը»²:

Այդ պատմությունն ընթացել է տառապանքի ու հերոսացման բավիղներով: Մեզանից դեռևս հազար վեց հարյուր տարի առաջ Խորենացին ողբում էր հայ կյանքի այդ դժվարին ընթացքը, ինչպես նաև «Հայոց թագավորության Արշակունյաց ցեղի դադարը», որի պատճառը ոչ միայն արտաքին թշնամիներն էին, այլև մեր «խստասիրտ ու չար թագավորները», «ինքնահավան» ուսուցիչ-

² Կ. Ջարյան, Նավը լեռան վրա, Եր., 1985, էջ 522:

ները, «սնափառ» կրոնավորները, «ծուլ» աշակերտները, «ագահ» իշխանները, «տմարդի» դատավորները³: Այսպես այդ հայրենիքում, գրեթե միշտ, Հովհ. Թումանյանի խոսքերով ասած, «թալանել են մերոնք ու այլերը»⁴:

Այս ամենը ստիպել է հայ գրողին «առագաստի երգերի» փոխարեն «սգավոր խոսք ասել» (Խորենացի), որ բանաստեղծորեն ձևակերպվել է նաև Չարենցի «Հարդագողի ճամփորդները» գործում, երբ գրողը ստիպված է եղել երգել հայ կյանքի «գորշ օրերի» տաղտկությունը, կյանքի անմխիթար զառանցանքը, սերունդների «երագորեն-հոգեվար» երթը պատմության քառուղիներում, արտահայտել այն միտքը, որ հայ սերունդների աչքերը այդպես էլ «արևներ չտեսան».

*Ես ուզեցի երգել գովքը աստծու,
Երգել փառքը պայծառ սիրո ու հացի՛.
Սիրտս լցվեց... բայց չգիտեմ, թե ինչու –
Գորշ օրերի տաղտկությունը երգեցի...⁵*

Հայ կյանքի ընթացքը երբեք ներդաշն չի եղել: Անտառներից ու ձորերից, անապատներից ու տափաստաններից դարեր շարունակ ներխուժել են պարսիկներն ու բյուզանդացիները, թամերլաններն ու չինգիզխանները, արաբները, սելջուկներն ու թաթարները: Հայ կյանքը բզկտվել է այդ հորդաների ավերներից: Եվ հայ գրողը ստիպված է եղել գրելու նաև բողոքի ու նգովքի խոսքեր:

Անգամ Սեծարենցի նման քնարական ու մելամաղձ բանաստեղծը գրել է.

*Քոյր, մոտեց՛ուր իմ ձեռքին
Աստվածարոցն հըրացան
Ձի ամե՛ն բան ինձ կրկին
Կը հիշեցնե վրեժն արյան...⁶*

Սակայն մեր գրականությունը ի վերջո քրիստոնյա ժողովրդի գրականություն է, հետևաբար՝ լցված աստվածաշնչյան պատգամներով: Բարու և ազնիվի, նվիրման ու գեղեցիկի տարփողու-

³ Տե՛ս Մ. Խորենացի, Հայոց պատմություն, Եր., 1981, էջ 315-316:

⁴ Հովհ. Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու, Եր., 1988, էջ 251:

⁵ Եղ. Չարենց, Ընտիր երկեր, Եր., 1955, էջ 141:

⁶ Մ. Սեծարենց, Երկեր, Եր., 1986, էջ 134:

մը այդ գրականության հատկանշական կողմերից է, որը նրան հաղորդել է ոչ միայն մարդասիրական, այլև խաղաղասիրական բնույթ: Ասենք նաև, որ քրիստոնեության ընդունումը լոկ հավատքի հարց չի եղել հայության համար: Այն նաև առաջադիմական մտքի, ավելի բարձր բարոյական չափանիշների, մշակութային առաջընթացի խնդիր է հետամտել: Ահա թե ինչու նվաճման, այլ ժողովուրդներին ստրկացնելու գաղափարները հայ գրականության մեջ երբեք չեն պանծացվել: Անգամ արշավանքի մեջ գտնվող հայ թագավորը ուրիշ ժողովուրդներին տիրելու մասին չէ, որ մտածել է, այլ մորմոքվել է իր հայրենի եզերքի կարոտներով:

*Ո՛ տայր ինձ զծուխն ծխանի
եւ զառաւօտն նաւասարդի...⁷*

Բռնությունը, հարստանալու մոլուցքը, իշխանատենչությունը հայ գրականության բովանդակությունը չեն կազմել երբեք: Մինչդեռ ազատաբաղձության գաղափարները հնչել են մշտապես ու իմաստավորվել են ինքնուրույն պետականության, առաջադիմության, արվեստների ու մշակույթների զարգացման առաջադրանքներով: Ազգակիր ու մշակութակիր այդ իրողությունների շնորհիվ է, որ հաճախ իրենք՝ նվաճողները, նվաճվել են տեղացիների կողմից, մերվել ու անգամ ձուլվել նրանց, որի մեջ նվազ չէ ավելի բարձր մակարդակում գտնված ինչպես մեր ազգային ողջ մշակույթի, այնպես էլ հայ գրականության դերը:

Ազատաբաղձության ակունքները հայ գրականության մեջ ձգվում են մինչև մեր բանահյուսական պատառիկները՝ Հայկի, Տիգրանի, Արտաշեսի ժամանակների դեպքերը: Հենց նրանց ու նրանցից հետո եկած ժամանակների ու գործերի մասին խոսելիս էլ մեր հանճարեղ Քերթոզահայրը հնչեցրել է հայ կյանքի բոլոր ժամանակների համար կենսունակ ամենամեծ գաղափարը՝ ազգային «մեկ փարախի մեջ ժողովված» լինելու անհրաժեշտությունը՝ աշխարհի «զայլերից զգուշանալու համար»⁸: Այդ ազատաբաղձության ու միասնության պատգամները նոր թափով ու նոր որակներով ի հայտ եկան մանավանդ մեր հանճարեղ էպոսում՝ երկու Մեծերների ու Ղավթի կերպավորումներում:

⁷ «Մարգարիտներ հայ քնարերգության», Եր., 1971, էջ 41:

⁸ Մ. Խորենացի, նշվ. աշխ., էջ 313:

Աշխարհի քիչ ժողովուրդներ ունեն այնպիսի էպոս, ինչպիսին «Սասունցի Դավիթն» է, որը բարձրացնում է ոչ թե նվաճման, պատերազմի ու արշավանքների գաղափարներ, որ շատ ու շատ ժողովուրդների էպոսների հիմնական գաղափարադրույթն է (շուներական «Գիլգամեշ», գերմանական «Նիբելունգների երգը», ռուսական «Ասք Իգորի գնդի մասին» և այլն), այլ կառուցման, արդարության, սեփական հողն ու երկիրը պաշտպանելու, անձնագոհության ու բարության վեհ պատգամներ, որոնք մեր գրականության մեջ հատկապես շեշտվում էին մինչև XIX դարի վերջերն ու XX դարի առաջին երկու տասնամյակներին: Այս առումով նշենք մեր էպոսի ևս մի առանձնահատկություն. այլ էպոսներում ներկայացվում են օտար հողում կատարվող իրադարձություններ, մինչդեռ հայ էպոսում գործողությունները մեծ մասամբ ընթանում են հայրենի հողի վրա:

Կարելի է ասել, որ XX դարասկզբից մեր գրականության բովանդակությունը սկսում է էականորեն փոխվել: Այն ականա դառնում է ոչ այնքան ազատագրական գաղափարների տարածող, որքան իրար հաջորդած ազգային աղետների արձագանք: Այդ մասին շատ որոշակի է խոսել Գրիգոր Զոհրապը 1913-ին Կ. Պոլսում տեղի ունեցած Դանիել Վարուժանի «Հեթանոս երգեր» գրքին նվիրված ասուլիսում: Գրական նոր սերնդի առջև ծառայած այդ ծանր վիճակի վերաբերյալ Զոհրապն իր ելույթում ասում է. «...Հայ եկեղեցույն մեջ մկրտութիւնը եւ կնունքը միմիայն ջուրով չըլլար. երբեմն հուրով ու սուրով ալ կը կատարուի. նահատակուած երեխաներուն մկրտութիւնը այսպէս է: Նոր սերունդին գրականութիւնը ճիշդ այս դրոշմը, այս կնիքը կը կրէ իր վրան. **ամեն ինչ տառապանք է հոն. ամեն ինչ տառապանք եւ բողոք: Հայկական ջարդերու ականատես գրականութիւնն է. միտքերը՝ մռայլ, բառերը՝ դաշոյնի պէս փայլատակող, մահահոտ եւ արիւնքաներկ գրականութիւն հայկական ճակատագրին պէս»⁹ (ընդգծումը – Ա. Ա.):**

Ինչպես մեր քաղաքական ու ազգային կյանքում, այնպես էլ հայ գրականության համար մի բեկունձային շրջան էլ սկսվեց մեծամասնականների մուտքով Հայաստան: Տնտեսական, սոցիալա-

⁹ Գր. Զոհրապ, Երկերի ժողովածու, հ. 2, Եր., 2004, էջ 241:

կան, գիտական ու կրթական առաջընթացներին զուգահեռ, ցավոք, հեղափոխական շատ կարգախոսներ այդպես էլ մնացին թղթի վրա, ի մասնավորի՝ ժողովուրդների հավասարության ու պատմական արդարության հարցերը, որոնք խեղվեցին ինչպես համաշխարհային հեղափոխության սին նպատակների, այնպես էլ կրեմլյան խարդավանքների պատճառներով: Առաջին տարիների հեղափոխական ոգևորություններից հետո բնական դարձան այն ընդվզումները, որոնք դրսևորվեցին հատկապես մտավորականության շրջանակներում ու մի շարք գրողների երկերում՝ կապված կուսակցական ոլորտների կողմից ցուցաբերված բռնությունների ու սահմանափակումների հետ:

Ակսել Բակունցի՝ 1930-ական թվականներին գրած մի քանի պատմվածքներում («Ծիրանի փող», «Լառ Մարգար»), երեսունականների սկզբին Չարենցի գրած «Պատմության քառուղիներով», «Մահվան տեսիլ», «Դեպի լյառը Մասիս» և մի շարք այլ գործերում նորից առաջ քաշվեցին ազգային արժեքների, հայրենի երկրի անորոշ ճակատագրի, ինքնուրույնության, հայեցի մշակույթի արժևորման հարցեր:

Որպես քաղաքացիական համարձակության ու ազգային գործունեության դարակազմիկ դիրքորոշում՝ նորից հնչեց ազգային միասնության գաղափարը, այս անգամ Չարենցի՝ 1933-ին գրած «Պատգամ» մեզոստիքոսում, որտեղ միջնատառերով գաղտնագրված էր հայ ժողովրդի՝ բոլոր ժամանակներին բնորոշ «մեծահանճար» իմաստնությունը՝ «Ով հայ ժողովուրդ, քո միակ փրկությունը քո հավաքական ուժի մեջ է» թանձրացված ձևակերպմամբ: Նկատենք, որ աճող քաղաքական բռնությունների և անհատի պաշտամունքի սարսափի պայմաններում հեշտ չէր խոսել **ժողովրդի փրկության** մասին: Եվ սա այն տարիներին, երբ ազգի փրկության հարցը նոր կարգերի հաստատումով համարվում էր լուծված, երբ ամենուր գրվում ու ասվում էր, թե «բոլշևիկացունը» եղավ հայ ժողովրդի փրկության ուղին:

Ուրեմն հայ գրականությունն ստեղծող հայ գրողը ազգային ճշմարտության կրողն էր, ժողովրդի հերոսական ոգու կրողը, որի ապրած կյանքը ուսանելի է մնում իր շատ կողմերով նաև մեզ համար: Հիշենք Աբովյանի, Թումանյանի, Զոհրապի, Կ. Ջարյանի,

Չարենցի անունները, ովքեր «վազել են» (Կ. Չարյան) իրենց մեծ երազների ու գաղափարների հետևից, գրողներ, որոնց հավատավոր կյանքը ջահի նման վառվել է մեր պատմության լաբիրինթոսներում ու լույս տվել:

Ակսած 1700-ական թվականների կեսերից՝ հայ գրականություն է ստեղծվել նաև հայաշատ մի շարք օտար վայրերում (Պոլիս, Վենետիկ, Թիֆլիս) և այն էլ բավականին բարձր որակով, որն իր ընդգրկումներով ու հարցադրումներով շոշափում էր ընդհանրական համահայկական խնդիրներ՝ ցուցաբերելով տարաբնույթ դրսևորումներ:

Ավելի ուշ՝ XX դարի 20-ական թվականներից ձևավորված սփյուռքահայ գրականությունը բարձրացնում է կորսված հայրենի եզերքի նկատմամբ կարոտի բորբոքման, օտարության մեջ ազգային դիմագծի պահպանման, եղեռնի կազմակերպիչների մերկացման, նահատակների գործի շարունակման հարցեր: Սփյուռքահայ գրականությունը մեծ առաքելությամբ է օժտված: Շատ կարևոր է այն հանգամանքը, որ այդ գրականությունը արարվում է հայերենով: Լեզուն ազգը պահպանող առաջին գործոնն է: Հայ լեզուն հայ արյունն է, նույնն է թե՛ հայ հողն է, երկիրն է, հայ մարդն է: Եվ հայերենով գրված ու տպված ամեն մի գիրք անփոխարինելի արժեք է ազգապահպանման սուրբ գործի առումով: Հայերեն գրված գիրքը մեր միասնության զգացողության երաշխիքն է: Այն միասնության, որ պահում է յուրաքանչյուր ազգի, այն միասնության, որ մեր ժողովրդի հարատևելու միակ ձևն է, հայրենի երկրի, պատմական ճակատագրի պահպանման գրավականը: Այդ միասնությունը պահանջում է մեծ ճիգ, հավատ և նաև գոհողություն, որոնցով ապրել ու ապրելու է հայ ժողովուրդը թե՛ դրսում, թե՛ ներսում: Առանց դրա անհիմաստ կդառնա հայ պատմությունը, մեր ժողովրդի թափած արյունի համաշխարհային իմաստը: Առանց դրա կքանդվի մեզ վեր պահող ազգային ու կրոնական պատվանդանը: Այս ամենը լավ են գիտակցել մեր սփյուռքահայ գրողներից շատերը, երբ իրենց ստեղծագործություններում ոչ թե հակադրել են մեր լեզվի արևմտահայ և արևելահայ ճյուղերը, այլ դրանք լրացրել ու հարստացրել են մեկը մյուսով՝ համոզված, որ ուժեղ լեզուն կարող է նպաստել ուժեղ ժողովրդի և ուժեղ Հայաստանի ստեղծմանը:

Նկատենք, որ ինչպես օտարության մեջ, այնպես էլ պատմական մի երկար ժամանակաշրջանում հայրենի հողի վրա ստեղծված գրականությունն արարվել է ինքնուրույն պետականության մի քանի հարյուրամյա չգոյության պայմաններում, որը կրկնակի արժեքավոր է դարձնում այդ գրականությունը, քանի որ հայ գրողը ջանացել է բոլորքս պահել ազգային արժանապատվությունը և անգամ իր ստեղծագործություններով իրականացնել պետականության որոշ գործառույթներ՝ ժողովրդի միասնության, ազգային գաղափարախոսության, գործնական հայրենասիրության քայլերի մղման և այլ խնդիրներ իր վրա վերցնելով՝ անշուշտ չմերժելով հայ եկեղեցու կատարած մեծ դերը:

Հայ գրականությունը նաև վավերաթուղթ է, գեղարվեստական անփոխարինելի վավերաթուղթ: Մենք նաև նրանով ենք վերականգնում մեր անցյալի բազում իրողություններ, խորանում հայ մարդու մտածողության, գործունեության ու վարքի շատ հատկանիշների մեջ, հաղորդակից դառնում գալիքին: Այդ գրականությունը ճանաչողական արժեք ունի, այդ թվում՝ տարբեր ժողովուրդների միջև բարեկամական կապերի հաստատման առումով: Գրականությունը մշակութային արժեք է, ժողովրդի յուրատեսակ անձնագիր, գալիքին ուղղված պատգամախոս, հայ մտքի ու նպատակների տարածող, և մեր գրական գոհարների թարգմանությունները տարբեր լեզուներով նպաստում են օտարների կողմից հայ մարդու ու հայ երկրի, նրա հոգևոր ու ազգային արժեքների ճանաչմանն ու ընկալմանը: Բայց քիչ, շատ քիչ է թարգմանվում մեր դասական գրականությունը, իսկ մեզանում այն հայերեն գրեթե չի տպագրվում:

Մեր օրերում էլ հայ գրականությունը մի որոշ մասով մնում է հայ կյանքի ու ժողովրդական բաղձանքների արտահայտիչը: Մեր օրերում էլ այդ գրականությունը և նրան տրված արժևորումները էական նշանակություն ունեն ոչ միայն ժամանակակիցներիս, այլև գալիք նոր սերունդների համար: Ուրեմն գրականությունը նաև մեր ազգային կյանքի ու հայ մարդու ձևավորողը, ոգեշնչողն ու դաստիարակիչն է, հայ մարդու բարոյական, հոգևոր-մշակութային նկարագրի կերտողը:

Այս առումով անտեղի և բոլորովին սխալ են հնչում մի շարք վայ գրողների ու մտավորականների կողմից մեր ազգային որոշ ար-

ժեքների՝ հետին թվով տրվող գնահատականները: Խոսենք օրինակներով:

Մի քանի ամիս առաջ Ծաղկաձորում երիտասարդ գրողների հավաքից հետո՝ մայիսի 24-ի հեռուստաթերթերից մեկում, մի նորաթուխ երիտասարդ գրողի՝ Կարեն Անտաշյանի կողմից հնչեցվում էր այն միտքը, թե ժամանակակից գրականությունը չի ընդունում բարոյախոսությունը, թե այն դաստիարակիչ դեր չպիտի ունենա, և որ ոչ մի արտառոց բան չպիտի տեսնել նրանում, որ ստեղծվող գրականությունը լեցուն է անբարոյական պատկերներով ու ապազգային գաղափարախոսությամբ: Ցավոք, Անտաշյանը բացառություն չէ:

Այսօր ժխտողական վերաբերմունք է ցուցաբերվում մեզանում սրբացված նաև ազգային այլ արժեքների նկատմամբ: Այսպես, դարեր շարունակ մեր եկեղեցին ու գրականությունը սրբացրել են Վարդանին ու Վարդանանց պատերազմը: Բայց արի ու տես, որ վարկաբեկվում է 451-ին տեղի ունեցած Ավարայրի ճակատամարտը, թե իբր այն միայն ու միայն բարոյական հաղթանակի նման մի բան է եղել: Մի ներքին «հպարտությամբ» ջանում են համոզել, որ հայերը պարտվել են, ու որպես ապացույց «վկայակոչում» են մեր պատմիչ-գրողներին՝ անտեսելով, որ այդ նույն մատենագիրները հազար անգամ ավելի հավատարիմ են մնացել այդ ճակատամարտի **ներքին խորհրդին ու պատմականությանը**, որոնցով հայ ժողովուրդը և նրա առաջնորդ Վարդանը հաստատեցին մեր հարատևման միակ գոյաձևը՝ կռվելով, պայքարելով, դիմադրելով ու միասնությամբ ապրելու եղանակը, որ նաև Խաչատուր Աբովյանն է ձևակերպել իր համճարեղ վեպով՝ պայքար ամեն մի բռնության ու նվաճման դեմ՝ ուն կողմից էլ այն լինի, և երբ էլ այն դրսևորվի: Իսկ որ հայերը V դարում իրոք հաղթել են երկիր մտած նվաճողներին, դիմենք պատմական փաստերից միայն մեկին, որի մասին գրում է ականատեսը՝ Եղիշեն. «... Իսկ այդ՝ երկու և երեք կռիվների մեջ ինքը՝ Տերը, մեծ զորությամբ օգնեց այնպես, որ քաջության անուն ժառանգեցինք և արքունի զորքը չարաչար ջարդեցինք, մոզերին էլ անողորմ կերպով կոտորեցինք և **կռապաշտության պղծությունը մի քանի տեղերից սրբեցինք, թագավորի անօրեն հրամանը ջնջեցինք – ոչնչաց-**

րինք, ծովի խռովությունն իջեցրինք, լեռնացած ալիքները դաշտացան, բարձրադեզ փրփուրն սպառվեց, գազանացած գայրույթը դադարեց»¹⁰ (ընդգծումը - Ա. Ա.): Եվ սա դեռ մինչև Ավարայրի ճակատամարտը: Ահա այսպես հայ գրականության մեջ սկզբնավորվել է հայ նահատակ զինվորայլի կերպարը, որը հաճախ իր սուրբ մահը ընտրել է ուրախ սրտով և իր «արիության ու քաջության մեջ վախկոտություն չի խառնել»¹¹:

Հայտնի բան է, որ շատ ավելի հեշտ է հաղթել արտաքին թշնամուն, քան ներքին: Ներքին թշնամուն, որ կասկածն է, վախը, ոգու ու հավատի պակասը: Այն ճակատագրական վճիռը, որ կայացվեց ազգային զոյատևման առջև ծառացած երեք ուղիներից մեկի օգտին՝ **կռվելով ապրելու** և ոչ թե հնազանդությամբ կամ դիվանագիտությամբ, արդեն այդ ներքին թշնամուն հաղթելու ապացույցն է: Եղիշեի կողմից հնչեցված «Մահով մահը խափանելու»¹² պատգամը, Ավարայրի այդ ճակատամարտում ժողովրդի ընդունած վճիռը, երբ հայը որոշեց ապրել ու մահանալ հանուն իր երկրի, հենց այն մեծագույն հաղթանակն է, որ քիչ ժողովուրդների է տրված ու քիչ բանակների՝ վիճակված, այն հաղթանակը, որ ժողովրդին հասարակ զինվորից դարձրեց ռազմիկ, ընդ որում՝ այդ վճիռը տևական կենսածն դարձավ, որի գեղարվեստական մարմնավորումը այնքան պատկերավոր ձևակերպել է Դ. Դեմիրճյանն իր «Վարդանանք» վեպում. «...ժողովրդական դիմադրությունը ծավալվեց, սկսեց ամեն կողմից հարվածել պարսից զորաբանակին, ցերեկային հարվածներին հաջորդեցին գիշերայինները: Ապա սկսեցին զգգգել թշնամուն, բաժան-բաժան արին, զցեցին իրենց հետևը լեռներն ու կիրճերը... Հայոց աշխարհի ձորերից ու դաշտերից խուճբ-խուճբ, մենակ, երբեմն և ստվար զանգվածներով գալիս էին գյուղացիներ զինված ամեն ինչով... գալիս էին անվերջ, սպառնալիորեն անվերջ, համալրում և զորացնում էին կռվող զորամասերը: **Այդպես անցան օրեր, տարիներ, անցան դարեր»¹³** (ընդգծումը - Ա. Ա.): Հենց այս կենսածնն է, որ հիմք

¹⁰ Եղիշե, Վարդանանք պատմությունը, Եր., 1958, էջ 94:

¹¹ Նույն տեղում, էջ 93:

¹² Նույն տեղում, էջ 98:

¹³ Դ. Դեմիրճյան, Վարդանանք, Եր., 1968, էջ 555, 557:

դրեց վահանյան, ինչպես և գալիք բոլոր ընդվզումներին ու կռիվներին, որ իմաստնություն դարձավ հայության համար, և որը այնքան սպառիչ է ձևակերպել մեր մի ուրիշ գրողը՝ Շահան Շահնուրը. «Կռիւը սրբազան բան է, ճակատամարտը երբեմն նոյնիսկ օգտակար. անոնցմէ ազգ մը դուրս կուգայ պարտուած կամ յաղթական, սակայն երկու պարագային ալ դուրս կուգայ»¹⁴:

Մեզանում լավ է ասված. ճշմարիտ գիրքը այն գիրքն է, որի ասածը կարելի է երգել: Այդ կռիվը՝ Ավարայրի ու դարերի հին կռիվը չէ՞, որ հենց գրականության տեսքով երգ է դարձել համայն հայության համար, և այդ հավերժական երգի մեջ չէ՞ արդյոք «ճշմարտորեն անփոփված» (Դ. Դեմիրճյան) բոլոր «վարդանանց» երթը:

Անհեթեթ է նաև այն պնդումը (նույնպես հայկական հեռուստատեսերում հնչած), թե հայ ժողովուրդը Սարդարապատում հաղթանակ չէր տանի, եթե Արաքսի վարարման պատճառով թուրքական զնդերի մի մասը այն ափին չմնար: Սա էլ վայ պատմաբանների մոգոնած կեղծիքն է: Մինչդեռ մեր գրականության մեջ իրավացիորեն գրվել է. «...Այն օրը Սարդարապատը գոռաց և վայեց: ... Ամբողջ դաշտը հանկարծ կատաղած տեղից շարժվել էր և ցատկոտ լցված՝ նետվել առաջ»¹⁵: Ասել է թե՛ ծավալվել է համաժողովրդական ընդդիմություն, որի դեմ ոչ մի ուժ չէր կարող կանգնել՝ այդ հորդաները անցած լինեին գետը, թե ոչ:

Իսկ ո՞վ է այսօրվա գրականության հերոսը, ո՞վ է այսօրվա գրականության գեղագիտական իդեալի կրողը՝ աշխատող, արարող մարդը, ազնի՞վ մարդը, գիտնակա՞նը, մտավորակա՞նը, զինվո՞րը... Ցավոք, ո՛չ: Մեծ մարդկանց, մեծ հոգիների, հերոս մարդկանց պատկերավորումները, մի բան, որ այնքան բնորոշ էր ռոմանտիզմի գրականությանը, ժամանակակից գրականության էջերում գնալով նվազում են: Բայց առանց ռոմանտիզմի, որքան էլ որ հոգսերի բեռի տակ կքած է ժամանակակից մարդը, տխուր, շատ տխուր է կյանքը: Ասենք նաև, որ առանց ռոմանտիզմի չի կարող վերափոխվել ինքը՝ կյանքը: Վերանում են նաև բարու ու չարի սահմանները: Գրականության ժամանակակից միտումները

¹⁴ Շ. Շահնուր, Նահանջը առանց երգի, Բեյրութ, 1981, էջ 123:

¹⁵ Կ. Զարյան, Նավը լեռան վրա, Եր., 1985, էջ 157-158:

ուղղված են դեպի աշխարհի ավելի գլոբալացված հարցերը, քան տեղային ու ազգային հրատապ խնդիրները: Այդ գրականությունը չունի ներքին համարձակություն անգամ շոշափելու այն սոցիալական աղաղակող խնդիրները, որոնցով լեցուն է մեր կյանքը: Մյուս կողմից, ընթերցող շրջանակների նվազումը, դասական գրականության տպագրության գրեթե իսպառ վերացումը, իսկապես մեծ գրողի ներկայության պակասը մեր օրերում այն խանգարիչ գործոններն են, որ իջեցնում են գրականության դերը մեր հասարակական-քաղաքական կյանքում, դրանով իսկ քիչ են նպաստում մեր պատմանշակութային արժեքների կայացմանը, ազգային նվիրումների համակողմանի իրականացմանը, այլ խոսքով ասած՝ **հայ ոգու հարատևմանը:**

Այս ամենով հանդերձ՝ ասենք, որ գեղարվեստական գրականությունը ազգային արժեք է մանավանդ հայերիս համար, շտեմարան՝ մտքի ու ոգեղեն թռիչքների, գեղագիտական իդեալների, լեզվական արտահայտչամիջոցների կարելի հնարավորությունների, հայ մարդու պատկերավոր մտածողության և զգացմունքների դրսևորումների ու սերունդների տևական երթի խթան: Ասել է թե՛ գրականությունն ու գիրքը ոչ թե նյութեղեն, այլ **ոչ նյութեղեն**, մեծ, շա՛տ մեծ արժեքներ են, որոնք պետք է յուրացվեն, պահպանվեն ու պատգամվեն: Չէ՞ որ հայ դասական գրականությունն իր մեջ հավերժական պայքարի ոգի է կրում՝ մեկ անգամ ևս հաստատելով հերակլիտյան բնութագրումը, թե պայքարը ամեն ինչի հայրն է: Եվ եթե մենք պատկերավոր ասում ենք, որ հայ կյանքի բոլոր ճակատներում, որպես հավերժի զինվորներ, կռվել են նաև մեսրոպյան երեսունվեց տառերը, ապա կարող ենք ասել, որ այդ զորագնդի հրամանատարներից մեկն էլ հայ գրականությունն է եղել: Ուրեմն մեր գրականությունը այն անփոխարինելի միջոցն է, որը նյութը մտքի է այլափոխում, միտքը՝ ապրումի, ապրումը՝ արվեստի, այլ խոսքով՝ ոգեղենացնում է նյութը, իրականացնում ու գեղակերտում ազգին հուզող լուսե երազը:

Artsrun Avagyan – *The historical, cultural, and national value of Armenian literature.* – Literature is a device where substance transforms into thought, thought into emotion and emotion into art. In other words, literature

spiritualizes the substance, makes dreams come true, and carves the haunted vision. Armenian literature is the true reflection of the spiritual, emotional, intellectual values that are characteristic of Armenian identity. It expresses the national contours through art. For centuries it has served as an impetus for shaping Armenian secular mindset, has spread enlightening ideas as well as backed the fulfillment of national aspirations, trying to answer such vital questions as who Armenians are, where have they come from, where are they going.

Irrespective of what subject an Armenian writer might dwell upon, the concern and preoccupation about his country's destiny have always been present in his works. The tragic events throughout centuries have forced the Armenian writer to **“make a mournful speech” (Khorenatsi)**, sing about the tedium of **“drab existence” (Charente)**, write words of imprecation. Still, Armenian literature is a Christian nation's literature full of biblical commandments, kind and honest stimuli, characterized by high moral ideology. One of the main concerns of Armenian literature has been the promulgation of aspiration for freedom which is clearly reflected in Khorenatci's formula of **“staying in one and the same enclosure”** as well as in the portrayals of the “Sasuntsi Davit” epic and in many other literary works.

Due to the ongoing social, political and national turmoil, Armenian literature has always sought to utter the voice of truth, while the Armenian writer has always been in pursuit of his ideals and dreams burning his life like a torch in the tricky labyrinths of Armenian history. A large amount of Armenian literature has been created under non-existent Armenian statehood. This factor makes the Armenian literature even more valuable as it took the mission of fulfilling some functions of statehood. Armenian literature is a valuable document which serves as a communicator of the past, present and future. It is also a spiritual, cultural and national value, the assertion of an Armenian's identity that by fighting, struggling creates a form of existence.

Арцрун Авакян – Культурноисторическое и национальное значение армянской литературы. – Литература – средство, перевоплощающее материю в мысль, мысль в переживание, переживание – в искусство,

иными словами, одухотворяется материя, сбывается мечта, обретает плоть навязчивое видение. Армянская литература – средоточие духовных, эмоциональных и интеллектуальных ценностей армянского народа, выраженных с национальной самобытностью. Она веками стимулирова-

ла наше мирское мышление, распространяла просветительские идеи, поддерживала воплощение народных чаяний, стремилась ответить на вопрос: кто мы, откуда мы пришли и куда направляемся.

Независимо от того, о ком или о чем писали армянские авторы, центральной проблемой для них была и остается судьба отечества. Трагические события, длящиеся веками, вынуждали их “говорить скорбное слово” (Хоренаци), петь “об унылых серых буднях” (Чаренц), произносить проклятия. Тем не менее, армянская литература – это литература христианского народа и потому заряжена библейскими заветами, идеями добра, благородства, красоты, и характеризуется высоконравственной идеологией. Одной из задач армянской литературы было распространение свободолобивых устремлений, воплощенных в формулировке Хоренаци “объединиться в едином национальном пристанище”, в образах эпоса “Давид Сасунский” и других художественных произведений.

Армянская литература, согласно с перипетиями общественной, политической и национальной жизни, всегда стремилась высказать правдивое слово, а армянский писатель “устремлялся” за своей высокой мечтой и идеями, самоотверженно зажегши свою жизнь словно факел в лабиринтах нашей истории. Значительная часть армянской литературы создавалась в условиях отсутствия государственности, и это делает ее вдвойне ценной, так как она брала на себя ряд функций государства. Армянская литература – ценный исторический документ, связывающий нас с нашим прошлым, настоящим и будущим. Она также культурно-духовное и национальное достояние, подтверждение идеи выживания через борьбу, сражение, созидание.

ՎԱԶԳԵՆ ԳԱՐՐԻԵԼՅԱՆ

ՎԱՅԱՆ ԹԵՔԵՅԱՆԻ ՍԻՐՈ ՅԱՍԱՍՓՈՌԻՄԻ ՇԱՌԱՎԻՂՆԵՐԸ

*Յաշվեհարդար. ինչ մնաց, կյանքեն ինձի ի՞նչ մնաց...
Ինչ որ տվի ուրիշին, տարօրինակ կ, այն միայն...*

Վ. ԹԵՔԵՅԱՆ

Առաջին աշխարհամարտում պարտված Թուրքիայի վիճակը, մեծ տերությունների վերաբերմունքը նրա նկատմամբ, ինչպես նաև հայանպաստ խոստումները եղեռնից մազապուրծ արևմտահայության բեկորներին հույս են ներշնչում, թե կրկին կվերադառնան հայրենի օջախները, իսկ մտավորականությունը կրկին հավաքվում է Պոլսում, ուր սկսվում է գրական–մշակութային մի զարմանալի զարթոնք, որ ձգվում է մինչև 1922-ը, մինչև Իզմիրի աղետը, մինչև Լոզանի համաժողովում «հայոց հարցի» տապալումը, մինչև պոլսահայ մտավորականության փախուստը: Այդուհետ գաղթօջախներում հաստատված տարագիրների կյանքը կարծես (թվացյալ) «խաղաղ» հուն է մտնում. նրանք յուրովի «երջանիկ» էին, քանի որ փրկվել էին սպանդից, բայց հայրենի հողի ու տան կորստի, եղեռնի զոհ դարձած հարազատների, կարոտի զգացումը ցավագին էր: Ու կար տագնապը՝ ինչպե՞ս գոյատևել ու նաև՝ ինչպե՞ս հայ մնալ օտարների մեջ: Հասկանալի է՝ նրանց այս հոգեվիճակի և ուրիշ շատ հարցականների պատասխանը պիտի տար մտավորականը, գրողը:

Սփյուռքյան կյանքի առաջին տասնամյակը (1923-33), այնուամենայնիվ, դրսևորում է կայունացման վերընթաց թե՛ ֆիզիկական գոյատևման՝ աշխատանքի ու օթևանի, թե՛ գաղթօջախների ազգային կյանքի (եկեղեցի, կազմակերպություններ, դպրոց, մամուլ, գրականություն) առումներով:

Տասնամյակի առաջին իսկ տարիներից գաղթօջախներում ապաստանած արևմտահայ «վերապրող» գրողների ու երիտասարդ գրական նոր ուժերի ջանքերով ձևավորվում, ընթացքի մեջ է ընկնում սփյուռքահայ գրականությունը, որի գլխավոր խնդիրն

է դառնում տարագիր հայությանը կենսական լիցքեր ներարկելը, կորցրած հայրենիքի, հայրենական կյանքի պատկերներով նրան հայ պահելու, ուժացման տեսանելի օրինակներով ձուլման վտանգի դեմ պայքարելու կամք ներշնչելը: Տասնամյակի ընթացքում տարբեր գաղթօջախներում մամուլում թե առանձին գրքերով լույս են տեսնում արձակ ու չափածո երկեր, որոնք արդեն իսկ տեսանելի են դարձնում սփյուռքահայ գրականության դիմագիծը՝ նախանշելով նրա զարգացման ուղղությունը և վկայելով, թե արևմտահայ գրականության ընթացքը կասեցված չէ:

* * *

Վահան Թեքեյանի «Սեր» ժողովածուն, որ լույս տեսավ 1933 թվականին¹, բարձրակետն էր այդ շրջանի սփյուռքահայ բանաստեղծության: 20-րդ դարասկզբի արևմտահայ բանաստեղծների նշանավոր փառանգից միակը կենդանի մնացած Վահան Թեքեյանը մղձավանջի (պատերազմի) տարիների իր երգերը հավաքեց «Կեն գիշերեն մինչև արշալույս» ժողովածուի (1919, Փարիզ) մեջ, իսկ «արշալույսից» հետո գրված երգերին առանձին գրքով լույս տեսնելու բախտը վիճակված էր, ահա, 1933-ին, որ «Սեր» ժողովածուն էր: Այդպես էլ գրքի խորագրի տակ նշված էր՝ «Քերթվածներ, 1919–33»: Բայց ժողովածուն չէր ամփոփում այդ տարիներին գրված նրա բոլոր բանաստեղծությունները: Մնացյալը, որ, հեղինակի վկայությամբ, մի առանձին գիրք կարող էր լինել, հովանավոր հրատարակչի պիտի սպասեր, իսկ Թեքեյանը խնդրել չէր կարող: «Սերը» որոշակի տրամադրությունների, որոշակի կառուցվածքով բանաստեղծությունների ընտրված ժողովածու էր:

«Սերը» սփյուռքյան կյանքի առաջին տասնամյակի զեղարվեստական պատկերն էր, առավել ընդգրկուն, առավել խոհուն ու ընդհանրական, առավել հասուն բանաստեղծական ժողովածուն՝ երի-

¹ Ոչ զարմանալի զուգահեյություն, այլ ժամանակի տազնապների թելադրանքով, նույն 1933 թվականին խորհրդային Հայաստանում և Սփյուռքում լույս տեսան մի ամբողջ շարք գրքեր՝ նորագույն ժամանակները իմաստավորող ուղենշային մեծարժեք ստեղծագործություններ՝ Եղիշե Չարենցի «Գիրք ճանապարհին», Ակսել Բակունցի «Սև ցելերի սերմնացանը», Շահան Շահնուրի «Հարալեզներուն դավաճանությունը», մամուլում շարունակաբար տպագրվում էին Կոստան Ջարյանի «Բանկոտպը և մամուլի ոսկորները», Հակոբ Օշականի «Մնացորդաց» վեպերը: Եվ բոլոր այս գործերը իրենց ինքնատիպությամբ առանձնացող, խորային կապի մեջ էին որպես «պատկերազարդ պատմություն» հայոց ճակատագրի նորագույն ժամանակներում:

տասարդ բանաստեղծների (Բ. Թովալյան, Ն. Սարաֆյան, Վահե-Վահյան) առաջին հատորիկների գոյության պայմաններում, ուստի և գրքի առաջին իսկ արձագանքները կրկին հաստատում էին, որ Թեքեյանը՝ «լիովին հայտնված ու տիրական անուն մը մեր քերթողության մեջ», այդ հատորով տալիս է մեր կյանքի համապատկերը՝ դրսևորելով «իմացական սլացք», «գերագույն գինովություն», «հուզականություն», բանաստեղծական «առաքինություններ, որոնք հատուկ են միայն բոլոր ժամանակներու մեծերուն»²:

«Սերը» Սփյուռքի տազնապների ծայնն էր, Թեքեյան մտավորականի, հասարակական գործչի, բանաստեղծի հոգում արձագանք գտած ծայնը՝ բանաստեղծական խոհերի տեսքով:

Սփյուռքահայ կյանքի առաջին տասնամյակն էր: Հենց այս գրքի առիթով, հետագայում այդ տասնամյակը Վահե-Վահյանը բնութագրում է այսպես. «Սփյուռքը, այդ տարիներուն, չգոցված վերք էր տակավին, չպաղած զայրույթ, չհագեցած ոխ: Որբություն էր ան, «ոճիրեն ավելցած» մանուկներու շվարած բազմություն, որ դառնալէ առաջ վաղվան հայը, կը կարոտեր պաշտպանության ու խնամքի: Կորսված անուշություններու կարոտն էր Սփյուռքը. սիրտ արյունոտ վերհուշ: Տևական զրկանքներու և քարացած դառնություններու հետ անենօրյա շփումեն տարօրինապես դուրագրգիռ դարձած ջիղերու բորբոքումն էր երբեմն, ներքին ճակատներու վրա կատաղի բախում, որ տեղ-տեղ կը հանգեր թուրքին թերի ձգածը լրացնող ոճիրի: Դասալքություն էր նաև եվրոպական ուստաններու մեջ մանավանդ,– ուրացում և ուժացում:

Նույն ատեն անդուլ մաքառում էր Սփյուռքը հացի և երգիքի չափ նաև լույսի համար: Տախտակաշեն խցիկներու կողքին՝ կառուցումն էր նույնպես տախտակաշեն տաղավարներու, որոնք եկեղեցի էին ու դպրոց՝ իրենց ժամերուն: Անհատական կամ հանրային միջոցներով հայ գիրը նորեն արարչական իր դերին կոչելու հերոսական ջանադրություն էր ան»: Ահա այս «վիճակներեն ու տրամադրություններեն առած հույսերու ու խոհերու», «մակընթացության ու տեղատվության» բանաստեղծականացումն էր Թեքեյանի «Սերը»:

² Վահե Վահեան, Մատենախոսական, «Սիօն», Երուսաղէմ, 1933, № 9, էջ 289:

«Սեր» խորագիրը լավագույնս է արտահայտում գրքի բովանդակությունը, ոգին, ավելի ճիշտ՝ բանաստեղծի վերաբերմունքը այն ամենի նկատմամբ, որ իր ներշնչանքի առարկան են՝ հայրենիքը, ազգը, նրա ցավը, տքնանքն ու ապրելու ջանքը, մարդը ընդհանրապես: «Սերը» գրքում սիրած աղջկա նկատմամբ ունեցած զգացումը մի քանի քերթվածուն է միայն, «Սերը» սիրո ու գորովի այն զգացումի հանդիսարանն է, որ բանաստեղծի **«հոգին»** (հաճախ կրկնվող բառ թեքեյանի ամբողջ պոեզիայում) ճառագում ու սփռում է առ Աստված ու աշխարհ, հայրենիք ու ընթերցող: «Սիրող սիրտ մը», «անբուժելի սիրող մը»,- բնութագրում է թեքեյանին նրա մտերիմներից մեկը՝ բանաստեղծ ժազ Յակոբյանը՝ հիշելով նրա սիրո համասփռումի շառավիղները՝ «Հայրենիքի սեր, միստիք Աստուծո մը սերը, բնության սեր, երագի սեր, կնոջ սեր, մարդկության սեր, նույնիսկ մահվան սեր»³, ու զավակի՝ սեր:

Պատահական չէ, որ գիրքը բացվում է երեք ձոներով՝ ուղղված «Աստուծո», «Հայ ազգին», «Ընթերցողին»: Իր զրույցը կյանքի ու աշխարհի մասին նրանց հետ է: Նրանց առջև է բանաստեղծը բացում իր «սիրող սիրտը», իր տառապող «հոգին»՝ «իր լույսերովը պայծառ, իր մթությանբը ահեղ»: Իր «հոգին», որ «հանքի մ'է նման», և որի միայն առաջին շերտն է բացել ընթերցողին ի տես, «մինչ հրաբուխ մը խորունկ անոր ներքև կը գոռար...»: Այդ «հրաբուխը» իր հոգու խորքերում ազգային ու մարդկային տառապանքների ծնունդ է՝ ցավի ու սիրո, անհուսության ու հավատի, գայրույթի ու հաշտության բախումների հետևանք:

Նախ՝ **ազգայինը**: Հայրենիքի, ազգի ճակատագիրը: Գրքի կառույցի սկիզբն ու հիմքն են «հայրենական» քերթվածները: Եվ բնական էր, որ հաջորդ գիրքը, որ կրկին ուշացումով լույս տեսավ, բացառապես «հայրենական» էր, և խորագրեց «Հայերգություն»: «Սերը» գրքում «Հայ ազգին» ձոնի մեջ բանաստեղծելու իր մղումը թեքեյանը արդարացնում էր այն համոզումով, թե ազգը «սպասում է» բանաստեղծ-զավակի իր «համար տառապանքին, հեծության, գալարումին վշտաբեկ», և որ իր երգերն էլ հենց «մասնիկներն են ալ սրտի մ'որ հյուծեցավ // Քեզ և ինքզինքն իր վրա ծանրակրելո՛ւն պատճառավ...»: «Սերը» գրքի բանաստեղ-

³ **Ժազ Յակոբյան**, Վահան Թեքեյան՝ Աստուածախոյզը, Պէյրուս, 2009, էջ 16:

ծությունները լցված են ազգի ճակատագրի նկատմամբ խորին մտահոգությամբ ու մանավանդ պատասխանատվության զգացումով: Այս առումով Թեքեյանի «Սերը» և Չարենցի «Գիրք ճանապարհին» մերձենում են իրար: Ժողովրդի անցյալը, ներկան ու գալիքը՝ «Գիրք ճանապարհին» է, անցած ու անցնելիք ճանապարհը՝ ներկայի մտահոգություններով, տագնապներով ու շարունակներով, հայրենական ու սփյուռքյան մասնավորեցումներով և գալիքին հառած հայացքով: Թեքեյանը 1926-ին գրված մի ուրիշ ծոն էլ ունի ընթերցողին՝ «Վասն ձեր» վերնագրով, որ «Սեր» ժողովածուի մեջ չի մտել, բայց որ կարող էր «Սեր»-ի համար էլ բացատրություն դառնալ: Հավանաբար դեռ 1926-ին Թեքեյանը կազմել է կամ կամեցել է կազմել մի գիրք և այդ է հղում ներկայի («Տղաք, որ կը ճանչնամ») և ապագայի («Եվ անծանոթ տղաք», որ Չարենցի «գալիքի պարմանիներն» են) երիտասարդներին, ասելով՝ «Կազմեցի այս գիրքը // Վասն ձեր և բազմաց...»:

Եվ այդ գրքում՝

*Փառքն ու արհավիրքը անցյալի,
Ներկայի շվարումն
Ու ապագայի տեսիլքը
Ժողվեցի մաս առ մաս
Վասն ձեր և բազմաց...
Ինչ որ կա լավագույն
Հոս արյունն է ազգին...*

Իր «Ջարդը» բանաստեղծության մասին, որ նույնն է, թե «Ցեղին սիրտը» գրքի, ընդգծելով իր և ժողովրդի արյունակցությունը, Վարուժանն ասում էր. «Իր արյունն է, զոր ջանացած են վերապրեցնել. անեծք գլխուս, եթե խորթացուցած են զայն»⁴:

Այդպես Չարենցն էր գրում իր «վերջին մատյանի»՝ «Գիրք ճանապարհի» ժողովածուի մասին՝ ասելով, թե «ինչ ունեցել է ժողովուրդը» «հնում, անցյալում – լուսավոր ու վեհ, // Ինչ ունի այսօր», հավաքել ու իրեն է տվել, որ ինքը դնի իր մատյանում և «խոր հավատքով լի» պարզի «գալիքի ցնորքին անհաս...»:

Ի դեպ՝ Թեքեյանի և Չարենցի այս ժողովածուներում նկատելի են բանաստեղծական դիտումի որոշ նմանություններ, որ հուշում են

⁴ Գ. Վարուժան, Նամականի, Եր. 1965, էջ 130:

նաև վերնագրերը. «Տաղ գրաբարին», «Գիրքեր», «Աղոթք հիվանդ տղու մը համար» (Թեքեյան), «Տաղ հիվանդների համար», «Տաղ ձոնված գրքերին» (Չարենց): Ավելի վաղ արդեն դիտարկել ենք երկու բանաստեղծների՝ հայոց բառերին տրված մակդիրի «արյունակցությունը»: Թեքեյանը 1913-ին գրած «Տաղ հայերեն լեզվին» բանաստեղծության մեջ հայերենի բառերը համեմատում է «անուշ» պտուղների հետ, ասելով՝ «հյութեղ բառերդ՝ զոր որքա՛ն հասունցուցին արևներ»: **Արևով հասունացած** հայոց բառը Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի...» տաղում **«արևահամ»** է:

Չարենցի «Գիրք ճանապարհի»-ի հայտնի ահագանգ-պատգամը՝ «Ով հայ ժողովուրդ, քո միակ փրկությունը քո հավաքական ուժի մեջ է», նախ՝ խորհրդահայ, ապա՝ համահայ տազնապի թելադրանք էր: Այդ տազնապը, սփյուռքահայության տարտղումնի, ուժացման փաստը աչքի առաջ ուներ նաև Թեքեյանը՝ Սփյուռքի նշանավոր բանաստեղծ ու հասարակական գործիչը: Հայ զանգվածը Թեքեյանի բանաստեղծական պատկերով՝ «կ'երերա հեծելով, անտառի պես», նրանից առանձին մասեր «անվերջորեն կը բաժնվին, կը մեկնին... Եվ ան տակավ կը պակսի...» և «խլված իրենց արմատներեն... չորնալ ուրիշ տեղ կ'երթա...»: «Հավաքական ուժով» փրկության գաղափարը Թեքեյանը «փոշի-քար» փոխաբերական պատկերով է ներկայացնում: Ցրված, փոքրացած, փոշիացած հայության վերհառնումնի, նրա հույսերի իրականացման ճանապարհը բանաստեղծը տեսնում է հավաքվելու, դիզվելու, ամրանալու, քար դառնալու պատկերով.

*Պզտիկ, պզտի՛կ դուն անկյուն, ոչ իսկ անկյուն, այլ կետեր
Ցրված հոս հոն և որոնց գիծերն, որմերն են ինկած,
Պե՛ տք է հուսաս տակավին պալատը մեծ, զոր կերտեր
Կանգներ էր միտքդ, ավա՛րդ, այդ փոշիով գետնամած:
Եվ երբ քու շուրջդ այսօր ամեն հին շենք վար կիյնա,
Ու ձև կառնեն նոր շենքեր անոնց ինկած տեղին վրա,
Ինչպե՛ս, փոշի, դուն կազմել նման հին շենք մը կուզես:
Մեն մի ցնցում քեզ կրնա տարանջատել վերջնապես,
Աշխարհ չըներ պիտի հոգ, հոգը քեզի է, հուսա՛,
Դիզվե՛, փոշին լու՛կ այդպես պիտի նորեն հող, քար ըլլա...*

Ի դեպ՝ «Փոշի – ազգ» բանաստեղծությունը գրվել է 1933-ին, հենց այն թվականին, որ լույս տեսավ «Գիրք ճանապարհին», որ գրվեց Չարենցի «Պատգամը»:

Դեռ 1918-ին՝ պատերազմից անմիջապես հետո, Թեքեյանը, չափազանց կարևորելով, հայ մնացորդացին ներշնչում էր **հպարտության** զգացում. «Կարենալու համար ապրիլ այսուհետև, օդի, ջրի, հացի նման մենք պետք ունինք Հպարտության» («Հպարտություն»), իսկ 1919-ին գրած «Ըմբոստություն սրբազան» բանաստեղծությամբ, որ, դարձյալ կարևորելով, զետեղեց «Սեր» գրքում, ոգեկոչում էր մեր մեջ **ըմբոստության** զգացումը՝ որակելով այն **սրբազան** ածականով: Կանչ, կոչ ու հրավեր էր բանաստեղծությունը, որովհետև հենց այդ շրջանում էլ (և մի՛շտ) մեզ այն պետք էր, դարձյալ «կարենալու համար ապրիլ այսուհետև...»:

*Բայց մեզի պետք էս դուն դեռ...
Դուն մնացիր, բնակե
Սեր մտքերուն մեջ հիմա,
Ըմբոստություն սրբազան.
Ջանոնք տաքցուր, բորբոքե՛,
Ըրե՛ հնոց մորուն մեջ
Սեր հին ժանգերը հալին,
Սեր մասնիկները բոլոր
Իրար ձուլվին, ամրանան,
Մետաղն ըլլա կարծր ու ջիմջ
Եվ փափրըլումն իր երգե փառքդ հավիտյան,
Ըմբոստություն սրբազան...*

Խորհուրդը՝ խորհուրդ, բայց այն ընդունելի է, եթե խորհրդատուի խոսքը հավատ է ներշնչում. 1932-ին գրված «Հայ հոգիին» բանաստեղծության մեջ Թեքեյանի խոհը ընթերցողին ներշնչում է այդ հավատը: Եվ այդ խոհը այն գարնան մասին է, երբ «հին կոճղեն նոր բողբոջներ պայթեցան», խորշակահար ծառի արմատների զարթունմի, «իր բունի գորշ մոխիրեն հրափայլող այն կայծերուն» մասին, որ «հոգիիս դեռ լույսն են»:

*Եվ այդ լույսին, այդ հույսին մեջ կը տեսնեմ
Բացված ընդդեմ ովկեանին ժանտաղեն,
Հայ հոգիին հողմակոծ ծառը վսեմ...*

Ընթերցողը հավատում է, երբ բանաստեղծը ասում է.

*Մերթ ալ կուզեմ իմ ազգիս
Սիրուն համար ու բարվոյն
Ընել կամուրջ մը հոգիս,
Իր անցյալեն խորագույն
Դեպ ապագան սլացիկ...*
(«Կամուրջ»)

Ապա «նետել կամուրջն այդ խավարի մեջ ներկային իբրև երկար ճառագայթ», որ ընկղմվողները իրենց նայվածքը ուղղեն դեպի այն և ելնեն վեր, որովհետև բանաստեղծը հավատում է լուսավոր անհատների գոյությանն ու անհրաժեշտությանը՝ Հայ ոգին բարձր պահելու համար:

*... Ի՞նչ փուլթ թե իմ կամ ուրիշ,
Պետք է հոգի մը սակայն,
Արևաշող, աստղանիշ,
Որ հոգիին Հայության
Ըլլա ճամբա ու ճաճանջ...
Ըլլա անոր բազմատանջ
Կյանքին, հույսին ապավեն...*

Ընթերցողը հավատում է բանաստեղծի այդ «հոգուն», որովհետև այն «մեծ ու շքեղ ճառագայթում մըն է, որ կ'աննյութանա ու կը թափի կյանքի բոլոր գոյություններուն և բոլոր երևույթներու վրա, բարությանը ու գործով» (Վահե-Վահյան), որովհետև զգում է հեղինակի՝ տողերի խորքից բարձրացող սերն ու պաշտամունքը՝ առ իր ազգը, նրա լեզուն, նրա նահատակ հերոսները, Հայ Եկեղեցին, հայ որբերը, և մարդիկ՝ ընդհանրապես («Հայ ազգին», «Մութ ժամեր», «Խորհուրդ Վարդանանց», «Տաղ գրաբարին», «Եկեղեցին հայկական», «Գեղոն հայ որբերին», «Որբերուն ձեռքերը» և այլն):

Թեքեյանի կենսագրությունից հայտնի է, որ նա 1923-ից սկսած նվիրվել էր մի սրբազան գործի. որպես Փարիզի հայ Ազգային պատվիրակության ներկայացուցիչ՝ զբաղվում էր Հունաստանում, Սիրիայում, Եգիպտոսում ու Շվեյցարիայում ապաստանած հայ գաղթականների, որբանոցային որբերի վիճակի բարելավման խնդիրներով: Անհանգստացած էր հատկապես որբերի ճակատագրով, նրանց հայեցի ուսման ու դաստիարակության համար: Տազնապատ էր, թե «որբերը պիտի փճանան Ամերիկացոց ձեռքը՝ եթե ազգը իրենց տիրություն չընե»: Առաջարկում էր Հունաստանում նրանց համար «հայկական վարժարան բացել», հետո «մաս առ մաս Եվրոպա փոխադրենք և հոն շարունակել տանք իրենց ուսումը»: «Կը հավաստեմ ձեզի,– գրում էր Թեքեյանը Ազգային պատվիրակության ղեկավարներին ու Արշակ Չոպանյանին հղած նամակներում,– թե մեր որբերուն մեջ լավագույն խմորները կան, իբրև խելք և իբրև նկարագիր, վաղվան գործին, վաղվան ազգին շինու-

թյան համար»⁵ (Թեքեյանը չէր սխալվում. որբերի այդ սերնդից ազգը բազում նշանավոր դեմքեր ունեցավ): Որբերի ճակատագրերի մասին Թեքեյանի տազնապները, նրանց նկատմամբ խանդադատանքը, գորովն ու սերը դրսևորվեցին մի շարք բանաստեղծություններում, որ զետեղվեցին ահա «Սերը» գրքում:

Այդ **սերը** պայմանավորված էր նաև բանաստեղծի զուտ **անձնական դրամայով**՝ զավակներ չունենալու հանգամանքով: Չավակներ ունենալու երազը այդպես էլ չիրականացավ, մինչդեռ՝

*Մանկութենես, կը հիշեն, նախքան ուրիշ ամեն սեր,
Քան ծնողքի, քան քրոջ, ես կզգայի իրբև հայր,
Չավկիս համար ապագա, զավկիս համար որ մեջս էր,
Սեր մոր ինձմե դեպի ինձ կընէր շրջան մը անծայր...
(«Չավկիս»)*

Բայց, ավա՛ղ, «անհուն զավկի սերը» նրա մեջ ընկել էր «Անապատին մեջ ինկած ազնիվ հունտի մը նման, որ կռծեցավ՝ ծլելուն սպասելով ընդերկար» և այդպես էլ չծլեց: Տարիներ շարունակ բանաստեղծը, քուն թե արթմնի, պատկերացրեց նրան, երբեմն թափառեց «օտար տղոց քով ... քիչ մը գորով պաղատելով», երբեմն նայեց ուրիշ երեխաների և նրանց մեջ փնտրեց իր չունեցած զավակին, երբեմն իր երազը իրականացած տեսավ երազում («Պատիժը»), երբեմն տրտնջաց առ Աստված՝ «Չավկի մը շնորհն անգամ, ո՛վ Տեր, զլացար ինձի ընդմիշտ // Եվ զիս իմ մեջ սպանեցիր չարաչար» («Չավակս»): Իր չունեցած զավակի նկատմամբ իր սերը նա նվիրեց կյանքում ուրիշներին, ուրիշ որբերի (և ոչ միայն), որոնցից մեկն է Լևոն-Չավեն Սյուրմեյանն էր, որին հոգևոր հայր դարձավ: Հոր և զավակի խոր սիրով կապվեցին նրանք, երկար տարիներ, անգամ իրարից հեռու, նամակներով (հետագայում ուրիշները դրանք հրապարակեցին առանձին գրքով):

«Սերը» նաև անձնական դրամայի հանդիսարան էր: Թեքեյանի դրամայի, որ առավել բնականություն էր հաղորդում հեղինակի խոսքին ու տպավորում: Մենակ, բայց մարդկանց ու ազգը սիրող անհատի դրաման էր: Թափառեց երկրեերկիր, չունեցավ սեփական տանիք, ընտանիք՝ կին ու զավակներ, հեռու հայրենիքից, անգամ մանկության վայրերից՝ գեղատեսիլ Սկյուտարից, երբեմն

⁵ Վ. Թեքեյան, Նամականի, Լոս Անձելոս, 1983, էջ 224:

մրմնջաց. «Եվ իրավունք չունիմ ես քու հողիդ մեջ թաղվելու» («Պոլիս»): Կորցրած սերերը շատ էին, և «Սերը» գրքի մի երակն էլ այս ցավի զգացումն էր: Բայց անձնականը տեղի է տալիս, երբ տեսնում է «ուրիշ ցավեր, անթիվ ցավերը շատերուն»: Եվ նվիրումը «այլոց» դառնում է մխիթարանք ու գոհացում: Ահա հենց այս գրքում է Թեքեյանի հայտնի «Հաշվեհարդարը»՝ հաստատումը իր կորուստների, նվիրումի ու գոհացման: «Կյանքեն ինձի ի՞նչ մնաց,– հարցնում է բանաստեղծը ինքն իրեն և պատասխանում,– Ինչ որ տվի ուրիշին, տարօրինակ, այն միայն. // Խանդաղատանք մը ծածուկ, օրհնություններ անիմաց, // Երբեմն հատնումը սրտիս ու մերթ արցունք մը անձայն»: Բանաստեղծի «տվածը» երգն է, քերթվածը՝ սրտի խոսք, ու եթե նրա մեջ դնում է «խանդաղատանք», «օրհնություն», «հատնումը սրտի» ու «անձայն արցունք», ասել է՝ Սեր, պիտի սրտով ու սիրով էլ այն ընդունի ընթերցողը և փոխադարձի իր սիրով: Ուստի՝

*Ինչ որ գնաց ուրիշին վերադարձավ անուշցած
Ու զորացած հոգիիս մեջ մնալու հավիտյան:*

Ուրիշ ի՞նչ ակնկալիք ունի ստեղծագործողը ընթերցողից, եթե ոչ այս փոխադարձումը: Նույն այդ տարիներին իր մի նամակում՝ ուղղված Լևոն-Ջավեն Սյուրմեյանին, Թեքեյանը գրել է. «Արվեստագետը բնագոյաբար սեր կը փնտռե իր սրտին ու մտքին համաձայն զավակներ ստեղծելով, որոնք զինք պիտի ճանչցնեն ու սիրեցնեն ավելի հարազատ կերպով, քան իր արյունի զավակները»⁶:

«Սեր» ժողովածուի ներքին կառուցվածքը՝ երեք ծոցերի հուշունով («Աստուծո», «Հայ ազգին», «Ընթերցողին»), եռամաս է. **բանաստեղծը և հայ ազգը, բանաստեղծը և մարդիկ, բանաստեղծը և Աստված**: Բոլոր այս թեմաների մեջ տասնամյա շրջանում նկատելի է բանաստեղծի տրամադրությունների փոփոխության ընթացքը՝ տազնապից դեպի հավատ, հուսախաբությունից՝ հույս, կենսասիրության վերընթաց: Այսպես 1921–1925 թթ. գրված «Մութ ժամեր» շարքը (Ա–Թ քերթվածներով) կորուստների ցավից ծնված մռայլ («մութ») պատկերներ են «անդունդին և երկինքին մեջ առկախ ցնորական օրորոց» հայրենիքի մասին, խոստովանություն իր «անհուն

⁶ Վ. Թեքեյան, Նամականի, էջ 272:

սիրո», «վատնած կորովի», «խորտակված երազի» մասին և թախիծով պարուրված մաղթանքի խոսքեր, որ հայրենիքի «անուշ մանուկները երջանիկ ըլլան» իրենից հետո, իրենից, որ՝ «ծնած օրես մինչև այժմ՝ իմ հայրենիքս ինձ հետ տարի ամեն տեղ»։ Իսկ ահա 1933-ին գրված «Ներկա Հայաստանին» բանաստեղծության մեջ տեսնում ենք խորհրդային Հայաստանի և նրա ապագայի նկատմամբ գոհության, ուրախության, հավատի դրսևորումը.

*Ու գոհացա՛վ միտքս քեզնով, ըսփոփվեցավ.
Ուրախացա՛վ մինչև անգամ, քեզի դիմեց
Ու կը դիմե հիմա ինչպես գանձի մը մեծ...
Տարբե՛ր ես դուն մեր երազեն. – ավելի՛ լավ...
Ավելի՛ լավ կըսեն, այո, անզիղջ, անգութ,
Չի դատակնիքն է «չեղածին» փաստն «ըլլալուդ»...*

Երեք տարի հետո նա «Ներկա Հայաստանին» խորագրով ևս երկու բանաստեղծություն պիտի գրեր՝ խանդաղատանքով ու հիացումով հաստատելու համար, թե այն հայոց երազի իրականացումն է («Հող այնտեղ և հողին վրա ցեղ...», «Երկիրը հոն իր գավակինն է այլևս...»):

Բանաստեղծը և Աստված: Աստված ամենուր է «Սերը» գրքում և ոչ միայն: Բանաստեղծը հաճախ է դիմում նրան, բայց ահա «Սերն» ամփոփող վերջին հինգ բանաստեղծությունները բացառապես «աստվածներգություն» են, ավելի ճիշտ՝ «ի խորոց սրտի» ինքնաբացահայտումներ, իր աստծո որոնում, որովհետև հարցեր ու պահանջներ ունի նրան հղելու՝ հանուն իր, ազգի ու մարդկանց: Այդ հինգ քերթվածներից չորսը 1925 թվակիր են, վերջինը՝ 1929: Նախ՝ բանաստեղծը «Մութ ժամեր»-ի տրամադրությամբ է դիմում Աստծուն՝ հոգեկան տառապանքների, «մութի ու մոլորանքի միջից» իրեն դուրս քաշելու, փնտրում է նրա լույսը՝ կառչելու և մարմնի «խավար գութից» դուրս ելնելու, իր սիրտը նրան ցույց տալու համար: Հակասական է բանաստեղծի վերաբերմունքը նրա արարչության ու արդարության նկատմամբ, նրա՝ որպես Հոր՝ գավակի նկատմամբ ունեցած սիրո համար: Չգիտեմ, ասում է, դո՞ւ ես հեռանում ինձանից, թե՞ ես եմ փախչում քեզանից: Բայց իրեն ապավեն է փնտրում՝ «Քեզմե քեզ կոտրելով կ'երթան

ծունկերս դողդոջ»։ Մերթ նրան թվում է, թե լքված է Աստծո կողմից, մերթ՝ թույլ «պլպլում է հույսը»՝ «Մերդ զիս կը հոգա»։ Մերթ որոնում է նրան ու չի գտնում։ Ասում է՝ «Իմ հոգիիս մեջ ըզՔեզ կը փնտռեմ այս առտու և չեմ, ես չեմ գտներ Քեզ։ Տեր իմ, ո՞ւր ես Դու»։ Ասում է՝ «Կ'իյնա անունդ վար շուրթերես», բայց կրկին երևում է մի աղոտ լույս՝ «թե կաս Դուն», թե՛ «Որոնումս այսօր // Քու ապացույցդ է արդեն»։ Աստծուն որոնելու, Աստծուն դիմելու բացատրություն էլ ունի. իր համար Տիրոջից «շնորհ ու վարձք» չի խնդրել, այլ դիմել է «խորութենն միշտ ցավիս» և «այլոց ցավին համար»։ Ու եթե «վերստին փնտռում է» Տիրոջը, միայն նրա համար, որ պատճառը հայտնի է միայն իրեն. «Պիտի խոցեն ինձ նորեն Քու չար ոգիներդ»... Ու պիտի խոցեն ոչ միայն իրեն։ Ուրեմն ոչ միայն իրեն խոցելու պատճառով, ոչ միայն իր, այլև «այլոց ցավի» համար է բանաստեղծը «փնտռում», որոնում (բանաստեղծության վերնագիրը «Որոնում» է), իր հոգում կուտակվում են նաև «ուրիշ ցավեր, անթիվ ցավերը շատերուն», և նրանց սիրո ու կարեկցանքի խոսքեր է հղում։ Տրտնջում-բողոքում է աշխարհի անարդարության, մարդկային չարության դեմ և իր տրտունջը ակամա ուղղում է առ Աստված։ Բանաստեղծը պարզապես **շվարած** է Աստծո արդարության, հավասարատեսության, Հայր կոչվելու համար, Աստծո, որին անվանում է «Ծնող արևներու և Հսկող խորատես»։ Ո՞րն է Հոր սերն ու արդարությունը իր ստեղծածի՝ մարդու, իր զավակների հանդեպ։ Բանաստեղծը **շվարած** (բանաստեղծությունը հենց այդպես էլ վերնագրված է՝ «Շվարում») ասում է՝ «Աստված իմ, եթե կարելի չէր», որ բոլոր մարդիկ լցված լինեին բարությանը, զոնե ստեղծեիր նրանց իրարից պաշտպանված և թույլ չտայիր, որ թույլը, տկարը («ան ալ քու որդիդ») զարնվի ուժեղների կողմից։ Բանաստեղծը ոչ միայն շվարած է, այլև բողոքում, ընդվզում է.

*Բայց չըրի՜ր այդպես... Կըլլան ոտնակոխ
Ուժովեն նվազ ուժովներն ամեն,
Ու կը զարնվի՜ եղբայրն եղբորմեն...
Ի՞նչ խորհուրդ է այս. մարդ մարդու ոտիս,
Եվ Դուն հավիտյան տկարին ընդդեմ...
Աստված իմ, ի՞նչպես ըզՔեզ ըմբռնեմ...*

Մտածելու տեղիք է տալիս՝ ինչու է Թեքեյանը հենց այս բանաստեղծությամբ ավարտել իր ժողովածուն: Ու նաև գիրքը բացել Աստծուն ուղղված ձոնով, որ խոստովանություն է, թե Աստված է իրեն տվել ստեղծագործելու շնորհը, հունդեր, որ ցանել է ինքը և հունձքն ահա նրան է նվիրում:

Թեքեյանի «Սերը» հիրավի առատ և հասուն հունձք էր թվակա-նին 1933:

Թեքեյանի «Սերը» բանաստեղծի Սիրո հանդիսարանն է:

Vazgen Gabrielyan – *Vahan Tekeyan’s spread of love rays.* – The author argues that “Love” was the culminating point of Diaspora Armenian poetry, the most embracing universal artistic concept of the first decade of Diaspora life (1920s), the guiding pharos of Diaspora Armenian Literature.

In this context, the article is the examination of Vahan Tekeyan’s poetry book, *Love*, published in 1933. Gabrielyan analyses Tekeyan’s perception of love, its dissemination and structure as a tripartite internal construct dedicated to God, the Armenian Nation, and to the Reader.

Вазген Габриелян – *Распространение лучей любви Вагана Текеяна.* – В статье анализируется сборник Ваана Текеяна «Любовь» (1933) – раскрыто текеяновское восприятие любви, показано, как это чувство поэта пронизывает всё вокруг, продемонстрирована трёх-частная структура книги, предвосхищённая тремя посвящениями («Богу», «Армянскому народу», «Читателю»). Утверждается, что «Любовь» являет собой наивысшее достижение зарубежной армянской поэзии своего времени, наиболее широкую художественную панораму жизни диаспоры в первое её десятилетие и веку в развитии её литературы.

ԱՐՄԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՎԱՅԱՆ ՏԵՐՅԱՆԻ «ՅՈՒՆԻՎԵՐՍԻՏԵՏԻ ՎԵՐԱԿԱՆՈՒՄԻ ԵՎ ՍՓՅՈՒՒՆՔՅԱՆ «ՅՈՒՆԻՎԵՐՍԻՏԵՏԻ ՎԵՐԱԿԱՆՈՒՄԻ»-Ը

XX դ. սկզբին հայ ականավոր գրող և հրապարակախոս Վահան Տերյանը շրջանառության մեջ դրեց «Յոզկոմի Յայաստան» գրվածքը՝ Յայաստանի և հայության ապագայի սեփական տեսլական-հայեցակարգը¹, իսկ 1920-40-ական թթ. Յայաստանի Յանրապետության նախկին ղեկավարությունը, որ հեռացել էր հայրենիքից, Սփյուռքում ասպարեզ բերեց համանուն գաղափարախոսական-կազմակերպական հայեցակարգը²:

Առաջին հայացքից երկու գաղափարները միմյանց հետ կապ չունեին, քանի որ առաջինը ընդհանուր առմամբ վերաբերում էր հայության գալիքին, իսկ երկրորդը՝ սփյուռքահայության ապագա կյանքի կազմակերպմանը:

Երկու գաղափարների միջև կապ փնտրելու անհրաժեշտությունը բխում է այն իրողությունից, որ Վ. Տերյանի քննադատական ու միաժամանակ կառուցողական դիտարկումների «թիրախը» այն քաղաքական, ռազմական և մտավորական գործիչներն էին, որոնք հետագայում ստանձնեցին Յայաստանի Յանրապետության ղեկավարությունը:

Մյուս կողմից, համադրելու օգտին է խոսում զույգ «Յոզկոմի Յայաստանների» գաղափարական հարազատությունը:

¹ Տե՛ս Վ. Տերյան, Երկերի ժողովածու, հ. 2, Եր., 1961, էջ 303-319: Վ. Տերյանի «Յոզկոմի Յայաստան»-ի մանրամասն քննությունը տե՛ս Մ. Սարգսյան, Վահան Տերյանի «Յոզկոմի Յայաստան» պատմափիլիսոփայական հայեցակարգը, «Պատմա-բանասիրական հանդես», 2004, թիվ 3, էջ 77-98:

² Սփյուռքյան «Յոզկոմի Յայաստանին» մենք անդրադարձել ենք նաև նախկինում (տե՛ս «Յայաստանի Առաջին Յանրապետության նախկին ղեկավարության հաստատումը Սփյուռքում. «Յոզկոմի Յայաստանի» ստեղծումը (հայեցակարգային որոշ դիտարկումներ)», «Յայ գաղթականությունը և Յայրենիք-Սփյուռք կապերը 1918-1985թթ.» միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Եր., 2011, էջ 41-52: Տե՛ս «Из истории развития Армянской Диаспоры: “Духовная Армения”, - материалы международной научной конференции “Армения в диалоге цивилизаций”, Нижний Новгород, 2011, էջ 153-158), սակայն սույն հոդվածում այն կփորձենք դիտարկել Վ. Տերյանի «Յոզկոմի Յայաստան» գրվածքի լույսի ներքո:

* * *

Վ. Տերյանի «Հոգևոր Հայաստան»-ը: Տերյանի «Հոգևոր Հայաստան» գրվածքը հայեցակարգային բնույթի ստեղծագործություն է, որտեղ հեղինակը, հակադրվելով ազգի և հայրենիքի՝ իր շրջանի գործիչների ընկալմանը, նախանշում է հայության ցանկալի գալիքը: Մեծ մտավորականը հայության ազատագրական մտքի զարթոնքը տեսնում և գնահատում է, սակայն դրա ընթացքի մեջ նկատում է հայ հոգևոր արժեքների աստիճանական վերացման և մահվան վտանգը:

Խոսելով իր օրերի ազգային գործիչների (քաղաքական, ռազմական, մշակութային) մասին՝ Վ. Տերյանը նշում է. «Այդ հոսանքի լոգունգը բացարձակ ու վճռական է, նրա դրոշակի վրա գրված է՝ «դեպի Հայաստան»: Ինչպես էլ լինի, ինչ գնով էլ լինի, ինչ հետևանք էլ ունենա՝ միևնույն է՝ «դեպի Հայաստան»: «Հայաստանը պետք է ազատվի». անդրդվելի մի պնդում է սա, որի հանդեպ ոչ մի ուժ չի կարող կանգնել, որին ոչ մի արգելք չի կարող կասեցնել: Եվ հասկանալի է դա: Չէ՞ որ ամեն մի հայ մտավորականի, ոչ միայն մտավորականի, այլև ամեն մի հայ մարդու համար այդ հարցը սրբազան մի ավանդ է դարձել, նվիրական մի տվայտանք, ամեն մի հայ մարդու առջև ծառայել է իր եղերական, արյունամներկ պատկերով: Մի՞թե կարող ենք սառնասիրտ լինել մենք, երբ այժմ դրված է այդ հարցը, երբ կանգնած ենք նրա այս կամ այն լուծման հանդեպ: ... Սակայն դրանով չի վերջանում մեր անելիքը. դա միայն նախադրում է մեր ապագա հայրենաշեն, ազգակառույց գործի...»³:

Նման հույժ կարևոր նախաբանից հետո, որտեղ արժևորվում էր «Դեպի Հայաստան» հոսանքի գործունեությունը, հեղինակն անդրադառնում է նաև դրա թերի կողմերին՝ անխնա դատապարտելով հատկապես դրա հոգևոր աղքատությունը: «Մենք թերահավատ ենք դեպի այդ՝ մի հարվածով, մի թեկուզ հերոսական ճիգով ստեղծվելիք Հայաստանը: Մեր խորին համոզումով, որքան և կարևոր ու խոշոր լինի այսօրվա այդ հերոսական ճիգը, այնուամենայնիվ նա չէ, որ պիտի որոշի, վճռի հայության ապագայի վիճակը, ստեղծի այն Հայաստանը, որ մեզ համար բաղձալի է: Այդ

³ Վ. Տերյան, նշվ. աշխ., էջ 304-305:

Հայաստանը մենք ...կոչեցինք Յոզևեր Հոգևոր Հայաստան: Եվ ահա, այսօրվա ճիգերի ու ջանքերի մեջ անգամ մենք չպիտի մոռանանք, որ մեր առաջ կա դեռ մի խոշոր ու վսեմ աշխատանք, գուցե ոչ այնքան շլացնող ու փայլուն իր արտաքինով, սակայն իմաստավից և վեհ՝ իր ներքին բովանդակությամբ»⁴:

Գալիք Հայաստանի հոգևոր բովանդակության շուրջ էլ նա կառուցում է իր հայեցակարգ-տեսլականը: Թեև նշված հոսանքի պայքարը հանուն Հայաստանի ազատագրության է մղվում, սակայն այն հաշվի չի առնում ապագա Հայաստանի հոգևոր արժեքները, որի հետևանքով մեռնում է Հայաստանի հոգին: Ըստ նրա՝ մեռնում է «այն, ինչ Հայաստանի հոգին ու սիրտն է, նրա ամենից թանկագին ու վսեմ գանձը, նրա կենդանության և ապագայի լավագույն առիավատչյան: ...Մեռնում է արհամարիված ու ընկած, բայց ազնիվ ու լուսեղեն հոգին Հայաստանի, ...մեռնում է Յոզևեր Հոգևոր Հայաստանը»⁵: Մեծ մտածողը ցավ է հայտնում այդ առթիվ, կարծում, որ եթե նույնիսկ Հայաստանն ազատագրվի, բայց նրա հիմքում չդրվի Յոզևեր Հոգևոր Հայաստանը՝ հայության կազմակերպումը գաղափարական իմաստով, ազատագրված Հայաստանը կլինի անհոգի, մահվան դատապարտված: «Այդ Յոզևեր Հայաստանի կառուցումը ծանր ու տևական աշխատություն է պահանջում, անթիվ կյանքերի տոկուն հավատ և գիտակցություն, անարյուն, բայց ազնիվ, գուցե ավելի դժվար, ավելի ահավոր զոհաբերում, քան արյունի զոհաբերումը: Մի Րաֆֆի, մի Արծրունի, մի Նալբանդյան, մի Դուրյան նույնպես ասպետներ են, գուցե ավելի մեծ հերոսներ են, քան նրանք, որ կռվի դաշտում են զոհաբերում իրենց կյանքը»⁶: Նա գաղափարաստեղծ գործիչներին համարում է ոչ պակաս կարևոր ու անհրաժեշտ, որքան կռվի դաշտում մարտնչողներին: Ըստ որում՝ հարց է, թե նրանցից որոնք են առավել մեծ ներդրում կատարելու Հայաստանի գալիքը կերտելու գործում:

Վ. Տերյանին անհանգստացնում է նաև Հայաստանի ու հայության հատվածական ընկալումը հայ որոշ գործիչների շրջանում: Նրանք, հայություն և Հայաստան ասելով, ի նկատի ունեն

⁴ Նույն տեղում, էջ 314:

⁵ Նույն տեղում, էջ 317:

⁶ Նույն տեղում, էջ 317:

արևմտահայությանը և Արևմտյան Հայաստանը, որպես հայության գլխավոր մշակութային կենտրոններ են ներկայացնում Արևմտյան Հայաստանի էրզրում, Վան և Մուշ քաղաքները: «...Երբ ես կարդացի լրագրում այդ դասախոսությունների բովանդակությունը, չտոգորվեցի նույն լավատեսությամբ, որովհետև նրանց լավատեսությունը հիմնված էր թուրքահայ (իմա՛ արևմտահայ) խնդրի լուծման վրա և այն հավատի վրա, որ տածում էին նրանք դեպի թուրքահայերի կուլտուրական ապագան, մինչդեռ ինձ զբաղեցնում էր ամբողջ հայության կուլտուրական ապագայի խնդիրը»⁷: Հարկ է նշել, որ սկսած XIX դ. վերջից՝ հայ ազատամարտի գործիչների շրջանում արդեն իսկ հասունանում էր հայրենիքի ամբողջական ընկալումը: Սակայն ազատամարտի այդ գործիչները դեռևս պետք է անցնեին գաղափարական հասունացման կարևոր մի շրջան, քանի որ ազգի և հայրենիքի վերաբերյալ նրանց պատկերացումները սկզբում, իրոք, կրում էին որոշակի հատվածականության կնիք: Հ. Քաջազնունին գրում է, որ երբ մշեցին հայրենիք է անվանում Տարոնի հովիտը, կարնեցին՝ Կարնո բարձրավանդակը, և այդպես շարունակ, «հայրենիք» բառը նույնանում է ծննդավայրին, որը չի արտացոլում հայրենիքի բուն էությունը⁸: Այս առումով հատկանշական է Արաբոյի օրինակը, որը, լինելով թիֆլիսում և շփվելով հայ ազատագրական շարժման գաղափարական ու կազմակերպչական աշխատանքներում ընդգրկված գործիչների հետ, այնուհետև Սասունում բոլորին բացատրում էր, որ «Հայրենիքի սահմանը մեր լեռներեն ու ձորերեն շատ անդին է, և մենք պատմութիւն ու վրէժ ունինք, որ մեր ժամանակներեն դարերով հետ կ'երթան»⁹: Դա հայոց ազատաբույն Սասունում դարեր շարունակ առանձնացված կյանքով ապրած հպարտ լեռնեցու կողմից ամբողջական հայրենիքի, ամբողջական ազգի և նրանց պատմության ամբողջականության խորը գիտակցումն էր: Հենց այդ գիտակցությունն էր, որ այդուհետ բնորոշելու էր հայ ազատամարտի բոլոր գործիչներին: Փաստորեն, կարող ենք արձանագրել, որ տեղի էին ունենում հայության՝ որպես ամբողջական ազգի ձևավորում, նրա կողմից հայրենիքի գաղափարի խոր և ամ-

⁷ Նույն տեղում, էջ 306:

⁸ Տե՛ս Հ. Քաջազնունի, Ազգ և հայրենիք, Եր., 2008, էջ 147:

⁹ Մխո-Շահէն Աէֆէրեան, Կենսագրական նօթեր, Պոսթըն, 1903, էջ 11:

բողջական ընկալում և ազգի քաղաքական նպատակների միաձուլում հայրենիքի գաղափարին¹⁰:

Բացի այն, որ Վ. Տերյանը հայության հատվածական ընկալումներին հակադրում է հայության ամբողջական գաղափարը, նա այդ անում է հայության ազգային գլխավոր անձնագրի՝ մշակույթի հիման վրա: «Մի՞թե Արարատյան դաշտը Հայաստան չէ, և նրա ուզին՝ Արվյանը, այդ Հայաստանի ամենալուսեղեն մի բեկորը չէ: Որպիսի՞ Հայաստան եք ուզում կառուցել դուք, որ չեք ուզում ճանաչել այդ հոգեղեն Հայաստանը: Ի՞նչ եք որոնում դուք Հայաստանում, եթե արհամարհում եք այն, ինչ հոգին և սիրտն է նրա...»¹¹: Ըստ Վ. Տերյանի՝ հայությունը իրեն պետք է համարի ժառանգն իր հայրենիքի, բայց անհրաժեշտ է գնահատել նաև նրա հոգեղեն ավանդը: Վերջինիս վրա հիմնված Հայաստանը Վ. Տերյանն անվանում է Հոգևոր Հայաստան, որը նա հակադրում է նյութական Հայաստանին՝ հողին, որը հոգի չունի:

«Հայության հավաքում կամ հայության կազմակերպում գաղափարական իմաստով - ահա՛ ինչ են հասկանում ես Հոգևոր Հայաստան ասելով: Դա այն կուլտուրան է, այն կուլտուրապես կազմակերպված ժողովուրդն է, որի գալուստ մենք կուզեինք հավատալ»¹²: Ազգը, որպես այդպիսին, ստեղծվում է նաև և գլխավորապես իր անդամների ներքին մտավոր-հոգևոր կապով: Պետք է լինի մի ներքին ուժ, հոգևոր մղում, որ մարդկանց համախումբը ազգ է դարձնում: «Ահա թե ինչու՛, ես կարծում եմ, որ բացի արտաքին արգելքները հաղթահարելուց, ամեն մի՝ ազգ կազմելու ցանկություն ու կամք ունեցող ժողովուրդ անդադար պիտի ստեղծի այն արժեքները, որոնք նրա ինքնության առհավատչաներն են»¹³:

Այնուհետև Վ. Տերյանը մասնավորեցնում է իր ասելիքն ու շեշտում, որ Մոսկվայում, որտեղ մեծ ու հարուստ հայկական համայնք կա, չկա մի կազմակերպություն, որի նպատակը հայոց լեզվի պահպանումն ու տարածումը լինի: Չկա նաև որևէ կազմակերպություն, որի նպատակը լինի հայ արվեստագետների հա-

¹⁰ Տե՛ս **Գ. Խուդինյան**, ՀՀ Դաշնակցության քննական պատմություն (ակունքներից մինչև 1895 թվականի վերջերը), Եր., 2006, էջ 51:

¹¹ Տե՛ս **Վ. Տերյան**, մշվ. աշխ., էջ 312:

¹² Նույն տեղում, էջ 314:

¹³ Նույն տեղում, էջ 315:

մախմբումը: «Չեն ասում գրականության, մամուլի, դպրոցի մասին. դա հասկանալի է ինքնըստինքյան»¹⁴: Ելնելով այդ իրողությունից՝ Վ. Տերյանը գրում է, որ «Մեր Յոգևոր Յայրենիքը նույնպես ավերված մի երկիր է, և այդ ավեր ու անավարտ շենքերը կանգնեցնելու համար որպիսի՝ ջերմ սեր, որպիսի՝ անձնվիրություն, որպիսի՝ բուռն ոգևորություն է հարկավոր»¹⁵: Առօրյա մշակութային գործունեությունը Վ. Տերյանը դիտում է որպես հայության ազգային ապագան կառուցելու կարևոր հենարան: «Չպետք է կամենանք մեր հույսը և ապագան նյութական Յայաստան գաղափարի վրա հիմնել, այլ պիտի տենչանք ու աշխատենք Յոգևոր Յայաստանի համար»¹⁶, այլ խոսքով՝ ազգ դառնալու համար չպետք է հույս կապել արտաքին միջամտության հետ, այլ պետք է ապավինել միմիայն սեփական ուժերին¹⁷:

Եվ ահա՛ կարևոր եզրակացությունը. «Եթե հիրավի այսօր պարզված է հայության սիրտը դեպի ապագան, եթե հիրավի հավատում է նա իր ապագային, ապա իր հայացքը ոչ միայն դեպի Վան կամ Էրզրում պիտի ուղղի, այլ իր ներսը, իր հոգու խորքը՝ տեսնելու համար, թե կա՞ արդյոք իր մեջ այն ամենը, որ կենդանություն է ներշնչում մեր նյութական հայրենիքին, այդ Վան և Մուշ և Էրզրումին: Իսկ եթե կա, ապա նա չի նստի ծույլ և անհավատ, այլ կամքի մի գերագույն թափով կձեռնարկի այդ Յոգևոր Յայրենիքի վերակառուցման: Քննեցեք ձեր սիրտը և նայեցեք, թե կա՞ արդյոք այնտեղ հավատ, որով պիտի կենդանանա մեր այդ Յոգևոր Յայաստանը. եթե չկա, ապա զուր են ձեր ջանքերը նյութական Յայաստանի համար... Նա չի կենդանանա: Նա հոգով միայն կարող է կենդանի լինել ... Իսկ երբ դա լինի, ես հավատում եմ, կլինի և Յոգևոր Յայաստանը, կենդանի կլինի մեր Յայրենիքը, ուրեմն կենդանի կլինի և այն Յայաստանը, որի համար մեր ժողովուրդը թափում է այսօր իր արյունը»¹⁸:

Բոլորովին չհակադրվելով Վ. Տերյանի գաղափարներին, որոնք հավերժական ճշմարտություններ են, պետք է նշել, սակայն, որ

¹⁴ Նույն տեղում:

¹⁵ Նույն տեղում, էջ 318:

¹⁶ Նույն տեղում, էջ 316:

¹⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 315:

¹⁸ Նույն տեղում, էջ 317-319:

հայ ազատամարտի կազմակերպիչներն էլ էին հասկանում դրանց անհրաժեշտությունը, որով կհարստացվեր պայքարը: Ուստի մի կողմից՝ կազմակերպված, իսկ մյուս կողմից՝ տարերայնորեն Վ. Տերյանի օրերում Հայաստանի ազատագրության գործին միացավ հայ մտավորականների մի մեծ փաղանգ, որի մեջ էին այնպիսի անկրկնելի անուններ, ինչպիսիք էին Դ. Վարուժանը, Սիամանթոն, Լ. Շանթը և բազմաթիվ այլք, որոնք, շարունակելով XIX դ. հայ լուսավորիչների՝ Խ. Աբովյանի, Մ. Նալբանդյանի, Ռ. Պատկանյանի, Բաֆֆու սկսած գործունեությունը, այն միաժամանակ հարստացրին նորանոր արժեքներով: Եվ հենց նրանց նշանաբանն էլ, որը, որպես հանգանակ, տպագրվել էր «Նավասարդ» հանդեսի առաջին համարում, բարբառում էր, որ իրենց սերնդի ազգային գործիչներին վիճակված է կերտել հայության և Հայաստանի «նոր արշալույսը»¹⁹: Վերջինս նման և խիստ հարագատ էր Վ. Տերյանի գաղափարներին: Ավելին, հայ ազատամարտի գործիչների շրջանում հաստատորեն ամրագրվել էր այդ ազատամարտում զինվորի և մտավորականի համատեղ գործունեության անհրաժեշտությունը²⁰:

Եվ ահա՛, վերոհիշյալ դասերը լավագույնս սերտած գործիչները, որոնց, անկասկած, ուղղված էր Տերյանի քննադատությունը, 1921 թ. հայտնվեցին Սփյուռքում, մի իրականության մեջ, որտեղ կրկին ու կրկին անհրաժեշտ էր կազմակերպել ու առաջնորդել հայությանը, սակայն արդեն հայրենի երկրից հեռու:

Սփյուռքյան Հոգևոր Հայաստանը: Հայկական Սփյուռքի ձևավորման գործընթացը ավարտին հասավ այնտեղ Հայաստանի առաջին Հանրապետության նախկին ղեկավարների հաստատունից հետո, երբ այն սկսեց աստիճանաբար ընդունել կազմակերպակառուցվածքային այն դիմագիծը, որը ոչ էական փոփոխություններով գոյություն ունի նաև այսօր:

Հայաստանի առաջին Հանրապետության ղեկավարության հաստատումով Սփյուռքում տեղի ունեցավ լուրջ փոփոխություն: Հայրենիքից հեռացան և այնտեղ հաստատվեցին հայոց արդեն նախկին անկախ պետության ղեկավար այրերը: Նրանք գրեթե բոլորը

¹⁹ Տես **Յ. Սիրունի**, Դանիել Վարուժան, Պուքրեշ, 1940, էջ 126:

²⁰ Տես **Գարեգին Նժդեհ**, Երկեր, հ. 2, եր., 2002, էջ 448:

ՀՅԴ-ի անդամներ էին, իսկ ՀՅԴ-ն մինչ այդ էլ սեփական կառույցների ուներ Սփյուռքի տարբեր գաղթօջախներում: Սակայն այժմ գաղթօջախներ եկան քաղաքական գործիչներ, պետության նախկին ղեկավարներ: Հասկանալի է, որ նրանց հաստատվելը լուրջ հետևանքներ էր ունենալու Սփյուռքում և մասնավորապես այն համայնքներում, որտեղ լուրջ դերակատարություն ուներ ՀՅԴ-ն: Վերջինս Սփյուռքում այդ ժամանակ արդեն ամենամեծ և հեղինակավոր քաղաքական կազմակերպությունն էր, որի շնորհիվ Հայաստանի առաջին Հանրապետության նախկին ղեկավարությունը կարևոր դերակատարություն ստացավ ՀՅԴ-ի համասփյուռքյան կառույցում մասնավորապես և Սփյուռքում՝ ընդհանրապես:

Հայաստանի առաջին Հանրապետության նախկին ղեկավարությունը, հաստատվելով Սփյուռքում, ակտիվորեն շարունակեց իր գործունեությունը: Այս կապակցությամբ Սիմոն Վրացյանը Ամենայն Հայոց Կաթողիկոսին գրում էր. «Մենք տարագրության մեջ էլ այն ենք, ինչ որ էինք Հայաստանում: Մենք սիրում ենք մեր հայրենիքը և ոչ ոքի չենք ների նրա վերաբերմամբ գործված որևէ անիրավություն: Փառք և պատիվ չենք փնտրում, ոչ էլ բարեկեցիկ կյանք մեզ համար, բայց հայ ժողովրդի պատվին և բարեկեցությանը վնասողների դեմ պայքարում ենք և պիտի շարունակենք: Մեր գոյության նպատակը և կյանքի իմաստը՝ Հայաստանի և հայ ժողովրդի ազատությունն է և անկաշկանդ բարգավաճումը»²¹: Այդ նպատակների իրականացումը հայրենիքից կտրված ապրելու պայմաններում, հասկանալի է, իրականացվելու էր այլ հարթության վրա և այլ մեթոդներով: Եվ հենց այդ նպատակադրումներով էլ 1920-ական թթ. Սփյուռքում սկսվեց Հոգևոր Հայաստանի ստեղծման գործընթացը: «Հոգևոր Հայաստան» գաղափարական հասկացությունն օգտագործվում էր Սփյուռքում հաստատված Հայաստանի առաջին Հանրապետության նախկին պետական այրերի (Ս. Վրացյանի, Գ. Նժդեհի և այլոց) կողմից:

Իր էությանը այն նշանակում էր աշխարհում ցրված ազգի վիրտուալ (երևակայական, երևութական) հավաքականություն: Այդ մասին Ս. Վրացյանը գրում է. «Կազմակերպելով և բարեշինելով

²¹ Ս. Վրացյան, Խոսք ընդ ուսուցչի, Տ. Տ. Գևորգ Ձ սրբ. կաթողիկոսին, ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետի «Տարեգիրք», Եր., 2009, էջ 207:

հանդերձ իր ներքին կյանքը, Հայ Սփյուռքը չնոռացավ ու չկտրվեց Մայր Հայրենիքից, իրեն միշտ զգաց Հայրենիքի մեկ մասը՝ մի տեսակ «Հոգևոր Հայաստան»: ՀՈԳԵՎՈՐ Հայաստանը չփորձեց իրեն հակադրելու ՍՈՎԵՏԱԿԱՆ Հայաստանին, թեև վերջինս ուրացավ և դավադրեց նրա դեմ»²²:

Գ. Նժդեհը, անդրադառնալով ամերիկահայության վիճակին, գրում է, որ իրենց հիմնական նպատակը հայությանը հոգեբանորեն կենտրոնացնելն է, նրան իբրև հասարակություն կերպավորելը²³:

Այսինքն՝ ըստ Ս. Վրացյանի և Գ. Նժդեհի՝ ՀՅԴ-ն աշխարհում ցրված հայությանը որպես մեկ հավաքականություն ձևավորելու փորձ էր կատարում, որը իրականացվում էր ինչպես առանձին գաղթօջախներում՝ դրանք վերածելով կազմակերպված համայնքների, այնպես էլ համասփյուռքյան սահմաններում:

Կար Հայաստանի Խորհրդային Հանրապետություն, որն անկախ չէր և քաղաքական դրդապատճառներով աստիճանաբար կտրում էր կապերը սեփական Սփյուռքի հետ: Միևնույն ժամանակ, կար աշխարհում սփռված հայություն, կար նաև սփյուռքահայության քաղաքական ղեկավարություն՝ ի դեմս Հայաստանի առաջին Հանրապետության ղեկավարության: Ստիպված լինելով կտրվել մայր հայրենիքից, ապրել առանց նրա՝ օտար հողում փորձ էր կատարվում ստեղծելու հոգևոր հայրենիք, մի իրականություն, երբ աշխարհասփյուռ հայությունը ղեկավարվում, ուղղորդվում է, երբ ստեղծվում են նրա ներքին կյանքի տարբեր բնագավառները կարգավորող կառույցներ ու կազմակերպություններ, երբ հայությունը սկսում է զբաղվել իր խնդիրներով: Գ. Նժդեհը գրում է. «Կտրված մայր հողից և հայրենի ժողովրդի կենցաղից՝ նա (սփյուռքահայությունը) դարձել է հոգեպես անհող և անհայրենիք: ...Հայաստանից դուրս, օտարության մեջ, միայն Ցեղի գաղափարն ու պաշտամունքը կարող են փոխարինել հայրենի հողն ու ժողովուրդը: ...Այսօր, մխիթարության ու հպարտանքի երկու առարկա ունենք-Ցեղային Շարժումը և մեր մարտական ուժը: Ապրեցեք երկուսն էլ, որ ապրեք իբրև Ազգ և Հայրենիք»²⁴: Գ.

²² Տե՛ս նույն տեղում, էջ 205:

²³ Տե՛ս Գ. Նժդեհ, ԳՂՎ. աշխ., էջ 172:

²⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 480:

Նժդեհը նույնիսկ կարգախոս էր մշակել. «Երբեք և ոչ մի տեղ՝ առանց հոգևոր Հայրենիքի»²⁵:

Հոգևոր Հայաստանի ստեղծման համար նախևառաջ հիմք էին ընդունվում ՀՅԴ-ի կազմակերպական կառույցները, որոնք տարբեր համայնքներում ձեռք էին բերում նաև համայնքային ղեկավարության գործառույթներ: Ազգային գործիչ Ա. Սահակյանը, նկարագրելով 1920-ական թթ. Մերձավոր Արևելքի գաղթօջախներում ՀՅԴ-ի իրականացրած գործունեությունը, մասնավորապես ընդգծում է. «Ընկերները թափով նվիրվեցան աշխատանքի: Որքան արագ գլուխ գար մեր կոմիտեներու կազմությունը, եւ որքան ուժեղ ըլլային անոնք, այնքան դյուրին պիտի ըլլար ընդհանուր համակարգություն մտցնել ժողովուրդին մեջ»²⁶: Ասվածից պետք է եզրակացնել, որ հայ գաղթականության ներքին կյանքի կարգավորման նպատակն իրականացնելու գործում ՀՅԴ գործիչները նախապատվություն էին տալիս սեփական կառույցի ամրապնդման գործին: Հոգևոր Հայաստանի գաղափարական միասնությունը կառուցվում էր հայկականության հիմքի վրա, որն իրենից ներկայացնում էր հայոց պատմության, հայ ինքնության, մշակույթի և հիշողության մի մեծ համախումբ:

Հոգևոր Հայաստանի գաղափարախոսների ջանքերով Սփյուռքում աստիճանաբար ի հայտ են գալիս կան իրենց գործունեությունն ակտիվացնում և տարածում են կրթամշակութային (Համազգային հայ կրթական և մշակութային միություն), կանանց և բարեգործական (Հայ օգնության միություն), երիտասարդական և մարզական (Հայկական մարմնակրթական ընդհանուր միություն) և այլ բնույթի կազմակերպություններ, միություններ և հաստատություններ: Այդ կառույցների ակունքներում էին այնպիսի մեծ մտավորականներ, ինչպիսիք են Ն. Աղբալյանը և Լ. Շանթը: Նմանատիպ կառույցների գործունեությունը ուներ տարածական մի քանի շրջանակ: Այն երբեմն ընդգրկում էր առանձին վերցրած որևէ համայնք, երբեմն ունենում էր տարածաշրջանային, իսկ երբեմն էլ՝ համասփյուռքյան տարածքում: Դրանց գլխավոր նպա-

²⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 82:

²⁶ Տե՛ս Պատմագրություն Հայ Յեղափոխական Դաշնակցության, քառահատոր շարք, հ. Դ, եր., 2003, էջ 323:

տակներն էին հայապահպանությունը, հայոց լեզվի և մշակույթի պահպանումն ու տարածումը, հայկական դպրոցների հիմնումը և այլն²⁷: Այսինքն՝ գործունեության այն դաշտերը, որոնց բացակայությունը հատկապես շեշտում էր Վ. Տերյանը:

Երիտասարդ սերնդի շրջանում սկսում է տարածվել նաև ազգայնական դաստիարակություն: Սփյուռքի երիտասարդության համար ստեղծվում են «Ցեղակրոն ուխտեր»²⁸:

Հայաստանի առաջին Հանրապետության գործիչների դերակատարությամբ էր պայմանավորված Հոգևոր Հայաստանի ձևավորման գործընթացում այնպիսի մի կարևոր ձեռնարկ, ինչպիսին էր Սփյուռքին քաղաքական երանգ հաղորդելը: Հիմնվեց ՀՅԴ Հայ Դատի հանձնախումբը՝ Ս. Վրացյանի գլխավորությամբ²⁹: Հանձնախմբի գործունեության նպատակն էր հայկական պահանջատիրության արժարժումը տարբեր երկրներում և կազմակերպություններում: Դրանով իսկ աշխարհասփյուռ հայությունն իրականացնում էր սեփական քաղաքականությունը, որը, ճիշտ է, կրում էր սահմանափակ (զրեթե միայն պահանջատիրական) բնույթ, սակայն, միևնույն ժամանակ, ուներ համահայկական շահի ընդգրկում: Այդ պատճառով «Հայ Դատ» հասկացությունը շուտով ձեռք բերեց համասփյուռքյան, իսկ Հայաստանի քաղաքական անկախության վերականգնումից (1991թ.) հետո՝ նաև համահայկական տարածում:

Այսպիսով՝ ձևավորվում էր Հոգևոր Հայաստանը: Վերջինս սկզբնապես իրականություն էր դառնում ՀՅԴ համասփյուռքյան կառույցի շրջանակներում, սակայն գործունեության համահայկական դաշտի պայմաններում Հոգևոր Հայաստանի սահմաններն անընդհատ ընդարձակվում էին:

Այս շրջանում կազմակերպվածության առումով Հոգևոր Հայաստանն ընդգրկում էր տարածական երկու շրջանակ կամ հավաքականություն՝

1. Սփյուռքի առանձին համայնքի շրջանակ. այս Հոգևոր Հայաստանն ընդգրկում էր առանձին վերցրած մեկ հայկական հա-

²⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 305-340:

²⁸ Տե՛ս Ա. Բարսեղյան, Ցեղակրոն շարժումը, Եր., 2009:

²⁹ Տե՛ս Պատմագրություն Հայ Ցեղափոխական Դաշնակցության, հ. Դ, էջ 308:

մայնք, որտեղ հայությունը կարգավորում է իր ներքին կյանքը, ստեղծում կրթական, մշակութային և այլ բնույթի հաստատություններ: Համայնքը Սփյուռքի բջիջն էր, որին, ընդհանուր առմամբ, հատուկ էին նույն խնդիրներն ու նպատակները, ինչ մյուս համայնքներին:

2. ՀՅԴ կառույցի շրջանակ. այս Հոգևոր Հայաստանը նույնպես ուներ սահմանափակ ընդգրկում. վերաբերում էր զուտ կուսակցական կամ կառույցային կյանքին և գաղափարախոսությանը: Թեև ՀՅԴ-ն և նրա որոշ դուստր կազմակերպություններ ունեին համասփյուռքյան այս կամ այն մասշտաբի տարածում, այնուամենայնիվ համասփյուռքյան սահմաններում նրանց գործունեությունը տարածվում էր սեփական անդամների և համակիրներ շրջանում: Միևնույն ժամանակ, ապակուսակցական սկզբունքով ստեղծվող դուստր կազմակերպությունների միջոցով Հոգևոր Հայաստանի սահմաններում սկսում են ընդգրկվել հայության նորանոր հատվածներ:

Պետք է նշել, որ Հոգևոր Հայաստանի ստեղծման գործընթացը պատմական անհրաժեշտություն էր, այն, թերևս, անխուսափելիորեն ստեղծվելու էր սեփական հայրենիքից հարկադրաբար կտրված ապրելու պայմաններում: Սակայն յուրաքանչյուր, թեկուզ անխուսափելի գործընթաց ունենում է առաջնորդներ: Հայաստանի առաջին Հանրապետության նախկին ղեկավարներն էին այն առաջնորդները, որոնք ներմուծեցին Հոգևոր Հայաստանի գաղափարը և իրենց գործունեությամբ իրականություն դարձրին այն: Որպես հայ ազատագրական շարժման և հայկական պետության ղեկավարներ՝ նրանք վաղուց արդեն թրծվել էին համահայկական շահերի բովում: Նրանց ջանքերով և անմիջական աշխատանքով է, որ ստեղծվեց Հոգևոր Հայաստանը՝ աշխարհասփյուռ հայության գաղափարամշակութային հավաքականությունը Հայաստանի սահմաններից դուրս:

Ընդհանուր առմամբ՝ Հոգևոր Հայաստանը որպես ազգային գաղափարակազմակերպական հավաքականություն բնութագրելիս պետք է արձանագրել, որ այն տարածական և մարդկային իր տարբեր ընդգրկումներով կազմում էր մեկ ամբողջություն: Այն ուներ իր սեփական ժողովուրդը, քաղաքական համակարգը (կու-

սակցություն և տարաբնույթ կազմակերպություններ, կառույցներ ու հաստատություններ), գաղափարախոսությունն ու շահերը, ներքին կյանքը, ինչպես նաև վարում էր իր սեփական քաղաքականությունը՝ պաշտպան կանգնելով համազգային դատին:

Ամփոփելով կարող ենք նշել, որ Վահան Տերյանը, գնահատելով հայ ազատամարտի կարևորությունն ու անհրաժեշտությունը, նկատել է դրա գաղափարական աղքատությունը: Ամրագրելով այդ մտահոգությունը՝ նա մեկ հարթության վրա է դրել հայ զինվորին և մտավորականին՝ նշելով, որ վերջինս առաջինից ոչ պակաս կարևոր դերակատարություն ունի նոր Հայաստանի շինարարության գործում: Ըստ նրա՝ գաղափարական, Հոգևոր Հայաստանը պետք է դրվի նյութական Հայաստանի հիմքում, որով վերջինս կստանա հոգի և ըստ այդմ՝ կենսունակություն: 1921 թ. Սփյուռքում հայտնված հայ ազատամարտի և Հայաստանի առաջին Հանրապետության գործիչները, անկասկած, ծանոթ լինելով Տերյանի գաղափարներին, ինչպես նաև անհրաժեշտության բերումով Սփյուռքում սկսեցին Հոգևոր Հայաստանի շինարարությունը, որտեղ գլխավոր դերը վերապահված էր հենց գաղափարական կողմին, հայության կազմակերպմանը գաղափարական իմաստով:

Arman Yeghiazaryan – Vision of "Spiritual Armenia" by Vahan Teryan and the "Spiritual Armenia" in Diaspora – In 1914 Vahan Teryan introduced the concept of “The Spiritual Armenia” - his vision of the future life of Armenia and Armenians. Interestingly, former leaders of the First Republic of Armenia who had settled in the Diaspora started developing a similar concept of “Spiritual Armenia” to develop and organize cultural and communal life in Diaspora during the 1920s to 1940s.

Арман Егиазарян – Видение “Духовной Армении” Ваана Теряна и “Духовная Армения” в Диаспоре. – В 1914 г. Ваан Терян представил концепцию “Духовной Армении” – свое видение будущей жизни Армении и армян, а в 1920-40 годах бывшие руководители Первой Республики Армения начали развивать одноименную концепцию организации жизни армян Диаспоры. Связь между двумя идеями исходит от того, что “мишенью” критических и конструктивных наблюдений Ваана Теряна являлись именно деятели, которые через несколько лет встали у руля Республики Армения.

ՀԱՄԱՁԱՍԴ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ԱՐՏԱՍԱՀՅԱՆՈՒՄ ԳՏՆՎՈՂՆԵՐԻ ԸՆՏՐԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Համառոտագիր

Հաշվի առնելով Սփյուռքում բնակվող Հայաստանի քաղաքացիների ահռելի թիվը՝ կարծում ենք, որ արտասահմանից ընտրություններին մասնակցելու հնարավորությունների հարցը խիստ արդիական և միաժամանակ համապարփակ վերլուծության կարոտ խնդիր է: Սույն հոդվածը նպատակ ունի ներկայացնելու արտասահմանում բնակվող քաղաքացիների ընտրական մասնակցությանն առնչվող ժամանակակից մոտեցումները և լուծումները, ինչպես նաև քննարկելու դրանց կիրառելիությունը Հայաստանում: Այն բաղկացած է երեք հիմնական բաժիններից: Առաջինում համառոտ ներկայացվում են արտասահմանում գտնվող քաղաքացիների ընտրական մասնակցությանն առնչվող ժամանակակից տեսական և նորմատիվ քննարկումները: Երկրորդ բաժինը նվիրված է արտասահմանում քվեարկության կազմակերպման հիմնական եղանակների և դրանց առավելությունների ու թերությունների քննարկմանը: Երրորդ և հիմնական բաժինը նվիրված է անցած երկու տասնամյակների ընթացքում արտասահմանից քվեարկությունը կարգավորող հայաստանյան օրենսդրության փոփոխություններին, ինչպես նաև ուրվագծվում են երկրորդ բաժնում նշված եղանակների կիրառելիության հնարավորությունները Հայաստանում:

Ներածական մաս

Միգրացիայի միջազգային կազմակերպության (IOM) հաշվարկով՝ ժամանակակից աշխարհում կան մոտ 214 միլիոն միգրանտներ¹, մարդիկ, ովքեր մշտապես բնակվում են սեփական պետության տարածքից դուրս: Նշանակալի թիվ են կազմում նաև ժամանակա-

¹ Տե՛ս Միգրացիայի միջազգային կազմակերպության պաշտոնական կայքը <http://www.iom.int/jahia/Jahia/about-migration/facts-and-figures/lang/en>:

վորապես այլ երկրներում հաստատվածները, ինչպես նաև ավանդական սփյուռքների ներկայացուցիչները, ովքեր, պատմական հայրենիքի տարածքում ձևավորված պետության քաղաքացի չլինելով հանդերձ, մի շարք գործոններով, նաև քաղաքական առումով կապված են հայրենիքին: Սրանով է պայմանավորված, որ աշխարհի ավելի քան 110 պետություն արտասահմանում գտնվողներին այս կամ այն կերպ հնարավորություն է տալիս ընտրություններին միջոցով մասնակցելու պետության կառավարմանը²:

Արտասահմանից քվեարկության կարգավորման տեսանկյունից կարելի է պայմանականորեն առանձնացնել մարդկանց երկու հիմնական խումբ, որոնք հավակնում են մասնակցություն ունենալու պետության կառավարման գործընթացին՝ այդ թվում նաև ընտրելու միջոցով:

Առաջին խմբի ներկայացուցիչների մեծ մասը հայրենի պետության քաղաքացի չէ, սակայն հետաքրքրվում է քաղաքական անցուղարձով և ցանկանում է մասնակցել տվյալ պետության քաղաքական կառավարմանը՝ նախևառաջ այդ պետության հետ ունեցած զգացական կապերի պատճառով: Տվյալ դեպքում խոսքը այն սփյուռքների մասին է, որոնց անդամների քաղաքական ինքնությունը և չեզոքությունը կապված են պատմական հայրենիքի հետ, ինչպես նաև առկա է այդ հայրենիքի տարածքում գոյություն ունեցող պետության հետ ինքնանույնականացման ընկալում՝ թեկուզև մասնակի: Չնայած այն հանգամանքին, որ հայ իրականության մեջ ժամանակ առ ժամանակ ծագում են Սփյուռքում բնակվողների՝ հայրենիքում ընտրական եղանակով ներկայացուցչության ապահովման մասին քննարկումներ, անհրաժեշտ է ընդգծել, որ ժամանակակից աշխարհում ավանդական սփյուռքների ներկայացուցիչները զրկված են ընտրությունների միջոցով պատմական հայրենիքի քաղաքական կառավարմանը մասնակցելու հնարավորությունից, եթե տվյալ պետության քաղաքացիներ չեն³: Ուստի սույն հոդվածի շրջանակներում քննարկվելու է

² Sten U. Voting from Abroad: The International IDEA Handbook, Stockholm, 2007, էջ 3:

³ Քաղաքացիություն չունեցող անձանց ընտրական մասնակցության իրավունք շնորհելու առումով բացառություն են եղել Երիտրեայում և Իրաքում կազմակերպված ընտրությունները՝ համապատասխանաբար 1993 և 2005 թվականներին: Երկու դեպքում էլ հիմնավորումը որոշակի ծագում ունեցող անձանց՝ նոր ստեղծվող քաղաքական համակարգի մաս դառնալու հնարավորություն ընձեռելն էր:

բացառապես արտասահմանում գտնվող քաղաքացիների ընտրական մասնակցության հիմնախնդիրը: Հարկ է նաև նշել, որ այստեղ քննարկվելու է նրանց մասնակցությունը համապետական ընտրություններին, քանի որ նախ հենց այդ ընտրություններն են համարվում քաղաքական առումով առավել կարևոր: Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ համապետական ընտրություններին արտասահմանից քվեարկություն կազմակերպելը հաճախադեպ պրակտիկա է: Մինչդեռ տեղական ինքնակառավարման ընտրությունների դեպքում առավել կարևոր է համայնքի բնակիչ լինելու հանգամանքը: Օրինակ՝ Եվրոպայի Խորհրդի անդամ երկրների մեծամասնությունում՝ այդ թվում նաև Հայաստանում, տեղական ինքնակառավարման մակարդակում անցկացվող ընտրություններին մասնակցելու իրավունք ունեն նաև քաղաքացի չհանդիսացող անհատները⁴:

Վերադառնալով արտասահմանից քաղաքական կառավարման մասնակիցների խմբավորմանը՝ պետք է նշել, որ ի տարբերություն առաջին խմբի՝ երկրորդի ներկայացուցիչները տվյալ պետության քաղաքացիներ են, ովքեր կարող են արտասահմանում հայտնվել տնտեսական գործունեություն, դիվանագիտական կամ ռազմական ծառայություն իրականացնելու նպատակով, կրթություն ստանալու և անձնական այլ նպատակներով: Սակայն բոլոր դեպքերում կարևորագույն ընդհանրությունը հենց այն է, որ բոլորն էլ առայժմ այն պետության քաղաքացի են, որտեղից հեռացել են: Անկախ այն հանգամանքից, թե որքան ժամանակ են անցկացրել արտասահմանում՝ այս խմբի ներկայացուցիչներից շատերը պահպանում են անձնական սերտ կապերը հայրենի պետության հետ և հաճախ վերադառնալու նպատակ ունեն: Այս խմբի ներկայացուցիչների՝ հայրենի պետության քաղաքացի լինելու հանգամանքը նաև ենթադրում է փոխադարձ իրավական պարտավորություններ, երբեմն նաև՝ տնտեսական, այդ թվում նաև՝ հարկերի գանձում:

⁴ ՀՀ ընտրական օրենսգրքի հոդված 2.2 համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող անձինք տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ ընտրելու իրավունք ունեն ընտրությունն անցկացվող համայնքի բնակչության ռեզիստում մինչև քվեարկության օրն առնվազն վեց ամսվա հաշվառում ունենալու դեպքում»:

Արտասահմանում գտնվող քաղաքացիներին քվեարկության իրավունք շնորհելու կողմնակիցների հիմնական փաստարկները հենվում են վերը նշված հանգամանքների վրա: Մասնավորապես ընդգծվում է այն փաստ, որ նշված անձինք որևէ այլ պետության քաղաքացիներ չեն և նրանց՝ արտասահմանում գտնվելը ոչ միայն չի հակասում պետության շահերին, այլև հաճախ բխում է հենց այդ շահերից (դիվանագիտական ծառայություն, որակյալ կրթություն և փորձառության ձեռքբերում, նյութական աջակցություն հայրենիքում բնակվողներին և այլն): Առանձին դեպքերում քվեարկության իրավունքի տրամադրումը դիտվում է որպես արտասահմանում գտնվողների՝ հայրենի պետության հետ քաղաքական կապերը ամրապնդելու կարևոր գործոն⁵: Արտասահմանում գտնվող քաղաքացիներին քվեարկության հնարավորություն տրամադրելու կողմնակիցներին ներկայացվող հիմնական հակափաստարկները հետևյալներն են.

- Արտասահմանում գտնվող քաղաքացիները հիմնականում «սեփական մաշկի վրա» չեն զգում հայրենի պետության որոշումները, հետևաբար հաճախ բավարար պատասխանատվությամբ չեն կարող քվեարկել:
- Արտասահմանում գտնվող քաղաքացիները չունեն բավարար տեղեկատվություն բոլոր թեկնածուների մասին, քանի որ նրանց մեծ մասը անհավասար և խիստ սահմանափակ հնարավորություններ ունի իրենց ծրագրերը արտասահմանում գտնվող ընտրողներին ներկայացնելու առումով:
- Արտասահմանում գտնվող քաղաքացիների քվեարկությունը զգալիորեն ավելի ծախսատար է, քան պետության ներսում արողներինը, հետևաբար հարց է առաջանում, թե որքանով է արդար և նպատակահարմար երկրում բնակվողների հարկերից գոյացած հանրային միջոցները ծախսել նաև հարկեր չվճարողների քաղաքական ներկայացուցչությունը ապահովելու համար:

⁵ Օրինակ՝ Ֆիլիպիններում բոլոր այն ընտրողները, ովքեր ցանկանում են քվեարկությանը արտասահմանից մասնակցելու հայտ ներկայացնել, միաժամանակ նաև պետք է պարտավորվեն, որ վերադառնալու են իրենց պետություն քվեարկությանը հաջորդող երեք տարիների ընթացքում:

Մանրամասն տե՛ս Voting from Abroad: The International IDEA Handbook, Stockholm, 2007, էջ 193-199:

• Արտասահմանից քվեարկության կազմակերպման դեպքում լուրջ դժվարություններ են առաջանում գաղտնիության և թափանցիկության առանցքային սկզբունքների ապահովման առումով, ինչը կարող է զգալիորեն վնասել ընտրությունների արդյունքների լեգիտիմությանը⁶:

Բազմաթիվ երկրների փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ արտասահմանում գտնվող քաղաքացիներին քվեարկության հնարավորություն շնորհելու թե՛ կողմ և թե՛ դեմ հանդես եկող ուժերը նախևառաջ առաջնորդվում են իրենց քաղաքական շահերով, ինչը նշված խնդրի լուծումը ցանկացած պետության շրջանակներում հաճախ պայմանավորում է բացառապես արտասահմանում գտնվող քաղաքացիների շրջանակում հեղինակություն վայելող և դրանց հակառակորդ քաղաքական ուժերի հարաբերակցությամբ: Խնդիրը լուծում է ստանում նաև քաղաքական հարթությունում, քանի որ ընդունված միջազգային հիմնարար իրավական նորմերի և ժողովրդավարության չափանիշների տեսանկյունից հստակորեն չի սահմանվում պետությունից դուրս գտնվող քաղաքացիներին քվեարկելու իրավունք շնորհելու կամ արգելելու անհրաժեշտությունը: Օրինակ՝ Եվրոպայի խորհրդի Վենետիկի հանձնաժողովը, որի սահմանած չափանիշներով առաջնորդվում է նաև Հայաստանը, արտասահմանից քվեարկելու իրավունքի առնչությամբ ընդունած փաստաթղթերում հիմնականում սահմանափակվում է դրա ոչ պարտադիր, քաղաքական առումով զգայուն և ընտրական մյուս չափանիշների բավարարման առումով տեխնիկապես դժվար իրագործելի լինելու մասին դատողություններով⁷:

Ամփոփելով անհրաժեշտ է ընդգծել, որ չնայած այն հանգամանքին, որ շարունակաբար աճում է այն երկրների թիվը, որոնք հնարավորություն են տալիս արտասահմանում գտնվող իրենց քաղաքացիներին մասնակցելու համապետական ընտրություններին,

⁶ Տե՛ս Challenging the norms and standards of election administration. Collection of papers published by IFES, 2007, էջ 38:

⁷ Տե՛ս, օրինակ՝ Report on the compatibility of remove voting and electronic voting with the standards of Council of Europe, adopted by Venice Commission at its 58th Plenary Session, Venice 12-12 March, 2004, <http://www.venice.coe.int/docs/2004/CDL-AD%282004%29012-e.asp>

արտասահմանում գտնվող քաղաքացիների ընտրական իրավունքը համընդհանուր նորմ չի համարվում ո՛չ ողջ աշխարհում, ո՛չ էլ ժողովրդավարության չափանիշների առաջամարտիկ համարվող Եվրոպայում: Ավելին՝ արտասահմանում գտնվող քաղաքացիների ընտրական իրավունքի իրականացման ցայսօր հայտնի բոլոր եղանակներն էլ խնդրահարույց են և ունեն էական սահմանափակումներ, որոնք անհրաժեշտ է հաշվի առնել նախքան արտասահմանից քվեարկություն անցկացնելու որոշում կայացնելը:

Արտասահմանից քվեարկելու եղանակները

Արտասահմանից քաղաքացիների քվեարկության կազմակերպման ժամանակակից բոլոր եղանակները կարելի է ամփոփել չորս հիմնական խմբերում (տե՛ս Աղյուսակ 1): Ավելորդ չէ նշել, որ դրանք բոլորն էլ խնդրահարույց են և ունեն իրենց առավելություններն ու թերությունները:

Աղյուսակում նշված առաջին եղանակը միջնորդի օգնությամբ քվեարկությունն է, որի դեպքում քվեարկության իրավունք ունեցող անձը, ով քվեարկության ժամանակ բացակայում է պետությունից, կարող է պաշտոնապես լիազորել մեկ այլ անձի իր փոխարեն իրականացնել քվեարկությունը: Ակնհայտ է, որ այս դեպքում արտասահմանում գտնվող քաղաքացու ընտրական ակտիվ իրավունքի իրականացման համար լրացուցիչ էական ծախսեր և միջոցառումներ չեն պահանջվում: Հենց այս պատճառով է, որ արտասահմանից քվեարկության այս եղանակը շահեկանորեն տարբերվում է մյուս երեքից: Սակայն սա խիստ խնդրահարույց է հավասար ընտրական իրավունքի տեսանկյունից, քանի որ միջնորդին հնարավորություն է տրվում մեկից ավելի անգամ քվեարկելու, և չկա բավարար երաշխիք, որ միջնորդը իրականում կարտահայտի լիազորող քաղաքացու կամքը: Քվեարկության այս եղանակը ընդունված է ընդամենը չորս պետություններում, բոլորն էլ կղզային գաճաճ պետություններ: Հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ քվեարկության այս եղանակը հակասում է Եվրոպայի Խորհրդի ընտրական չափանիշներին և կիրառելի չէ Հայաստանի դեպքում՝ այսքանով կսահմանափակվի միջնորդի օգնությամբ քվեարկության մեր քննարկումը:

Արտասահմանից քվեարկելու եղանակները

Անվանում	Առավելություններ	Թերություններ	Երկրներ
Քվեարկություն միջնորդի օգնությամբ	Խիստ սահմանափակ լրացուցիչ ծախսեր:	Հավասար ընտրական իրավունքի խախտման բարձր հավանականություն:	Ընդամենը 4 պետություն՝ Մաուրիտիուս, Տոգո, Վանուատու, Նաուրու:
Ընդամենը Քվեարկություն դիվանագիտական ներկայացուցչություններում	Քվեարկության թափանցիկության ապահովում:	Զգալի ծախսեր: Քվեարկողների սահմանափակ թիվ:	Կիրառվում է ավելի քան հիսուն երկրներում, այդ թվում նաև՝ Հայաստանի հարևան երկրներում
Փոստային քվեարկություն	Համեմատաբար ցածր կազմակերպչական ծախսեր: Գրեթե բոլոր ընտրողների քվեարկության հնարավորություն:	Քվեարկության գաղտնիության սկզբունքի հետ կապված խնդիրներ: Վստահելի և արագ գործող փոստային համակարգի անհրաժեշտություն:	Մոտ 25 երկրներ՝ Գերմանիա, Դանիա, Կանադա, Մեքսիկա, Նորվեգիա, Շվեյցարիա և այլն:
Էլեկտրոնային քվեարկություն	Արդյունքների արագ և հեշտ ամփոփում: Հասանելի է ամբողջ աշխարհի բոլոր անկյուններում գտնվող քաղաքացիներին:	Արդյունքների անվտանգության և վստահելիության հետ կապված մտահոգություններ: Ֆինանսական զգալի ներդրումների անհրաժեշտություն:	ԱՄՆ, Ավստրիա, Էստոնիա, Իսպանիա, Նիդեռլանդներ, Շվեյցարիա, Ֆրանսիա:

Արտասահմանից քվեարկության կազմակերպման հաջորդ եղանակը դիվանագիտական ներկայացուցչություններում և հյուպատոսարաններում, արտերկրում գտնվող ռազմական կայաններում քվեարկության կազմակերպումն է: Սա աշխարհում քվեարկության ամենատարածված եղանակն է, որին կարող են մասնակցել միայն դեսպանատան աշխատակիցները, նրանց ընտա-

նիքների անդամները և արտասահմանում ծառայություն իրականացնող զինվորականները, կամ կարող են նաև ընդգրկվել արտասահմանում հաշվառված բոլոր քաղաքացիները:

Առաջին դեպքում քվեարկության կազմակերպումը համեմատաբար ավելի դյուրին է: Բացի այդ՝ արտասահմանում գտնվող դիվանագետների և զինվորականների ընտրական իրավունքի ապահովումը պակաս վիճելի է, քանի որ այս դեպքում գործ ունենք այն քաղաքացիների հետ, ովքեր արտասահմանում են հայտնվել տվյալ պետության համար ծառայություն իրականացնելու նպատակով և չպետք է զրկվեն իրենց երկրի կառավարմանը մասնակցելու հնարավորությունից: Մինչդեռ արտասահմանում հաշվառված քաղաքացիների՝ դեսպանատներում և հյուպատոսարաններում քվեարկություն կազմակերպելը էապես ավելի դժվար իրագործելի է հատկապես այն վայրերում, որտեղ քաղաքացիների թիվը տասնյակ և հարյուր հազարների է հասնում: Օրինակ՝ պարզապես անհնար է պատկերացնել Մոսկվայում գտնվող ՀՀ քաղաքացիների քվեարկության կազմակերպումը ՀՀ դեսպանատան տարածքում մեկ օրվա ընթացքում: Քվեարկության այդ եղանակը նաև սահմանափակում է մայրաքաղաքներից (որտեղ տեղակայված են դեսպանատները) և հոծ համայնքներ ունեցող քաղաքներից (որտեղ որպես կանոն գտնվում են հյուպատոսարանները) դուրս գտնվող քաղաքացիների ընտրական մասնակցությունը:

Հենց այս սահմանափակումները հաղթահարելու համար առանձին երկրներ արտասահմանում գտնվող քաղաքացիների ակտիվ ընտրական իրավունքը կազմակերպելու համար օգտագործում են նաև տվյալ երկրի այլ տարածքներ և շինություններ՝ հիմնականում ժամանակավոր վարձակալության միջոցով: Սակայն այս դեպքում էլ առաջանում են նոր բարդություններ և խնդիրներ: Նախ՝ էականորեն ավելանում են քվեարկությունը կազմակերպելու ծախսերը, երկրորդ՝ դժվարանում են բուն քվեարկության կազմակերպման գործընթացը և դրա նկատմամբ արդյունավետ վերահսկողության իրականացումը, և ամենակարևորը՝ քվեարկության այս եղանակը ենթադրում է երկկողմանի միասնան պայմանավորվածություն տվյալ պետության և բոլոր այն երկրների միջև, որտեղ առկա են քվեարկություն կազմակերպող պետության զգալի թվով քաղաքացիներ: Ընդունող պետությունները

հաճախ դժկամությամբ են ընդունում սեփական տարածքում այլ պետության քվեարկություն կազմակերպելու գաղափարը: Մյուս կողմից՝ քվեարկության այս եղանակի ամենակարևոր առավելությունն այն է, որ հնարավոր է դառնում արտասահմանում թափանցիկ քվեարկություն կազմակերպել՝ հայրենիքում կազմակերպվածի նմանությամբ:

Փոստային քվեարկությունը արտասահմանից քվեարկելու ամենահին եղանակն է և ընդունված է աշխարհի մոտ երեք տասնյակ երկրներում: Սրա հիմնական առավելություններն են մեծ թվով քաղաքացիների համար հասանելի լինելը և սահմանափակ ծախսերը: Սակայն, ինչպես և բոլոր մյուս դեպքերում, առկա են նաև էական թերություններ. կարող են վտանգվել քաղաքացու ազատ կամքի արտահայտումը և քվեարկության գաղտնիությունը, քանի որ քվեաթերթիկը ուղարկվում է փոստի միջոցով, և հնարավոր չէ հավաստիանալ, որ քաղաքացին ինքն է լրացրել այն՝ առանց որևէ ճնշումների: Սա նաև ընտրական ձայների վաճառքի լայն հնարավորություն է տալիս: Այս եղանակը խնդրահարույց է նաև կազմակերպչական առումով, քանի որ անհրաժեշտ է ունենալ վստահելի և արդյունավետ գործող փոստային ենթակառուցվածք բոլոր այն երկրներում, որտեղ առկա են հաշվառված քաղաքացիներ: Հենց այս պատճառով է, որ որոշ պետություններ փոստային քվեարկություն են կազմակերպում միայն որոշ զարգացած երկրներում, ինչը մյուս երկրներում բնակվող շատ քաղաքացիների զրկում է քվեարկելու հնարավորությունից: Այս եղանակի թերություններից են նաև արտասահմանում և հայրենիքում միաժամանակյա քվեարկություն կազմակերպելու անհնարինությունը, ինչպես նաև՝ փոստով ուղարկված քվեաթերթիկների հաշվարկի հետ կապված հնարավոր այլ բարդություններ:

Ամենաարագ տարածում ստացող, բայց միաժամանակ նաև ամենավիճահարույց եղանակը համացանցի միջոցով էլեկտրոնային քվեարկությունն է: Թե՛ պետության ներսում և թե՛ արտասահմանում համացանցային քվեարկության կազմակերպման կողմնակիցները մատնանշում են դրա հարմարավետ, համեմատաբար էժան և ամենաընդգրկուն եղանակ լինելը. այն քվեարկության հնարավորություն է տալիս ոչ միայն պետության, այլև աշխարհի ցանկացած անկյունում գտնվող բոլոր քաղաքացիներին: Այն

Ունև հնարավորություն է տալիս շատ արագ և հեշտությամբ ամփոփելու քվեարկության արդյունքները: Համացանցի միջոցով քվեարկությունը համեմատաբար նոր եղանակ է, և շատ պետություններ խիստ զգուշավոր են դրա կիրառման հարցում: Ավելին՝ միայն վերջին տարիների ընթացքում մի շարք երկրներում, այդ թվում նաև տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում առաջատարների թվում դասվող Գերմանիայում, Նիդեռլանդներում, ԱՄՆ-ի առանձին նահանգներում դատական կարգով արգելվեց համացանցային քվեարկությունը՝ ոչ անվտանգ լինելու հիմնավորմամբ: Այս եղանակի ամենամեծ թերությունն այն է, որ ֆիզիկական քվեաթերթիկների բացակայության պատճառով քվեարկության արդյունքները ստուգելու և վերահաշվարկելու խիստ սահմանափակ հնարավորություն կա, ինչը կարող է բացասաբար ազդել քվեարկության արդյունքների նկատմամբ հանրային վստահության վրա: Բացի այդ՝ ոլորտի մասնագետները պնդում են, որ ծրագրային ապահովման ներկա փուլում դեռևս հնարավոր չէ ստեղծել համացանցային քվեարկության այնպիսի համակարգ, որը ապահովագրված կլինի ցանցահենցների հարձակումներից: Խնդիրն այն է, որ ցանցահենցների հարձակման դեպքում հնարավոր է դառնում ամբողջովին փոխել քվեարկության արդյունքները՝ ազդելով ողջ ընտրությունների ելքի վրա: Այս դեպքում հաճախ կարող է հնարավոր չլինի պարզել, որ նման հարձակում ընդհանրապես տեղի է ունեցել, իսկ պարզելուց հետո էլ իրական արդյունքների վերականգնումը գրեթե անհնարին է: Նշված թերություններից և վտանգներից զատ՝ համացանցային քվեարկությունը քննադատվում է նաև փոստային քվեարկությանը բնորոշ թերությունների պատճառով, ինչը պայմանավորված է ազատ կամքի արտահայտման սահմանափակմամբ և քվեարկության գաղտնիությունն ապահովելու դժվարությամբ: Հենց այս պատճառով է, որ երկրների մեծամասնությունը համացանցային քվեարկությունը դեռևս կիրառում է որպես փորձնական եղանակ, և առայժմ գոյություն չունի որևէ պետություն, որտեղ քվեարկության գերակշիռ մասը իրականացվում է համացանցի միջոցով⁸:

⁸ Այս ոլորտում բացարձակ առաջատար համարվող Եստոնիայում 2011 թ. խորհրդարանական ընրությունների ժամանակ համացանցի միջոցով ստացվել են ընդհանուր քվեների մոտ երկու տոկոսը:

Հաշվի առնելով նշված թերությունները և վտանգները՝ աշխարհի շատ երկներ արտասահմանից քվեարկություն կազմակերպելու համար միաժամանակ կիրառում են վերը նշված եղանակներից երկուսը, առավել հազվադեպ՝ երեքը: Սակայն անգամ այս պարագայում, որպես կանոն, արտասահմանում գտնվողների քվեները էական ազդեցություն չեն ունենում քվեարկության վերջնական արդյունքների վրա, եթե անգամ արտասահմանից քվեարկելու հնարավորություն ունեցողների թիվը զգալի է երկրում գտնվողների համեմատությամբ: Պատճառն այն է, որ արտասահմանում գտնվող քաղաքացիները խիստ պասիվ են իրենց ընտրական իրավունքն իրացնելու առումով: Ցածր մասնակցության ցուցանիշները, իրականացման բոլոր եղանակների թերությունները, միջազգային իրավական նորմ կամ ժողովրդավարական չափանիշ չհանդիսանալը արտասահմանից քվեարկության կազմակերպումը հաճախ դարձնում են քաղաքական խնդիր, որը յուրաքանչյուր պետություն ինքնուրույն է փորձում լուծել՝ հաշվի առնելով սեփական երկրի առանձնահատկությունները և պետության հիմնական քաղաքական ուժերի նախապատվությունները:

Արտասահմանից ՀՀ քաղաքացիների քվեարկությունը. անցած ուղին և հեռանկարները

Հայաստանի Հանրապետության գոյության ընթացքում մի քանի անգամ փոփոխվել են Հայաստանից դուրս գտնվող քաղաքացիների ընտրական մասնակցությունը կարգավորող դրույթները, իսկ Սփյուռքի քաղաքական ներգրավման և մասնակցության խնդիրը ընդհանրապես և արտասահմանում բնակվող քաղաքացիների ընտրական մասնակցությունը մասնավորապես հիմնականում դուրս են մնացել հանրային և քաղաքական քննարկումներից: Ստորև կներկայացվի Հայաստանի՝ արտասահմանից քվեարկության կազմակերպման անցած ուղին. կքննարկվեն քաղաքացիության շնորհումը կարգավորող իրավական նորմերի փոփոխությունները, քանի որ վերջիններս սերտորեն կապված են արտասահմանից քվեարկության իրականացման օրենսդրական կարգավորման հետ:

1995 թվականի հուլիսի 5-ի հանրաքվեի միջոցով ընդունված Սահմանադրությունը որոշակիացրեց քաղաքացիության խնդրին առնչվող երկու կարևորագույն հիմնադրույթներ՝

- Ազգությանը հայերը Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն են ձեռք բերում պարզեցված կարգով:
- Հայաստանի Հանրապետության քաղաքացին միաժամանակ չի կարող լինել այլ պետության քաղաքացի⁹:

Սղյուսակ 2

Քաղաքացիության շնորհումը և արտասահմանից քվեարկությունը կարգավորող առանցքային դրույթները

05.07.1995	Սահմանադրությամբ արգելվում է երկքաղաքացիությունը միաժամանակ Հայաստանի և որևէ այլ պետության քաղաքացի լինելը: Նույն փաստաթղթով սահմանվում է, որ ազգությամբ հայերը ՀՀ քաղաքացիություն ձեռք են բերում պարզեցված կարգով:
06.11.1995	ՀՀ քաղաքացիության մասին օրենքի ընդունում. ազգությամբ հայ ոչ Հայաստանի քաղաքացիները որևէ կերպ չեն տարանջատվում այլ օտարերկրացիներից ՀՀ քաղաքացիություն ստանալու առումով բացառությամբ ՀՀ քաղաքացիության համար դիմելուց առաջ առնվազն երեք տարի Հայաստանում բնակվելու պայմանին բավարարելու պահանջից:
30.04.1996	Հանրապետության նախագահի ընտրության մասին օրենքով Հայաստանի պատմության մեջ առաջին անգամ ՀՀ քաղաքացիներին արտասահմանից քվեարկելու հնարավորություն է տրվում: Օրենքով նախատեսվում էր քվեարկությունը կազմակերպել «դիվանագիտական ներկայացուցչություններում և հյուպատոսական հիմնարկներում»:
05.02.1999	ՀՀ ընտրական օրենսգիրքը արտասահմանից քվեարկելու հնարավորություն է նախատեսում նաև ԱԺ համամասնական ընտրությունների ժամանակ: Քվեարկությունն իրականացվում է դեսպանատներում և հյուպատոսարաններում:
20.03.2001	ՀՀ քաղաքացիության մասին օրենքի փոփոխությունները նախատեսում էին, որ Հայաստանից դուրս բնակվող նախկին ՀԽՍՀ քաղաքացիներից միայն ծագումով հայերը այսուհետ կարող էին ճանաչվել ՀՀ քաղաքացիներ:

⁹ Տես ՀՀ Սահմանադրություն (ընդունված 05.07.1995), հոդված 14:

Արտասահմանում գտնվողների ընտրական մասնակցության խնդիրը և...

12.09.2001	Հանրաքվեների մասին օրենքը արտասահմանից քվեարկելու հնարավորություն է նախատեսում նաև հանրաքվեների ժամանակ: Քվեարկությունն իրականացվում է դեսպանատներում և հյուպատոսարաններում:
27.11.2005	Հանրաքվեի արդյունքում ընդունված Սահմանադրական փոփոխությունները վերացնում են երկքաղաքացիությունը արգելող դրույթը և նախատեսում են երկքաղաքացիությունը կարգավորող օրենքի ընդունում:
26.02.2007	ՀՀ քաղաքացիության մասին օրենքի փոփոխությունները սահմանում են երկքաղաքացիների իրավունքները և պարտականությունները, միաժամանակ ծագումով հայերի համար հեշտացվեցին ՀՀ քաղաքացիության համար դիմելու պահանջները՝ այդ թվում նաև Հայաստանում բնակվելու և հայերենով բացատրվելու նախկինում գոյություն ունեցող պայմանները:
26.02.2007	ՀՀ ընտրական օրենսգրքի փոփոխություններով վերացվեց արտասահմանից քվեարկելու հնարավորությունը համապետական ընտրությունների ժամանակ: Քվեարկելու իրավունք չէր տրվում նաև Հայաստանում գտնվող, սակայն հաշվառում չունեցող երկքաղաքացիներին:
26.12.2008	Հանրաքվեի մասին օրենքի փոփոխություններով վերացվեց նաև հանրաքվեներին արտասահմանում գտնվող ՀՀ քաղաքացիների՝ դեսպանատներում և հյուպատոսարաններում քվեարկելու հնարավորությունը:
08.12.2011	ՀՀ քաղաքացիության մասին օրենքի փոփոխությունները ազգությամբ հայ ոչ ՀՀ քաղաքացիների համար վերացրին նաև քաղաքացիության համար դիմելու Սահմանադրության իմացության պահանջը:
26.05.2011	ՀՀ ընտրական նոր օրենսգիրքը քվեարկության իրավունք է տալիս արտասահմանում գտնվող դիվանագիտական ծառայություն անցնող ՀՀ քաղաքացիներին և նրանց ընտանիքների անդամներին, ինչպես նաև ՀՀ գրանցված իրավաբանական անձանց արտասահմանյան ներկայացուցչությունների՝ ընտրելու իրավունք ունեցող աշխատակիցներին և նրանց ընտանիքների անդամներին: Հայաստանի պատմության ընթացքում առաջին անգամ նախատեսվում է համացանցային քվեարկություն:

Սինչդեռ քաղաքացիություն ստանալու նախապայմանները և ընթացակարգը սահմանվեցին նույն թվականի նոյեմբերին ընդուն-

ված ՀՀ քաղաքացիության մասին օրենքով: Սույն օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ ինքնաբերաբար ՀՀ քաղաքացի էին ճանաչվում «ՀՀ-ում բնակվող նախկին ՀԽՍՀ քաղաքացիները, ովքեր մինչև Սահմանադրության ուժի մեջ մտնելը ձեռք չեն բերել այլ պետության քաղաքացիություն կամ հրաժարվել են դրանից քաղաքացիության մասին օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից մեկ տարվա ընթացքում»:

Բացի այդ՝ քաղաքացի կարող էին ճանաչվել նաև «մինչև օրենքն ուժի մեջ մտնելու օրը վերջին երեք տարին Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող քաղաքացիություն չունեցող անձինք կամ օտարերկրյա քաղաքացի չհանդիսացող նախկին ԽՍՀՄ այլ հանրապետությունների քաղաքացիները, ովքեր մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը¹⁰ դիմում են ՀՀ քաղաքացիություն ձեռք բերելու համար», ինչպես նաև՝ «1991 թվականի սեպտեմբերի 21-ից հետո Հայաստանի Հանրապետությունից դուրս բնակվող նախկին ՀԽՍՀ այն քաղաքացիները, ովքեր ձեռք չեն բերել այլ պետության քաղաքացիություն, ինչպես նաև մինչ այդ Հայաստանից դուրս բնակվող և այլ պետության քաղաքացիություն ձեռք չբերած ու մինչև օրենքի ուժի մեջ մտնելը հյուպատոսական հաշվառման կանգնած ծագումով հայ նախկին ՀԽՍՀ քաղաքացիները»¹¹: Ըստ օրենքի այս և հաջորդ երկու հոդվածների, որոնցով սահմանվում էր ՀՀ քաղաքացիներից ծնված երեխաների և քաղաքացիություն չունեցող անձանց երեխաների քաղաքացիության շնորհումը՝ ՀՀ քաղաքացիներ կարող են դառնալ այն անձինք և նրանց սերունդները, որոնք՝

ա) մշտապես բնակվում են Հայաստանում դեռ խորհրդային տարիներից,

բ) Հայաստանը լքել են անկախությունից հետո, սակայն ձեռք չեն բերել այլ երկրների քաղաքացիություն և պահել են իրենց կապը Հայաստանի հետ՝ հյուպատոսական հաշվառման կանգնելու միջոցով,

¹⁰ Օրենքում նշված վերջնաժամկետը հետագա տարիներին օրենքում փոփոխություններ իրականացնելու միջոցով հետաձգվեց վեց անգամ՝ հնարավորություն տալով փախստականներին օգտվելու ՀՀ քաղաքացի դառնալու իրավունքից: Վերջին անգամ այս վերջնաժամկետը հետաձգվել է 2010 թվականին, և փոփոխված օրենքի համաձայն՝ վերջնաժամկետ է սահմանվել 2012 թվականի դեկտեմբերի 31-ը:

¹¹ Տե՛ս ՀՀ քաղաքացիության մասին օրենք (ընդունված 06.11.1995), հոդված 10:

- զ) Հայաստանում են ոչ իրենց կամքով հաստատված փախստականներ, որոնք ՀՀ քաղաքացի դառնալու ցանկություն ունեն, որ
- դ) ՀՀ-ում են ծնվել անկախությունից հետո, եթե անգամ նրանց ծնողները ՀՀ քաղաքացի չեն, իրենք դեմ չեն իրենց երեխայի՝ ՀՀ քաղաքացի դառնալուն:

Փաստորեն սույն օրենքի դրույթները միտված էին երաշխավորելու, որ Հայաստանից դուրս բնակվողներից ՀՀ քաղաքացի կարող են ճանաչվել միայն նրանք, ովքեր հեռացել են խորհրդային կամ անկախ Հայաստանից և շարունակել են իրավական և քաղաքական առումով բացառապես ինքնանույնականացվել Հայաստանի հետ, քանի որ ձեռք չեն բերել այլ երկրների քաղաքացիություն: Ակնհայտ է, որ այս նախապայմանները նեղացրին Հայաստանից դուրս գտնվողների այն շրջանակը, ովքեր կարող էին ՀՀ քաղաքացիություն ստանալ: Ավելին՝ ավանդական Սփյուռքի ներկայացուցիչները փաստորեն զրկվեցին ՀՀ քաղաքացի դառնալու հնարավորությունից՝ բացառությամբ նրանց, ովքեր բնակություն էին հաստատել Հայաստանում, չունեին կամ պատրաստ էին հրաժարվելու այլ երկրների քաղաքացիությունից, կարող էին բացատրվել հայերենով և ծանոթ էին ՀՀ Սահմանադրությանը¹²: Որդեգրվեց քաղաքացիություն շնորհելու հայաստանակենտրոն բացառող մոտեցում, որի դեպքում անգամ Հայաստանից դուրս գտնվող այն քաղաքացիները, որոնք սերտորեն կապված էին Հայաստանի հետ, պետք է հաշվառման կանգնեին ՀՀ հյուպատոսական հիմնարկներում: Հենց նրանց էլ հետագայում շնորհվեց ընտրությունների միջոցով ՀՀ կառավարմանը մասնակցելու իրավունք: Այնուհանդերձ, պետք է նշել, որ բացառող այս մոտեցումը վերաբերում էր հենց քաղաքացիության և դրան սերտորեն առնչվող պետության քաղաքական կառավարման մասնակցության հարցին, քանի որ դեռևս 1994 թվականին ընդունված՝ ՀՀ-ում օտարերկրյա քաղաքացիների իրավական կարգավիճակի մասին օրենքով ծագումով հայ օտարերկրյա քաղաքացիներին տասը տարի ժամկետով տրամադրվում էր կացության հատուկ

¹² Սույն օրենքի 13-րդ հոդվածը սահմանում էր ծագումով հայերի համար քաղաքացիություն ստանալու հեշտացում այն առումով, որ ի տարբերություն այլոց՝ ՀՀ քաղաքացիություն ստանալու համար դիմում ներկայացնելիս պարտադիր չէր Հայաստանում առնվազն երեք տարի մշտապես բնակվելը:

կարգավիճակ¹³, որով նախատեսվում էին լայն իրավունքներ, այդ թվում նաև՝ աշխատանքային և ձեռնարկատիրական գործունեության ծավալում¹⁴: ՀՀ քաղաքացիության մասին օրենքն ուժի մեջ մտնելուց ընդամենը կես տարի անց ընդունվեց նաև Հանրապետության Նախագահի ընտրության մասին օրենքը, որով Հայաստանի պատմության ընթացքում առաջին անգամ նախատեսվեց արտասահմանից քվեարկության անցկացում¹⁵: Օրենքով նախատեսվում էր քվեարկությունը կազմակերպել «ղիվանագիտական ներկայացուցչություններում և հյուպատոսական հիմնարկներում», ինչը առաջին անգամ կիրառվեց 1996 թ. սեպտեմբերի 22-ին անցկացված ընտրություններում, և քվեարկելու հնարավորություն ստացան հյուպատոսական հաշվառման կանգնած ՀՀ քաղաքացիները: Հետաքրքրական է, որ Նախագահի ընտրության մասին օրենքի ընդունումից մոտ մեկ տարի առաջ ընդունված ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների ընտրությունների մասին օրենքով արտասահմանից քվեարկություն նախատեսված չէր՝ չնայած այն հանգամանքին, որ այդ օրենքը սահմանում էր, որ Ազգային ժողովի 190 պատգամավորներից 40-ը պետք է ընտրվեին համամասնական ընտրակարգով, այսինքն՝ համապետական ընտրությունների միջոցով¹⁶: 1998 թ. արտահերթ նախագահական ընտրությունների ընթացքում ևս արտասահմանում գտնվող քաղաքացիները դեսպանատներում և հյուպատոսարաններում քվեարկելու հնարավորություն ստացան: Այդ իրավունքից օգտվեցին մոտ 15.000 քաղաքացիներ¹⁷, ինչը արտասահմանում գտնվողների ընտրական մասնակցության դեռևս չգերազանցված ցուցանիշ է: Հերթական խորհրդարանական ընտրությունների նախօրյակին ընդունված՝ ՀՀ ընտրական օրենսգիրքը կարգավորում էր Հայաստանում բոլոր տեսակի ընտրությունները: Սույն օրենսգրքով սահմանվեց, որ «այլ պետություններում

¹³ Տե՛ս Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա քաղաքացիների իրավական կարգավիճակի մասին օրենք (ընդունված 17.06.1994), հոդված 21:

¹⁴ Տե՛ս Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա քաղաքացիների իրավական կարգավիճակի մասին օրենք (ընդունված 17.06.1994), հոդված 25, 26 և 29:

¹⁵ Տե՛ս Հանրապետության Նախագահի ընտրության մասին օրենք (ընդունված 30.04.1996), հոդված 2:

¹⁶ Տե՛ս ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների ընտրությունների մասին օրենք (ընդունված 31.03.1995), հոդված 2:

¹⁷ Տե՛ս <http://archives.armenianow.com/2003/february14/home/evenfromadistance/armenianversion/>

բնակվող կամ գտնվող Հայաստանի Հանրապետության ընտրական իրավունք ունեցող քաղաքացիները Հանրապետության Նախագահի և Ազգային ժողովի՝ համամասնական ընտրակարգով ընտրություններին կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչություններում»¹⁸: ՀՀ քաղաքացիները խորհրդարանական ընտրություններին առաջին անգամ արտասահմանից քվեարկեցին 1999 թ. մայիսի 30-ին: Իսկ 2001 թ. ընդունված հանրաքվեի մասին ՀՀ օրենքով արտասահմանում գտնվող ՀՀ քաղաքացիներին հնարավորություն տրվեց մասնակցելու Հայաստանում անցկացվող հանրաքվեներին, որը իրականացվեց 2003 և 2005 թվականներին կազմակերպված սահմանադրական փոփոխությունների հանրաքվեների ընթացքում¹⁹:

Համացանցային լրատվամիջոցներում պահպանված կցկտուր տեղեկությունների հիման վրա կարելի է ամփոփել, որ 2000-ականներին անցկացված ընտրություններում արտասահմանի ավելի քան երեք տասնյակ քաղաքներում գտնվող ՀՀ դեսպանատներում և հյուպատոսարաններում բացված ընտրական տեղամասերում քվեարկողների թիվն անցել է տասը հազարը: Սակայն ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդ տեղամասերի մեծ մասում քվեարկողների թիվը չի գերազանցել մի քանի տասնյակը, իսկ հիմնական մասնակցությունը հայաշատ երկու քաղաքներում՝ Մոսկվայում և Լոս Անջելեսում էր, որտեղ բացվել են երկու և ավելի ընտրական տեղամասեր, քանի որ քվեարկողների թիվը հասել է մի քանի հազարի²⁰: ՀՀ քաղաքացիները դիվանագիտական ներկայացուցչություններում և հյուպատոսարաններում քվեարկության վերջին հնարավորություն ունեին 2005 թ. Սահմանադրական փոփոխությունների հանրաքվեի ժամանակ, որին 3937 հաշվառված ընտրողներից մասնակցեցին 3468-ը կամ 88,1 %-ը, ինչը, սակայն, աննշան էր Հայաստանում քվեարկած ավելի քան մեկ միլիոն ընտրողների համեմատությամբ և չէր կարող էական ազդեցություն ունենալ քվեարկության արդյունքների վրա²¹:

¹⁸ Տե՛ս ՀՀ ընտրական օրենսգիրք (ընդունված 05.02.1999), հոդված 51:

¹⁹ Տե՛ս Հանրաքվեի մասին օրենք (ընդունված 12.09.2001), հոդված 27:

²⁰ Տե՛ս <http://mediaforum.am/armtoday.php?year=2003&month=02&day=19&LangID=4>

²¹ Տե՛ս <http://www.panarmenian.net/arm/news/15548/>

Ինչպես կարելի է հանդգնել վերը նշվածից, ՀՀ 1998 թ. իշխանափոխությանը հաջորդած առաջին տարիներին արտասահմանից քվեարկության խնդրի շուրջ մոտեցումները կտրուկ փոփոխությունների չենթարկվեցին, ավելին՝ նախատեսվեց արտասահմանից քվեարկելու հնարավորություն նաև ԱԺ ընտրությունների և հանրաքվեների ժամանակ: Ինչ վերաբերում է քաղաքացիության շնորհման մոտեցումներին, ապա 1999 և 2001 թվականներին ՀՀ քաղաքացիության մասին օրենքում իրականացված փոփոխություններում նկատվում է միտում, որ հայաստանակենտրոն բացառող մոտեցմանը աստիճանաբար փոխարինելու եկավ հայակենտրոն բացառող մոտեցումը, որը ազգությամբ հայերի համար հեշտացնում էր ՀՀ քաղաքացիություն ստանալու նախապայմանները: Այսպես՝ 1999 թ. հոկտեմբերի 10-ին ՀՀ քաղաքացիության մասին օրենքում կատարված փոփոխությունները վերացրին Հայաստանում բնակվող փախստականների՝ ՀՀ քաղաքացիություն ձեռք բերելու համար նախատեսված՝ երեք տարի Հայաստանում բնակվելու պայմանը: Իսկ 2001 թվականին նույն օրենքի 10-րդ հոդվածում իրականացված փոփոխություններով ներմուծվեց սահմանափակում Հայաստանից դուրս բնակվող նախկին ՀԽՍՀ քաղաքացիների համար, համաձայն որի՝ ծագումով հայերը կարող էին ճանաչվել ՀՀ քաղաքացիներ, եթե մինչև այդ ձեռք չէին բերել այլ պետության քաղաքացիություն:

Երկքաղաքացիության արգելքի վերացումը տեղ էր գտել 2003 թ. հանրաքվեի դրված սահմանադրական փոփոխությունների փաթեթում, որը, սակայն, չընդունվեց անբավարար կողմ քվեարկողների պատճառով²²: Երկքաղաքացիության սահմանադրական արգելքը վերացվեց 2005 թ. նոյեմբերի 27-ին կայացած հանրաքվեով ընդունված սահմանադրական փոփոխությունների շնորհիվ: Սահմանադրության փոփոխված տարբերակի հոդված 31.1-ում նշվում էր, որ «երկքաղաքացիություն ունեցող անձանց իրավունքները եւ պարտականությունները սահմանվում են օրենքով»: 2007 թ. սկզբին ընդունված՝ ՀՀ քաղաքացիության մասին օրենքով ոչ միայն սահմանվում էին երկքաղաքացի հասկացությունը և երկքաղաքացիների իրավունքներն ու պարտավորու-

²² Տե՛ս <http://www.osce.org/odihr/elections/armenia/16897>, էջ 3:

թյունները²³, այլև եականորեն ընդարձակվում էր ՀՀ քաղաքացի հանդիսացող և ՀՀ քաղաքացի դառնալու հնարավորություն ունեցող անձանց շրջանակը: Այսպես՝ ընդունված նախագծի 4-րդ հոդվածով՝ «ժազունով հայերի, այսինքն՝ հայ նախնի ունեցողների» համար վերացվում էին 1995 թ. ընդունված օրենքի 13-րդ հոդվածի երեք պայմաններից երկուսը՝ վերջին երեք տարին մշտապես Հայաստանում բնակվելը և հայերենով բացատրվելու ունակությունը: Ավելի ուշ՝ 2011 թ. դեկտեմբերին, նույն օրենքում իրականացված փոփոխություններով վերացվեց նաև Սահմանադրության իմացության պայմանը²⁴: Սա նշանակում էր, որ Հայաստանի իշխանությունները քաղաքացիության հարցում որդեգրեցին հայակենտրոն ներառող մոտեցումը, ինչը ըստ էության ենթադրում էր, որ ՀՀ քաղաքացի կարող են դառնալ նաև Սփյուռքում բնակվող բոլոր այն հայերը, ովքեր կարող էին ապացուցել իրենց հայկական ծագումը և պատրաստ էին քաղաքացիություն ստանալու համար զոնե մեկ անգամ այցելել Հայաստան: Քաղաքացիության մասին օրենքի փոփոխությունների հետ միաժամանակ փոփոխվեց նաև ՀՀ ընտրական օրենսգիրքը, որից հանվեցին համապետական ընտրությունների ընթացքում արտասահմանից քվեարկություն կազմակերպելուն վերաբերող բոլոր դրույթները, և օրենսգրքի 51-րդ հոդվածը ուժը կորցրած ճանաչվեց: Նշված փոփոխություններով համապետական ընտրություններին քվեարկելու հնարավորություն տրվեց բացառապես Հայաստանում բնակվող և հաշվառում ունեցող երկքաղաքացիներին²⁵: Ավելին՝ երկքաղաքացիները զրկվեցին ՀՀ Նախագահի և Ազգային ժողովի պատգամավոր ընտրվելու իրավունքից, եթե անգամ բավարար ժամանակ բնակվում էին Հայաստանում և ունեին համապատասխան հաշվառում²⁶: Իսկ 2008 թ. վերջին փոփոխվեց նաև հանրաքվեի մասին օրենքը, ինչից հետո Հայաս-

²³ Տե՛ս ՀՀ քաղաքացիության մասին օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենք (ընդունված 26.02.2007), հոդված 13.1:

²⁴ Տե՛ս ՀՀ քաղաքացիության մասին օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենք (ընդունված 08.12.2011), հոդված 4:

²⁵ Տե՛ս ՀՀ ընտրական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենք (ընդունված 26.02.2007), հոդված 2:

²⁶ Տե՛ս ՀՀ ընտրական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենք (ընդունված 26.02.2007), հոդված 12 և հոդված 13:

տանից դուրս գտնվող ՀՀ քաղաքացիները զրկվեցին նաև հանրաքվեներին արտասահմանից մասնակցելու իրավունքից: Այս փոփոխությունների առանցքային հիմնավորումներից մեկը արտասահմանում բնակվող մեծ թվով երկքաղաքացիներ ունենալու հավանականությունն էր, ինչը ոչ միայն կղժվարացներ արտասահմանից քվեարկության կազմակերպումը, այլև նախևառաջ կարող էր հնարավորություն ստեղծել, որ նաև այլ պետությունների քաղաքացիներ հանդիսացող ՀՀ քաղաքացիները էականորեն ազդեն հայաստանյան ընտրությունների արդյունքի վրա: Այսպիսով՝ հայակենտրոն ներառող մոտեցումը ոչ միայն էապես ընդլայնեց ՀՀ քաղաքացի դառնալու հնարավորությունները, այլև միաժամանակ խիստ սահմանափակեց երկքաղաքացիների ընտրական մասնակցության հնարավորությունները և Հայաստանից դուրս գտնվող բացառապես Հայաստանի քաղաքացիություն ունեցողներին զրկեց արտասահմանից Հայաստանի ընտրություններին մասնակցելու իրավունքից: Վերջիններս, որոնց թվում էին նաև արտասահմանում տեղակայված դիվանագիտական կորպուսի ներկայացուցիչները և նրանց ընտանիքների անդամները, վերջին տասնամյակի ընթացքում առաջին անգամ չմասնակցեցին համապետական՝ 2007 թ. խորհրդարանական և 2008 թ. նախագահական ընտրություններին:

Երկքաղաքացիություն ընդունելուն հաջորդած ընտրական օրենսգրքի փոփոխությունները որոշակի քննադատության արժանացան Եվրոպայի խորհրդի Վեներտիկի հանձնաժողովի և Եվրոպայի անվտանգության ու համագործակցության կազմակերպության ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի համատեղ ընդունած փաստաթղթում²⁷: Մտահոգությունը նախևառաջ վերաբերում էր երկքաղաքացիների պասիվ ընտրական իրավունքի սահմանափակմանը, ինչը հակասում էր ԵԽ ընդունած չափանիշներին: Իհարկե, արտասահմանից քվեարկության վերացումը սկզբունքորեն ընդունելի էր ԵԽ չափանիշների տեսակետից, սակայն այս դրույթին առնչվող մտահոգու-

²⁷ Տե՛ս Joint opinion on the 26 February 2007 amendments to the electoral code of the Republic of Armenia, by Venice Commission and the OSCE Office for Democratic Institution and Human Rights (OSCE/ODIHR), Strasbourg, 6 July, 2007, էջ 4, <http://www.venice.coe.int/docs/2007/CDL-AD%282007%29023-e.pdf>:

թյունները վերաբերում էին այն հանգամանքին, որ փոփոխությունները իրականացվել էին ընտրությունների նախօրեին²⁸:

2011 թ. ընդունված ընտրական նոր օրենսգրքում վերանայվում է արտասահմանից քվեարկություն անցկացնելու հնարավորությունը, և մոտ չորս տարվա ընդմիջումից հետո Հայաստանի քաղաքացիների մի փոքր մասը²⁹ համապետական ընտրություններին մասնակցելու հնարավորություն է ստանում: Հայաստանի պատմության մեջ առաջին անգամ նախատեսվում է համացանցային քվեարկության անցկացումը³⁰, ինչը և իրականացվեց 2011 թ. մայիսի 6-ի խորհրդարանական ընտրությունների ընթացքում, որին մասնակցեցին այս եղանակով քվեարկելու համար գրանցված 238 ընտրողներից 195-ը³¹:

Ամփոփելով նախորդ երկու տասնամյակի ընթացքում Հայաստանի որդեգրած՝ քաղաքացիության շնորհման և արտասահմանից քվեարկության կազմակերպման մոտեցումների և իրավական կարգավորումների մասին վերլուծությունը՝ կարելի է եզրակաց-

²⁸ Տե՛ս Joint opinion on the 26 February 2007 amendments to the electoral code of the Republic of Armenia, by Venice Commission and the OSCE Office for Democratic Institution and Human Rights (OSCE/ODIHR), Strasbourg, 6 July, 2007, էջ 3, <http://www.venice.coe.int/docs/2007/CDL-AD%282007%29023-e.pdf>:

²⁹ Ընտրական օրենսգրքի 60-րդ հոդվածի համաձայն՝ արտասահմանից էլեկտրոնային եղանակով քվեարկելու հնարավորություն էին ստանում բացառապես դիվանագիտական ծառայություն անցնող ՀՀ քաղաքացիները և նրանց ընտանիքների անդամները, ինչպես նաև ՀՀ գրանցված իրավաբանական անձանց արտասահմանյան ներկայացուցչությունների՝ ընտրելու իրավունք ունեցող աշխատակիցների և նրանց ընտանիքների անդամները:

³⁰ Համացանցային քվեարկության եղանակի ներմուծումը արժանացավ Եվրոպայի խորհրդի Վենետիկի հանձնաժողովի և Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի քննադատությանը: Ըստ այդ կառույցների համատեղ կարծիքի՝ Հայաստանում առանց բավարար հիմնավորմանը որդեգրվում է արտասահմանից քվեարկության իրականացման ամենախոցելի եղանակը, որի դեպքում հնարավոր չէր վերահսկել քվեի գաղտնիության ապահովումը: Նույն փաստաթղթում դիվանագիտական և հյուպատոսական հիմնարկներում կազմակերպվող քվեարկությունը նշվում էր որպես նախընտրելի այլընտրանք, քան համացանցային քվեարկությունը (տե՛ս Joint final opinion on the Electoral Code of Armenia adopted 26 May 2011 by Council for Democratic Elections and Venice Commission, Strasbourg, 17 October, 2011, էջ 13-14, <http://www.venice.coe.int/docs/2011/CDL-AD%282011%29032-e.pdf>):

³¹ Արդյունքների մանրամասներին ծանոթանալու համար տե՛ս ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի էլեկտրոնային եղանակով քվեարկության մասին արձանագրություն, http://res.elections.am/images/doc/e_vote.result.pdf:

Նել, որ ՀՀ քաղաքացիություն շնորհելու քաղաքականությունը աստիճանաբար առավել ներառող բնույթ ստացավ Սփյուռքում գտնվող հայերի նկատմամբ: Դրա հետ զուգահեռ, սակայն, սահմանափակվեցին արտասահմանում գտնվող ՀՀ քաղաքացիների՝ Հայաստանի ընտրությունների մասնակցության հնարավորությունները: Ավելին՝ անգամ Հայաստանում բնակվող երկքաղաքացիները զրկված են կարևորագույն քաղաքական պաշտոններում ընտրվելու հնարավորությունից: Այս հանգամանքը ոչ միայն բացասաբար է ազդում Հայաստանի և Հայաստանում բնակվող երկքաղաքացիների միջև քաղաքական վստահության կառուցման վրա, այլև Հայաստանը քննադատելու առիթ է տալիս որոշ միջազգային կառույցների: Հայաստանի և արտերկրում գտնվող ՀՀ քաղաքացիների միջև վստահության կառուցման խոչընդոտ է նաև Հայաստանից ժամանակավորապես դուրս հարյուրիազարավոր ՀՀ քաղաքացիների ընտրական գործընթացներին մասնակցելու հնարավորության բացառումը: Այնուամենայնիվ, 2011 թ. Հայաստանում ընդունված և առաջին անգամ կիրառված համացանցային քվեարկությունը, որը համարվում է խիստ հակասական և ռիսկային եղանակ, լայն հնարավորություն է տալիս վերանայելու արտասահմանում գտնվող ՀՀ քաղաքացիների ընտրական մասնակցության հարցը: Քաղաքական ուժերի միջև համաձայնության ձեռքբերման դեպքում Հայաստանի պատմության ընթացքում առաջին անգամ իրական հնարավորություն է ստեղծվում արտասահմանից քվեարկելու հնարավորություն տրամադրել աշխարհի ցանկացած ծայրում գտնվող ՀՀ քաղաքացուն՝ շնորհիվ նաև այն հանգամանքի, որ Հայաստանի պետական միջոցներով արդեն ստեղծվել է համացանցային քվեարկության համակարգը, որ օգտագործվում է բացառապես մի քանի հարյուր քաղաքացիների ընտրական իրավունքի ակտիվ իրացման համար: Կարծում ենք, որ առնվազն որպես փորձնական լուծում Հայաստանը պետք է արտասահմանից քվեարկելու հնարավորություն ընձեռի Հայաստանից կարճ ժամանակով բացակայող (6 ամսից մինչև երկու տարի), Հայաստան վերադառնալու որոշակի ծրագրեր կամ ընտանիքի անդամներ ունեցող հազարավոր քաղաքացիներին, քանի որ փոխադարձ պարտավորություններ և իրավունքներ սահմանելու միջոցով է հնարավոր ամրապնդել նշված քաղաքացիների կապը պետության հետ:

Hamazasp Danielyan – *The problem, procedures and opportunities for implementation of external voting in Armenia* – Taking into account that fact that large numbers of Armenian citizens reside in the Diaspora discussions on the problems and opportunities of external voting have become urgent. However, very few thorough researches have been conducted in this regard to spread light on many problems and aspects of these discussions.

The aim of this article is to highlight current approaches and resolutions of external voting as well as to discuss the possibilities of implementing those mechanisms in Armenia. The article consists of three main sections. The first section briefly represents current theoretical and normative discussions related to the problem of external voting. The second section is dedicated to the both advantages and disadvantages of diverse procedures of external voting. The third and the main section highlights changes in the Armenian legislation during the last two decades that regulated external voting. Eventually, the author assesses the chances of implementing external voting practices mentioned in the second section.

Амазасп Даниелян – *Проблема, процедуры участия в выборах из зарубежья и возможности применения этих процедур в Армении* – Учитывая огромное число граждан Армении, проживающих в Диаспоре, дискуссии о возможностях участия в выборах из зарубежья остаются крайне актуальными, но одновременно есть необходимость и всестороннего изучения этой проблемы. Данная статья преследует цель представить современные подходы и решения, применяемые в сфере организации выборов из зарубежья, а также обсудить возможности их применения в Армении. Статья состоит из трех частей: первая часть кратко представляет современные теоретические и нормативные дискуссии, касающиеся проблемы участия в выборах из зарубежья. Вторая часть посвящена представлению основных способов и процедур организации выборов из зарубежья, обсуждению их недостатков и преимуществ. Третья, основная часть, представляет изменения, произошедшие в армянском законодательстве, регулирующем участие в выборах за последние два десятилетия, а также очерчивает возможности применения в Армении процедур организации выборов из зарубежья, перечисленных во второй части.

ԱՐՄԵՆ ՄԱՐՈՒՔՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓՅՈՒՌ ԶԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՐԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ՀԱՂԹԱՀԱՐԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Հայոց ցեղասպանության հետևանքների վերացումն ու հաղթահարումը հայության առջև ծառայած այն կարևորագույն հիմնահարցերից են, որոնց լուծմամբ են նաև պայմանավորված հայության զարգացման հեռանկարները: Արդեն մի քանի տասնամյակ է՝ այս ուղղությամբ տարվում են աշխատանքներ, ինչի շնորհիվ քսանից ավելի պետություններ, ինչպես նաև որոշ միջազգային կազմակերպություններ պաշտոնապես ճանաչել ու դատապարտել են Հայոց ցեղասպանությունը: Սակայն ակնհայտ է, որ այս գործընթացում առկա են որոշակի հիմնախնդիրներ, որոնք դեռևս հստակեցման կարիք ունեն:

Թվում է, թե Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հարցում հայ ժողովրդի բոլոր հատվածները պետք է համախմբված լինեին և փորձեին միասնական ջանքերով հասնել կատարված հանցագործության դատապարտմանն ու հայության խախտված իրավունքների վերականգնմանը: Սակայն, ցավոք, անգամ այս հարցում Հայաստանում ու Սփյուռքում միաբանություն ու միասնական դիրքորոշում չկան:

Հիմնախնդիրը ճիշտ և ամբողջությամբ պատկերացնելու համար պետք է անդրադարձ կատարել նրա երկու հիմնական՝ իրավական և բարոյահոգեբանական հարթություններին:

Իրավական հարթություն: Տասնամյակների ընթացքում տխուր ավանդույթի հիման վրա ձևավորվել է այն տեսակետը, որ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հարցով պետք է զբաղվի Սփյուռքը, քանզի ցեղասպանությունից ու հայրենագրկումից անմիջական տուժողները Սփյուռքը ձևավորած Հայոց ցեղասպանության զոհերի ու վերապրածների ժառանգներն են: Այլ խոսքով՝ հենց անմիջական տուժողը պետք է ստանձնի իր իրավունքների ու շահերի պաշտպանությունը: Սակայն, ըստ միջազգային ի-

րավունքի՝ խախտված իրավունքների վերականգնման պահանջով դատական ատյաններում կարող են հանդես գալ միայն միջազգային իրավունքի սուբյեկտները, այսինքն՝ միջազգայնորեն ճանաչված սուվերեն պետությունները¹: Ակնհայտ է, որ Սփյուռքը, չհանդիսանալով միջազգային իրավունքի սուբյեկտ, իրավասու չէ հանդես գալու որպես պահանջատեր միջազգային որևէ ատյանում: Այդ իսկ պատճառով անցած տասնամյակների ընթացքում Սփյուռքն իր ուժերի ու հնարավորությունների սահմաններում կարողացել է հասնել միայն որոշ երկրների խորհրդարանների կամ միջազգային կազմակերպությունների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչվելուն:

Ինչ վերաբերում է խորհրդային Հայաստանին, ապա, լինելով ԽՍՀՄ-ի կազմում, նա ի զորու չէր բարձրացնելու այդ հարցը միջազգային ատյաններում: Անկախացումից հետո Հայաստանը՝ իբրև միջազգային իրավունքի սուբյեկտ, իրավական առումով կարող է ստանձնել իր այն քաղաքացիների շահերի ու իրավունքների պաշտպանությունը, որոնք նույն հանցագործության՝ ցեղասպանության զոհերի ու վերապրածների ժառանգներն են: Իսկ ինչ վերաբերում է սփյուռքահայության շահերը ներկայացնելուն ու պաշտպանելուն, ապա Հայաստանի Հանրապետությունը կարող է ստանձնել այդ իրավունքը, եթե սփյուռքահայերի լիազոր մարմինը օժտել է նրան նման իրավունքով:

Հաշվի առնելով ներկայումս Հայաստանի ու Սփյուռքի միջև առկա հարաբերությունները՝ կարող է թվալ, թե իրավական տեսակետից հարցը խնդրահարույց է, սակայն, բարեբախտաբար, այս հարցին վաղուց հստակ ու որոշակի լուծում է տրվել: Այսպես, Արևմտահայերի երկրորդ համագումարը 1919 թ. փետրվարի 12-ին արդեն իսկ օժտել է Հայաստանի առաջին Հանրապետությանը նման իրավունքով: Համագումարի ընդունած «Քաղաքական բանաձևի» 5-րդ կետի համաձայն՝ արևմտահայերի Գործադիր մարմինը Արարատյան Հանրապետության կառավարության և պառլամենտի հետ միասին պետք է ձեռնարկեր իրական քայլեր միացյալ, ազատ Հայաստան հռչակելու ուղղությամբ²: Այս ձևակեր-

¹ Տե՛ս **Թորիկեան Շ.**, Հայկական հարցը եւ միջազգային օրէնքը, Պէյրոս, 1976, էջ 197:

² **Մելիքեան Վ.**, Արեւմտահայերի համագումարները եւ Հայկական հարցի փուլերը 1917-1923 թթ., Եր., 2007, էջ 10:

պունով արևմտահայերի իրավասու մարմինը փաստորեն լիազորում էր Հայաստանի առաջին Հանրապետությանը, որի իրավահաջորդն է այսօր ներկայիս Հայաստանի Հանրապետությունը, հանդես գալ նաև իր անունից իբրև պահանջատեր, քանզի միացյալ, ազատ Հայաստանի հռչակումն անպայմանորեն ենթադրում էր Հայոց պահանջատիրությունը: Սակայն, միևնույն ժամանակ, Հայաստանին օժտելով նման իրավունքով, Արևմտահայերի համագումարն ընդգծում էր այս ուղղությամբ միասին ու համատեղ աշխատելու կարևորագույն հանգամանքը:

Բարոյահոգեբանական հարթություն: Անշուշտ, խնդիրը չի կարող լուծվել միայն իրավական դաշտում, հարցի բարոյահոգեբանական կողմը տվյալ պարագայում թերևս ավելի կարևոր է, քանի որ տվյալ հարցի վերաբերյալ գոյություն ունի Հայաստանի ու Սփյուռքի միջև փոխադարձ վստահության խնդիր:

Կարծում ենք, որ, ելնելով ընդհանուր ազգային շահի գիտակցումից, կողմերը տվյալ հարցի առնչությամբ միմյանց նկատմամբ պետք է որդեգրեն կառուցողական մոտեցումներ: Մի կողմից՝ Սփյուռքը պետք է գիտակցի, որ միայնակ, առանց Հայաստանի չի կարող հասնել լուրջ և շոշափելի հաջողությունների, առավելագույնը կլինի այն, որ որևէ նոր երկիր կամ երկրներ կճանաչեն ու կդատապարտեն Հայոց ցեղասպանությունը: Մյուս կողմից՝ Հայաստանն ուղղակի իրավունք չունի անտեսելու և չօգտագործելու սփյուռքյան կառույցների փորձառությունը, կապերն ու հնարավորությունները Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման գործընթացում, սակայն դրա համար Հայաստանը պետք է իր գործուն քայլերով բավարար երաշխիքներ ապահովի, որպեսզի սփյուռքահայությունը իր շահերի և իրավունքների պաշտպանությունը կամովին վստահի իրեն և ոչ թե հակազդի, այլ ամբողջությամբ լծվի այդ գործընթացին:

Ցավոք, նման վստահության երաշխիքների ապահովման անհրաժեշտություն իսկապես կա, քանզի որոշ հայաստանցիների այն մոտեցումը, թե Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ու պահանջատիրության հարցը պետք է հանձնվի Սփյուռքին, նաև «հիմնավորվում է» նրանով, որ Հայաստանի սոցիալ-տնտեսական դժվարությունները թույլ չեն տալիս նրան լրացուցիչ բեռ վերցնելու իր վրա:

Հայաստանը պետք է իր քայլերով վստահեցնի Սփյուռքին ու ողջ աշխարհին, որ հայության խախտված իրավունքների վերականգնումը իր համար սրբազան իրավունք է ու միաժամանակ պարտավորություն՝ անմեղ նահատակների հիշատակի առջև: Հայոց պահանջատիրությունը թե՛ Հայաստանի և թե՛ Սփյուռքի համար հավասարապես պետք է դիտվի որպես միասնական կարևոր առաքելություն, և անհրաժեշտ է մեկընդմիջտ ձերբազատվել այն սխալ ու վնասակար մտայնությունից, թե Հայոց պահանջատիրությունը միայն հայության ինչ-որ հատվածի գործն է:

Մինչև Հայաստանի անկախացումը այս ուղղությամբ հաջողությունները անշուշտ գնահատելի են: Տարբեր երկրների խորհրդարանների ու միջազգային կազմակերպությունների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումն ու դատապարտումը կարևոր են այնքանով, որքանով այդ երկրներն ու կազմակերպություններն իրենց սկզբունքային դիրքորոշումն են արտահայտել հայերի նկատմամբ 20-րդ դարասկզբին կատարվածի վերաբերյալ՝ այն որակելով իբրև ցեղասպանություն և մատնանշելով այս միջազգային հանցագործության մեջ մեղադրվող պետությանը: Սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ թուրքիան ոչ միայն պատրաստ չէ ընդունելու իր մեղքն ու հատուցել, ինչպես վարվեց Գերմանիան հրեական Չոլոքոստի պարագայում, այլև պետական մակարդակով շարունակում է ժխտել կատարված հանցագործությունը և նույնիսկ գործուն քայլեր է ձեռնարկում Հայոց ցեղասպանության վերաբերյալ տարբեր խորհրդարաններում ընդունվելիք բանաձևերը տապալելու նպատակով, ակնհայտ է, որ նման գործելակերպով անհնար է հասնել հարցի հանգուցալուծմանը:

Միջազգային իրավունքի սուբյեկտ հանդիսացող Հայաստանի Հանրապետության առկայության պայմաններում նման գործելակերպն արդեն ոչ միայն անընդունելի է, այլև վնասակար, քանզի ժամանակն անցնում է, իսկ մենք եղած սահմանափակ ռեսուրսները վատնում ենք անհեռանկարային քայլեր կատարելով:

Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման առաջադրանքն այժմ հռչակված է Հայաստանի արտաքին քաղաքական առաջնահերթություններից մեկը: Սակայն, մեր կարծիքով, նախկինից եկող իներցիայով տվյալ հիմնախնդիրն այսօր էլ թերի

է ձևակերպված: Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումն ու դատապարտումը ինքնանպատակ չեն, ճիշտ այնպես, ինչպես ինքնանպատակ չեն ցանկացած հանցագործության փաստի արձանագրումը և հանցագործի դատապարտումը: Տուժածին հասցված վնասի հատուցումը տվյալ գործընթացում պակաս կարևոր չէ, քան հանցագործի դատապարտումը: Ուստի այսօր անհրաժեշտ է ձերբազատվել նախկին կարծրատիպերից, և խնդիրը ձևակերպել որպես Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարում, ինչը ենթադրում է տվյալ հանցագործության թե՛ ճանաչում ու դատապարտում և թե՛ դրա հետևանքով տուժած հայ ժողովրդին հասցված վնասների հատուցում:

Ներկայումս, նախքան Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման ուղղությամբ որևէ քայլ ձեռնարկելը, Հայաստանի և Սփյուռքի համապատասխան կառույցների ներկայացուցիչներից ու մասնագետներից պետք է կազմվի պրոֆեսիոնալ փորձագիտական խումբ, որը նախևառաջ պետք է մշակի տվյալ ուղղությամբ գործունեության ռազմավարական ու մարտավարական բնույթի ծրագրային փաստաթղթեր: Օրինակ, անհրաժեշտ է մշակել «Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման համար Թուրքիային ներկայացվելիք պահանջները հիմնավորող պատմաիրավական փաթեթ-փաստաթուղթ» (կարճ՝ «Պահանջների փաթեթ»): Այս հիմնարար փաստաթղթում առկա խնդիրը ճիշտ ձևակերպելուց զատ՝ պետք է հստակ պատասխաններ տրվեն այն հարցերին, թե կոնկրետ ինչ ենք հասկանում Հայոց ցեղասպանության հետևանքներ ասելով, ինչ պատմական ու իրավական հիմքերով և ինչպես կամ ինչ չափով ենք պահանջում այդ հետևանքների վերացումը կամ հաղթահարումը, քանզի կան հետևանքներ, որոնք պարզապես անվերականգնելի են:

«Պահանջների փաթեթը» Հայաստանի և Սփյուռքի կողմից միասնաբար մշակելու հանգամանքը կարևոր է այնքանով, որ ցեղասպանության հետևանքների և Թուրքիային ներկայացվելիք պահանջների հարցում կձևավորվի միասնական համահայկական մոտեցում, որից այլևս չի կարող լինել որևէ շեղում: Այդպիսով կբացառվեն Հայոց ցեղասպանության հետևանքներին և ներկայացվելիք պահանջներին վերաբերող տարաբնույթ մեկնաբա-

նություններն ու շահարկումները առանձին կառույցների և անհատների կողմից: Հարկավոր է քաջ գիտակցել, որ այս հարցում ցանկացած ինքնագործունեություն կամ մոտեցումների տարբերություն անպայման օգտագործվելու են մեր դեմ՝ նպատակ հետապնդելով տարածայնություններ մտցնել հայ ժողովրդի հատվածների միջև և շեղել ճիշտ ճանապարհից:

Կարծում ենք, որ Հայաստան-Սփյուռք հարաբերություններում բարոյահոգեբանական վստահության երաշխիքներից մեկն էլ այն կարող է լինել, որ Հայաստանի Հանրապետությունը «Պահանջների փաթեթին» պետք է տա օրենքի կարգավիճակ, որպեսզի, անկախ վարչակարգի փոփոխությունից, երկրի արտաքին քաղաքականության մեջ այս ուղեծրից ոչ մի շեղում չկատարվի: Այս քայլով առաջին հերթին պետք է օրենսդրորեն արգելվի որևէ գործողություն, առավել ևս՝ որևէ փաստաթղթի ստորագրում, որը կշեղվի «Պահանջների փաթեթից»: Համապատասխան օրենքի ընդունումից հետո «Պահանջների փաթեթը»՝ որպես հրապարակային փաստաթուղթ, լայնորեն պետք է տարածվի հայության շրջանում և աշխարհով մեկ:

Այս ռազմավարական փաստաթղթի հիման վրա Սփյուռքի ու Հայաստանի համապատասխան կառույցների ներկայացուցիչներից ու մասնագետներից կազմված փորձագիտական խումբը պետք է մշակի նաև մարտավարական, կիրառական փաստաթուղթ՝ «Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հայեցակարգ»: Այստեղ մատնանշվելու են այն մեթոդներն ու մեխանիզմները, որոնցով հնարավոր է հասնել ցեղասպանության հետևանքների հաղթահարմանը: Այս փաստաթուղթը, ի տարբերություն առաջինի, լինելու է փակ, սահմանափակ օգտագործման, որպեսզի բացառվի հակառակորդի հակընդդեմ քայլեր ձեռնարկելու հնարավորությունը:

Հայեցակարգի կարևորագույն հիմնախնդիրներից մեկը պետք է դառնա Հայաստանի և Սփյուռքի միջև կատարվելիք աշխատանքները ըստ իրավասությունների, կարողությունների ու փորձառության բաշխումը: Հայոց ցեղասպանության հետևանքների վերացման գործընթացում պետք է հստակեցվեն յուրաքանչյուրի՝ Հայաստանի և Սփյուռքի անելիքները: Նման դերաբաշխումը

թույլ կտա գործընթացները համակարգել մեկ կենտրոնից, այսինքն՝ արդյունավետ օգտագործել եղած ռեսուրսները և խուսափել գործողությունների կրկնություններից, ինչը ավելի շուտ վնաս է տալիս, քան օգուտ: Հայեցակարգի ընդունումից հետո պետք է բացառվի ցանկացած անձնական նախաձեռնություն կամ ինքնագործունեություն, քանզի իրենց անձնական պահանջները և շահերը առաջ մղելով՝ ցեղասպանության զոհերի ժառանգները, ցանկանալով վերականգնել սեփական իրավունքները իրենց նախնիների ունեցվածքի նկատմամբ, կարող են վնասել ընդհանուր գործին: Իսկ Թուրքիան դա կարող է շահարկել՝ պնդելով, թե արդեն հատուցել է հայերի նյութական վնասները³: Ուրեմն՝ նման գործողությունները պետք է ընթանան ընդհանուր նյութական պահանջների շրջանակներում:

Ակնհայտ է, որ մարտավարական փաստաթուղթը ենթադրելու է նաև տվյալ գործընթացը համակարգող ու ղեկավարող համապատասխան կառույցի կամ կառույցների ստեղծում, որոնցում ընդգրկվելու են ինչպես Հայաստանի համապատասխան նախարարությունների ու գերատեսչությունների, այնպես էլ սփյուռքյան կառույցների ստորաբաժանումները, որոնց համադրված, նպատակային ու ներդաշնակ գործողությունները էապես կբարձրացնեն տվյալ ուղղությամբ տարվելիք աշխատանքների արդյունավետությունն ու օգտակարությունը:

Պետք է մշել, որ պետության ու սփյուռքի ներդաշնակ համագործակցության հաջողված օրինակներ արդեն իսկ հայտնի են և տվել են իրենց պտուղները: Հրեաների Հոլոքոսթի հետևանքով հասցված վնասների հատուցման գործում մինչև Իսրայել պետության ստեղծումը ոչ պաշտոնական մակարդակով լուրջ նախապատրաստական աշխատանքներ են կատարվում համաշխարհային սիոնիստական կազմակերպության կողմից՝ ի դեմս նրա հիմնադիր նախագահ Խաիմ Վեյցմանի: Այս իմաստով դժվար չէ նմանություն նկատել Հոլոքոսթի և Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացի միջև, երբ Խորհրդային Հայաստանի **դե յուրե** գոյության և **դե ֆակտո** անգործության պա-

³ Հայ-թուրքական հարաբերություններ. հիմնախնդիրներ և հեռանկարներ, խորհրդարանական լսումներ, 19-20 դեկտեմբերի, 2007 թ., եր., 2011, էջ 81:

րագայում պայքարի առաջամարտիկն էր հայկական սփյուռքը: Սակայն Իսրայել պետության առաջացումից հետո հրեական պետությունն ինքը պաշտոնապես հանդես եկավ Հոլոքոսթի հետևանքով հրեա ժողովրդին հասցված վնասների հատուցման պահանջով: 1951 թ. սկզբներին Իսրայելի արտգործնախարար Մ. Շարեթը Գերմանիային ուղղված հատուցման պահանջը հասցեագրեց հաղթանակած տերություններին՝ ԱՄՆ-ին, ԽՍՀՄ-ին, Մեծ Բրիտանիային և Ֆրանսիային: Այդ պահանջը տերությունները, բացառությամբ ԽՍՀՄ-ի, վերահասցեագրեցին Գերմանիայի Դաշնային Հանրապետությանը⁴: Այսպիսով, Իսրայելը հստակ հասկացնել էր տալիս թե՛ հանցագործ պետությանը՝ Գերմանիային, և թե՛ ողջ աշխարհին, որ հրեական անկախ պետականության ստեղծումից հետո պահանջատեր է ոչ միայն և ոչ այնքան հրեական սփյուռքը, որքան հրեական պետությունը, որը ամբողջ հրեա ժողովրդի շահերի ու իրավունքների ներկայացուցիչն է:

Այնուհետև՝ 1951 թ. հոկտեմբերին 23-ին հրեական ազգային ու միջազգային կազմակերպությունները Նյու-Յորքում հրավիրում են Գերմանիային ուղղված հրեական նյութական պահանջների համաժողովը (կրճատ՝ Պահանջների կոնֆերանսը), որը, ըստ հայտարարության, պետք է բանակցություններ սկսեր Գերմանիայի հետ Հոլոքոստի հետևանքով հրեաներին հասցված վնասների հատուցման հարցի շուրջ⁵: Պետք է նշել, սակայն, որ սա սիոնիստական կազմակերպությունների ինքնագործունեությունը չէր, այլ Իսրայել պետության ու հրեական սփյուռքի կողմից մշակված ծրագիր, որտեղ հրեական պետությունը առաջին պլան էր մղում նացիստական հանցագործություններից տուժած հրեական սփյուռքի լիազոր մարմին, սակայն իրականում հրեական պետությունը ոչ միայն վերահսկում, այլև ուղղորդում էր այդ գործընթացը: Դրա վկայությունն այն է, որ մեկ ամիս անց՝ 1951 թ. դեկտեմբերին Լոնդոնում կայացած հանդիպման ժամանակ, Պահանջների կոնֆերանսի ներկայացուցիչ Նաում Գոլդմանը Գերմանիայի վարչապետ Կ. Ադե-

⁴ Տե՛ս **Մարության Հ.**, Գերմանիայի ֆինանսական փոխհատուցումները հրեությանը (ձևավորումը, գործընթացը, ներկա վիճակը), «Արևմտահայության պահանջատիրության հիմնախնդիրները» (գիտագործնական միջազգային գիտաժողով), Կիպրոս-Նիկոսիա, 18-19 ապրիլի, 2008թ., «Գիտական զեկուցումների ժողովածու», Մոսկվա, 2008, էջ 81-82:

⁵ <http://www.claimscon.org/>

նաուերի հետ պայմանավորվածությունն ձեռք բերեց բանակցությունների հիմքում դնել Իսրայելի արտագործնախարար Մ. Շարեթի ներկայացրած նյութական վնասների հատուցման պահաջի չափը⁶: Դժվար չէ նկատել, որ հրեկան պետությունը համակարգում ուղեկավարում էր տվյալ գործընթացը, թեև Գերմանիայի հետ բանակցությունների սեղանի շուրջ հրեական կողմից երևում էին միայն սիոնիստական կառույցների ղեկավարները: Հրեական Հոլոքոսթի նյութական վնասների հատուցման բանակցությունները սկսվեցին 1952 թ. մարտին և տևեցին մինչև սեպտեմբեր: Միայն այն բանից հետո, երբ Իսրայելի վարչապետ Դ. Բեն-Յուրիոնին հաջողվեց Կնեսեթում ձայների 61 կողմ, 50 դեմ հարաբերակցությամբ անցկացնել համապատասխան որոշումը,⁷ սեպտեմբերի 10-ին ստորագրվեց Լյուքսեմբուրգյան պայմանագիրը՝ մի կողմից Գերմանիայի Դաշնային Հանրապետության՝ ի դեմս Կ. Ադենաուերի, և մյուս կողմից՝ Իսրայել պետության և Պահանջների կոնֆերանսի, համապատասխանաբար ի դեմս արտագործնախարար Մ. Շարեթի և Կոնֆերանսի ներկայացուցիչ Ն. Գոլդմանի: Պայմանագրի համաձայն՝ Գերմանայի Դաշնային Հանրապետությունը պարտավորվում էր հատուցել Հոլոքոսթի հետևանքով հրեա ժողովրդին հասցված նույթական վնասները, ընդ որում՝ ոչ միայն անհատ հրեաներին ու հրեական կազմակերպություններին, այլև Իսրայել պետությանը, որտեղ ապաստան էր գտել նացիստական հանցագործություններից փրկված հրեաների մի մասը⁸: Այդ պայմանագրում հանցագործությունից տուժած հրեական կողմը հանդես էր գալիս միասնաբար՝ հրեական սփյուռքի կառույցով և պետությամբ հանդերձ:

Մեկ կարևոր դիտարկում ևս, որը թույլ է տալիս զուգահեռներ ու համեմատականներ անցկացնել ցեղասպանության հանցագործությունից տուժած ժողովրդի շահերը ներկայացնող պետության և հանցագործ պետության միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու տարբեր գործընթացների միջև: Չնայած Լյուքսեմբուրգյան պայմանագրի ստորագրվելուն, և չնայած այն հանգամանքին, որ Գերմանայի Դաշնային Հանրապետութ-

⁶ Տե՛ս նույն տեղում:

⁷ Гирин И., Vae victis или унижение? <http://bercovich-zametki.com/2007/Zametki/Nomer3/Girin1.htm>

⁸ Տե՛ս նույն տեղում:

յունը արդեն սկսել էր Հոլոքոստի նյութական վնասների հատուցման իր պարտավորությունը, միևնույնն է, Իսրայելը տարիներ շարունակ հայտարարում էր, որ հրեական պետության ներկայացուցչի ստորագրությունը տվյալ պայմանագրի տակ դեռևս չի նշանակում, որ իրենք ներել են գերմանացիներին կամ ճանաչում են գերմանական պետության գոյությունը: Լյուքսեմբուրգյան պայմանագրի ստորագրումից միայն 13 տարի անց՝ 1965 թ., երկու պետությունների միջև հաստատվեցին դիվանագիտական հարաբերություններ⁹:

Հրեական օրինակով ընդամենը ցանկացանք ցույց տալ, թե պետություն-սփյուռք ներդաշնակ ու արդյունավետ համագործակցության շնորհիվ գործնականում ինչ ձեռքբերումների կարող է հասնել ցեղասպանության ենթարկված ազգը իր նկատմամբ կատարված հանցագործության դատապարտման, հատուցման ու խախտված իրավունքների վերականգնման գործընթացում: Միաժամանակ կրկին նշենք, որ պետություն-սփյուռք համագործակցության այդ տեսական հիմունքները հրեական Հոլոքոստից ու Գերմանիայի հատուցումից դեռ տասնամյակներ առաջ արձանագրվել են հայ քաղաքական մտքի կողմից Առաջին աշխարհամարտի ավարտից հետո, երբ Արևմտահայերի երկրորդ համագումարը հռչակեց Հայաստանի առաջին Հանրապետության հետ համատեղ ազատ և միացյալ Հայաստան կերտելու դրույթը: 1919 թ. առաջադրված այս դրույթը խիստ արդիական է նաև այսօր, քանզի այն ենթադրում է թե՛ Հայաստանի և թե՛ Սփյուռքի համատեղ պատասխանատվությունը Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման գործում:

Ամփոփելով նշենք, որ եթե հայությունը ցանկանում է հասնել Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարմանը, ապա Հայաստան-Սփյուռք ներդաշնակ ու արդյունավետ համագործակցությունը ուղղակի այլընտրանք չունի: Մոտենում է Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցը, և հայ ժողովրդի բոլոր հատվածները պետք է գիտակցեն, որ Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարումը ոչ միայն համայն հայության ի-

⁹ Տե՛ս **Մարության Հ.**, Գերմանիայի ֆինանսական փոխհատուցումները հրեությանը (ձևավորումը, գործընթացը, ներկա վիճակը), էջ 86:

րավունքների վերականգնումն ու անվտանգության ապահովումն է, այլև ներ սրբազան պարտքը Հայոց ցեղասպանության անմեղ զոհերի հիշատակի առաջ:

Armen Marukyan – *The Problems of Cooperation between Armenia and Diaspora in the Process of Overcoming the Consequences of the Armenian Genocide* – Until today, in the campaign for the international recognition of the Armenian Genocide, the Armenians have only been able to secure the adoption of resolutions recognizing and condemning the Armenian Genocide by parliaments of different countries or by international organizations. The author argues that this strategy is no longer productive, because it cannot guarantee the final resolution of the issue. Thus, the author stresses the necessity to change the strategy and move it forward, toward the issue of overcoming the consequences of the Armenian Genocide, which incorporates not only both the recognition and condemnation of the Armenian Genocide, but also restitution for the crime committed. The author considers restitution as the most important issue, without which recognition and condemnation become meaningless.

The author underlines the fact that prior to taking any steps in this regard, relevant Armenian and Diaspora structures and experts must first come up with a comprehensive strategic document, named “The consequences of the Armenian Genocide and the historical-legal basis of the package of demands to be presented to Turkey”. The author suggests that a second section of the document should be dedicated to the strategic application “Concept for overcoming the consequences of the Armenian Genocide”, where the methods and mechanisms are outlined, which will enable to achieve the eradication of the consequences of the Armenian Genocide. According to the author, the said document will clearly state what the Armenians understand by the ‘consequences of the Armenian Genocide’ and demands they are prepared to present to Turkey. The author suggests that these packages should not be open to public discussion but rather closed, with limited utilization in order to avoid preemptive actions.

Армен Марукян – *Проблемы сотрудничества Армения-Дияспора в процессе преодоления последствий Геноцида армян* – На сегодняшний день армянский народ сумел достичь признания и осуждения Геноцида армян парламентами разных стран и международными организациями. Однако стратегия признания Геноцида армян больше не может

считаться эффективной, так как она не может привести к окончательному решению вопроса. Поэтому возникает необходимость замены данной стратегии и далее борьбу вести за преодоление последствий Геноцида армян, что предполагает не только признание и осуждение Геноцида армян, а также компенсацию за нанесенный ущерб армянскому народу совершенным преступлением. Прежде чем предпринимать какой-либо шаг в данном направлении, соответствующие структуры и специалисты Армении и Диаспоры в первую очередь должны разработать и принять стратегический пакетный документ – “Историко-правовое обоснование последствий Геноцида армян и предъявляемых Турцией претензий”, коротко “Пакет претензий”, в котором будет четко зафиксировано, что армянским народом понимается под последствиями Геноцида армян и какие претензии он намеревается предъявлять Турции. На основе “Пакета претензий” Армения и Диаспора должны разработать и принять также документ тактического, прикладного характера – “Концепцию преодоления последствий Геноцида армян”, в котором будут зафиксированы методы и механизмы решения данной проблемы. В отличие от “Пакета претензий” “Концепция” должна быть не открытым, публичным документом, а будет предусмотрена для ограниченного пользования, чтобы заблаговременно не допустить утечки информации о готовящихся шагах и возможности их предупреждения.

ՅՈՒՐԱԿԱՆԱՅԻՆ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՀԱՅ ԱԶԳԱՔԱՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԹՎԱՔԱՆԱԿՆ ՈՒ ՏԵՂԱՔԱՇԽՈՒՄԸ ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ԵՎ ԲԵՆՈՌՈՒՄԻԱՅԻ ԽՍՅ-ՆԵՐՈՒՄ

XX դարի առաջին քառորդին տեղի ունեցած Առաջին աշխարհամարտի, Մեծ եղեռնի, հասարակական-քաղաքական, տնտեսական և այլ աղետների հետևանքով նախկին Ցարական Ռուսաստանի հայաբնակ շրջաններում ժամանակավոր ապաստան գտան տասնյակ հազարավոր փախստական հայեր, որոնց մի մասը հետագայում վերադարձավ Խորհրդային Հայաստան, մի զգալի մասն էլ համալրեց նախկինում գոյություն ունեցող հայկական համայնքները, հիմնեց նորերը:

ԽՍՀՄ կազմավորումից հետո Ուկրաինայի և Բելոռուսիայի տարածքներում բնակվող հայության թվաքանակն ու տեղաբաշխվածությունը որոշակիորեն հստակեցվեցին ԽՍՀՄ-ում անցկացված Համամիութենական մարդահամարների արդյունքում¹:

Ուկրաինայի ԽՍՀ հայ ազգաբնակչության թիվը 1923 թ. ԽՍՀՄ քաղաքային մարդահամարի տվյալներով կազմում էր 9.678 մարդ²: Ստվար հայ բնակչություն ունեին Խարկովի (2.921), Դոնեցկի (2.801), Օդեսայի (2.509) նահանգները, որոնց հայ ազգաբնակչության թիվը կազմում էր Ուկրաինայի ԽՍՀ-ում բնակվող ամբողջ հայության 85 %-ը: Ուկրաինայի ԽՍՀ մյուս հայաբնակ նահանգներն էին Կիևը (550 հայ), Եկատերինոսլավը (535 հայ), Պոլտավան (256 հայ), Պոդոլսկը, Չեռնիգովն ու Վոլինը: Ի տարբերություն ՌԽՖՍՀ հայ ազգաբնակչության՝ ավելի բարձր էր Ուկրաինայի ԽՍՀ քաղաքային հայ բնակչության ինքնագործ (սեփական աշխատանք կամ եկամուտ ունեցող) խմբի տոկոսային կշիռը՝ 43 %:

1923 թ. ԽՍՀՄ քաղաքային մարդահամարի վիճակագրական տվյալների համաձայն՝ Բելոռուսիայի ԽՍՀ-ն ամենափոքր հայ ազգաբնակչություն ունեցող միութենական հանրապետությունն

¹ Տե՛ս **Յ. Ալեքսանյան**, Հայկական համայնքները Խորհրդային հանրապետություններում 1917-1941 թթ., Եր., 2011, էջ 72-74:

² Տե՛ս Итоги Всесоюзной городской переписи 1923 г., ч. IV, М., 1927, էջ 45:

էր՝ ընդամենը 13 հայ քաղաքաբնակներ³: Այստեղ ավելի ուշ միայն, կապված աշխատանքային միգրացիայի հետ, սկսվեց հայության հոսք Հայաստանից և մյուս հանրապետություններից:

Ուկրաինայի ԽՍՀ հայ ազգաբնակչության վերաբերյալ 1926 թ. դեկտեմբերի 17-ի ԽՍՀՄ Համամիութենական մարդահամարի արդյունքներն ավելի ամբողջական էին: Այդ մարդահամարով ճշգրտվեց Ուկրաինայի ԽՍՀ ինչպես քաղաքային, այնպես էլ գյուղաբնակ հայության թիվը (10.631 մարդ): Հանրապետության գյուղաբնակ հայության թիվը 1.052 էր կամ հայության 9,8 %-ը: Ուկրաինայի ԽՍՀ գյուղաբնակ հայության զգալի մասը բնակվում էր Հարթավայրային ենթաշրջանի մեջ մտնող Մոլդովական ԻԽՍՀ-ում (287 հայ):

Ուկրաինայի ԽՍՀ Խարկովի օկրուգում բնակվում էր հանրապետության հայազգի քաղաքացիների 30%-ը, Օդեսայի օկրուգում՝ 18 %-ը, Ստալինսկի (Դոնեցկի) օկրուգում՝ 10, 5%-ը: Հայությունն առավել համաչափ էր տեղաբաշխված Լեռնարդյունաբերական ենթաշրջանի օկրուգներում՝ Լուգանսկում, Արտյոմովսկում, որտեղ նրանց թիվը հասնում էր մի քանի հարյուրի: Ուկրաինայի ԽՍՀ հայ ազգաբնակչության 70, 7 %-ը մայրենի լեզուն համարում էր հայերենը, իսկ մոտ 26%-ը՝ ռուսերենը, շուրջ 1%-ը՝ ուկրաիներենը:

Գրագետ էր հանրապետությունում բնակվող հայության 62,8 %-ը, իսկ վերջիններիս 56,5 %-ը գրագետ էր նաև իր ազգային լեզվով: Այս ցուցանիշով Ուկրաինայի ԽՍՀ հայ ազգաբնակչությունը գերազանցում էր ՌԽՖՍՀ հայության համապատասխան ցուցանիշը: Ուկրաինայի ԽՍՀ հայաշատ քաղաքներն էին Խարկովը՝ 2.994, Օդեսան՝ 1.843. Կիևը՝ 638 հայ բնակիչներով:

1926 թ. դեկտեմբերի 17-ի ԽՍՀՄ Համամիութենական մարդահամարի տվյալներով՝ Բելոռուսիայի ԽՍՀ-ում նկատվում էր հայերի թվի աստիճանական աճ հիմնականում Գոմելի օկրուգում:

1930-ական թթ. ԽՍՀՄ-ում անցկացված մարդահամարներն արձանագրել են Ուկրաինայի ԽՍՀ և Բելոռուսիայի ԽՍՀ հայության մինչպատերազմյան շրջանի թվաքանակը:

³ Տե՛ս նույն տեղը:

**Ուկրաինայի ԽՍՀ և Բելոռուսիայի ԽՍՀ
հայ ազգաբնակչությունն ըստ 1926 թ.
ԽՍՀՄ Համամիութենական մարդահամարի տվյալների**

	ամբողջ	արական	իգական	մայրենի լեզու				գրագետ	լիցիտացիայի լեզու
				հայ.	ուկր.	ռուս.	լոլ.		
Ուկրաինայի ԽՍՀ ⁴ , որից	10.631	6.112	4.519	7.518	102	2.790	221	6.697	3.786
Աջափնյա ենթաշրջան	811	516	295	514	37	243	17	611	390
Կիևի օկրուգ	655	409	246	429	14	201	11	484	327
Չախափնյա ենթ.	3.419	1.962	1.457	2.644	30	656	89	2.081	1.448
Խարկովի օկրուգ	3.178	1.818	1.360	2.495	8	589	86	1.931	1.367
Դնեպրոպետրովսկի ենթ.	410	244	166	269	11	127	3	274	142
Դնեպրոպետրովսկի օկր.	230	132	98	171	-	58	1	148	69
Լեռնարդյունաբերական ենթ.	2.682	1.517	1.165	2.083	4	559	36	1.533	801
Ստալինսկի (Դոնեցկի) օկր.	1.117	652	465	943	1	156	17	593	325
Հարթավայրային ենթ.	3.264	1.844	1.420	1.988	20	1.180	76	2.158	981
Օդեսայի օկր.	1.916	1.144	802	1.233	3	664	16	1.291	607
Մոլդովական ԻԽՍՀ	287	136	151	80	3	160	44	205	71
Անտառային ենթ.	45	29	16	20	-	25	-	40	24
Բելոռուսիայի ԽՍՀ ⁵ , որից	99	54	45	65	-	34	-	58	37
Գոմելի օկրուգ	56	26	30	43	-	13	-	26	9

⁴ Стѹ Всесоюзная перепись населения 1926 года, том XI, Украинская Социалистическая Советская Республика. Итоги по республике. Полесский подрайон, М., 1929, էջ 10:

⁵ Стѹ Всесоюзная перепись населения 1926 года, том X, Белорусская Социалистическая Советская Республика, М., 1928, էջ 10:

1937 թ. հունվարի 6-ի Համամիութենական մարդահամարի արդյունքները Ուկրաինայի ԽՍՀ հայ ազգաբնակչության կտրվածքով ունեն հետևյալ տեսքը (Բելոռուսական ԽՍՀ-ում հայ ազգաբնակչության վերաբերյալ տվյալները բացակայում են՝ պայմանավորված էթնիկ խմբերի մեջ նրանց փոքրաթվությամբ). հայերի թիվը Ուկրաինայի ԽՍՀ-ում կազմում էր 4.242 մարդ⁶, իսկ ՌՖՍՍՀ-ում՝ 163.277:

1926 թ. մարդահամարի արդյունքների հետ համեմատած (ՌՖՍՍՀ հայ բնակչությունը կազմում էր 195.410 մարդ)⁷ 1937 թ. մարդահամարն արձանագրել էր ՌՖՍՍՀ հայ ազգաբնակչության թվաքանակի անկում 32.132 մարդով. ակնհայտ է, որ թվային այս մեծ տարբերությունն անիրական է: 1937 թ. մարդահամարի նյութերի «ձերբակալումը» և արխիվացումը, նրանց մասնակի կորուստը ավելի հանգամանալի անդրադարձ կատարելու հնարավորություն չեն տալիս:

1937 թ. մարդահամարը Ուկրաինայի ԽՍՀ հայ ազգաբնակչության առումով արձանագրել է հայության թվաքանակի անկում գրեթե 60%-ով (6.344 մարդով)⁷ 1926 թ. մարդահամարի արդյունքների համեմատ: Գիտական հիմունքների խախտումով անցկացված (1 օրում), ապա «բռնաճնշված» ու չեղյալ հայտարարված 1937 թ. մարդահամարը թողեց միայն վիճակագրական սուղ, ոչ ճշգրիտ ու ոչ ամփոփ տվյալներ, որոնք, սակայն, հետաքրքրական էին յուրովի:

1939 թ. Համամիութենական երրորդ մարդահամարը նույնպես անցկացվեց խիստ վերահսկողության ներքո, բայց նրա կազմակերպական խնդիրներն ավելի մտածված էին ու նախապատրաստված:

1939 թ. Համամիութենական մարդահամարի տվյալներով Ուկրաինայի ԽՍՀ-ում բնակվում էին 21.688 հայեր⁷, որը կազմում էր հանրապետության բնակչության 0.07%-ը:

1939 թ. Համամիութենական երրորդ մարդահամարը վերջինն էր նախապատերազմյան շրջանում, իսկ պատերազմից հետո ԽՍՀՄ, ինչպես նաև առանձին հանրապետությունների հայության թվա-

⁶ Стѣи Всесоюзная перепись населения 1937 г.: Краткие итоги, М., 1991, էջ 94:

⁷ Стѣи Беднарский И. Г., Атлас «Крым. Армяне». Армянское население Крыма с древних времен до наших дней, Симферополь, 2008, էջ 32:

քանակն ու տեղաբաշխման շրջանները որոշակի փոփոխություններ կրեցին:

Երկրորդ աշխարհամարտի տարիներին նկատելիորեն տուժեցին ԽՍՀՄ հայկական այն համայնքները, որոնք հայտնվեցին ֆաշիստների օկուպացրած շրջաններում. հայկական բնակչությունը ենթարկվեց բռնությունների, տարհանման և աքսորի⁸: Ուկրաինայի ԽՍՀ, Բելոռուսիայի ԽՍՀ և ՌԽՖՍՀ առանձին տարածաշրջանների հայությունը, անմիջականորեն հայտնվելով ֆաշիստական օկուպացիայի տակ, կարևոր մասնակցություն ունեցավ պարտիզանական և թիկունքի շարժմանը, կրեց կորուստներ:

Ղրիմահայությունը պատերազմի տարիներին սաստիկ տուժեց ոչ միայն օկուպացիայի հետևանքով, այլև դարձավ ստալինյան բռնության զոհը՝ արմատախիլ լինելով հայրենի Ղրիմից:

1944 թ. հունիսի 24-26-ը Ղրիմահայերը ֆաշիստական վարչակարգի հետ գործակցության մեղադրանքով թաթարների, բուլղարների, հույների հետ միասին ենթարկվեցին աքսորի⁹: Ըստ Ն. Բուզայի հաշվարկների՝ Ղրիմից աքսորվեցին 9.919 հայեր¹⁰ (հիմնականում Ալթայ, Միջին Ասիա, Բաշկիրիա, Պերմ, Սվերդլովսկ, Կեմերովո): Ղրիմահայ գաղութը փաստացիորեն վերացվեց, թեև 1950-ականներին աքսորյալներին արդարացրին, և կատարվեց մասնակի վերադարձ:

1954 թ. Ղրիմը ՌԽՖՍՀ կազմից հանվեց և մտցվեց Ուկրաինայի ԽՍՀ կազմի մեջ, իսկ թերակղզու հայությունը Համամիութենական հաջորդ մարդահամարներում արդեն ներկայացվում է Ուկրաինայի ԽՍՀ հայության ընդհանուր թվաքանակի մեջ:

Հայ ազգաբնակչության թվաքանակի ու տեղաբաշխման շրջանների ընդլայնումն Ուկրաինայի և Բելոռուսիայի ԽՍՀ-ներում շարունակվեց նաև հետպատերազմյան շրջանում:

⁸ Տե՛ս **Александр О.**, Участие армян союзных республик в борьбе с фашизмом на оккупированных территориях в годы Великой Отечественной войны, Актуальные проблемы Второй мировой и Великой Отечественной войн (к 65-летию великой победы), Минск, 2010, էջ 385-386:

⁹ Տե՛ս **Григорьянц В. Е.**, Возрождение армянской общины Крыма: достижения и проблемы, Историческое наследие Крыма, № 5, Симферополь, 2004, էջ 148:

¹⁰ Տե՛ս **Бугай Н. Ф.**, Депортация народов Крыма, М., 2002, էջ 20:

Հետպատերազմյան Համամիութենական առաջին մարդահամարն անցկացվեց 1959 թ. հունվարի 15-ին, ըստ որի՝ Ուկրաինայի ԽՍՀ-ում բնակվում էին 28.024 հայ (այդ թվում նաև Ղրիմի հայությունը): Նախորդ մարդահամարի համեմատ՝ Ուկրաինայի ԽՍՀ հայությունը աճ էր արձանագրել 6.636 մարդով կամ 29.2%-ով: Հիշյալ մարդահամարով Ղրիմի մարզում բնակվում էր ընդամենը 1.990 հայ:

Հարկ է ընդգծել, որ հետպատերազմյան այս մարդահամարի ընթացքում, բացի ավանդաբար հայաբնակ Ղրիմի բնակչությունից, Ուկրաինայի ԽՍՀ կազմի մեջ ընդգրկված էին արդեն նաև Վոլինի, Անդրկարպատների, Իվանո-Ֆրանկովյան, Լվովի, Տերնոպոլի, Իզմաիլովի և Չերնովեցյան մարզերի (Արևմտյան Ուկրաինայի) բնակչության թվական տվյալները:

1959 թ. մարդահամարով Բելոռուսիայի ԽՍՀ հայ բնակչության թիվը, 1926 թ. Համամիութենական առաջին մարդահամարի արդյունքների հետ համեմատ, արձանագրել էր աճ ավելի քան 17 անգամ՝ կազմելով 1.751 մարդ, որից 1.234-ը քաղաքաբնակներ էին, 517-ը՝ գյուղաբնակներ¹¹:

Համամիութենական հաջորդ մարդահամարն անցկացվեց 1970 թ. հունվարի 15-ին: Ուկրաինայի ԽՍՀ հայ ազգաբնակչության թիվը շարունակաբար աճում էր՝ կազմելով 33.439 մարդ, իսկ առավել հայաբնակ մարզերն էին Դոնեցկն ու Խարկովը:

Հայերենը մայրենի լեզու էր Ուկրաինայի ԽՍՀ ամբողջ հայության ընդամենը 38.4%-ի, ռուսերենը՝ 58.6%-ի, իսկ ուկրաիներենը՝ 2.5%-ի համար: Ուկրաինայի հայության շրջանում որպես երկրորդ լեզու ազատորեն գործածական էր ռուսերենը, առավել պակաս՝ հայերենն ու ուկրաիներենը: Ակնհայտ է, որ Ուկրաինայի ԽՍՀ հայ ազգաբնակչության շրջանում մայրենի լեզուն աստիճանաբար իր տեղը զիջում էր ռուսերենին: Դրա գլխավոր պատճառը հայկական ազգային կրթական հաստատությունների բացակայությունն էր, որոնք փակվել էին դեռևս 1930-ական թթ.:

Եթե Բելոռուսիայի տարածքում, ուր հայ ազգաբնակչությունը ստվար թիվ չէր կազմում և միայն խորհրդային տարիներին աս-

¹¹<http://babylon.iatp.by/nationalRegistry/1/nr1.html>

տիճանաբար աճեց, երբևիցէ հայկական դպրոց կամ ուսումնական այլ հաստատություն չէր եղել, ապա Ուկրաինայի տարածքում, այդ թվում՝ Ղրիմում, այդպիսի կրթօջախները մեծաթիվ էին: Ուկրաինայի հայության շրջանում հայերենը՝ որպես մայրենի լեզու, իր տոկոսային հարաբերակցությամբ գերակշռեց արդեն 1989 թ. Համամիութենական մարդահամարի և 2001 թ. անկախ Ուկրաինայի առաջին մարդահամարի տվյալներով (համապատասխանաբար 48.96 % և 50.42 %):

Սղյուսակ 2

Ուկրաինայի ԽՍՀ և մարզերի հայության թվաքանակը. հայերեն, ռուսերեն, ուկրաիներեն և այլ լեզուների տիրապետելու վերաբերյալ տվյալներն ըստ 1970 թ. Համամիութենական մարդահամարի արդյունքների¹²

	ամբողջը	մայրենի լեզու				որպես երկրորդ լեզու ազատ տիրապետողներ			
		հայ.	ռուս.	ուկր.	այլ	հայ.	ռուս.	ուկր.	այլ
Ուկրաինայի ԽՍՀ, որից՝	33.439	12.853	19.587	855	144	5.257	11.805	3.722	605
ք. Կիև	2.976	1.068	1.853	40	15	569	997	482	58
Ղոնեցկի մարզ	6.029	2.137	3.827	44	21	1.086	1.960	578	98
Ղրիմի մարզ	3.091	1.372	1.706	2	11	436	1.217	46	67
Օդեսայի մարզ	3.588	1.215	2.310	46	17	613	1.111	307	60
Խարկովի մարզ	4.832	1.653	3.111	56	12	954	1.522	562	58

¹² Статистические итоги Всесоюзной переписи населения 1970 года, том IV, Национальный состав населения СССР, союзных и автономных республик, краев, областей и национальных округов, М., 1973, էջ 152-187:

Աղյուսակ 3

Բելոռուսիայի ԽՍՀ հայության թվաքանակը. հայերեն, ռուսերեն, բելոռուսերեն և այլ լեզուների տիրապետելու, քաղաքաբնակների և գյուղաբնակների վերաբերյալ տվյալներն ըստ 1970 թ. Համամիութենական մարդահամարի արդյունքների¹³

	ամ-բողջը	մայրենի լեզու				որպես երկրորդ լեզու ազատ տիրապետողներ			
		հայ.	ռուս.	բե-լոռ.	այլ	հայ.	ռուս.	բե-լոռ.	այլ
Բելոռուսիայի ԽՍՀ, որից՝	2.362	1.055	1.224	74	9	319	962	103	83
քաղա-քաքանակ	1.999	857	1.098	37	7	289	788	87	75
գյուղաբնակ	363	198	126	37	2	30	174	16	7
արական	1.615	871	698	40	6	223	794	42	55
իգական	747	184	526	34	3	96	168	61	27

Աղյուսակ 4

Ուկրաինայի ԽՍՀ և Բելոռուսիայի ԽՍՀ հայ ազգաբնակչության թվաքանակն ու նրանց տոկոսային կշիռը՝ ըստ 1959-1989 թթ. Համամիութենական մարդահամարների արդյունքների

ԽՍՀ	1959թ.	%	1970թ.	%	1979թ.	%	1989թ.	%
Ուկրաինա ¹⁴	28.024	0.07	33.439	0.07	38.646	0.08	54.200	0.11
Բելոռուսիա ¹⁵	1.751	0.02	2.362	0.03	2.751	0.03	4.933	0.05

1970 թ. հունվարի 15-ի մարդահամարը համապարփակ տվյալներ է պարունակում նաև Բելոռուսիայի ԽՍՀ հայ ազգաբնակչության վերաբերյալ: Բելոռուսիայի ԽՍՀ հայության թվաքանակը անշեղորեն աճ է արձանագրել, իսկ հայության տեղաբաշխումը

¹³ Статистика Итоги Всесоюзной переписи населения 1970 года, том IV, էջ 192-195:

¹⁴ http://ru.wikipedia.org/wiki/Население_Украины

¹⁵ <http://belstat.gov.by/homep/ru/perepic/p5.php>

հանրապետության տարածքում աստիճանաբար ընդլայնվել է: Ինչպես Ուկրաինայի ԽՍՀ-ում, այնպես էլ Բելոռուսիայի ԽՍՀ հայության մեծամասնության համար մայրենի լեզուն ռուսերենն էր: Մինսկի մարզում բնակվում էին 277, իսկ մայրաքաղաք Մինսկում՝ 687 հայեր¹⁶: Հայաբնակ էին նաև Բելոռուսիայի ԽՍՀ մյուս մարզերը: Այսպես, Մոգիլյովի մարզում բնակվում էին 288, Վիտեբսկի մարզում՝ 335, Բրեստի մարզում՝ 266, Գրոդնոյի մարզում՝ 193 և Գոմելի մարզում՝ 316 հայեր:

Համամիութենական հաջորդ մարդահամարն անցկացվել է 1979 թ. հունվարի 17-ին: Մարդահամարի արդյունքներով Ուկրաինայի ԽՍՀ-ում հայ ազգաբնակչության թիվը կազմում էր 38.646, իսկ Բելոռուսիայի ԽՍՀ-ում՝ 2.751 մարդ: Նախորդ մարդահամարի հետ համամենտ՝ Ուկրաինայի ԽՍՀ հայության թվաքանակն աճել էր ավելի քան 5 հզ. մարդով կամ 15.6 %-ով, իսկ Բելոռուսիայի ԽՍՀ-ում աճը 16.5% էր: 1979 թ. մարդահամարով Բելոռուսիայի ԽՍՀ հայության շուրջ 89 %-ը քաղաքաբնակ էր, իսկ հայության թվաքանակի աճ հիմնականում արժանգրվել էր Մինսկում (1.096 հայ):

Համամիութենական վերջին մարդահամարը անցկացվեց 1989 թ. հունվարի 12-19-ը քաղաքացիների փաստական բնակության վայրի հարցմամբ: Մարդահամարի հարցումը և տվյալների գրանցումն իրականացվեց հատուկ մարդահամարների անցկացման համար ուսուցում ստացած մասնագետների կողմից, որոնք գործընթացի մեջ ներգրավվել էին հիմնարկ-ձեռնարկություններից, կազմակերպություններից: Ընդ որում, այս մարդահամարի արդյունքների մշակումը, դասակարգումը և վերջնահաշվարկն իրականացվել են գաղտնիության պայմաններում, առանց հասարակական որոշակի վերահսկողության¹⁷:

Այսպես, 1989 թ. Համամիութենական մարդահամարով նույնպես Ուկրաինայի ԽՍՀ և Բելոռուսիայի ԽՍՀ հայ ազգաբնակչության թվաքանակն աճել էր նախորդ մարդահամարի հետ համեմատ: ԽՍՀՄ գոյության վերջին տարիներին, ազգային զարթոնքի պայմաններում, Ուկրաինայի և Բելոռուսիայի հայկական համայնքները հիմնեցին առաջին համայնքային, մշակութային և հասարա-

¹⁶ <http://babylon.iatp.by/nationalRegistry/1/nr1.html>

¹⁷ Беднарский И. Г., ցվ. աշխ., էջ 38:

կական կազմակերպությունները: ԽՍՀՄ փլուզումից և անկախությունն ձեռք բերելուց հետո էլ այս հանրապետությունների հայ ազգաբնակչության թվաքանակը կտրուկ մեծացավ՝ պայմանավորված ՀՀ սոցիալ-տնտեսական դժվարին իրավիճակի պատճառով սկիզբ առած արտագաղթով:

Hovhannes Aleksanyan – *Number and Distribution of Armenian Population in the Ukrainian SSR and Belorussian SSR* – At the beginning of the 20th century the Armenians lived in the different corners of the Russian Empire, and played an important role in the political, cultural and economic life of the country. The author highlights how the Armenians of the Russian Empire were transformed into Soviet citizens. He tackles the issues of their settlement in both the Ukrainian and Belorussian Soviet states. The dynamics of the Armenian reaction to these changes in those two countries regarding politics, literature and arts, relocation and native language are aspects that have concerned the author.

Through an extensive research in the various census of these countries the author notes that a large number of Armenians lived compactly both in the Ukrainian SSR and in the Belorussian SSR and that according to All Union Census of the Soviet Union of 1989, the total number of Armenians both in the Ukrainian SSR and in the Belorussian SSR reached 54,200 and 4933, respectively. A 1000-strong Armenian community lived in each of the said states' capital, Kiev and Minsk.

Ованнес Алексанян – *Численность и распределение армянского населения в Украинской ССР и Белорусской ССР* – В начале XX века армянское население России проживало во всех уголках империи и занимало прочные позиции в политико-экономической, культурной и других сферах. После установления Советской власти и образования СССР армянское население Украинской ССР и Белорусской ССР достаточно динамично росло, а территория их распределения расширилась.

Динамику роста численности армянского населения, ареал его распределения, языковой принадлежности и грамотности можно проследить с помощью проведенных в 1920-1980-е годы переписей населения СССР. Нужно подчеркнуть, что кроме Армянской ССР, армянское население в большом количестве и компактно проживало в Украинской ССР и Белорусской ССР. Отметим, что по данным Всесоюзной переписи населения 1989 г. в Украинской ССР проживало 54.200 армян, в Белорусской ССР – 4.933. Армянское население проживало в столичных городах Киев и Минск, где армянское население достигало более 1.000 человек.

ՀԱՅԿ ԵՆԳԻՐԱՐՅԱՆ

ՔԵՏԱՊԻ ԶԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿԵ ԶԱՄԱՅՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԶԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

Սիրիայի հայկական հնագույն գաղթօջախի պատմությանը անդրադարձել են մի շարք անվանի հեղինակներ, ինչպես, օրինակ, Ա. Սյուրմեյանը, Ա. Ալպոյաճյանը, Զ. Թովուզյանը, Զ. Ինժիկյանը, Ա. Աբրահամյանը, Ս. Գասպարյանը, Զ. Չոլաքյանը և այլ գիտնականներ, որոնք ուսումնասիրել են ինչպես ամբողջ Սիրիայի, այնպես էլ նրա առանձին քաղաքների, հայկական գաղթավայրերի պատմությունը: Սույն աշխատանքը մի փոքր փորձ է ներկայացնելու Քեսապի հայոց կաթողիկե համայնքի համառոտ պատմությունը, համայնքում գործող բազմապիսի կառույցներն ու հանձնախմբերը: Ընդգծվում են համայնքում առանցքային դեր խաղացած դեմքերն ու դեպքերը, առաջացած խնդիրներն ու մտահոգությունները ինչպես պատմական անցյալում, այնպես էլ ներկայում:

Հայկական Քեսապի շրջանը գտնվում է Սիրիայի հյուսիսարևմտյան ծայրամասում՝ Միջերկրական ծովի ափին: Հայերն այստեղ հաստատվել են դեռևս Տիգրան Մեծի ժամանակներից, սակայն հայկական Քեսապի և շրջակա գյուղերի պատմության հարցերը գիտական ուշադրության են արժանացել միայն 1909 թ.¹ Կիլիկիայի հայերի կոտորածից հետո:

19-րդ դարում հայ եկեղեցին չնայած ներկա է եղել Քեսապի շրջանում, սակայն ոչ մի թեմական կառույց այստեղ կանոնավոր չի գործել, ինչը և, ըստ Զ. Չոլաքյանի, դարձել է հայ բնակչությանը այլադավանության մղող գլխավոր ազդակներից մեկը¹:

1850-ական թվականներին Քեսապ են մուտք գործել օտարազգի քարոզիչներ, և հետզհետե ձևավորվել են կաթողիկե և ավետարանական հայկական համայնքներ: Համայնքների առանձնացումը իր հետևանքներն է թողել հասարակական կյանքում. ի հայտ են եկել համայնքային խնդիրներ, ժողովուրդը բաժանվել է տար-

¹ Տե՛ս **3. Չոլաքեան**, Ծագումով հայ լատինները Սուրիոյ մէջ, «21-րդ դար», թիւ 2 (42), 2012, էջ 68:

բեր խմբավորումների, ինչը բացասաբար է անդրադարձել համայնքի կազմակերպվածության վրա:

Քեսապահայության մի մասն առաջին անգամ կաթոլիկություն ընդունել է 1854 թ.² Չմմառի տեր Գաբրիել կաթոլիկ քահանայի ձեռամբ: Օսմանյան տիրապետության շրջանում Քեսապը գտնվել է Հալեպի վիլայեթի կազմում: 1911 թ. Քեսապի շրջանում բնակվել է շուրջ 6 հզ. հայ: 1915 թ. հայերի թիվը հասել է 8 հազարի: Ցեղասպանության ժամանակ քեսապահայությունը տեղահանվել է, և միայն 1918 թ. են փրկված բնակիչները վերադարձել իրենց բնակավայրերը: 1920 թ. այստեղ բնակվում էր 2363, իսկ 1923 թ.³ 3500 հայ²: 1937 թ. քեսապահայերի թիվը կազմել է 7 հզ.³:

1938 թ. հուլիսի 5-ին, ֆրանսիական իշխանությունների համաձայնությամբ, թուրքական զորքերը մտել են Ալեքսանդրետի սանջակ, որը 1920-1938 թթ. ունեցել է վարչաֆինանսական «հատուկ ռեժիմ» Ֆրանսիայի մանդատին հանձնված սիրիական պետության շրջանակներում⁴: Սեպտեմբերի 2-ին պաշտոնապես ձևավորվել է Հաթայի պետությունը, և Քեսապի շրջանը մտել է այդ պետության կազմի մեջ: Սակայն թուրքական զորքերի և թուրք պաշտոնյաների կողմից իրականացվող բռնությունների և կեղեքումների պատճառով տեղի են ունեցել զինյալ բախումներ: Մեծ թվով քեսապցիներ ապաստանել են լեռներում կամ էլ փախել Բեյրութ: 1939 թ. հունիսի 23-ին Հաթայի պետությունը պաշտոնապես միացել է Թուրքիային, բայց Քեսապի շրջանի բնակելի մասը անջատվել է նրանից՝ միանալով Սիրիային: Այս տարածքները Սիրիայի կազմում պահելու համար մեծ ջանք է գործադրել Հայ Կաթողիկե եկեղեցու կաթողիկոս, պատրիարք-կարդինալ Գրիգոր-Պետրոս Ժե Աղաջանյանը՝ Վատիկանի անունից միջնորդելով ֆրանսիական կառավարությանը: Ի նշան այս մեծագործության՝ Սիրիայի նախագահի կողմից նրան շնորհվել է երկրի բարձրագույն «Շուքրի Քուաթլի» շքանշանը:

² Տես <http://www.kessabtsiner.com/index.php?module=subjects&func=viewpage&pageid=12>

³ Տես **Ա. Բայրամյան**, Ալեքսանդրետի Սանջաքի իրավական ստատուսը և քաղաքական խմբավորումները (1920-1930-ական թվականներ). ՀՍՍՌ ԳԱ Տեղեկագիր հասարակական գիտությունների, 1968, թիվ 12, էջ 29:

⁴ Տես **Ա. Բայրամյան**, Հայերի մասնակցությունը 1936-1938 թթ. Ալեքսանդրետի սանջաքի պաշտպանության պայքարին, «Պատմա-բանասիրական հանդես», 1964, թիվ 1, էջ 155:

1947 թ. հուլիսի 25-ին 5100 բնակիչներից գրեթե կեսը ներգաղթել է Հայաստան: Մինչև ներգաղթը Քեսապի շրջանը զուտ հայաբնակ էր: 1947 թվականից հետո այստեղ հաստատվել են նաև օտարազգիներ: 1950-60-ական թթ. Քեսապից այլ երկրներ են տեղափոխվել հարյուրավոր հայ ընտանիքներ:

Քեսապում Հայ Կաթողիկե առաջին եկեղեցին կառուցվել է ԱՆ-տոնյան միաբանության հայրերի կողմից 1861 թ. և նվիրաբերվել է Անարատ հղության Աստվածամորը⁵: 1904 թ. Քեսապում հաստատվել են Ֆրանցիսկյան միաբանությանը հարող քարոզիչներ, որոնք կառուցել են Պաղճաղազի Աստվածամոր եկեղեցին, իսկ 1925 թ. Քեսապում հիմնվել է Ս. Միքայել շքեղ եկեղեցին, որը սպասարկում է Քեսապի և Լաթաքիայի հավատացյալներին⁶:

Քեսապի կաթողիկե Ս. Միքայել եկեղեցու և հայ քույրերի միաբանությանը պատկանող դպրոցի կառուցման մասին տեղեկություններ հանդիպում ենք այդ ժամանակ Քեսապի Անարատ հղության միաբանության քույր Նարդուհու ինքնակենսագրականում: Վերջինիս ընտանիքը 1922 թ. Այնթափից տեղափոխվել է Հալեպ, այնուհետև՝ Քեսապ և լուրջ ներդրում ունեցել տեղի կաթոլիկ եկեղեցու ու դպրոցի շինարարության աշխատանքներում⁷:

1942 թ. տվյալներով Քեսապի տարածաշրջանում բնակվել է հայ կաթոլիկ 106 ընտանիք՝ 593 հոգի: Այս ժամանակաշրջանում Քեսապի առաքելությանն են պատկանել Քեսապ, Գարատուրան, Պաղճաղազ, Չինարճիկ, Սաքի Արան կամ Նոր Գյուղ, Քայաճիկ, Տուզ Աղաճ, Քեմըրխանա, Էքիզ Օլուք և Պաշուրտ գյուղերը⁸:

1942 թ. Քեսապի առաքելություն հովվական այց է կատարել Սիրիայի Բարձր Ջեզիրեի և Եփրատ նահանգների պատրիարքական փոխանորդ Կյուրեղ եպիսկոպոս Ջոհրաբյանը: Նա մասնակցել է Տիրոջ պայծառակերպության տոնին նվիրված պատարագին և հանդիպել համայնքի հավատացյալների հետ: Քեսապում

⁵ Տե՛ս «Ձուարթնոց», պաշտոնաթերթ Ձմնառու Պատրիարքական Միաբանութեան, Լիբանան, 2009, թիւ 20, էջ 60:

⁶ «Հայ սփյուռք հանրագիտարան»-ում եկեղեցու կառուցման թիվը նշված է 1926 թ., իսկ Հայ Կաթողիկե եկեղեցու պաշտոնական կայքում՝ 1925 թ.:

⁷ Տե՛ս «Մասիս», Պէյրուք, հունիս, 2010, էջ 36:

⁸ Տե՛ս **Կիրեղ Եպ. Ջոհրապեան**, Յուշեր (ինքնակենսագրություն), Վենետիկ – Ս. Ղազար, 2007, էջ 281:

իր հանդիպումների մասին եպիսկոպոսը գրում է. «Յուլիս 12-ի կիրակնօրեայ հանդիսաւոր Սուրբ Պատարագէն ետք հաւատացեալները եկան ինծի այցելելու: Յայտնեցին իրենց կարծիքը, որուն համաձայն՝ հարցերը շատ աւելի լաւ վիճակի մէջ էին՝ երբ Քեսապը Հալէպի եպիսկոպոսի իրաւասութեան տակ էր, եւ որ ամէն բան վատթարացած էր Պատրիարքարանի իրաւասութեան անցնելէ յետոյ: Հաւատացեալներու բողոքները հաստատուեցան նաեւ Անարատ Յղութեան Հայ Քոյրերու հետ ունեցած զրոյցիս ատեն: Անոնց յանձնուած էր աղջիկներու դպրոցին խնամքը, բայց անոնց աշխատանքը բնաւ գնահատուած չէր մեր հայրենակիցներուն կողմէ, ըլլային անոնք կաթողիկե թէ առաքելական»⁹:

Այս դժգոհությունների հիմնական պատճառը եղել է տեղի լատինացիները քահանային, ում իրավասությանն էր պատկանում կրոնի դասավանդումը: Նա վարում էր բացառապես ապագգային քաղաքականություն, այն աստիճան, որ կրոնագիտության հայալեզու դասագիրքը փոխարինել էր թրքալեզու դասագրքով: Ծնողները չէին ցանկանում իրենց աղջիկներին ուղարկել այդ դպրոց, քանի որ այդ քահանայի վարքագծում տեսնում էին արհամարհանք մեր լեզվի և մեր ժողովրդի նկատմամբ:

Եպիսկոպոս Ջոհրայանը այցելել է նաև թեմի այլ բնակավայրեր: Ծանոթացել է համայնքի եկեղեցականների և հավատացյալների հետ, հանդիպել առաքելական համայնքի քահանաներին: Ամենուր առկա են եղել բազմաթիվ դժվարություններ և խնդիրներ: Առաքելական նվիրակին ներկայացրած իր հաշվետվությունում եպիսկոպոսը նշում է, որ առաքյալները պետք է աշխատեն հայ եկեղեցու համար՝ հարգելով լեզուն, ավանդույթները, ազգային, կրոնական ու մշակութային յուրահատկությունները: Պետք է պահպանեն հայոց լեզվի ուսուցումը, այն գործածեն քրիստոնեական վարդապետության դասավանդման, հասարակական և անհատական աղոթքների ժամանակ: Պարտավոր են հարգել և սեր ներշնչել հայկական ծեսի և հայ ժողովրդի նկատմամբ:

1940-ական թվականներին Քեսապի շրջանում ձևավորվել է ազգայնական շարժում լատին և հայ կաթողիկե համայնքների միջև՝ կապված լատին քարոզիչների հսկողության տակ գտնվող

⁹ Նույն տեղում, էջ 382:

դպրոցներում ազգային դաստիարակության պակասի հետ: Կաթողիկե համայնքը լատին քարոզիչների հսկողությամբ գործող իր դպրոցներում պահանջել է մեծ տեղ հատկացնել ազգային դաստիարակությանը, լեզվի զուգահեռ ուսուցանել նաև հայոց պատմություն: Այս շարժումը գլխավորել է հայ կաթողիկե համայնքի ժողովրդապետ հայր Թովմաս վրդ. Քաջագունին, սակայն նրա պահանջը մերժվել է: Հայր Քաջագունին մի խումբ աշակերտների և ուսուցիչների հետ հիմնել է նոր վարժարան¹⁰: Աստիճանաբար լատին քարոզիչները նահանջել են, և հայոց պատմությունը դարձել է դասավանդման առարկա: Սակայն սրանով հարցը վերջնականապես չի լուծվել. հայ կաթողիկե համայնքի և լատին հատվածի միջև տարակարծությունները ավելի են սրվել: Ի վերջո 1946 թ. հուլիսի 30-ին Հայ Կաթողիկե եկեղեցու կաթողիկոս պատրիարք-կարդինալ Աղաջանյանի ջանքերով և պապական հրամանով լատին համայնքները լուծարվել են և միացել հայ կաթողիկե համայնքին: Քեսապի շրջանի լատին վանքերը, դպրոցներն ու կալվածքները անցնել են Հայ կաթողիկե պատրիարքությանը¹¹: Այսպիսով, հայ Կաթողիկե եկեղեցին գնալով ստանում էր ավելի ու ավելի ազգային դիմագիծ:

Քեսապի հայ կաթոլիկ համայնքում այսօր բնակվում է 87 ընտանիք, իսկ Լաթաքիայում՝ 49 ընտանիք: Հայ կաթոլիկ համայնքին են պատկանում Քեսապի Ս. Միքայել եկեղեցին, Պաղճաղազի Վերափոխման եկեղեցին և Քարատուրանի Ս. Աստվածածին ուխտատեղին¹²: Ս. Միքայել եկեղեցու հովանավորությամբ են գործում Բարեհուսո վարժարանը, ժողովրդապետական հանձնախումբը և Հայ կաթողիկե միության պատանեկան և տիկնանց միությունները:

Քեսապի Ս. Միքայել եկեղեցին կառուցումից 83 տարի հետո իր հավատացյալների բարերարության շնորհիվ 2008 թ. վերանորոգվել է: Եվ պատրիարքական ընդհանուր փոխանորդ եպս. Աշգարյանի նախագահությամբ և Բարձր Ջեզիրեի առաջնորդական փոխանորդ հայր Անդրանիկ Այվազյանի, տեր Ջարեհ Տեր-Սարգիսյանի (Հալեպ) և հայր Գարեգին վրդ. Քեռշքերյանի (Քեսապ)

¹⁰ Տե՛ս **Յ. Չոլաքեան**, Ծագումով հայ լատինները Սուրիոյ մէջ, էջ 76:

¹¹ Տե՛ս **Յ. Չոլաքեան**, Քեսապ, Ա. հատոր, Հալեպ, 1995, էջ 145:

¹² Տե՛ս <http://www.armeniancatholic.com> (Հայ Կաթողիկե եկեղեցի):

առընթերակցությամբ եկեղեցուն կատարվել է սուրբ պատարագ, որի ժամանակ սուրբ մյուռոնով օծվել է վերանորոգված եկեղեցին¹³: Պատարագին մասնակցել են նաև քույր համայնքների հոգևոր հայրեր, միությունների, հաստատությունների ներկայացուցիչներ, մեծ թվով հավատացյալներ:

Քեսապի շրջանում գործել են հայկական ութ տարրական դպրոցներ, որտեղ 1910 թվականին սովորելիս են եղել ավելի քան 1100 տղաներ և աղջիկներ¹⁴: Քեսապի հայկական շրջանում կազմակերպվել է «Ուսումնասիրաց միությունը», որի նպատակն էր օժանդակել կրթական գործի զարգացմանը: Հայկական դպրոցների համար մանկավարժ կադրեր պատրաստելու նպատակով 1882 թ. Քեսապի դպրոցներից մեկը վերածվել է մանկավարժական ուսումնարանի¹⁵:

Քեսապում հայ կաթողիկե առաջին դպրոցը կառուցվել է 1861 թ. Անտոնյան հայրերի կողմից: Քեսապի դպրոցի աղջիկների բաժինը հանձնվել է Անարատ հղության հայ քույրերի խնամքին: Բաժինը գործել է մինչև 1946 թ.՝ քեսապահայերի Հայաստան ներգաղթելը: Նույն ճակատագրին են արժանացել նաև մյուս դպրոցները. դատարկվել են ներգաղթի պատճառով:

Այսօր Քեսապում գործում է հայ կաթողիկե Բարեհուսո վարժարանը (հիմնված 1861 թ.)՝ իր մանկապարտեզով և նախակրթարանով, որը 1997 թ. «Գալուստ Կյուլպենկեան» հիմնարկության ջանքերով նորոգվել ու բարեկարգվել է¹⁶: Ուսումնական տարվա ընթացքում վարժարանում կազմակերպվում են բազմապիսի միջոցառումներ, հատկապես ամանորյա հանդեսներ ու վկայականների բաշխման տարեվերջյան հանդիսություններ, որոնք անցկացվում են ուսուցչական կազմի և բոլոր աշակերտների մասնակցությամբ ու ելույթներով: Այսօր էլ իբրև սփյուռքյան հայկական վարժարան՝ այն իր տեսչական և ուսուցչական կազմով պահպանում է կրթական, բարոյական, ազգային և հոգևոր դաս-

¹³ Տե՛ս «Մասիս», Պեյրուֆ, նոյեմբեր, 2008, էջ 43:

¹⁴ Տե՛ս **Ա. Աբրահամյան**, Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, գիրք Բ, Եր. 1967, էջ 32:

¹⁵ Տե՛ս **Sanjian, Avedis K.**, The Armenian Communities in Syria under Ottoman Dominion (Cambridge, Mass., 1965), էջ 91-92:

¹⁶ Տե՛ս «Զուարթնոց», Պեյրուֆ, 2009, N 20, 61:

տիարակությունը՝ հայ մանուկներին կրթելով իբրև հայրենասեր հայ ու հավատացյալ քրիստոնյաներ:

1925 թ. գործում է նաև հայ կաթողիկե «Էլ-Սալեհ» երկսեռ վարժարանը՝ մանկապարտեզով և նախակրթարանով:

Քեսապի հայ կաթողիկե եկեղեցին վաղուց ի վեր ունեցել է կիրակնօրյա պատանեկան շարժում, սակայն ավելի կանոնավոր գործել է 1983 թ.՝ շնորհիվ մի խումբ նվիրյալ երիտասարդների: 1993 թ., երբ նշվել է այդ շարժման տասնամյակը, այն անվանվել է «Հ.Կ.Ս.»՝ «Հայ Կաթողիկե Միություն»: 1995 թ. միության պատանեկան միջմասնաճյուղային 3-րդ համագումարից հետո ընդունվել է նրա պաշտոնական կանոնադրությունը, որի նպատակն է եղել պատանիներին տալ քրիստոնեական և հայկական դաստիարակություն, նրանց մոտեցնել եկեղեցուն՝ տոգորելով հայկականությամբ և հայրենասիրությամբ: Հայ Կաթողիկե Միությունը ունի հոգևոր վարիչ վարդապետ և պատանեկան խորհուրդ՝ որպես պատասխանատուներ: 2010 թ. դեկտեմբերի 4-ին տեղի է ունեցել ՀԿՍ մասնաճյուղի հրամանատարի ընտրությունը՝ խորհրդի ամբողջ կազմի մասնակցությամբ: Ժողովի մեծամասնությամբ հրամանատար է ընտրվել Ռեբեկա Պեռճեքյանը, և հաջորդ օրը՝ սուրբ պատարագից հետո, Քեսապի ՀԿՍ ակումբում բոլոր պատանիների ու ջահակիրների ներկայությամբ կատարվել է հրամանատարի փոխանցումը Ռեբեկա Պեռճեքյանին¹⁷:

1996 թվականից պաշտոնապես գործում է նաև Քեսապի հայ կաթողիկե տիկնանց միությունը, չնայած որ մինչև այդ էլ եղել են կանավոր տիկնանց և անձնվեր օրիորդների խմբեր, որոնք մեծ նվիրվածությամբ զբաղվել են եկեղեցու բարեգարդման և բարեկարգման խնդիրներով: Այս միությունն ունի իր վարչակազմը, անդամները և հոգևոր վարիչը: Կազմակերպում է մշակութային բազմատեսակ միջոցառումներ՝ վառ պահելով հայկական ավանդույթներն ու սովորությունները:

Ամեն տարի Քեսապի հայ կաթողիկե եկեղեցուն անցկացվում են Դամասկոսի հայ կաթողիկե միության տղաների տարեկան բանակումները, ինչը հայ երիտասարդների համախմբման, միաս-

¹⁷ Տե՛ս <http://www.armeniancatholic.com>

նության, լեզվի, մշակույթի ու ավանդույթների պահպանման կարևոր միջոցառումներից է:

2009 թ. Քեսապում «Փյունիկ» մարդկային ռեսուրսների զարգացման համահայկական հիմնադրամի ջանքերով տեղադրվել է նոր խաչքար: Խաչքարը գտնվում է Էսքյուրեն գյուղի մի գեղատեսիլ բլրի վրա, որտեղ մի քանի տարի առաջ Կամիշլիի հայ կաթողիկե եկեղեցու հովիվ հայր Անդրանիկ ծայրագույն վրդ. Այվազյանի ջանքերով կառուցվել է Տիրամայր նահատակաց վանքը: Վերջինս որպես ամառային հանգստի կենտրոն է ծառայում Սիրիայի տարբեր շրջաններից ժամանած քրիստոնյաների համար: Ահա այս վանքի մուտքի մոտ է տեղադրվել խաչքարը, որը, ի դեպ, առաջինն է Քեսապի շրջանում: Խաչքարը պատրաստվել է Հայաստանում հայկական տուֆ քարից և ձևված է հայ նահատակների: Հայր Անդրանիկ Այվազյանի անմիջական հսկողությամբ 2009 թ. հուլիսի 30-ին տեղի է ունեցել խաչքարի տեղադրումը, իսկ հաջորդ օրը՝ օրհնությունն ու օծումը: Այս միջոցառմանը մասնակցել են Քեսապի հայ կաթողիկե ժողովրդապետ հայր Գարեգին վրդ. Քեռոջբերյանը ու Ջմմառի միաբանության վարչության անդամ Բարսեղ վրդ. Պաղտասարյանը, Էսքյուրենի բնակիչները, Դամասկոսի հայ կաթողիկե միության պատանիները, որոնք իրենց տարեկան բանակումն էին անցկացնում Քեսապում: Խաչքարը օծվել է ըստ հայկական ծեսի՝ գինիով, ջրով ու սրբալույս մյուռոնով, հոգևոր հայրերի կողմից օրհնվել է աղոթքներով ու շարականներով¹⁸:

Քեսապը, թեև փոքրաթիվ հայերով (մոտ 1.5 հզ.), այսօր էլ համարվում է Սիրիայի հայկական կարևոր գաղթօջախներից մեկը՝ իր կրթական, մշակութային, կրոնական, բարեգործական կառույցներով և քրիստոնեական երեք համայնքներով՝ հայ կաթողիկե, առաքելական և ավետարանական եկեղեցիներով:

Քեսապի կաթոլիկ հայությունը կտրված չէ հայ առաքելական և ավետարանական համայնքներից. միացյալ ջանքերով հաճախակի կազմակերպվում են բազմաթիվ տոնակատարություններ ու արարողություններ: Քեսապի հայ կաթողիկե համայնքը՝ իր մշակութային, մարզական, կրթական միություններով, այսօր էլ

¹⁸ Տե՛ս <http://www.radiovaticana.org/arm/Articolo.asp?c=316120>

շարունակում է ծավալել հայապահպան գործունեություն՝ կարևորելով ազգային-մշակութային արժեքներն ու ավանդույթները: Այն իր բազմաճյուղ հայապահպան գործունեությամբ ոչնչով չի զիջում մյուս համայնքներին, և ինչպես հայ առաքելական ու ավետարանական եկեղեցիները, այնպես էլ հայ կաթողիկե եկեղեցին ազգային ինքնության պահպանման ու համայնքի հարատևման գլխավոր երաշխիքն են:

Այժմ, երբ Հայաստանի Հանրապետությունը՝ ի դեմս Սփյուռքի նախարարության, հայապահպանման համասփյուռքյան ծրագրերի կազմակերպիչն է, հարկավոր է այդ ուղղությամբ մշակվող քաղաքականության մեջ շեշտել հայապահպան երեք եկեղեցական լծակների դերն ու կարևորությունը՝ առանց մեկը մյուսին ստորադասելու: Եթե այդ լծակներից մեկը թուլանա, ցավոք, նրա կորուստները չեն փոխհատուցվի մյուսի կամ մյուսների հզորացմամբ, այլ կհետևի ուժացումը, տվյալ դեպքում՝ արաբացումը, ասենք, կաթոլիկ հայերի հաշվին: Թե ինչու է այդպես, դա միանգամայն այլ հարց է, որ կարոտ է սփյուռքագիտական առանձին հետազոտության:

Այսպիսով՝ Քեսապում կաթոլիկությունը սկզբնավորվել է դեռևս 1850-ական թվականներին՝ լատին քարոզիչների կողմից, որոնք, մուտք գործելով Քեսապի շրջան, կատարում էին կրթական և բարեգործական աշխատանքներ: Սակայն, ինչպես նշեցինք, լատին քարոզիչները դրսևորում էին ապազգային վերաբերմունք հայկական ծեսի, լեզվի ու ավանդույթների նկատմամբ, ինչն էլ առաջացնում է համընդհանուր ընդվզում քեսապահայերի շրջանում, ովքեր պահանջում էին հարգանք ազգային արժեքների նկատմամբ: Հայ կաթողիկե համայնքի և լատին հատվածի միջև տարակարծություններն այնքան են սրվում, որ ի վերջո լատին համայնքները լուծարվում են և միանում հայ կաթողիկե համայնքին՝ իրենց վանքերը, դպրոցներն ու կալվածքները թողնելով հայ կաթողիկե համայնքին, որը գնալով ստանում է ազգային դիմագիծ:

Hayk Yengibaryan – *Brief historical background of the Armenian Catholic Community of Kessab* – The article, a synthesis of the conventional viewpoints of historians and clerics, highlights the Armenian Catholic community in Kessab in Syria with its history, various structures and committees.

The article underlines the figures and events that have played a pivotal role in the Armenian Catholic community in Kessab, as well as the issues and concerns in the past and the present. In the context of ongoing assimilation, the efforts aimed at preserving Armenian identity are highlighted. In this regard particular attention is paid to the efforts done in culture, sports and education safeguard Armenian national and cultural values and traditions.

Айк Енгибарян – *Краткий обзор истории армянской католической общины Кесаба* – В статье представлена армянская католическая община Кесапа со своей историей, различными структурами и комитетами. Координируются исторические и религиозные традиционные взгляды, придавая работе характер диаспороведения.

Подчеркиваются в армянской католической общине Кесапа играющие ключевую роль лица и события, возникшие задачи и проблемы, как в прошлое, так и в настоящее время. Несмотря на быстрые темпы ассимиляции, особое значение придается на сохранение армянской идентичности общины, направленные усилия в области культуры, спорта, образования в пользу национально-культурных ценностей и традиций.

ՀԱՄՄԻԿ ԵՍԱՅԱՆ

ՀԱՅԵՐԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՖՐԵՉՆՈՅՈՒՄ (XIX դ. վերջից XX դ. սկիզբ)

ԱՄՆ-ի հայ համայնքների պատմության քննության մեջ հատուկ կարևորություն ունի Կալիֆոռնիայի հայության պատմության ուսումնասիրությունը: Տնտեսական գործունեության առումով ակնառու է Ֆրեզնոյի հայության պատմությունը, որը մինչ այսօր համապարփակ ուսումնասիրության նյութ չի դարձել:

Գիտական առաջին աշխատանքը, որում հետազոտվել է Ֆրեզնոյի հայության կենսագործունեությունը, պատմաբան Ռ. Միրաքի ստվարածավալ մենագրությունն է¹: Կարևոր է նաև Պ. Բուլբուլյանի՝ Ֆրեզնոյի հայ համայնքի պատմությանը նվիրված աշխատությունը, որտեղ մանրամասնորեն անդրադարձ է կատարվել համայնքի ձևավորմանն ու զարգացմանը²: Բացի այս, հրատարակվել են թեմային վերաբերող մի շարք գրքեր³, հայերեն և անգլերեն տարեցույցներում, տարեգրքերում, պարբերականներում տպագրվել են նյութեր ու հոդվածներ⁴: Հայաստանի մասնագետներից քչերն են զբաղվել կամ զբաղվում ԱՄՆ-ի հայ համայնքների պատմության ուսումնասիրմամբ: Հարկ է առանձնացնել Ք. Ավագյանի ուսումնասիրությունը, որում որոշ չափով քննության են

¹ Տե՛ս **Mirak R.** Torn between two lands: Armenians in America 1890 to World War I. Massachusetts. 1983:

² Տե՛ս **Bulbulian B.** The Fresno Armenians: History of a Diaspora Community. Fresno. 2000:

³ Տե՛ս **Bakalian A.** Armenian-Americans: From Being to Feeling Armenian. New Brunswick, London. 1993: **Waldstreicher D.** The Armenian Americans. New York, New Haven and Philadelphia. 1989: **Սարաֆեան Գ.**, Գործապատում ՀԲԸ միութեան Գալիֆոռնիոյ շրջանակի, Ֆրեզնո, 1954:

⁴ Տե՛ս **Terjimanian H.** Armenians in Fresno. "Hye Sharzhoom". September. 1981. vol. 3, № 4: **Zenian D.** Fresno: A home away from home. "AGBU". November. "Lodi News Sentinel". Friday. Sep 8. 1972. Excepted part of the community. Armenians contribute to culture, agriculture in Fresno. "The Modesto Bee". Monday. Feb 26. 1951. Krikor Araqelian, Rancher and Vintner, Dies: **Մուշեղ Եպիսկոպոս**, Ամերիկահայ տարեցոյցը, Ա տարի, Պոստոն, 1912: "The Armenian Review". Autumn. 1972. vol. XXV. № 3-99, February. 1979. vol. XXXI, № 2-122:

առնվել կալիֆոռնիահայության տնտեսական գործունեությանը վերաբերող հարցեր⁵:

Սույն հոդվածում փորձ է արվել ներկայացնելու Ֆրեզնոյում հաստատված առաջին հայերի գյուղատնտեսական գործունեությունը, նրանց մեծ դերակատարությունը Կալիֆոռնիա նահանգի տնտեսության զարգացման գործում:

Ֆրեզնոն գտնվում է Կենտրոնական Կալիֆոռնիայի Սան Վոակին (Սան Խոակին) հովտում⁶ Սան Վոակին և Քինգզ գետերի միջնամասում: 1872 թ., երբ Ֆրեզնոն ընդամենը աննշակ հողերով, անմարդաբնակ տարածք էր, ԱՄՆ-ի «Սադրն Փասիֆիք Ռեյլրոուդ» երկաթուղային ընկերությունը (Southern Pacific Railroad Company) Սան Վոակինով անցնող երկաթուղի է կառուցում, որը Կալիֆոռնիան կապում է արևելյան նահանգների հետ՝ հնարավորություն ստեղծելով տարածքի բնակեցման համար⁷: 1870-ական թվականներին Ֆրեզնոյի բնակչությունը մեծ մասամբ կազմված էր մեքսիկացի, գերմանացի, իսպանացի, իտալացի, դանիացի, շվեդացի, կանադացի, իռլանդացի, ճապոնացի, չինացի հողագործներից ու աշխատավորներից, հրեա առևտրականներից⁸:

1880-ականների սկզբին այստեղ են հաստատվում առաջին հայերը (այս ժամանակ Ֆրեզնոյի բնակչության թիվը 1000-1.300 էր⁹, այլ տվյալների համաձայն՝ 6-7 հազար¹⁰): Հայերը գաղթում են նախ ԱՄՆ-ի արևելյան նահանգներից, այնուհետև՝ Արևմտյան Հայաստանից, իսկ Առաջին համաշխարհային պատերազմից հետո՝ նաև աշխարհի տարբեր երկրներից: ԱՄՆ-ի արևելյան նահանգներից հայերի գաղթի պատճառը առավել բարեկեցիկ, տնտեսապես ինքնուրույն կյանք վարելու ձգտումն էր¹¹: Իրենց հարազատնե-

⁵ Տե՛ս Ավագյան Ք., Ամերիկայի Միացյալ Նահանգների հայ գաղութի պատմությունը (սկզբնավորումից մինչև 1924 թ.), Եր., 2000:

⁶ ԱՄՆ-ում հարուստ գյուղատնտեսություն ունեցող տարածաշրջան:

⁷ Տե՛ս Սարաֆեան Գ., նշվ. աշխ., էջ 2: Հակոբյան Գ., Հայերի տեղաբաշխումն ԱՄՆ-ում (19-րդ դարի վերջ, 20-րդ դարի սկիզբ), «Լրաբեր հասարակական գիտությունների», Եր., 1987, էջ 12:

⁸ Տե՛ս Սարաֆեան Գ., նշվ. աշխ., էջ 1:

⁹ Տե՛ս Minasian Ed. The Armenian Community of California: The first one hundred years. Los Angeles. 1982, էջ 3:

¹⁰ Տե՛ս Նշիկեան Յ., Հայ Ընտանիքը Գալիֆորնիոյ մէջ (Մուշեղ Եպիսկոպոս, Ամերիկահայ տարեցոյցը, Ա տարի, Պոստոն, 1912), էջ 213:

¹¹ Տե՛ս Հակոբյան Գ., նշվ. աշխ., էջ 13:

րին ու բարեկամներին ուղարկած նամակները, որոնք պատմում են Ֆրեզնոյի հրաշալի բնության, կլիմայի, հողագործության և գյուղատնտեսության մեջ հաջողությունների հասնելու հնարավորության մասին, խթան են հանդիսանում, որ սկզբնավորվի Արևմտյան Հայաստանից դեպի Ֆրեզնո հայերի գաղթը: 1885 թ. հոկտեմբերին Ֆրեզնոն պաշտոնապես ճանաչվում է քաղաք¹², որի հիմնադրման և մանավանդ զարգացման գործից հայերն անմասն չեն մնում:

Ռուսաստանից ներգաղթած գերմանացիների նման հայերը եկել են Ֆրեզնո ընտանիքներով՝ մշտական բնակություն հաստատելու՝ ի տարբերություն չինացիների կամ ճապոնացիների, որոնք գաղթել են առանց ընտանիքների՝ գումար վաստակելու նպատակով: Ընտանիքներով գաղթելու հանգամանքով պայմանավորված՝ օտարազգի գաղթականների համեմատությամբ հայերի թիվը զգալի է եղել: Դա հստակ երևում է Ռոբերտ Միրաքի գրքում, որտեղ ներկայացված է Ֆրեզնոյի բնակչության ընդհանուր պատկերը 1900 և 1908 թթ.¹³:

Աղյուսակ 1

ազգություն	1900 թ.	1908 թ.
հայեր	500	3.000
չինացիներ	1.634	1.000
գերմանացիներ	785	1.000
Ռուսաստանից ներգաղթած գերմանացիներ	734	3.000
իտալացիներ	430	1.000
ճապոնացիներ	601	3.000
պորտուգալացիներ	309	600
սկանդինավցիներ	1.418	4.000
ավստրիացիներ	112	500
այլազգիներ	2.611	3.000
Ընդհանուր	9.134	20.100

¹² Տե՛ս **Սարաֆեան Գ.**, նշվ. աշխ., էջ 2:

¹³ Տե՛ս **Mirak R.**, նշվ. աշխ., էջ 113:

Եթե 1908 թ. հայերը կազմել են Ֆրեզնոյի այլազգի բնակչության 7 տոկոսը, ապա հետագա տարիներին՝ մինչև Առաջին համաշխարհային պատերազմի սկիզբը, նրանց թիվը եռապատկվել է՝ կազմելով 25 տոկոս¹⁴ (1914 –ին՝ 10.000¹⁵):

Ֆրեզնոյում հաստատվելուց հետո հայերը սկսում են զբաղվել գյուղատնտեսությամբ՝ մասնավորապես խաղողագործությամբ: Մյուս օտարազգիներից նրանք տարբերվում են նրանով, որ շատերը գաղթում են՝ իրենց հետ բերելով մեծ գումարներ¹⁶:

ԱՄՆ-ի Գաղթականների հարցերով զբաղվող հանձնաժողովը դիտարկել է 1900-1908 թթ. Սան Վոակին եկած տասնյոթ հայ հողատերերի, որոնցից յուրաքանչյուրի բերած գումարը միասին կազմել է 52.150 ԱՄՆ դոլար (ամենամեծ գումարը եղել է 10.000 դոլար, ամենափոքրը՝ 150): Միջին հաշվով յուրաքանչյուրն ունեցել է 2.800 դոլար, ինչը այդ ժամանակվա համար մեծ գումար էր¹⁷:

Աղյուսակ 2

ազգություն	հողատերերի թիվը	յուրաքանչյուրի գումարը (միջին)	ընդհանուր գումարը (միջին)
հայեր	17	2.781 \$	52.150 \$
դանիացիներ	25	1.405 \$	35.120 \$
Ռուսաստանից ներգաղթած գերմանացիներ	17	1.904 \$	32.370 \$
ճապոնացիներ	34	494 \$	16.780 \$

Մոտ մեկ տասնամյակ անց՝ 1908 թ., հայ հողատերերի կարողությունը եռապատկվում, քառապատկվում է. յուրաքանչյուր հողատիրոջ գումարը միջին հաշվով 2.781-ից դառնում է մոտ 11.587¹⁸: Ընդ որում՝ իրենց ողջ գումարը նրանք ներդնում են գործի մեջ, մեծ վարկեր են վերցնում, որպեսզի ձեռք բերեն տարածքի լավա-

¹⁴ Տե՛ս նույն տեղը:

¹⁵ Տե՛ս **Waldstreicher D.**, նշվ. աշխ., էջ 60:

¹⁶ Տե՛ս **Mirak R.**, նույն տեղը:

¹⁷ Տե՛ս **Ավագյան Ք.**, նշվ. աշխ., էջ 68: **Mirak R.**, նշվ. աշխ., էջ 114, 119:

¹⁸ Տե՛ս **Mirak R.**, նշվ. աշխ., էջ 119:

գույն հողերը: Հայերը, մյուս ներգաղթողների համեմատությամբ, անենաբարձր գներն են վճարում հողատարածքների համար՝ կանխավճար տալով հողի իրական գնի կես չափով¹⁹:

1894 թ. հայերն ունեին մոտ 200 ակր (ակրը հավասար է 4046.86 քառակուսի մետրի) հողատարածք: 1900 թ. Ֆրեզնոյում ոչ ասիացի բնակիչներին պատկանող 3.214 հողատարածքներից 730-ը տրված էին վարձակալության. այդ հողերի մեծ մասը վարձում են հայերը և մշակում²⁰: 1902-ին նրանք արտադրում են տարածաշրջանի խաղողի ամբողջ բերքի 15 տոկոսը: 1904 թ. հայ խաղողագործների ձեռքում կենտրոնացած էր 10.000 ակր հողատարածք (չամիչի և գինու համար նախատեսված ամբողջ 94.600 հողատարածքի 10.5 տոկոսը²¹)՝ չհաշված այն հողերը, որոնք վարձվում էին, այլ ոչ թե գնվում²²:

1908 թ. Սան Վոակին հովտում հայերին էր պատկանում 25.000 ակր՝ տարածաշրջանի հողերի երեք հինգերորդ մասը: Այս բնագավառում նրանք անգերազանցելի էին²³:

Սակայն հայերի տնտեսական գործունեությունը Ֆրեզնոյում հաճախ ընթացել է վայրիվերումներով: Հիմնականում խաղողագործության վրա կենտրոնանալը մեծ դժվարություններ է առաջացրել. արտադրանքից ստացված շահույթը կախված է եղել տնտեսության կայուն վիճակից: Հայերը մեծ կորուստներ են ունեցել տնտեսական անկումների ժամանակ²⁴: Սրա օրինակն է Սան Վոակինում 1893 թ. սկսված տնտեսական ճգնաժամը. գնորդների ֆինանսական ծանր վիճակի պատճառով չամիչի արտադրանքը գրեթե չի սպառվել: Հայ խաղողագործները նամակներով, տարբեր թերթերում տված հայտարարություններով հորդորել են արևելյան նահանգներում և Արևմտյան Հայաստանում գտնվող իրենց հայրենակիցներին չգաղթել Ֆրեզնո²⁵: Բերքի մեկ ֆունտի

¹⁹ Տե՛ս նույն տեղը, էջ 114:

²⁰ Տե՛ս **Waldstreicher D.**, նշվ. աշխ., էջ 61: **Mirak R.**, նշվ. աշխ., էջ 119:

²¹ Տե՛ս **Ավագյան Ք.**, նշվ. աշխ., էջ 68:

²² Տե՛ս **Bulbulian B.**, նշվ. աշխ., էջ 55-57:

²³ Տե՛ս նույն տեղը, էջ 57: **Zenian D.**, նշվ. աշխ., էջ 12: **Mirak R.**, նշվ. աշխ., էջ 119, 120:

²⁴ Տե՛ս **Waldstreicher D.**, նույն տեղը:

²⁵ Տե՛ս **Մուշեղ Եպիսկոպոս**, նշվ. աշխ., էջ 61:

արժեքը (1 ֆունտը հավասար է 0.45 կիլոգրամի) այնքան է ընկել, որ դարձել է ընդամենը երեք քառորդ ցենտ²⁶: Սա գրոյական շահույթ էր:

1898 թ. հիմնվում է «Կալիֆոռնիայի չամիչ արտադրողների միությունը» (California Raisin Growers Association, 1898-1904), որը սկսում է գրանցել խաղողի համար նախատեսված հողատարածքների 90 տոկոսը, համակարգել արտադրանքի, դրա վաճառքի հետ կապված աշխատանքները²⁷:

1901 թ. միությունը գրանցում է մոտ 200 հայ խաղողագործների, որոնք կազմում էին Սան Վոակինի հայ հողատերերի մեծամասնությունը: 1905 թ. հայ խաղողագործների թիվն այնքան է մեծանում, որ անհրաժեշտություն է առաջանում միությունում ներկայացուցիչ ընտրելու: Կարծիք կա, որ ընտրվել է Հովհաննես Սերոբյանը²⁸:

Սակայն չարդարացնելով իրեն՝ միությունը աստիճանաբար դադարում է գործելուց: Նույն թվականին միության հետ պայմանագրեր է կնքում խաղողագործների միայն 30 տոկոսը²⁹: Հայերի հանդեպ կիրառված խտրականությունների պատճառով շատերը դուրս են գալիս այդտեղից: 1907 թ. Հովհաննես Սերոբյանը, Գրիգոր Առաքելյանը, Հակոբ Նիշկյանը և Բ. Մ. Ռուստիկյանը, միավորելով քառասուն-հիսուն հայ հողատերերի, հիմնում են չամիչ արտադրողների իրենց սեփական միությունը, որը զբաղվում է խաղողի նոր տեսակների աճեցմամբ և վաճառքով: Հավանական է, որ այս շրջանում բոլոր այն խաղողագործները, որոնք դժգոհ էին մնացել «Կալիֆոռնիայի չամիչ արտադրողների միությունից» և կորուստներ էին ունեցել վերջինիս անհաջողությունների պատճառով, միացել են հայրենակիցներին՝ հնարավորություն ձեռք բերելով ավելի շատ գումար վաստակելու³⁰:

Թե ինչպես է ընթացել հայերի տնտեսական գործունեությունը Ֆրեզնոյում, առավել պատկերավոր կարելի է ներկայացնել Սերոբյան եղբայրների օրինակով: Նրանք են Ֆրեզնոյում հաստատ-

²⁶ Տե՛ս **Mirak R.**, նշվ. աշխ., էջ 117:

²⁷ Տե՛ս **Mirak R.**, նույն տեղը: **Bulbulian B.**, նշվ. աշխ., էջ 60:

²⁸ Տե՛ս **Bulbulian B.**, նշվ. աշխ., էջ 58:

²⁹ Տե՛ս նույն տեղը, էջ 60: **Mirak R.**, նույն տեղը, էջ 117:

³⁰ Տե՛ս **Mirak R.**, նշվ. աշխ., էջ 118: **Bulbulian B.**, նույն տեղը:

ված առաջին հայերը և Ֆրեզնոյի առաջին հայ գործարարները: Ուստի անհրաժեշտ ենք համարում առավել մանրամասն խոսել Սերոբյանների անցած ճանապարհի մասին:

Հայերի բուն հոսքը դեպի ԱՄՆ սկսվել է XIX դ. առաջին կեսից՝ որպես հետևանք ամերիկյան բողոքական քարոզիչների՝ Օսմանյան կայսրությունում ծավալած լուսավորչական գործունեության³¹: 1870-ական թթ. սկզբին մարզվանցի Հակոբ, Կարապետ և Սիմոն Սերոբյան եղբայրները Թուրքիայից ԱՄՆ վերադարձող բողոքական միսիոներների հետ գաղթել են Մասաչուսեթս՝ Ուստր, որտեղ բացել են տարբեր ապրանքների խանութ և հաջողությամբ աշխատեցրել այն: Սակայն շուտով Հակոբը հիվանդացել է թոքախտով, և բժիշկները խորհուրդ են տվել նրան տեղափոխվել ավելի տաք կլիմա ունեցող մահանգ³²:

1881 թ. աշնանը Հակոբն ու Կարապետը գալիս են Ֆրեզնո³³: Ֆրեզնոն եղբայրներին անմիջապես հարազատ է թվում, քանի որ հիշեցնում է հայկական բնաշխարհը՝ հայրենի Մարզվանը³⁴: Նրանք որոշ ժամանակ աշխատում են ազարակատներում, իսկ 1882 թ. արդեն դիմավորում են մյուս եղբայրներին՝ Սիմոնին, Գևորգին և Հովհաննեսին³⁵:

Սերոբյանները համարվում են Ֆրեզնոյում հող գնած առաջին հայերը: Դա փոքր ազարակ էր՝ էլ՛մ և Կալիֆոռնիա պողոտաների հարևանությամբ: Հետաքրքիրն այն է, որ հողատարածքը գրանցվել է Հակոբի անունով: Հավանաբար պատճառն այն էր, որ նա եղբայրներից ավելի լավ էր տիրապետում անգերենին և ավելի հմտորեն էր կարողանում գործարքներ վարել³⁶: Սակայն շատ շուտով՝ 1883 թ. հոկտեմբերի 6-ին, Հակոբը մահանում է³⁷:

³¹ Տե՛ս Ավագյան Ք., նշվ. աշխ., էջ 17:

³² Տե՛ս Bulbulian B., նշվ. աշխ., էջ 17-19: Zenian D. նշվ. աշխ., էջ 11:

³³ Սերոբյաններից առաջ՝ 1870-ականներին, Ֆիլադելֆիայից Ֆրեզնո է եկել Մարտիրոս Յանուկյանը (Յանիկյան)՝ Նոր մարդը: Սակայն տեղ հասնելով և տեսնելով, որ «դրախտ» անունով հայտնի Ֆրեզնոն ընդամենը անապատ է, վերադարձել է Ֆիլադելֆիա: 1885-ին կրկին եկել է Ֆրեզնո՝ այս անգամ արդեն ընտանիքով, և մշտական բնակություն հաստատել:

³⁴ Տե՛ս Մուշեղ Եպիսկոպոս, նշվ. աշխ., էջ 56:

³⁵ Տե՛ս Mirak R. նշվ. աշխ., էջ 112: Մուշեղ Եպիսկոպոս, նշվ. աշխ., էջ 56-57:

³⁶ Տե՛ս Bulbulian B., նշվ. աշխ., էջ 20:

³⁷ Տե՛ս նույն տեղը:

Մինչև 1892 թ. Սերոբյան եղբայրները ձեռնարկել են տարբեր գործեր, որոնք հաճախ ընթացել են դժվարություններով: Նրանք Ֆրեզնոյում բացել են խանութներ, հայկական սրճարան, հիմնել են թզի և չամիչի փաթեթավորման գործարան: Նրանց նպարտել ենի խանութը եղել է քաղաքում ամենամեծերից մեկը: Օմահայից, Կանգաս Սիթիից և Չիկագոյից նրանք մեծ քանակությամբ խոզի ապխտած միս են ներմուծել և մատակարարել տեղի ռեստորաններին³⁸: Այնուհետև Սերոբյանները կենտրոնացել են մրգի և չրի վաճառքի վրա: Նրանց այս վերջին գործը կապված է մի շատ հետաքրքրական պատմության հետ: 1892 թ. եղբայրները ցանկանում են իրենց ապրանքը արտահանել Սան Ֆրանցիսկո: Սակայն վերոհիշյալ «Սադըրն Փասիֆիք Ռեյլրոուդ» ընկերությունը, որ այդ ժամանակ մոնոպոլիստ էր, շատ բարձր գին է պահանջում ապրանքների տեղափոխության համար: Սերոբյանները, չցանկանալով այդքան մեծ գումար վճարել, վարձում են երկու մեծ սայլ, տասներկու ջորի և մեծ քանակությամբ չամիչ, թուզ ու մարինջ են տեղափոխում Սան Ֆրանցիսկո: Այս դեպքը մեծ աղմուկ է բարձրացնում: «Սան Ֆրանցիսկո Իզգեմիներ» (“The San Francisco Examiner”) թերթը 1894 թ. լրագրողներ է ուղարկում Ֆրեզնո՝ արտասովոր պատմությունը լուսաբանելու, և ընդամենը մի քանի օր անց Սերոբյան եղբայրների հետ անցկացրած հարցազրույցը հայտնվում է հայտնի պարբերականի առաջին էջում. եղբայրները մեծ ճանաչում են ձեռք բերում ամբողջ նահանգում: «Արտասովոր գնացքով» մրգերի արտահանումը շարունակվում է մի քանի ամիս: Սերոբյանների օրինակին են հետևում նաև այլ առևտրականներ: Եղբայրների այս քայլը Ֆրեզնոյի բնակիչներին հուշում է նոր երկաթգծի կառուցման մասին: Սան Ֆրանցիսկոյի մեծահարուստներից մեկը՝ Քլաուզ Սփրեքելզը, երկու միլիոն դոլար է տրամադրում երկաթգծի կառուցմանը: Այս նախագծին են միանում նաև Ֆրեզնոյի բնակիչները: Արդյունքում 1895 թ. կառուցվում է Սան Վոակին երկաթգիծը (San Joaquin Railroad): Եղբայրները, փաստորեն, նպաստում են, որ «Սադըրն Փասիֆիք»-ը Սան Վոակինում կորցնի իր մոնոպոլիան³⁹:

³⁸ Տե՛ս **Davidian N.** The Seropians: First Armenian Settlers in Fresno County. “The Armenian Review”, February. 1979. vol. XXXI, № 2-122, էջ 175: **Bulbulian B.**, նշվ. աշխ., էջ 23:

³⁹ Տե՛ս **Davidian N.**, նշվ. աշխ., էջ 176, 177: **Bulbulian B.**, նշվ. աշխ., էջ 23, 24: **Mirak R.**, նշվ. աշխ., էջ 112: **Zenian D.**, նշվ. աշխ., էջ 11-12: **”Lodi News Sentinel”**, նույն տեղը:

1898 թ. Սերոբյանները զնուն են Սան Վոակին երկաթգծին հարող տարածք՝ չրի և չամիչի փաթեթավորման մեծ գործարան կառուցելու նպատակով: Գործարանի կառուցումից հետո ձեռք են բերվում անհրաժեշտ բոլոր սարքավորումները, ընդունվում են մեծ թվով աշխատողներ: Սակայն աշխատանքը դեռ չսկսած՝ շինությունը այրվում է հարևան արտադրամասերից մեկի հրդեհից: Ապահովագրական ընկերությունը ծախսերի միայն մի մասն է հոգում, այնինչ հարկավոր էր շատ արագ վերանորոգել այրված շինությունը՝ նախնական պայմանավորվածությամբ ագարակներից ստացվող մրգերը տեղավորելու համար: Արտադրամասի վերակառուցման գործը տևում է երկու ամիս: Սակայն, չնայած անհաջողություններին, Սերոբյանները վերսկսում են այն⁴⁰:

Հարկ է նշել, որ նրանք են թզի փաթեթավորված վաճառքի առաջին նախաձեռնողները: Նրանց շնորհիվ է, որ կալիֆոռնիական թուզը հայտնի է դարձել ամբողջ աշխարհում, իսկ նարինջը սկսել է վաճառվել ԱՄՆ-ի նաև այլ նահանգներում⁴¹: Գևորգ Սերոբյանի խոսքերով, երբ սկզբնական շրջանում Սերոբյանները թզի չիր են արտահանել տարբեր քաղաքներ, ոչ ոք չի ցանկացել զնել նրանց ապրանքը՝ անծանոթ լինելու պատճառով: Ուստի Սերոբյանները չրի մեջ ընկույզ են դրել և սկսել են այդպես վաճառել՝ ընկույզով չիրը կոչելով «ֆիզ դոլմա» (fig dolma), որը կարելի է թարգմանել «թզի տոլմա»: Այս նույն ժամանակ եղբայրները զբաղվել են նաև ձմերուկի ու թուրքական բաֆրա կոչվող ծխախոտի աճեցմամբ: Ձմերուկի գործը պսակվել է հաջողությամբ: Նույնը չի կարելի ասել ծխախոտի մասին, որի ամբողջ տնկադաշտը այրվել է հերթական հրդեհի ժամանակ⁴²:

1890-ականների վերջին հիմնադրվում է «Սերոբյան եղբայրներ» ընկերությունը, որի գլխավոր գրասենյակը Կալիֆոռնիա փողոցում էր⁴³: Ընկերությունը անդամագրվում է «Կալիֆոռնիայի չամիչ արտադրողների միությանը»: Մի առիթով Թեոդոր Քերնին՝ միության հիմնադիրը, իր խորին շնորհակալությունն է հայտնել

⁴⁰ Տե՛ս **Bulbulian B.**, նշվ. աշխ., էջ 24: **Davidian N.**, նշվ. աշխ., էջ 177, 178:

⁴¹ Տե՛ս **Khungian T. B.** Origins and Development of the Fresno Armenian Community to the 1918 year. "The Armenian Review". February. 1979. vol. XXXI, № 2-122, էջ 159:

⁴² Տե՛ս **Bulbulian B.**, նշվ. աշխ., էջ 25:

⁴³ Տե՛ս **Davidian N.**, նշվ. աշխ., էջ 178:

«Սերոբյան եղբայրներ» ընկերությանը՝ մեծ ներդրման և բերած ահռելի շահույթի համար⁴⁴:

Սերոբյանների հաջողությունը, սակայն, ոչ բոլորին էր ուրախացնում: Սան Ֆրանցիսկոյում մի խումբ գործարարներ, այդ թվում՝ Ֆրեզնոյի բանկի տնօրենը, կազմակերպում են հանդիպում՝ քննարկելու «Սերոբյան եղբայրներ» ընկերության առաջընթացը կանխելու հարցը: Հանդիպման մասնակիցները որոշում են գործարք կնքել եղբայրների հետ, այնուհետև ծուղակը գցել նրանց: Շուտով «Քոթըն Բելլ» կոչվող ընկերությունը, որի տնօրենը համագործակցում էր վերոհիշյալ հանդիպման մասնակիցների հետ, միանում է Սերոբյանների ընկերությանը: Կարճ ժամանակ անց երկու ընկերությունների միջև լուրջ հակասություններ են ծագում: «Քոթըն Բելլ»-ի ջանքերով Սերոբյանները զրկվում են սեփականատերի իրենց իրավունքից, իսկ փաթեթավորման արտադրամասը վաճառվում է մեկ այլ՝ «Գուգենհայն» ընկերությանը, որը նույնպես զբաղվում էր ապրանքների փաթեթավորմամբ, և որի տնօրենը Սան Ֆրանցիսկոյում տեղի ունեցած հանդիպման մասնակիցներից էր⁴⁵:

Տեղացի գործարարների այս քայլը հայ գործընկերների հանդեպ կարելի է որակել նաև որպես խտրականություն: Ընդ որում, սա միակ դեպքը չէ իր տեսակի մեջ: Ամբողջ ԱՄՆ-ում հայերը միայն Կալիֆոռնիայում են հանդիպել այսքան ընդգծված և երկարատև անհանդուրժողական վերաբերմունքի: Հայերի հանդեպ կիրառված խտրականությունները սկիզբ են առել վերջիններիս՝ Ֆրեզնոյում հաստատվելու հենց առաջին օրերից և տևել են տասնամյակներ՝ կրելով սոցիալական և տնտեսական բնույթ: Պատճառները բազմազան էին: Ջգալի թվով հայեր գաղթում էին Օսմանյան կայսրությունից, ունեին թուրքական անձնագրեր, թրքախոս էին, ուստի համարվում էին թուրք մուսուլմաններ: Բացի այդ՝ տեղացիներին խորթ էին հայերի ազգային սովորույթները: Հայերը համառ էին, հպարտ, ինչը հակասում էր գաղթականի հնազանդ կերպարին⁴⁶: Տեղացիների մեջ անհանգստություն և վախ էր ա-

⁴⁴ Տե՛ս նույն տեղը:

⁴⁵ Տե՛ս **Khungian T. B.**, նույն տեղը:

⁴⁶ **Bulbulian B.**, նշվ. աշխ., էջ 16, 17: **Bakalian A.**, նշվ. աշխ., էջ 20: **Khungian T. B.**, նշվ. աշխ., էջ 162:

նաջացնում այն հանգամանքը, որ հայերը միևնույն տարածքում այդքան շատ հողեր էին գնում, մեծ հաջողությունների էին հասնում գյուղատնտեսության մեջ՝ ձեռք բերելով հազարավոր դուլարներ, անգամ միլիոններ⁴⁷:

Խտրականություններ կիրառվում էին բոլոր բնագավառներում: Հայերին չէին ընդունում ամերիկյան տարբեր կազմակերպություններում, կրթական հաստատություններում, եկեղեցիներում: Այն հայերը, որոնք Ֆրեզնո էին գալիս ֆինանսական կարողությամբ, ցանկանում էին առավել բարեկեցիկ թաղամասերում ապրել, սակայն հանդիպում էին իրավական, սոցիալական և հոգեբանական խոչընդոտների: Օրինակ՝ Ռուսաստանից ներգաղթած գերմանացիները արգելում էին հայերի բնակությունը Ջերմանթաունում: Գաղթականների հարցերով զբաղվող համձնաժողովը այս երևույթը գնահատել է իբրև մադկային իրավունքների ոտնահարում: Ընդ որում, սա եղել է խիստ հաճախադեպ երևույթ: Եթե տվյալ թաղամասում կան շրջանում որևէ հայի տուն է վաճառվել, ապա շրջակայքի բոլոր տների գներն ընկել են: Բարեկեցիկ համարվող թաղամասերը դադարել են այդպիսին լինելուց, քանի որ հարևանությամբ բնակվել են մերժված ռասսայի ներկայացուցիչներ՝ հայեր⁴⁸: Սակայն այսօրինակ վերաբերմունքը ժամանակի ընթացքում փոխվել է, քանի որ հայերը բարձր գներ են վճարել տների և հողերի համար, իսկ դա ձեռնտու էր սեփականատերերին ու կառավարությանը:

Հայերի՝ տեղի հասարակությանը ինտեգրվելու հարցում շատ կարևոր էր քաղաքացիություն ստանալը⁴⁹, ինչը զուտ օրինական կարգավիճակ ձեռք բերելը կամ քվեարկելու իրավունք ունենալը չէր միայն, այլև գաղթականի, օտարի կարգավիճակից ազատվելը: Այս առումով կարևոր էր ԱՄՆ-ի դաշնային վճռաբեկ դատարանի ընդունած որոշումը, ըստ որի՝ հայերը ոչ թե ասիացիներ են, այլ Կովկասում բնակվող հնդեվրոպական էթնոսի ներկայացուցիչներ⁵⁰:

⁴⁷ Տե՛ս **Дятлов В., Мелконян Ед.**, Армянская Диаспора: Очерки социокультурной типологии, Ереван, 2009, էջ 62:

⁴⁸ Տե՛ս **Mirak R.**, նշվ. աշխ., էջ 133:

⁴⁹ Տե՛ս **David Waldstreicher**, նշվ. աշխ., էջ 62:

⁵⁰ Տե՛ս **Bakalian A.**, նշվ. աշխ., էջ 20:

Թեև Սերոբյան եղբայրներին իրավացիորեն կարելի է համարել Ֆրեզնոյի առաջին հայ գործարարներ, այնուամենայնիվ հիշատակման են արժանի այլ անուններ ևս, որոնք Սերոբյանների նման մեծ ներդրում են ունեցել տարածաշրջանի գյուղատնտեսության զարգացման գործում:

Սերոբյանների հետ ունեցած մամակագրությունից հետո՝ 1883 թ., Ֆրեզնո է գաղթում Առաքելյանների ընտանիքը: Այդ ժամանակ Գրիգոր Առաքելյանը ընդամենը 11-12 տարեկան էր: Օգնելով հորն առևտրի գործում՝ Ֆրեզնոյի փողոցներում նա տարբեր տեսակի մրգեր ու սեխ է վաճառում և աշխատանքի դիմաց ստանում 10 դոլար: Մեկ տասնամյակ անց Առաքելյանը եղբոր՝ Հարությունի հետ Սան Վոակիմում սկսում է աճեցնել և վաճառել հայկական սեխի տարբեր տեսակներ:

1918 թ. Առաքելյաններն արդեն ունեին 3.000 ակր հողատարածք, 1.500 աշխատողներ և ամբողջ ԱՄՆ-ում շուտով պետք է հայտնի դառնային «սեխի արքաներ» անունով⁵¹:

Գրիգորը զբաղվել է նաև չամիչի արտադրությամբ և գինեգործությամբ: Նրան են պատկանել խաղողի բազմաթիվ այգիներ, ունեցել է փաթեթավորման սեփական գործարան, Մադեռայում հիմնել է «Միշըն Բելլ» (Mission Bell) գինու գործարանը, որը հետագայում համարվել է ԱՄՆ-ի երկրորդ խոշորագույն գործարանը: Դրա միջոցով Առաքելյանը դարձել է Սան Վոակիմի առաջին հայ մոլտիմիլիոնատերը՝ 25 մլն կարողությամբ: 1949 թ., սակայն, գործարանը վաճառվում է, ինչից հետո Առաքելյանը գնում է 1500 ակր հողատարածքով ագարակ: Ֆրեզնոյում նա ամենամեծ հողատերն էր⁵²:

Հարկ է խոսել նաև Մարգարյանների մասին: 1873 թ. Մելքոն Մարգարյանը Մուշից ընտանիքով գաղթում է ԱՄՆ՝ Նյու Յորք, և որոշ ժամանակ անց դառնում ԱՄՆ քաղաքացի: Սակայն լսած լինելով Ֆրեզնոյի մասին՝ 1882-1883 թթ. տեղափոխվում է այնտեղ: Ֆրեզնո գալուց հետո նա «իր ձեռքերով» տուն է կառուցում, որը համարվում է Ֆրեզնոյում հայի կառուցած առաջին կացարանը:

⁵¹ Տե՛ս Minasian Ed., նշվ. աշխ., էջ 4: Տե՛ս Terjimanian H., նշվ. աշխ., էջ 8: "Lodi News Sentinel", նույն տեղը:

⁵² "The Modesto Bee", նույն տեղը: Mirak R., նշվ. աշխ., էջ 121-122:

Այդ շինությանը հաջորդում է պահածոների գործարանի կառուցումը, որից ստացված շահույթը Մարգարյանին դարձնում է Ֆրեզնոյի մեծահարուստ հայերից մեկը: Նրա մահից հետո գործարանը ժառանգում են հինգ զավակները: Հետագայում Մարգարյանի որդին՝ Հենրի Մարգարյանը, զբաղվում է թզի աճեցմամբ ու արտահանմամբ: Ֆրեզնոյում նա թզի ամենամեծ տնկադաշտի սեփականատերն էր (1918 թ. տնկադաշտը եղել է 160 ակր): Որդու հետ միասին նա աճեցնում և մշակում է թզի սպիտակ ադրիատիկ և այլ տեսակներ: 1890-ական թթ. Մարգարյանները 500.000 ֆունտ թուզ են արտահանում ԱՄՆ-ի արևելյան նահանգներ՝ շուկայում առաջ անցնելով Թուրքիայից բերված զմյունիական թուզ արտադրողներին: Մարգարյաններին էր պատկանում թզի տեղական արտադրության 20 տոկոսը⁵³:

Նշենք, որ Սան Վոակինում հայերը խաղողագործության և սեխ աճեցնելու հետ մեկտեղ զբաղվում են նաև հայկական վարունգի, ելակի, ծիրանի, հատապտուղների ու բանջարեղենի աճեցմամբ և վաճառքով, բլղուրի արտադրությամբ և ծխախոտագործությամբ, առաջին անգամ կազմակերպում են արևելյան, այդ թվում՝ հայկական գորգերի ներմուծումը նահանգ⁵⁴:

Սակայն նրանց գործունեությունը մեծապես տուժում է 1929 թ. սկսված տնտեսական ճգնաժամից (The Great Depression), որը բացասական լուրջ հետևանքներ է թողնում ԱՄՆ-ի տնտեսական կառույցների վրա: 1933 թ. նախորդ չորս տարների համեմատ երկրի համախառն ներքին արդյունքը նվազում է 29-30 տոկոսով, արժեթղթերի շուկան արժեզրկվում է 90 տոկոսով, փակվում են գործող բանկերի մոտ կեսը, գործազրկությունը գերազանցում է 20 տոկոսը: Արդյունաբերական արտադրության մակարդակը 1929 թ. համեմատությամբ կրճատվում է 46 տոկոսով⁵⁵: Բնական է, որ ստեղծված ընդհանուր իրավիճակում կորուստներ պետք է ունենային նաև հայ գործարարները: Մեծ թվով հայեր սնանկանում են և ստիպված տեղափոխվում են Լոս Անջելես, Սան Ֆրանցիսկո և այլ քաղաքներ՝ վաճառելով իրենց հողատարածքները

⁵³ Տե՛ս **Bulbulian B.**, նշվ. աշխ., էջ 26-27: **Մուշեղ Եպիսկոպոս**, նշվ. աշխ., էջ 59: **Khungian T. B.** նշվ. աշխ., էջ 159-160: **Mirak R.**, նշվ. աշխ., էջ 121:

⁵⁴ **Ավագյան Բ.**, նշվ. աշխ., էջ 69: **Mirak R.**, նույն տեղը:

⁵⁵ http://elsa.berkeley.edu/~cromer/great_depression.pdf :

կամ դրանք վերադարձնելով կառավարությանը: «Տնտեսական ճգնաժամը պատճառ դարձավ բազմաթիվ հայերի սնանկացման: Շատերը չէին կարողանում տալ իրենց հողատարածքների պարտքերը: Արդյունքում հայության զգալի մասը գաղթեց Լոս Անջելես, և քիչ վերադարձողներ եղան»⁵⁶:

Այսպիսով, Ֆրեզնոյում հաստատված հայերի զբաղմունքը XIX դ. վերջից մինչև XX դ. սկիզբը եղավ գյուղատնտեսությունը, և մյուս բոլոր օտարազգիների համեմատությամբ՝ այդ բնագավառում նրանք գերակշռեցին թվաքանակով: Հայերի զգալի մասը հողատեր էր, այլ ոչ թե հասարակ հողագործ: Կալիֆոռնիան ԱՄՆ-ի միակ նահանգն է, որտեղ նրանք ծավալեցին գյուղատնտեսական գործունեություն: Ընդ որում՝ դա տևեց ընդամենը մի քանի տասնամյակ: Սա եզակի երևույթ է ամերիկահայության պատմության մեջ: Սակայն վերոհիշյալ ճգնաժամը հայերի համար եղավ ճակատագրական. նրանցից շատերը հեռացան՝ գյուղատնտեսության բնագավառը թողնելով ուրիշներին: Սնանկացած հայերը տեղափոխվեցին այլ քաղաքներ, որտեղ նրանց զբաղմունքը հիմնականում դարձավ առևտուրը կամ արհեստագործությունը:

Hasmik Yesayan – *The agricultural activity of Fresno Armenians (from the end of the 19th century to the beginning of the 20th century)* – Fresno County lies in the San Joaquin Valley of Central California. Armenians established in Fresno in the 1880s. They were mainly interested in agriculture focusing on grape production. Armenians were successful in that domain and had a great input in the development of San Joaquin Valley, the richest agricultural region of the USA. Unlike the other emigrants Armenians were predominant in the agricultural section of Fresno. Moreover, many Armenians were landowners and employed others as peasants to work on their lands. Alongside grape production, Armenians were also successful in producing different kinds of melons, Armenian cucumber, strawberry and apricot. They also produced and sold berries and vegetables, bulgur and were successful in tobacco production. Furthermore, they were the first to import oriental rugs and carpets into California including rugs of Armenian production. Armenians owned thousands of acres of land in the famous San Joaquin Valley and had a large share in the income generated from the Fresno agriculture pro-

⁵⁶ Տե՛ս **Terjimanian H.**, Ըշվ. աշխ., էջ 5:

duction. However, the Great Depression of 1929 was disastrous for Armenians, many became bankrupt and some had to return the lands to the State. A large amount of Armenians abandoned Fresno leaving agriculture to the locals.

Асмик Есаян – Сельскохозяйственная деятельность армян в Фрезно (конец XIX-начало XX века) – Фрезно находится в долине Сан Воакин (Сан Хоакин) Центральной Калифорнии. Армяне обосновались во Фрезно с 80-х гг. XIX века. Здесь их главным занятием было сельское хозяйство, в частности, виноградарство. Армяне достигли больших успехов в этой сфере, значительно способствуя развитию Сан Воакина, имеющую богатейшую сельскохозяйственность в США. Среди эмигрантов других национальных групп, армяне в сфере сельского хозяйства занимали первое место по численности. Более того, большинство армян являлось землевладельцами, а не земледельцами. Кроме виноградарства, армяне занимались выращиванием и торговлей разных сортов дыней, огурца, клубники, абрикоса, плодов и овощей, производством булгура и табакаделием. Впервые они организовали экспорт восточных, в том числе и армянских ковров в штаты Калифорнии. Армянам принадлежали тысячи акров в Сан Воакине, они преобладали значительной частью прибыли сельскохозяйственного производства Фрезно. Однако, экономический кризис начавшийся в 1929 г. был судьбоносным для армянских производителей: многие из них обанкротились и были вынуждены продать свои земельные участки или возвращать их государству. Значительная часть армян покинуло Фрезно оставив отрасль сельского хозяйства местным.

3. ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՄԱՆՈՒԿ ՖԵԼԵՔՍՆ

Ռ. Կ. Սաքապետոյեան. – Արևմտահայերէն – արևելահայերէն նոր բառարան, Երևան, «Տիգրան Մեծ» հրատարակչություն, 2011, 382 էջ:

Անկախացումից ի վեր խիստ մեծացել է հետաքրքրությունը Սփյուռքի և առաջին հերթին արևմտահայերենի նկատմամբ: Լույս են տեսել տասնյակ հոդվածներ, մի քանի մենագրություններ և բուհական երկու դասագրքեր, որոնցում քննված են արևմտահայերենի լեզվական բոլոր մակարդակները և բոլոր բաժինները (հնչյունաբանություն, բառագիտություն, ձևաբանություն, շարահյուսություն): Այս առումով առավել ոչ շահեկան վիճակում է բառարանագրությունը: Թեև Սփյուռքում շարունակվում են հրատարակվել բառարաններ (հիմնականում երկլեզվյան՝ օտարալեզու հայերեն և հակառակը), սակայն դրանց մեծ մասը հեռու է հայրենական բառարանագրության նվաճումներից և հիմնականում ունի նեղ գործնական կիրառություն:

Այդ բացը լրացնելու է գալիս Ռ. Սաքապետոյանի «Արևմտահայերէն–արևելահայերէն նոր բառարանը» (2011 թ.): Դեռևս 2000 թ. նույն հեղինակը կազմել և հրատարակել էր «Արևմտահայերեն–արևելահայերեն ուղղախոսական-բացատրական բառարանը», որը մեր գրական լեզվի երկու տարբերակները համադրող բառարանի առաջին և, ինչպես ժամանակը ցույց տվեց, հաջողված փորձն էր: Առաջին բառարանը ուներ մոտ 16 000 բառահոդված: Նոր հրատարակությունը հեղինակը մասամբ վերամշակել և էականորեն համալրել է. բառապաշարը ընդլայնվել է գրեթե մեկ քառորդով և ընդգրկում է 20 000 բառ և դարձվածք: Բառապաշարի համալրումը ընթացել է երկու ուղղությամբ: Հեղինակը ավելացրել է նախորդ հրատարակությունից ինչ-ինչ պատճառներով դուրս մնացած բառերը: Սակայն ավելի կարևոր է այն, որ վերջին

տասնամյակում հիմնականում Սփյուռքում հրատարակված ամենատարբեր բնույթի գիտական, գեղարվեստական ու հրապարակախոսական երկերից, ամսագրերից, օրաթերթերից և այլ պարբերականներից Ռ. Սաքապետոյանը հավաքել և շատ հաճախ հայ բառարանագրության մեջ առաջին անգամ արդի բառարանագիտության պահանջների համաձայն բառարանագրել է մի քանի հազար նորակազմ բառ, նաև դարձվածքներ: Սրանց մեջ շատ են նորաբանությունները, որոնց մի մասը (բառակազմորեն և օտար բառի իմաստը ճշգրիտ արտահայտելու առումով առավել հաջողվածները) արդեն սկսել է կիրառվել նաև հայրենիքի մամուլում (**արժենիչ** «կրեդիտ», **համացանց** «ինտերնետ», **առցանց** «օնլայն», **կայքէջ** «ինտերնետային էջ», **արհեստավարժ** «պրոֆեսիոնալ» և այլն): Հատուկ ուշադրություն է դարձված նաև իմաստային նորաբանությունների ընդգրկմանը, երբ միևնույն բառը արևմտահայերենում հանդես է գալիս նոր իմաստով կամ իմաստներով: Սրանք այսպես կոչված «թարգմանչի կեղծ բարեկամներն» են (եթե, իհարկե, տեղին է **թարգմանել** բայի կիրառումը արևմտահայերեն–արևելահայերեն փոխադրումների համար), ինչպես՝ **բերդապահ** «(մարդ.) դարպասապահ», **կէտ** «(մարդ.) 1. Ֆուտբոլում՝ գոլ: 2. Նիշ, միավոր, (բալլ)», **ծրար** «1. Կապոց, փաթեթ: 2. Հակ» և այլն:

Բառարանի նյութն ընդգրկված է հետևյալ սկզբունքով: Այստեղ ներկայացված են այն բառերը և դարձվածքները, որոնք արևելահայերենի բառապաշարի հետ համեմատելիս ի հայտ են բերում ձևային կամ իմաստային առնվազն մեկ տարբերություն: Այս բառերը հեղինակը բառարանի առաջաբանում ներկայացրել է յոթ խմբերով (էջ 8-9)՝ 1) զուտ արևմտահայերեն բառեր. գործածական են միայն արևմտահայերենում և երբեք չեն հանդիպում արևելահայերենում (**աղէկ, խաղք, սառնոց, փոխասութիւն, հոս, հող, ասանկ** և այլն): 2) Արևմտահայերենում նախընտրելի գործածություն ունեցող բառեր. սրանք թեև արևելահայերենում էլ գործածվում են, սակայն հազվադեպ. առավելապես տարածված են արևմտյան տարբերակում (**հաւկիթ, կակուղ, պաղ, ճերմակ, համարողութիւն, վարժուհի** և այլն): 3) Երկու տարբերակներում ձևային ընդհանրություն ունեցող բառեր, որոնք արտահայտում են տարբեր իմաստներ: Սրանք Ռ. Սաքապետոյանը անվանում է արևելահայերեն–արևմտահայերեն համանուններ: Սա բավականին հետաքրքիր բառաշերտ է, և շատ կարևոր է սրանց տարբերակումը, քանի որ ուղղակի նշանակություններով գործածումը մի

տարբերակից մյուսը կարող է հանգեցնել իմաստային անհամապատասխանության, երբեմն էլ՝ ուղղակի խաթարման (**վայրկեան // վայրկյան** «արևմտ. 1/60 ժամ – արևել. 1/60 րոպե», **ծրար** «արևմտ. կապոց, փաթեթ – արևել. փոքրիկ թղթե տոպրակ, որի մեջ նամակ են դնում», **քարափ** «արևմտ. նավամատույց – արևել. կիրճ» և այլն): 4) Հնչյունափոխական-ուղղագրական տարբերակներ: Սրանք ամենամեծաթիվն են: Այստեղ խոսքը ոչ թե բառերի ավանդական (Սփյուռքի որդեգրած) և արդի (հայրենիքում ընդունված) ուղղագրությունների տարբերությունների մասին է (այս կարգի տարբերություններ ունեցող բառերը բառարանում իրավացիորեն չեն ընդգրկված), այլ միայն արմատի հնչյունափոխական տարբերակների մասին (**զունտ // զունդ, կեդրոն // կենտրոն, օթոպիս // ավտոբուս, պզտիկ // պստիկ, ելլել // ելնել** և այլն): Այս խմբում են ներառված նաև լծորդությունների տարբերություններ ունեցող բայերը (**նստիլ, յայտնուիլ, խանձուիլ, գերիլ, թողուլ, դպչիլ // դպիլ** և այլն): 5) Երկու տարբերակներում միևնույն հասկացության համար բառակազմական տարբեր կադապարներով և բաղադրիչներով կազմված լիակատար համանշանակներ (**գրատուն // գրախանութ, շոգեքարշ // շոգեկառք, հեռուստացույց // հեռացույց // հեռատեսիլ // հեռացուլ // պատկերասփիռ** և այլն): 6) Արևելահայերենում առավելապես իբրև փոխառություն գործածավող բառերի դիմաց արևմտահայերեն հայեցի նորակազմ բառեր (**բանկ // դրամատուն, մակաժում // ինդուկցիա, մահաթմբիր // կոմա, մադձետ // խոլեստերին** և այլն): Արևմտահայերենը, ինչպես հայտնի է, ավանդաբար խուսափում է փոխառություններից: Սակայն այսօր մանավանդ պարբերական մամուլում վիճակը մի քիչ այլ է, և օտար բառերի գործածումը (երբեմն էլ ոչ անհրաժեշտաբար) սկսել է բավականին ընդլայնվել: Այս բառարանում խիստ հազվադեպ, այն էլ հատուկ նշումով (**Ֆր.**, **թրք.**, **գերմ.**, **արաբ.**, **իսպ.** ևն) կարելի է հանդիպել նման բառերի: 7) Եվ վերջին խմբում միավորված են արևմտահայերենում հաճախադեպ հանդիպող գրաբարյան բառերն ու բառածևերը (**հանգոյն, նայ, վասնզի, ատենօք** և այլն):

Բառարանն ունի նոր ուղղագրություն, սակայն գլխաբառերը տրված են ավանդականով, որպեսզի չխաթարվի արևմտահայերենի բառապատկերը: Գլխաբառին անկյունավոր փակագծերի մեջ հաջորդում է բառի հնչյունական տառադարձումը: Պարտադիր նշված են նաև գաղտնավանկերը: Բառի արտասանությունը

նշելիս հաշվի են առնված ոչ միայն արևմտահայերենին բնորոշ հնչյունափոխական երևույթները, մասնավորապես պայթական բաղաձայնների տեղաշարժ-տեղափոխությունը, այլև հնչյունափոխության ավելի բարդ տեսակները՝ առնմանումը և տարմանումը, ինչպես՝ **մազխիլ** [մասխիլ] «մազ քաշելու ունելի», **մաթգենի** [մացէնի] «(բւթ.) հավամրգազգիների ընտանիքին պատկանող մշտադալար թփաբույս, շաքարածառ, ծառելակենի», նաև **ճմռթկել** [ջըմըռթկել] «ճմռթել», **ծիւնահեղծ** [ցո՛ւնահէխց] «ծյունախեղդ»: Տառադարձումը, որը այս ձևով ընդհանրապես առաջին անգամ է տրված հայ բառարանագրության մեջ, մեծապես կարող է նպաստել մեր դերասանների, ասմունքողների արտասանվածքի շտկմանը, քանի որ նրանց մեծագույն մասը պարզապես չի կարողանում ճիշտ արտաբերել արևմտահայերեն տեքստը:

Տառադարձությանը հետևում են քերականական նշումները՝ բառերի խոսքիմասային պատկանելությունը, բայերի սեռը, գոյականների հոլովումը և հոգնակիի ձևերը: Սա ավելի կարևոր է արևելահայ ընթերցողի համար, որովհետև շատ ու շատ գոյականների հոլովումը երկու տարբերակներում չի համընկնում, իսկ հոգնակիակազմության ժամանակ հաճախ տարբերվում են հնչյունափոխական դեպքերը: Բառարանում կան նաև ոճական և տերմինաբանական նշումներ: Ընդ որում, եթե նշումը բազմիմաստ բառի բոլոր նշանակությունների համար է, ապա տրվում է բացատրություններից առաջ, այլ դեպքերում արվում է միայն այն նշանակությունից առաջ, որին վերաբերում է:

Բառարանը բավականին հարուստ է դարձվածքային միավորներով: Ներմուծված են այն դարձվածքները, որոնք կա՛մ լիովին բացակայում են արևելահայերենում, կա՛մ էլ ունեն բառային, բառաձևային և իմաստային տարբերակներ: Բնականաբար, առավել մեծաքանակ են սոմատիկ (որևէ մարմնամասի անվանում պարունակող) դարձվածքները (օրինակ՝ **գլուխ** և **ձեռք** հիմնաբառերից յուրաքանչյուրով կա ավելի քան հինգ տասնյակ դարձվածք):

Շատ կարևոր և անհրաժեշտ են հատուկ անունների՝ բառարանի վերջում կցված երկու համառոտ ցանկերը: Առաջինում տրված են աշխարհագրական տարածված տեղանունները: Իսկ երկրորդը արևմտահայոց և սփյուռքահայերի մեջ առավել տարածված անձնանունների և դրանց արևելահայ տարբերակների ցանկն է:

Առաջինը կարևոր է նրանով, որ Սփյուռքի պարբերական մամուլում և այլ հրատարակություններում սփռված շատ տեղանուններ, կապված արևմտահայերենի հնչյունաբանական առանձնահատկությունների և լեզվական ավանդույթի հետ, արևելահայերիս համար անճանաչելիորեն փոխված են, և երբեմն դժվար է լինում ճիշտ ընկալել թե ինչի՞ մասին է խոսքը, ինչպես՝ **Միշիկըն // Միջիգան, Լիթուանիա // Լիտվա, Միւնիխ // Մյունխեն, Նիս // Նիցցա, ճաբօն // ճապոնիա, Քիւպա // Կուբա, Պոմպէյ // Բոմբէյ**, կամ՝ **ճերմակ Ռուսիա // Բելոռուս** և այլն:

Անձնանունների ցանկը կնպաստի օտար, մասամբ էլ հայկական անունների ճիշտ տառադարձմանը և գրությանը. **Այտա // Աիդա, Էլմաս // Ալմաստ, Տիանա // Դիանա, Օլկա // Օլգա, Լուսֆիկ // Լյուդվիգ** և այլն: Սա մի ոլորտ է, որտեղ այսօր տիրում է կատարյալ խառնաշփոթ: Բառարանը մեծապես կարող է իր նպաստը բերել նաև այս խնդրի կարգավորմանը:

Նոր հրատարակության մեջ հնարավորինս ուղղվել-ճշգրտվել են նախորդի մեջ սպրդած սխալներն ու վրիպակները, այբբենական կարգի խախտումները: Սակայն դրանցից լրիվ խուսափել չի հաջողվել: Ասենք, երբեմն տառադարձված են այնպիսի բառեր, որոնք չունեն գրության և արտասանության տարբերություններ (**մալել, մալեգ, շողահնոց, նքողիլ** և այլն): Բառարան են ներմուծված բառեր, որոնք մեծ վերապահումներով կարելի է համարել առավելապես արևմտահայերենում գործածվող (**մազակալ, մշակոյթ, մշակութային, մշկապարկ, շաբաթագլուխ, ոգեպանդել**): Այնուամենայնիվ կան մի քանի վրիպակներ (**Մազխազ** [մասխազ], գ. (պատմ.) Թիկնագորի պետ Արշակունյաց շրջանում: Պետք է լիներ **Մաղխազ**):

Ռ. Սաքապետոյանի «Արևմտահայերէն–արևելահայերէն նոր բառարանը» կարևոր ներդրում է հայ բառարանագրության մեջ: Այն մեծապես անհրաժեշտ է և՛ ուսուցիչներին ու լրագրողներին, և՛ ուսանողներին, մշակույթի աշխատողներին, դիվանագետներին, իհարկե, լեզվաբաններին: Այն կարևոր է նաև Սփյուռքի հայության համար*:

* Պատահական չէ, որ կան առաջին դրական արձագանքները Սփյուռքից: Տե՛ս, օրինակ, **Աղպաշեան Պ.**, Բառարանագրական լուրջ աշխատութիւն մը՝ «Արևմտահայերէն–արևելահայերէն նոր բառարան», հեղինակ Ռ. Սաքապետոյեան, Երեւան, 2011 // «Նոր կեանք», թիւ 36, օգոստոս 11, 2011:

ՅՈՒՐԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Հայկազեան հայագիտական հանդես. հատոր LԲ.,
Պէյրուք, 2012, 646 էջ*

Հայագիտական հանդես հրատարակելը դժվարին ու պատասխանատու գործ է: Երիցս բարդ ու դժվարին է այդ գործի կազմակերպումը Սփյուռքում: Պետական հովանավորության բացակայությունը, նյութական դժվարությունները, Սփյուռքի տարանջատ հատվածներում գործող հեղինակներին մեկ նպատակի շուրջ համախմբելու անպատեհությունը գործոններ են, որոնք ուղղակի հերոսական ջանքեր են պահանջում կազմակերպիչներից գործը հաջողությամբ պսակելու համար: Եվ եթե նկատի ունենանք, որ «Հայկազյան հայագիտական հանդես»-ը հրապարակի վրա է շուրջ քառասուն տարի, ապա պարզ կդառնա, թե ինչ հայրենամյվեր ու հերոսական առաքելության են ձեռք արկանել հանդեսի աշխատակիցները: Առիթը ունենալով՝ ուզում են հնչեցնել նրանցից մի քանիսի անունները. **Երվանդ Քասունի՝** հանդեսի հիմնադիր-խմբագիր 1970-1984 թվականներին, **Անդրանիկ Կռանյան՝** պատասխանատու խմբագիր 1991-ից՝ երկու տասնամյակից ավելի: Տարբեր ժամանակներում հանդեսի խմբագրական կազմի անդամներ ու պատասխանատուներ են եղել լիբանանահայ ճանաչված մտավորականներ և գործիչներ՝ **Պարույր Աղբաշյան, Ժիրայր Դանիելյան, Անդրանիկ Դաքեսյան, Արտա Էքմեքժի, Արա Սանջյան, Արմեն Յուրնեշյան** և ուրիշներ:

Հանդեսը՝ որպես Բեյրուքի Հայկազյան համալսարանի հայագիտական ամբիոնի հրատարակություն, ունի յուրահատուկ տեղ Սփյուռքի հայագիտական հայալեզու հանդեսների շարքում: Ունենք ևս չորս այդպիսի հանդեսներ՝ «Բազմավեպ», «Հանդես ամսօրյա», «Հասկ հայագիտական տարեգիրք», «Տաթև հայագի-

* «Հայկազյան հայագիտական հանդես»-ի LԲ հատորի շնորհանդեսը տեղի ունեցավ հոկտեմբերի 10-ին Երևանում՝ ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի հանդիսարանում՝ մասնակցությամբ Հայաստանի և արտերկրի մտավորականների: Եղան ելույթներ, հնչեցին գնահատության ու շնորհավորանքի խոսքեր:

տական տարեգիրք»։ Միֆթարյանների երկու հրատարակությունները՝ Վեներտիկի «Բազմավեպ»-ը և Վիեննայի «Հանդես ամսօրյա»-ն, վերջին տարիներին հանգրվանել են հայրենիքում և հրատարակվում են առավելապես հայրենի մասնագետների ջանքերով ու մասնակցությամբ և այս իմաստով ինչ-որ չափով հեռացել ավանդական հայկական սփյուռքի գիտական միտքը ներկայացնելու նախկին առաքելությունից։ Անթիլիասի «Հասկ»-ը հրատարակվում է զգալի ընդմիջումներով, ավելի հաճախ՝ միացյալ համարներով։ Հալեպի «Տաթև» հանդեսը հիմնադրվել է 2008-ին (մեր ունեցած տեղեկություններով՝ լույս է տեսել հանդեսի մեկ համար)։ ապավինում է առավելապես տեղական ուժերին, նյութերի մեծ մասը նվիրված է Սուրիո հայ համայնքի կյանքին և հայ-արաբական հարաբերությունների լուսաբանմանը. տպագրում է միայն հայալեզու հոդվածներ։

Այս համապատկերի վրա **Հայկազյան հանդեսը** ունի իր ուրույն նկարագիրը. կայուն պարբերականությամբ (1991-ից սկսած) ներկայանում է ընթերցողին ամեն տարի և լույս է ընծայվում ստվարածավալ հատորներով. Հանդեսի մինչև այժմ հրատարակված էջերի քանակը անցնում է 10 հազարից։ Հոդվածներ է տպագրում հայերեն, արաբերեն և արևմտաեվրոպական լեզուներով, հիմնականում՝ անգլերեն։ Հանդեսին աշխատակցում են հայ և օտարազգի հայագետներ Հայաստանից և Սփյուռքի այլ համայնքներից։

Ի սկզբանե Հանդեսը նպատակ է ունեցել քաջալերելու Սփյուռքի, մասնավորապես լիբանանահայ մտավորականների գործունեությունը հայագիտության բնագավառում, աջակցելու նրանց և Հայաստանի գիտնականների համագործակցությանը։

Հանդեսը հաջողություններ ունի իր հայագիտական գործունեության այս երկու ոլորտներում էլ։ Միանգամայն բավարար չափով ապահովված է հայաստանյան հայագետների մասնակցությունը հանդեսի վերջին տարիների հատորներում։ Ներկա հատորը պարունակում է արևելահայերեն 15 և արևմտահայերեն 7 հոդվածներ կամ հաղորդում-գրախոսություններ՝ չհաշված օտարալեզու 8 նյութերը։ Ավելին, «Հոդված-ուսումնասիրություններ» բաժնի հեղինակները միայն արևելահայեր են, ասել է թե՛ այդ բաժնի

ծավալուն և հիմնարար 6 ուսումնասիրություններ գրված են արևելահայերենով: Հայաստանի գիտնականների գործակցության և ներգրավվածության առումով, ինչպես տեսնում ենք, մտահոգություն չկա: Բայց կա մտահոգություն մեկ այլ տեսակետից, որը վերաբերում է Սփյուռքում հայագիտության զարգացման հեռանկարներին: Հատորում արևելահայերեն նյութերի ակնհայտ գերակշռությունը խորհելու առիթ է տալիս: Հոդվածները արևելահայերենով կամ արևմտահայերենով գրելու խնդիրը չէ, որ քննարկում են, ոչ էլ մտահոգություններ ունեն սոսկ հայերենագրության նահանջի վերաբերյալ, քանի որ հայտնի է՝ սփյուռքահայ (նաև Հայաստանի) շատ մտավորականներ իրենց գիտական առաջընթացը ապահովելու համար պետք ունեն օտար լեզվով հրատարակվելու¹: Խոսքը հայկական սփյուռքում հայագիտական մտքի որակների և զարգացումների մասին է: Ակնհայտ է, որ սփյուռքահայ հայագետների մասնակցությունը գիտական հանդեսներին և առհասարակ սփյուռքահայ մասնագետների գործակցությունը հայագիտության ոլորտում նվազելու որոշակի միտումներ ունի: Այդ մասին է վկայում արևմտահայերենով նյութերի զգալի պակասը հանդեսի ներկայացված հատորում: **Հայկազյան հանդեսը** կոչված է նախ և առաջ խթանելու հայագիտության զարգացումը հայկական սփյուռքի մեջ:

Հայագիտություն հասկացությունը այսօր էապես ընդլայնել է իր իմացական, ժամանակային և տարածական սահմանները. ներառում է ոչ միայն պատմության, արվեստի ու մշակույթի, գրականության ու լեզվի խնդիրներ, այլև ամենաբազմազան իրակություններ հասարակական, ընկերային կյանքի ու տնտեսության ոլորտներից, ընդգրկում է ավանդական-դասականն ու ժամանակակիցը, ժամանակի խորքերը գնացող հինը և խիստ արդիականը, զուգահեռի ու համադրության մեջ է պահում հայրենական գիտությունը և այլ երկրների ու ժողովուրդների գիտական նորոյա փորձը: Իրավացիորեն նկատված է, որ արդի հայագիտությունը «բազմաժամանակեայ, բազմաճիւղ ու բազմամակարդակ շարունակականութեան մը արտահայտութիւնն է, որ կը կազմէ ամբող-

¹ Այս մասին մտահոգություններ է արտահայտել դոկտ. Վարդան Մատթեսյանը հանդեսի LU հատորի շնորհանդեսում բանախոսելիս, տե՛ս «Հայկազեան հայագիտական հանդես», Պեյրուք, 2012, էջ 605-611:

ջական միաւոր մը» (Վարդան Մատթեոսյան, էջ 608): «Հայկազյան հայագիտական հանդեսը» հայագիտության այդ որակի կրողն է ու քարոզիչը: Դեռ ավելին, գիտական այն հաղեսներից է, որոնք իրենց քաղաքականությամբ ձևավորեցին հայագիտության այդ տեսակը հայկական սփյուռքում և հայրենիքում:

Հայկազյան հանդեսի բովանդակությունը խիստ բազմազան է ու ընդգրկուն: Նյութեր է ներառում հայագիտության բոլոր ասպարեզներից: Նրա ստվարածավալ հատորները՝

- անդրադառնում են հայագիտությանն առնչվող բոլոր ժամանակների խնդիրներին՝ սկսած հնագույն շրջանից մինչև այսօր, մինչև սփյուռքագիտություն, Սփյուռք-Հայաստան արդի հարաբերություններ,
- գործակցության արգասավոր դաշտ են Սփյուռքի և Հայաստանի հայազետների համար,
- հյուրընկալում են ինչպես հայ, այնպես էլ օտարազգի հեղինակների,
- ներդաշնակ համադրումի մեջ են պահում արևելահայերենն ու արևմտահայերենը, հայաստանյան և սփյուռքյան մշակույթն ու գրականությունը,
- քննարկումների ու վերլուծությունների դուռ են բացում հայագիտության գրեթե բոլոր ճյուղերի համար՝ պատմություն, գրականություն, քաղաքականություն, ազգագրություն, լեզու, կրոն:

Վստահաբար կարելի է ասել, որ նյութերի հարստությամբ ու բազմազանությամբ, այլև քննարկումների խորությամբ ու գիտականությամբ հանդեսը չի զիջում Սփյուռքում ու հայրենիքում հրատարակվող գիտական հանդեսներին:

Շնորհանդեսի բերված այս հատորը՝ երեսուներկուերորդը, հանդեսի բազմամյա և բազմամակարդակ գործունեության վկայություններից է: Ավելորդ չէն համարում մեկ-երկու անդրադարձով ներկայացնելու հատորում ամփոփված նյութերը:

Այստեղ գետեղված շուրջ մեկ ու կես տասնյակ հոդվածներ ու հաղորդումներ նվիրված են հայոց պատմության կամ հայերին առնչվող պատմաքաղաքական խնդիրների քննությանը: **Գրիգոր Աձենյանի** ծավալուն հոդվածը («Ստալինեան Բռնադատութիւն-

ները Հայաստանում եւ Սփիւռքահայ մամուլը») խիստ ուշագրավ տեղեկություններ է տալիս ստալինյան բռնադատությունների մասին մամուլում տեղ գտած արձագանքների վերաբերյալ: Հասկանալի պատճառներով նույն շրջանի խորհրդահայ մամուլը երևույթի մասին հրամցում էր պաշտոնական կցկտուր հաղորդագրություններ կամ տպագրում էր զանազան «գրական բանադրանքներ»: Սփյուռքահայ մամուլի այդ արձագանքների վերլուծությունը նոր լույս կարող է սփռել հարցի վրա: **Սամվել Պողոսյանի** ուսումնասիրության նյութը բրիտանացի պետական գործիչ, դիվանագետ և արևելագետ Մարկ Սայքսի հայանպաստ գործունեությունն է Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին («Մարկ Սայքսի Դիրքորոշումը Հայերի եւ Հայկական Հարցի Վերաբերեալ»): Հայկական պետականության վերականգման գործում օտարազգի դիվանագետը ունեցել է կարևոր դերակատարություն, որը ոչ միայն արժանի է հիշատակության, այլև փորձի յուրացման առումով միանգամայն ուսանելի է: Հանդեսի **«Քննարկումներ»** բաժնում հայ և օտարազգի հայագետների՝ Արսեն Շահինյան, Մայքըլ Դենիս Օ'հարա, Վլատիմիր Օսիպով, Արտա Ծեպեճյան, Խաչիկ Տեր Դուկասյան, Արփի Վարդումյան, հրապարակումները պատմական ուշագրավ տեղեկություններ են տալիս հայոց ցեղասպանության, 9-րդ դարում արաբական գերիշխանության պայմաններում ապագա ընդարձակ քաղաքական տարածության՝ Հայոց կայսրության հիմնարկումի (որի կորիզը դարձավ Բագրատունիների իշխանությունը), Բեյրութի հայ գաղութի լեզվապահպանման և լեզվափոխության մեջ արտալեզվական ազդակների, հայ կյանքի զանազան կողմերի ու պատմական անցքերի մասին, մեկնում են հայոց միջնադարյան ձեռագրերի երաժշտաբուժության խորհուրդը: Երկու հետաքրքրական **հաղորդումներում** քննարկվում են ժԸ դարի երկրորդ կեսին Արցախում պետականության վերականգման համար ընթացող իրադարձությունները (հեղ.՝ Վահրամ Բալայան), համոզիչ գնահատական է տրվում Արցախի պետական պատմաերկրագիտական թանգարանի ձեռագործ գորգերի նկատմամբ ադրբեջանական նկրտումներին (հեղ.՝ Մելանիա Բալայան):

Առանձին ուշադրության են արժանի հայ գրականության զանազան հիմնախնդիրներին նվիրված մեկ տասնյակից ավելի հոդ-

վածներն ու հրապարակումները: Բանասիրության դոկտոր **Սուրեն Դանիելյանի** մոտ 50 էջանոց ունումնասիրությունը («Արեւելահայ եւ Արեւմտահայ Մշակութային Համակարգերի Քննութեան Փորձը 3. Օշականի *Մաթիկ Մելիքխանեան* վէպում») նվիրված է արևմտահայ-սփյուռքահայ գրականության ամենախոշոր դեմքերից մեկի՝ Հակոբ Օշականի գրական ժառանգության գնահատությանը: Քննության առարկան Օշականի քիչ ծանոթ վեպերից մեկն է՝ «Մաթիկ Մելիքխանյան»՝ հրատարակված գրության թվականից շուրջ քառասուն տարի անց: Վեպում արևելահայ և արևմտահայ մշակութային համակարգերի վերլուծության փորձը նոր ու ինքնատիպ որակներ է բացում այդ համակարգերի բաղադրիչ շերտերում՝ գյուղական միջավայրի ճանաչման հերոսի փորձն ու պատրանքները, Օշական-Աբովյան, Օշական-Մուրացան, Օշական-Դոստոևսկի զուգադրական քննության հարցեր ու եղանակներ, պատմագրության ու բարքագրության գծեր ու հատկանիշներ և այլն: Նույնպիսի մի երկի ծավալուն քննությանն է նվիրված բանասիրության դոկտոր **Վաչագան Գրիգորյանի** ուսումնասիրությունը («Ամհատականն Ու Հասարակականը Որպէս Փոխկապակցուած Իրողութիւններ Հրանտ Մաթեւոսեանի «Նանա Իշխանուհու Կամուրջը» Վիպակում»): Հրանտ Մաթևոսյանի վիպակը պիտի տպագրվեր 1962-ին, բայց լույս տեսավ 40 տարի անց, որովհետև երկի գաղափարական առանցքում խորհրդային տերության անկման տեսլականն էր: Վիպակը, ինչպես նշում է հոդվածի հեղինակը, «իրականութեան մասին ասուած բաց, ճակատային խօսք էր, որ զայրացնում է պաշտօնական քննադատութեանը: ...Բայց վիպակը վկայում էր եւ հեղինակի՝ կեանքն ընդարձակ սահմաններում ճանաչելու մեծ մղումի մասին, որտեղ արգելւում էր ոտք դնել» (էջ 163): Վաչագան Գրիգորյանի հոդվածը փոքրիկ հատված է Հրանտ Մաթևոսյանի գրական վաստակը ներկայացնող գրականագիտական մեծածավալ մի ուսումնասիրությունից, որը, կարծում ենք, մոտ ժամանակներում լույս աշխարհի գալու պատեհությունը կունենա:

Հայ գրականության պատմության զանազան խնդիրներին ու գրական առնչություններին են նվիրված նաև այլ հոդվածներ, քննարկումներ և հրապարակումներ:

«**Գրախոսականներ**» բաժնում ներկայացված է յոթ գիրք, որոնք հայրենիքում և Սփյուռքում ապրող հայ հեղինակների գործեր են՝ նվիրված հայ կյանքի ամենաբազմազան բնագավառներին՝ «Յասմիկ Մարկոսեան. *Էջեր՝ Հայկական Պալեի Պատմություն*», «Արծուի Բախչինեան. *Հայաստան-Շուէտ. Պատմական Եւ Մշակութային Յարաբերություններ*», «Վարուժան Պողոսեան. *Հայոց Ցեղասպանության Առաջին Փուլը Ֆրանսիական Պատմագրության Եւ Հասարակական-Քաղաքական Մտքի Գնահատմամբ (ԺԹ. Դարի Վերջ – Ի. Դարի Սկիզբ)*», «Արամ Հայկազ. *Նամակներ*», «Սիրանոյշ Գալստեան. *Հայեացք Մեր Կինոյին. Պատմությունը Եւ Ներկան*», «Վլադիմիր Բարխուդարեան. *Մոսկուայի Եւ Պետերբուրգի Հայկական Գաղութների Պատմություն (18-րդ դարի կես - 20-րդ դարի սկիզբ)*», «*Համագրայնացումի Բարոյականությունը (Վարդան Մատթեոսեանի Գրական-Բանասիրական Ուսումնասիրություններ Հատորին Առթիւ)*»:

Պատմանշակութային բացառիկ արժեք ունեն «**Հրապարակումներ**» բաժնում զետեղված նյութերը:

Հայոց ցեղասպանության վերաբերյալ աշխարհի զանազան պահոցներում (արխիվներում) ամփոփված շատ փաստաթղթեր տակավին սպասում են հրապարակման: Դանիական պահոցները նույնպես հարուստ են այդօրինակ փաստաթղթերով: **Մաթիաս Պիրոնյունտը** իր հոդվածում 3 արժեքավոր նյութ է հրապարակել, որոնք, անշուշտ, կարող են լույս սփռել Խարբերդի և Մեզիրեի շրջանում հայերի բռնադատման, տեղահանման ու հալածանքների մասին: Նյութերը պատկանում են դանիացի միսիոներ Քարի Փեթերսընի գրչին: Վերջինս եղել է Մեզիրեում հիմնված որբանոցներից մեկի տնօրենուհին և գրի է առել ցեղասպանության սարսափները ապրած հայ ընտանիքների և հայ որբերի վկայությունները: Անգլերենով հրապարակված այս նյութերը՝ համապատասխան մեկնություններով, անշուշտ, ուշագրավ տեղեկատվություն են օտարալեզու ընթերցողի համար:

Վահան Թոթովենցի 8 անտիպ նամակները հետաքրքիր վավերաթղթեր են հայրենիքի ճակատագրով ապրող գրողի՝ դեռևս բացահայտումների կարոտ գործունեության ու մտահոգությունների մասին: Անսալով Խորհրդային Հայաստանի կառավարության կո-

չին՝ շատերի հետ Թոթովենցն էլ բռնեց տունդարձի ճանապարհը, բայց մշտապես իր կապը պահպանեց «այն աշխարհի հետ, զոր անվերադարձ լքելու որոշումը տուած էր տարիներ առաջ»: Նամակները ապաքաղաքական բովանդակություն ունեն (այլ կերպ չէր էլ կարող լինել), բայց խիստ արժեքավոր են մի քանի առումներով՝ շնորհիվ նաև հրապարակման հեղինակի՝ **Վարդան Մատթեոսյանի** հանգամանալից մեկնությունների ու ծանոթագրությունների: Դրանք անուղղակիորեն պատկերացում են տալիս այդ տարիներին (Նամակները թվագրված են 1933-1936 թթ.) ԱՄՆ և խորհրդային վարչակարգ հարաբերությունների մասին, որոնք դույզն հնարավորություն չէին տալիս ազատ շփումի ու հաղորդակցման: Բացահայտում են գրողի գրական նախասիրությունների ինչ-ինչ կողմեր ու առումներ, վկայում են նրա ստեղծագործական մեծ հետաքրքրությունների մասին. նամակներում հեղինակը տեղեկություններ է հաղորդում իր գրական ծրագրերի, կատարած թարգմանությունների, գրական նոր գործերի մասին, խնդրում է իրեն ուղարկել արտերկրում հրատարակվող անգլալեզու գրականության օրինակներ՝ բելգիացի և իռլանդացի հեղինակների գործեր, որոնցում հիմնական գաղափարը ազգային ինքնության կամ ազգային արմատների որոնման ձգտումն է: Նամակները անուղղակի կերպով նաև տեղեկություններ են տալիս այդ շրջանում խորհրդային Հայաստանի գրահրատարակչական գործունեության մասին:

Կյանքի վերջին տարիներին **Հակոբ Օշականի** գրած 3 անտիպ նամակները (ուղղված իր մտերիմներից մեկին՝ Գեորգ Չագրյանին) արժեքավոր են նրանով, որ անձնական կյանքի խնդիրներից բացի՝ շոշափում են գրողի գրական ծրագրերին ու քառասունյա գրական գործունեությանը վերաբերող որոշ մանրամասներ, դիտարկումներ՝ ժողովրդի անցած ճանապարհի ու ճակատագրի մասին, որոնք, կարծում ենք, կարող են օգնել՝ հասկանալու համար բացառիկ շնորհներով օժտված գրողի ու նարդու նկարագրի ինչ-ինչ կողմեր:

Ձավեն Մսրոյանի հրապարակած նամակները լույս են սփռում հեղինակի կատարած ազգանվեր գործի վրա՝ ՄԱԿ-ի 30-րդ պարբերության վերահաստատման ուղղությամբ, որը հայոց ցեղասպանության ճանաչման պատմության մեջ իր ուրույն տեղն ունի:

Կարինե Ալեքսանյանի հրապարակումները 1920 թ. թուրք-հայկական պատերազմի նախօրեին Ալեքսանդրապոլ գավառում տիրող հասարակական-քաղաքական և իրավական դրության վերաբերյալ բացառիկ փաստաթղթեր են:

Նույնքան արժեքավոր ու տպավորող են նաև մյուս հեղինակների (Մաքսիմ Եվատյան, Քոնել Նատի, Ռուբեն Սահակյան) հրապարակումները, որոնցից յուրաքանչյուրը հայ կյանքի այս կամ այն բնագավառի վերաբերյալ ուշագրավ մի նոր տեղեկություն անպայման պարունակում է:

«Հայկազյան հայագիտական հանդես»-ը տասնամյակների իր գործունեությամբ մշակվել ու հղկվել է որպես տարեգրքի տիպար օրինակ: Եվ այս առումով դժվար է նրա գործունեության մեջ արձանագրել բացթողումներ կամ պակաս ու թերի կողմեր: Մեր դիտողությունները կարող են հնչել միայն որպես ցանկություններ՝ այդ գործունեության բոլոր կողմերն ու առումները առավել շահեկան տեսնելու համար: Օրինակ՝ կարելի է հայագիտական այս հրատարակության ամենամյա հատորները կազմել նույն կամ մոտավորապես նույն ծավալով. մի քանի հարյուր էջերի տարբերությամբ տպագրելը հազիվ թե լուրջ պատճառներ ունի: Կամ՝ հանդեսը հայագիտական բնույթի է, և հավանաբար ճիշտ պիտի լիներ բոլոր հատորների բովանդակության համար ապահովել կայուն հայերենագիտական մաս, մի բան, որ, օրինակ, վերջին հատորի պարագային դժվար է հավաստել: Կամ՝ որքանով է նպատակահարմար տարեգրքում զետեղել հոդված-ուսումնասիրություններ, որոնց ծավալը հասնում է քառասուն կամ հիսուն էջի: Իրավացի է ասված, որ շատ ավելի դյուրին է ընթերցել երեք հարյուր էջանոց գիրք, քան հիսուն էջանոց հոդված: Թերևս ճիշտ կլիներ հոդվածների համար սահմանել էջերի առավելագույն քանակ՝ 20 կամ 25 էջ, և ջանալ այդ չափը պահպանել բոլոր հատորներում: Տարեգրքի բովանդակությունը, ինչպես արդեն նկատվեց, ներկայացվում է առանձին բաժիններով՝ համապատասխան խորագրերի ներքո՝ «Հոդված-ուսումնասիրություններ», «Քննարկումներ», «Հրապարակումներ», «Հաղորդումներ», «Գրախոսականներ», «Հուշագրություն», «Մահագրություն» և այլն: Պետք է ասել, սակայն, որ որոշ նյութեր թեև զետեղված են տարբեր բաժիններում, բայց իրենց բնույթով, հարցադրումներ-

րով, նույնիսկ ծավալով իրարից էապես չեն տարբերվում: Խոսքը մասնավորապես «Հողված-ուսումնասիրություններ»-ի և «Քննարկումներ»-ի մասին է:

Այս բոլորը, սակայն, ընդամենը առաջարկություններ են և բնավ չեն ստվերում կատարված հսկայածավալ ու դժվարին աշխատանքը:

Հատուկ ուզում են շեշտել մի կարևոր հանգամանք: Ձարմանքի ու հիացմունքի է արժանի այն ուշադիր վերաբերմունքը, որ հանդեսի խմբագրատան կազմը, մասնավորապես համարի պատասխանատուները դրսևորել են նյութերի ընտրության, խմբագրման ու սրբագրումի զանազան փուլերը անցնելիս: Դա արվել է բացառիկ խնամքով ու հոգատարությամբ:

«Հայկազյան հայագիտական հանդես»-ի քառասնամյա ուղին եղել է խիստ արգասավոր: Հանդեսի 32 հատորներից յուրաքանչյուրը մի յուրօրինակ հանգրվան է դարձել Սփյուռքի և Հայաստանի հայազետ մտավորականների համար: Անվերապահ համոզումը ունեն, որ հանդեսի գալիք հանգրվանները կլինեն նույնքան արգասավոր ու բարեբեր:

ԼԴԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Из истории армяно-украинских, венгерских и молдавский отношений (Сборник статей и материалов).

Составители: К. Хачатрян, О. Алексанян.

Редактор К. Хачатрян.- Ер.: Инст. Истории НАН РА, 2012. 224 стр.

Հայ-ուկրաինական, հունգարական և մոլդովական հարաբերությունների պատմությունից (Յոգվածների և նյութերի ժողովածու):

Կազմողներ՝ Կ. Խաչատրյան, Յ. Ալեքսանյան:

Խմբագիր՝ Կ. Խաչատրյան, Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2012, 224 էջ

Պատմական իրողությունների բերումով հայ ժողովուրդը սփռվել է աշխարհի տարբեր անկյուններում՝ այդ թվում արևելաեվրոպական երկրներում՝ այստեղ կառուցելով իր տունը և արարելով հյուրընկալ հողում: Արևելյան Եվրոպան հայկական արտագաղթերի հիմնական ուղղություններից է եղել, ուր հայ զանգվածը հաստատվել է՝ սկսած միջնադարից: Արդեն 12-13-րդ դդ. հայկական գաղութներ էին առաջացել Արևելյան Եվրոպայի երկրներում՝ Ուկրաինայում, Լեհաստանում, Յունգարիայում, Ռումինիայում, Մոլդովայում: Դրանք իրենց գոյությունը պահպանեցին և համալրվեցին հետագա ժամանակաշրջանում: Արևելաեվրոպական երկրներում հիմնված հայկական գաղութները կարևոր դերակատարություն ունեցան մի կողմից հայ ժողովրդի և Հայաստանի, մյուս կողմից հյուրընկալ երկրների ու ժողովուրդների շփումների, փոխհարաբերությունների ձևավորման ու զարգացման գործում:

Գաղութահայ կյանքն ընթացել է հյուրընկալ երկրների ներքին և արտաքին կյանքին լիարժեքորեն համարկվելու (ինտեգրվելու) պայմաններում:

XX դարի երկրորդ կեսին ինչպես հայ, այնպես էլ օտար պատմագիտական դպրոցների կողմից լայն ուսումնասիրության առար-

կա դարձավ հայկական գաղութների և Սփյուռքի պատմության հետազոտումը, հրապարակ եկան տասնյակ աշխատություններ, համատեղ իրականացված գիտագործնական նստաշրջանների արդյունք-հրատարակություններ:

Այս առումով հատկապես կարևոր են Արևելյան Եվրոպայի հայկական գաղութների պատմությանը նվիրված գիտական նստաշրջաններն ու հրատարակությունները: Մասնավորապես նկատի ունենք հայ-ուկրաինական և հայ-հունգարական համատեղ գիտական ծրագրերն ու համագործակցությունը, իսկ տպագրված ժողովածուները դրա վառ վկայությունն են:

Հայ-ուկրաինական գիտական կապերի ամրապնդման գործում առանցքային նշանակություն ունեցավ Հայաստանի և Ուկրաինայի գիտությունների ակադեմիաների պատմության ինստիտուտների և Լվովի հասարակական գիտությունների ինստիտուտի աշխատակիցների համատեղ գիտական նստաշրջանը 1959 թ. և 1962 թ., որոնց նյութերը հրատարակվել են 1961-1965 թթ. «Исторические связи и дружба армянского и украинского народа» խորագրով: Լվովի նարգային պետական արխիվը 1969 թ. հրատարակեց 17-րդ դարի հայ-ուկրաինական հարաբերություններին նվիրված արխիվային փաստաթղթերի ժողովածու, որը լուրջ ներդրում էր Ուկրաինայի, Լեհաստանի հայ գաղութի և, ընդհանրապես, հայ-ուկրաինական հարաբերությունների պատմության ուսումնասիրման գործում: Երկու երկրների գիտնականների 3-րդ և 4-րդ նստաշրջանները տեղի ունեցան 1966 թ. և 1987 թ. Երևանում:

Հայ-հունգարական պատմական կապերի ուսումնասիրման համար մեծ նշանակություն ունեցան Հայաստանի և Հունգարիայի գիտությունների ակադեմիաների պատմության ինստիտուտների համատեղ աշխատանքները և 1983 թ. Երևանում լույս ընծայված «Հայ-հունգարական պատմական և մշակութային կապերի պատմությունից» սովորածավալ ժողովածուն: 2008 թ. հուլիսին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի պատմության ինստիտուտում անցկացված «Հայ-հունգարական հարաբերությունները և հայերը Արևելյան ու Միջին Եվրոպայում (16-20-րդ դարեր)» թեմայով գիտաժողովը գիտական շփումների վերականգման և խո-

րացման գոյություն ունեցող ավանդույթների շարունակությունն էր: Միջազգային գիտաժողովն իրենց մասնակցությամբ պատվեցին ՀՀ-ում Ուկրաինայի ու Ռումինիայի արտակարգ և լիազոր դեսպանները:

Հայ-մոլդովական գիտական կապերի սերտացման համար լուրջ խթան հանդիսացավ համագործակցությունը ԱՊՀ անդամ երկրների գիտությունների ակադեմիաների պատմության ինստիտուտների միջև միջազգային ասոցացիայի շրջանակներում:

Հայ-ուկրաինական, հայ-հունգարական և հայ-մոլդովական հարաբերությունները և Արևելյան Եվրոպայի այս երկրների հայկական գաղթօջախների պատմության տարբեր կողմերը լուսաբանելու և գիտական համագործակցության խորացման առումով արժեքավոր է 2012 թ. հունվարին ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հրատարակած գիտական հոդվածների և նյութերի ժողովածուն, որին իրենց մասնակցությունն են բերել հայ, ուկրաինացի, ռումինացի, հունգարացի և մոլդովացի հետազոտողներ:

Ժողովածուն կազմել են ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի փոխտնօրեն, պ. գ. թ., դոցենտ **Կարեն Խաչատրյանը** և ինստիտուտի հայ գաղթօջախների և սփյուռքի պատմության բաժնի գիտաշխատող պ. գ. թ. **Յովհաննես Ալեքսանյանը**:

Վերոհիշյալ ժողովածուն կարևորվում է նաև նրանով, որ այն իր էջերում ընդգրկել է դեռևս 1987 թ. տեղի ունեցած հայ-ուկրաինական 4-րդ գիտական նստաշրջանի (բաժին առաջին) և 2008 թ. հայ-հունգարական գիտաժողովի զեկուցումները (բաժին երկրորդ):

Ժողովածուն կառուցվածքային առումով բաղկացած է նախաբանից, երեք բաժիններից, ինչպես նաև արխիվային փաստաթղթերից ու տպագիր նյութերից:

Ժողովածուի նախաբանում համառոտ ներկայացված են Արևելյան Եվրոպայում հայկական գաղթօջախների առաջացման պատմական նախադրյալներն ու պատճառները, գաղութահայության պատմության ուսումնասիրման ու բազմապիսի հրապարակումների կարևորությունը, գիտական կապերի ընդլայնման ու խորացման անհրաժեշտությունը:

ժողովածուի **առաջին բաժինը**, ինչպես արդեն ասվեց, ներկայացնում է հայ-ուկրաինական պատմական կապերը, հայ ազգաբնակչությունը Ուկրաինայում: Բաժնում հայ և ուկրաինացի հետազոտողների հոդվածներում ներկայացվում են Կիևյան Ռուսիայի և Հայաստանի կապերը, հայ և սլավոն ժողովուրդների մշակութային հարաբերություններն ու ընդհանրությունները, Արևմտյան Ուկրաինայի տարածքի հայկական բնակավայրերի պատմությանը նվիրված ձեռագիր փաստաթղթերը, Լվովի հայկական հուշարձանները:

Մի շարք հոդվածներում ներկայացվում են հայկական գաղթօջախների առևտրատնտեսական կապերը Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի հետ, ինչպես նաև հայ վաճառականության դերը Ուկրաինայի և Մոլդովայի տնտեսական զարգացման գործում, հայերի ավանդը Բեսարաբիայի թե՛ տնտեսական, թե՛ մշակութային կյանքում: Քննվում են նաև XX դարում վերելք ապրող հայ-ուկրաինական հարաբերությունները, դրանց քաղաքական, տնտեսական, գիտական և այլ կողմերը: Մի շարք աշխատանքներ են նվիրված Ուկրաինայի հայ համայնքի պատմությանը:

Ժողովածուի **երկրորդ բաժինը** վերաբերում է հայ-հունգարական պատմական կապերին և հայ բնակչությանը Հունգարիայում: Բաժնում ընդգրկված են հունգար և ռումին հետազոտողների հոդվածներ, որոնք նվիրված են Տրանսիլվանիայի հայերին XVIII-XIX դդ., Տրանսիլվանիայի հայկական գրադարաններին ու գրականությանը: Հետաքրքրություն է ներկայացնում «Հայերը Հունգարիայի քաղաքական էլիտայում XIX դ.» ուսումնասիրությունը (հեղինակ՝ Իվան Բերտենի):

Ժողովածուի **երրորդ բաժինը** նվիրված է հայ-մոլդովական պատմական կապերին և Մոլդովայի հայ համայնքին: Բաժնի հոդվածներում լայնորեն ներկայացված են Բեսարաբիայի հայերի պատմության որոշ կողմեր, անվանի հայ դիվանագետ Մանուկ բեյի ժառանգներին վերաբերող տվյալներ, XIX-XX դդ. հայ-մոլդովական հարաբերությունների պատմագրությունը: Հայ-մոլդովական պատմական կապերի զարգացման առումով կարևորվում է և հանգամանորեն ներկայացվում է Հայ Եկեղեցու դերը մոլդովահայերի կյանքում:

ժողովածուն պարունակում է նաև հայ-մոլդովական հարաբերություններին և մոլդովահայ համայնքի կյանքի տարբեր ոլորտներին վերաբերող հարուստ արխիվային և տպագրական հարուստ նյութ, որը լույս է սփռում համայնքի և Մոլդովայի հայ եկեղեցու գործունեության վրա XIX-XX դդ.: Ժողովածուի մեջ տեղ են գտել Մոլդովայի Հանրապետության պետական արխիվի պաշտոնական 15 փաստաթղթեր, որոնք գրագրություններ են առանձին չինովնիկների, պետական հիմնարկությունների և հայ եկեղեցու միջև:

Ժողովածուում զետեղված են նաև Մոլդովայի պարբերական մամուլի առանձին հրատարակումներ, որոնք վերաբերում են մոլդովահայ համայնքի կյանքին և հայկական հուշարձաններին:

Ժողովածուի հրատարակությունը կարևոր ներդրում է հայ գաղթօջախների ուսումնասիրման պատմության մեջ, առավել ևս, որ գրքի ծանրակշիռ մասը օտար հեղինակների ուսումնասիրություններ են:

Ժողովածուի հրատարակության մյուս կարևոր առանձնահատկությունն այն է, որ հայ և օտար ընթերցողին ներկայանում է ռուսերենով, այսինքն՝ ժողովածուն կարող է դառնալ գիտական ավելի լայն շրջանակների սեփականությունը՝ դրանով իսկ ընդլայնելով հետաքրքրությունը հայագիտության նկատմամբ:

Եվ վերջապես, ժողովածուն արդեն հրատարակված էր, երբ 2012 թ. օգոստոսին սառեցվեցին հայ-հունգարական դիվանագիտական հարաբերությունները՝ կապված Բուդապեշտում ՆԱՏՕ-ի դասընթացների ժամանակ հայ սպա Գուրգեն Մարգարյանի դաժանաբար սպանության համար դատապարտված և իր պատիժը կրող ազերի մարդասպանին Ադրբեջան արտահանձնման հետ: Այս ժողովածուի հոդվածագիր հունգար հայագետները, ակադեմիական և համալսարանական շրջանակների շատ գիտնականներ իրենց քաղաքացիական կեցվածքով և գիտական ողջ կարողությամբ բողոքի ձայն բարձրացրին սեփական կառավարության անարդարացի որոշման դեմ՝ իրենց բացահայտ աջակցությունը ցուցաբերելով հունգարահայ համայնքին և Հայաստանին:

ՄԱՆՈՒԿ ՖԵԼԵՔՅԱՆ

Յու. Ս. Ավետիսյան. – Արևմտահայ բանաստեղծների ստեղծագործական մշակումների լեզվաոճական վերլուծություններ. Պետրոս Դուրյան, Միսաք Մեծարենց, Դանիել Վարուժան, Երևան, «Զանգակ-97» հրատարակչություն, 2012, 120 էջ

Հայ գրողների ստեղծագործություններից քչերն են արժանացել տեքստաբանական ուսումնասիրության: Արևելահայ հեղինակներից բացառություն է Հովհ. Թումանյանի ստեղծագործությունը: Այլ հեղինակների պարագայում կան մի քանի հոդվածներ կամ մենագրությունների մեջ առանձին հատվածներ, ինչպես նաև նրանց երկերի ժողովածուներին կցված ծանոթագրություններում համառոտ տեղեկություններ մշակումների և տեքստային տարբերությունների մասին:

Յու. Ավետիսյանի՝ քննության առարկա ուսումնասիրությունը առաջին մենագրությունն է արևմտահայ բանաստեղծների ստեղծագործական աշխատանոցի (լաբորատորիայի) մասին: Ինչպես հեղինակն է նշում, «ստեղծագործական լաբորատորիայի բաղադրիչները խիստ բազմազան են՝ կենսական փաստ և մտահղացում, նյութի կուտակում և քննություն, ստեղծագործական ծրագիր, թեմատիկ ընդգրկում, դիպաշարի զարգացում, կառուցվածքային հնարքներ, կերպարների բյուրեղացում, առանձին դրվագների հապավում և հավելում, գեղարվեստական մտածողությունը պայմանավորող այլևայլ տարրեր: Այս բաղադրիչներից մեկն էլ տեքստի ստեղծագործական մշակման ընթացքում կատարված լեզվաոճական փոփոխություններն են՝ լեզվական միջոցների ընտրությունը» (էջ 3-4): Այդպիսի մշակումները հաճախ շատ կարևոր են ստեղծագործության բովանդակության հարստացման, ինչպես նաև լեզվական կատարելագործման առումով:

Հեղինակը օգտագործել է փաստագրական հարուստ նյութ: Երկերի վերջնական տեքստերը հնարավորության դեպքում համեմատված են ինքնագրերի հետ: Վերջիններիս պահպանված չլինելու դեպքում օգտագործված են պարբերական մամուլում կամ

այլուր տպագրված առաջին տարբերակները, տարընթերցումները, նամակներում կամ հոդվածներում եղած մեջբերումներն ու ակնարկները քննարկվող ստեղծագործության մասին:

Արևմտահայ գրողներից ամենից շատ հրատարակվել է **Պետրոս Դուրյանը**: Սակայն հենց նրա ստեղծագործությունն է առավելաբար ենթարկվել հետագա միջամտությունների, իսկ երբեմն էլ՝ ուղղակի աղավաղումների: Յու. Ավետիսյանը, համառոտ ներկայացնելով Դուրյանի չափածո գործերի ստեղծման պատմությունը, ինչպես նաև գնահատելով նախորդ հետազոտողների՝ հատկապես Ա. Չոպանյանի և Ա. Շարուրյանի աշխատանքը, կատարել է Դուրյանի բանաստեղծությունների տարբեր հրատարակությունների մանրակրկիտ համեմատություն՝ հիմնականում հենվելով պահպանված հեղինակային սրբագրումների վրա: Նշվում է, որ գրական-գեղարվեստական տևական և նպատակադիր աշխատանքը այնքան էլ հատուկ չի եղել Դուրյանի գեղարվեստական փորձին: «Եվ լեզվաոճական փոփոխությունները չեն, որ որոշում են նրա լավագույն գործերի գեղարվեստական մնայուն արժեքը, քանի որ դրանք մասնակի բնույթ են կրում, թեև ընդգրկում են ինչպես բառեր, արտահայտություններ, այնպես էլ խոսքային միավորներ՝ բառակապակցություններ, նախադասություններ» (էջ 18):

Առավել ուշագրավ են Դուրյանի զուտ ոճական-արտահայտչական սրբագրումները: Սրանք թեև արտահայտության ոլորտի երևույթներ են, սակայն սերտորեն առնչվում են նաև բովանդակային խնդիրներին: Այս փոփոխությունները, ինչպես նշում է Ավետիսյանը, հիմնականում գործում են ի նպաստ բանաստեղծի քերթվածը ավարտուն կատարելություն է ստանում: Փոփոխությունները երևան են հանում Պ. Դուրյանի գրական-լեզվաոճական կողմնորոշումները, գեղագիտական հայացքները: Հեղինակի կատարած միջամտությունները հիմնականում փոխաբերական բովանդակությունը հարստացնելու, փոխաբերություն ստեղծելու միտում ունեն: Այսպես, նախնական «Ըստվերի մեջ **մինակ** ու գատ՝ Ես **կը վախճամ** քեզ մոտելու» տարբերակը բանաստեղծը դարձրել է «Ըստվերի մեջ **մինակ** ու գատ՝ Ես **կը դողամ** քեզ մոտելու» (էջ 18): Փոխաբերական իմաստով բառի կիրառումը ուժեղ զգացմունքայնություն է հաղորդել պատկերին, մեծացրել է խոսքի հուզական հագեցվածությունը:

Ավետիսյանը անդրադարձել է նաև դուրյանական այն սրբագրումներին, որոնք նպատակ ունեն շտկելու բանաստեղծական «թեքնիկը»՝ տաղաչափական անհարթությունները:

Պ. Դուրյանի ստեղծագործական աշխատանոցը քննելով՝ հետազոտողը հանգում է այն եզրակացության, որ «...հեղինակային սրբագրությունների արդյունքում նրա [Պ. Դուրյանի] գեղարվեստական խոսքը ակնհայտորեն մշակվել ու կատարելագործվել է: Կատարված աշխատանքը վկայում է նաև հեղինակային շատ ուրուշակի կողմնորոշումների մասին. բառի փոխաբերական իմաստի ակտիվացումը, պատկերավոր մտածողության խորացումը, խոսքի սեղմության, ճշտության, բարեհնչյունության համար գործադրված աշխատանքը տարրերն են հեղինակի լեզվի ու ստեղծագործական անհատականության...» (էջ 40): Դրանք, իրավացիորեն նկատում է մենագրության հեղինակը, ժառանգորդաբար փոխանցվեցին 20-րդ դարասկզբի արևմտահայ բանաստեղծություն:

Միսաք Մեծարենցի ստեղծագործական աշխատանոցը ուսումնասիրելու համար հինք են ծառայել ինչպես հեղինակային ինքնագրերը, ժամանակի մանուկում լույս տեսած ոտանավորների տարբերակները, այնպես էլ մեծամասամբ նրա երկերի ակադեմիական լիակատար ժողովածուն:

Մ. Մեծարենցը եղել է խիստ պահանջկոտ, միշտ էլ մեծ նախանձախնդրությամբ է վերաբերվել բառի, տողի ընտրությանը: Պահպանվել են նրա մոտ երեք տասնյակ տաղերի զանազան տարբերակներ և խմբագրումներ: Սակայն նրա գլուխգործոցները, հաջողված գործերը քիչ են ենթարկվել մշակումների, ի սկզբանե ավարտուն, անբողջական գեղարվեստական պատկերներ են: Մեծարենցը տևականորեն խմբագրել, վերանշակել է հիմնականում «Ծիածան» ժողովածուն (մասամբ կամ լրիվ վերանայված է քսանվեց տաղ): Սրանք էլ դարձել են Ավետիսյանի ուսումնասիրության հիմնական առարկան:

Մ. Մեծարենցը իր բանաստեղծություններում կատարել է երկու կարգի՝ լեզվական և ոճական-արտահայտչական փոփոխություններ, որոնք Յու. Ավետիսյանը վերլուծել է դրանց բովանդակային-գաղափարական կողմին զուգահեռ: Բանաստեղծը գրաբարի և բարբառային-խոսակցական տարրերի գործածության խնդրում ելել է ոչ թե լեզվի կանոնակարգման սկզբունքներից (որոնք իր

ժամանակ արդեն հիմնականում նորմավորված էին), այլ նրա գեղարվեստական զարգացման ընդհանուր պահանջներից: Նա, ինչպես նշում է Ավետիսյանը, գրական լեզվի նորմավորման խնդիրները դիտարկում է գրական լեզվի գեղարվեստականացման տեսանկյունից. դիմելով գրաբարին և բարբառին՝ բանաստեղծը դրանք նկատում է որպես գեղարվեստական լեզուն հարստացնող տարրեր (էջ 51): Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հեղինակային մշակումներում գրաբարից կամ գրաբարածնկազմություններից աշխարհաբար փոփոխությունները հազվադեպ են, քանի որ Մեծարենցն ի սկզբանե հակված է եղել դեպի կենդանի գրական լեզուն: Այսպես, «Կենդանություն **կը զգենուն** դաշտ ու լեռներ» տողը դարձրել է «Կենդանություն **կը հագնին** դաշտ ու լեռներ», կամ՝ «**Թփուտքներու քղանցքին**» արտահայտությունը փոխել է աշխարհաբարյան ձևի՝ «**Մայր թուփերու քղանցքին**» և այլն: Հակառակ ուղղությամբ փոփոխություններ չեն արձանագրվել:

Ոճական-արտահայտչական փոփոխությունները խոսքին հաղորդում են շարժումի, ընթացքի իրական զգացողություն, նկարագրությունը դարձնում են ավելի պատկերավոր և հետևաբար առավել ազդու, երբեմն փոխում են ներընկալումների տրամադրությունը: Ինչպես՝ «Լույսի շող մը՝ զոր **կը սքողեն** անդուլ վարանքն ու կասկած» → «Լույսի շող մը՝ զոր **կը մարեն** անդուլ վարանքն ու կասկած», «Քեզի համար **տենչով** հյուսած երազանքնե՛րս իսկ կը խլեն» → «Քեզի համար **տենդով** հյուսած երազանքնե՛րս իսկ կը խլեն», «Կաթեցու՛ր հոգվույս մեջ **հույզը** կյանքին» → «Կաթեցու՛ր հոգվույս մեջ **հույսը** կյանքին» և այլն:

Մ. Մեծարենցի չափածոն հայ գրականության մեջ առանձնանում է իր ռիթմական ներդաշնակությամբ ու բազմազանությամբ: Բաղաձայնության և առձայնության բազում կատարյալ օրինակների կարելի է հանդիպել նրա լեզվում: Յու. Ավետիսյանը մանրակրկիտ վերլուծությամբ ցույց է տվել այն հնարքները, միջոցները (ավանդական և ոչ ավանդական), որոնք կիրառել է բանաստեղծը այդ կատարելությանը հասնելու համար:

Դանիել Վարուժանը միշտ էլ ձգտել է մշակելու և կատարելագործելու իր գեղարվեստական խոսքը, առանձնահատուկ խնամքով է վերաբերվել իր քերթվածքների լեզվին և բանաստեղծական ար-

վեստին: Վարուժանը դյուրությամբ չի ստեղծել իր երկերը: Դրանք տքնության, հաճախ չարչարանքի, համառունի պտուղներ են: Նույնիսկ ուժեղ տպավորության ազդեցությամբ, բուռն պոռթկումով, միանգամից ստեղծված երկերը նա հետագայում ենթարկել է մշակման և խմբագրումների:

Դ. Վարուժանի սրբագրումներում լեզվական իրողությունները համեմատաբար քիչ են և հիմնականում կատարված են հոգուտ «ամենամաքուր աշխարհաբարի»: Գրաբարյան բառերը, արտահայտությունները, քերականական ձևերը փոխարինված են նոր գրականի ձևերով. «Ո՞ւր պիտ' երթան: Երիկն արդեն **խոթավոր**» → «Ո՞ւր պիտ' երթան: Երիկն արդեն **հիվանդուտ**», «Ծնողքներու **անմեղ** մանկունքն անտերունչ» → «Ծնողքներու **հեգ** մանուկներն անտերունչ» և այլն: Նա նույն կերպ է վարվել նաև ընդգծված բարբառային երանգ ունեցող բառերի և արտահայտությունների հետ, ինչպես, ասենք, «Այդ **ճըռզած** սիրտն, այդ թույլ ճաճանչը դեղնած» → «Այդ **վըտիտ** սիրտն, այդ թույլ ճաճանչը դեղնած»: Հակառակ ուղղությամբ փոփոխությունները քիչ են և ունեն ոճական նպատակադրում. խոսքը դարձնում են առավել հանդիսավոր, երբեմն էլ՝ գրքային-վերամբարձ, ինչպես՝ «Ընկեր, **հագար** քղամիդդ և ցուպն առիր ճամբորդի» → «Ահա **ըզգեցար** քղամիդդ և ճամբորդի ցուպդ առիր»:

Մենագրության մեջ մանրամասն քննված, տեքստաբանական վերլուծության են ենթարկված Վարուժանի ինչպես վաղ շրջանի առաջին գրական փորձերը («Ծաղկեփունջ կամ Բրզնիկցիի մը նվագները»), այնպես էլ առավել հասուն ստեղծագործությունները («Կռվի երթը», «Մատնիչը», «Վիրավորը», «Կարմիր հողը», «Նեմեսիս», «Մարած օճախ», նաև՝ «Արմենուհին», «Ջարդը» և այլն): Այս ամենը Ավետիսյանը կատարել է Դ. Վարուժանի գեղագիտական հայացքների և սկզբունքների վերլուծությամբ զուգահեռ: «Վարուժանական խմբագրումները աշխուժացնում են պատկերի ներքին շարժումը. բառի կամ արտահայտության նորացումը խոսքին հաղորդում են գործողության զգացողություն, դրամատիզմ, անշարժ առարկաները դրվում են շարժման մեջ, ստեղծվում է հոգեկան շարժման տրամադրություն, որ ինքնին ժամանակի գեղարվեստական զարգացման բնորոշ գիծն էր» (էջ 103): Այսպես, նախնական «Միսի գըրգռիչ ախորժակեն կանչը-

ված Կը հավաքվին **խումբ առ խումբ**, ոռնածայն...» փոխված է «Միսի գրրգռիչ ախորժակեն կանչըված Կը հավաքվին **ոհմակ ոհմակ** ոռնածայն...»: «Ձարղը» պոեմից վերցված այս երկտողուն թուրք գազանի բուն էությունը ավելի իրական ու համոզիչ է արտահայտում **ոհմակ** բառը, քան թե նրա **խումբ** չեզոք հոմանիշը:

Յու. Ավետիսյանը իր աշխատության մեջ, հենվելով արխիվային նյութերի, հեղինակային ինքնագրերի վրա, կատարել է նաև որոշ բնագրային ճշտումներ՝ համեմատությամբ Դ. Վարուժանի երկերի լիակատար ժողովածուի, ինչպես, օրինակ՝ «Ձոն» բանաստեղծության վերլուծությունը (էջ 74, 109-111):

Ինչ խոսք, յուրաքանչյուր աշխատանքում էլ կարելի է նկատել վրիպումներ կամ բացթողումներ, սակայն խնդրո առարկա ուսումնասիրության մեջ դրանք գործնականում չկան: Եղածներն էլ ավելի շուտ վերլուծության մոտեցման կամ գեղագիտական ըմբռումների տարբերության արդյունք են: Այսպես, մեզ թվում է, որ հետևյալ խմբագրման մեջ առավել հաջողված և ազդեցիկ է նախնական տարբերակը, մինչդեռ հեղինակը հակառակ կարծիքի է. «Բայց **սև ձեռքեր, մատնիչ շուրթեր** չեն կրնար...» → «Բայց **սև հոգիք ու սև ծանկեր** չեն կրնար...»:

Հեղինակին հաջողվել է նկատել և բացահայտել Մ. Մեծարենցի, Դ. Վարուժանի, ինչպես նաև Սիամանթոյի և այլոց հեղինակային մշակումների շատ դրսևորումների մոտ կամ միևնույն միտումները, համընկնումները: Սա պայմանավորված է անցյալ դարասկզբի գեղարվեստական մտքի զարգացման ընդհանուր միտումներով: «Դրանք,- գրում է Յու. Ավետիսյանը, - պայմանավորված են ժամանակի գեղարվեստական մտածողության առարկայական (օբյեկտիվ) ընդհանրություններով՝ պատկերավոր մտածողության խորացում, խոսքի սեղմություն, գեղարվեստական ճշմարտացիություն, ճշտություն, բարեհնչյունություն և այլն» (էջ 5): Իհարկե, սրանք կրում են նաև հեղինակների անհատական մտածողության դրոշմը:

Յուրի Ավետիսյանի այս մենագրությունը մեծապես նպաստում է արևմտահայ երեք մեծ բանաստեղծների գեղարվեստական մտածողության յուրահատկությունների բացահայտմանը, ճշգրտում է որոշ երկերի ստեղծագործական պատմությունը: Բացահայտված են հիշյալ բանաստեղծների աշխարհընկալման նոր, երբեմն անակնկալ որակներ ու սկզբունքներ:

ՅՈՎՅԱՆՆԵՍ ԵՂՈՅԵԱՆ

Գէորգ Աճէմեանի գրական նոր, շնորհալի մուտքը

Խաչատուր Աբովեանի անուան հայկական պետական մանկավարժական համալսարանի «Սփիւռք» գիտաուսումնական կենտրոնը կրթական յանձնառութիւնների կողքին գրական հանրութեանը հրամցնում է հիմնականում արեւմտահայ գեղարուեստական արժէքների բազմապիսի հարուստ, երփներանգ ընտրանի: Նրա շնորհիւ նոր հրատարակումներով հայրենական ընթերցողին են ներկայացվել Վահան Թէքեանը, Վարուժան Աճէմեանը, Պետրոս Յաճեանը, Ռոպէր Յատտեճեանը, Զարեհ Խրախունին, Վազգէն Շուշանեանը եւ ուրիշներ: 2011-ին Կենտրոնի տնօրէն Ս. Դանիէլեանը հրապարակ իջեցրեց սփիւռքահայ գրականութեան պատմութեան նախատեսուած գիտական երեք հատորներից առաջինը՝ «Միջուկի տրոհումը» խորագրով:

«Գասպրիմս» հրատարակչութիւնը 2012 թ. աշնանը հաճելի նուէր մատուցեց սփիւռքահայ գրականութեան սիրահարներին՝ լույս ընծայելով արեւմտահայ խմբագիր եւ խոշոր արձակագիր Գէորգ Աճէմեանի (Լիբանան) «Գեղարուեստական երկեր» երկհատորեակը՝ գրողի այրու՝ Վերա Աճէմեանի եւ Աճէմեան ընտանիքի հովանաւորութեամբ եւ «Սփիւռք» գիտաուսումնական կենտրոնի աջակցությամբ:

Արդէն անցեալ տարուայ դեկտեմբերի 27-ին՝ գրքերի ընծայումից օրեր անց, Հայաստանի գրողների միութիւնը մեծ դահլիճում կազմակերպեց երկու ստուար գրքերի շնորհանդէտը, որին մասնակցում էր հայրենի եւ սփիւռքահայ մտաւորական սերունդը՝ գրողներ, գրականագէտներ, լեզուաբաններ, ուսուցիչներ եւ ուսանողներ:

Սուրէն Դանիէլեանի հանգամանալից առաջաբանով լոյս տեսած երկհատորեակի նիւթերը կազմուած են ժամանակագրական կարգով: Առաջին հատորում տեղ են գտել «Անկարելի պատմութիւն», «Օրերէն ետք», «Անապահովութեան փողոցներ», «Պիտի չարչարեն բառերը» պատմուածքների ժողովածուներն ու «Անորոշութեամբ եւ մասամբ նորին» վիպակը, երկրորդում ամփո-

փուլած են «Ակամայ ծաղրածուն եւ այլ դերասաններ», «Յաւեր-
ժական ճանապարհ», «Ապագայի հետքերով» եւ «Սիրային մեղե-
դիներ» լայն կտաւի գործերը:

Եւ ի՞նչ է, դեռեւս 1968-ին Հայաստանում «Անապահովութեան փո-
ղոցներ» խորագրով ծաղկաբաղ էր տպագրուել, սակայն այն գրո-
ղի ստեղծագործութեան մի մասն էր ներկայացնում միայն, այն, որ
«վտանգ» չէր պարունակում խորհրդային հասարակարգի համար:

Գեորգ Աճեմեանն այն եզակի հայ մտաւորականներից էր, որոնց
հաւասարապէս մտահոգում էին ոչ միայն սփիւռքահայութեան
առաջ ծառայած կեցութեան առօրեան, յոյզերը, այլ նաեւ հայրե-
նիքի ճակատագիրը՝ լայն առումով: Նա իր ստեղծագործութիւնն
այսպէս է բնորոշել. «Մեր ժամանակին, հայուն եւ գաղթականին
գրականութիւնն է այս: Հայուն, որ հակառակ արտասահմանի մէջ
սպրելուն կը հաւատայ իր հայրենիքին եւ սակայն չ'ըլլար գերին
քաղաքական որեւէ տեսակէտի»¹: Խորհրդային հայրենիքը
առանձնապէս չանսաց Գ. Աճեմեանի գաղափարական մօտեցում-
ների: Գրող լինելուց զատ՝ վերջինս նաեւ ականաւոր ազգային
գործիչ էր, Հայ դատի պաշտպան ԱՍԱԼԱ-ի ակունքներում կանգ-
նած: Բնականաբար ազգի ճակատագրով մտահոգ գրողն ու քա-
ղաքական գործիչը ազգայնամոլ ու անհարազատ պիտի ճանա-
չուէր Խորհրդային Հայաստանում, ինչպէս ժամանակին՝ Ե. Զա-
րեմցը, Ա. Բակունցը, Լեռ Կամսարը, Վ. Արամեանը, Մ. Արմէնը, Գ.
Մահարին եւ շատ ուրիշներ:

Գ. Աճեմեանը հայ գրական անդաստան մուտք գործեց 24 տարե-
կանում եւ միանգամից լուրջ յայտ ներկայացրեց իր «Անկարելի
պատմութիւն» պատմութեան քննարկների ժողովածուով: Նրա ստեղծա-
գործութեան ուսումնասիրութիւնը մեզ հնարաւորութիւն է տալիս
որսալու շուշանեանական քնարականութիւն ու շահնուրեան
ընդվզում, իսկ անգլիագիր ստեղծագործութիւններում նկատում
ենք Լեւոն-Զաւէն Սիւրմէլեանի հետ հոգեկցութիւն: Այս դէպքում
արդէն մեր առջեւ արձակագրի երկուութիւնն է, ինչն ընդօժել է Ս.
Դանիէլեանը. «Կարելի է ասել, որ Գ. Աճեմեանը երկատուած է եր-
կու պահանջների միջեւ. առաջինը տանում է ներքին սպառման,
ինչը կոչում ենք «ժամանակաւոր» հանգրուան, երկրորդի շնոր-
հիւ ազատում ենք ազգային գաղափարական մաշող հանդերձ-

¹ Գեորգ Աճեմեան, Գեղարուեստական երկեր, Ա. հատոր, Եր., 2012, էջ 15:

ներից՝ ձգտելով ստանալ գրական նիւթերի մշակման ուղեգիր: Ի՞նչ պիտի անի Գ. Աճեմեանը «յաւերժութեան ճանապարհի» նոր ուղեգիրը առանց հայ հոգու գեղարուեստական խորունկ ճանաչողութեան: Հրապուրիչ է թուում այն, բայց ընթերցողին տանում է գրական տրորուած ճանապարհներով: Ահա՛ տազնապաների իրական աւագանը»²:

Սակայն ուզում ենք աւելացնել, որ երկատուածութեամբ հանդերձ՝ Գ. Աճեմեանը սփիւռքահայ գրականութեան մէջ որոշակի փիլիսոփայական համակարգ մշակած գրողներից է, եւ հենց փիլիսոփայական տեսանկիւնից էլ նա ներկայացնում է մարդուն. հետաքրքիր է ոչ երկրորդական մի հանգամանք. նրա հերոսները հիմնականում մտաւորականներ են, որոնք իրենց ուսերին են տանում Սփիւռքում հայութեան պահպանութեան հիմնախնդիրները, որոնք դատապարտուած են օրուայ հաց վաստակելու, սակայն չեն կորցնում յոյսը, պայքարում են՝ միաժամանակ արժեւորելով կեանքն ու սէրը: Գեորգ Աճեմեան արուեստագետի համար՝ «Գրագետին հոգին այն հայելին [է], ուր ան կը տեսնէ մարդոց կեանքը՝ ցոլացած անոր մէջ, ու այդ հայելիին խորքով է, որ կը դատէ իր մօտեցումը կեանքին հանդէպ: Իր անձը այն կամուրջն է, որ կը տանի զինք ուրիշ անձերու, պէտք է որ անցնի այդ կամուրջէն կարենալ տեսնելու համար **մարդուն** կեանքը, եւ այդ դիտուած իր հոգիին պրիսմակէն: ...Եւ ուրեմն նոյնիսկ երբ կը գրեն երկրորդ կամ երրորդ դէմքով, ընթերցողը թող չտատանասի՝ գտնելու հոն զիս, որովհետեւ սխալած պիտի չըլլայ երբեք: Սակայն պիտի գտնէ մասն մարդը՝ զիս, ինքզինք եւ երրորդ մը»³: Ինքնախոստովանութիւնը հիմք է տալիս մտածելու, որ Գ. Աճեմեանի ստեղծագործութիւնը, գրականութիւնը լինելուց զատ, ինքնակենսագրութիւն է:

Գ. Աճեմեանը կարողացաւ դուրս գալ սփիւռքահայ մտաւորականին պարտադրուած սահմաններից ու սխեմատիկ կառուցուածքներից, մի կողմ նետել «ակամայ ծաղրածուի» դիմակը եւ ներկայացնել իր սերնդի իրական կեանքը. «...Ես կը հաւատամ կեանքի ճշմարտութեան, զոր կը փորձեն տալ իմ գրականութեանս մէջ, եւ ատկէ անդին կ'ուրանամ բոլոր վճիռները»⁴: Այդ կեանքի ճշմարտացիութիւնն առաւել ցայտուն է երեւում «Յաւերժական ճանա-

² Նուն տեղում, տես **Սուրեն Դանիէլեանի** «Ճշմարտի ու գեղեցիկի փնտռուածքը

Գեորգ Աճեմեանի արձակում»:

³ Նոյն տեղում, էջ 16:

⁴ Նոյն տեղում, էջ 15:

պարի» վէպում, ճանապարհ, որ սկսուում է դարասկզբի տեղահանութիւններից ու գաղթից ու կարծես վերջ չունի:

Գրականագիտութեան մէջ յաճախ է նշուում, որ մեզանում բաւարար գեղարուեստական անդրադարձ չի եղել ստալինեան ժամանակաշրջանի իրադարձութիւններին, բացի մի քանի յայտնի օրինակներից՝ *Գուրգէն Մահարի, Մկրտիչ Արմէն, Վ. Արամեան: Ահա Գ. Աճէմեանի «Յաւերժական ճանապարհ»* վէպը գալիս է մասամբ լրացնելու այս բացը՝ աւելի ամբողջական պատկերացում կազմելով անցեալ դարի երեսնական թուականների իրադարձութիւնների մասին: Այս վէպով Գ. Աճէմեանը յաւակնում է լինելու հայութեանը պարտադրուած աքսորի ու ստալինեան ճամբարների նորոգ «կենդանագիրը», որի «ուշանալ»-ը գրականութեան պատմութեան մէջ այս դէպքում մեր մեղքն է:

Հայութեան երկու հատուածների միասնականութեան գաղափարն է դրուած *«Անապահովութեան փողոցներ»* եւ *«Ցաւոյ տանեն»* պատմուածքներում: Հեղինակի ուշադրութեան կենտրոնում սփիւռքահայի տագնապներն են, Սփիւռք-Հայաստան ոչ միանշանակ ու բարդ յարաբերութիւնների խճանկարը: Նախկինում այսպիսի փորձ արել էր Անդրանիկ Ծառուկեանը, որը, ի պատասխան Գէորգ Աբովի յօդուածի, արեւելահայերէնով գրեց *«Թուղթ առ Հայաստան»* պօեմը՝ իրբել եղբայրութեան արդար խորհրդի կոչ՝ ուղղուած արեւելահայ հայրենակիցներին: Գ. Աճէմեանն էլ պատասխանում է իր արեւելահայ եղբայրներին՝ ընդ որում, դարձեալ որպէս դիմելածեւ, արեւելահայ արտայայտութիւններ են մէջբերուում. *«ախպէր ջան, ընկեր ջան»*: Սա պատահական չէ, գրողն աւելի մտերմիկ ու առօրեական է դարձնում երկխօսութիւնը:

Սա, ի հարկէ, իրաւունք է տալիս ասելու, որ Գէորգ Աճէմեանի գրականութիւնն ուղեկցել է մեզ անկախութեան կերտումի տեւական դժուարին ճանապարհին: Գիշդ է, գրական հասարակութեանը համեմատաբար քիչ է յայտնի լիբանանահայ արծակագրի անունը, սակայն համոզուած ենք, որ Գ. Աճէմեանը հայրենիքում արագ կը վերագտնի իր ընթերցողին, քանի որ նա գրապատմական գեղարուեստական բարձր մակարդակ ապահոված արուեստագէտ է:

Նրա մահից անցած տասնհինգ տարիները ոչ թէ հեռացրել, այլ աւելի մօտեցրել են մեզ գրողի ազգային խորաշերտ ստեղծագործական աշխարհին:

ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ

1. **Հրանուշ Հակոբյան** – ՀՀ սփյուռքի նախարար, իրավ. գիտ. դոկտոր
էլ. հասցե՝ mimistry@mindiaspora.am
2. **Փոլ Հայտոսթյան** – աստվածաբանության դոկտոր, Բեյրութի Հայկազյան համալսարանի նախագահ
էլ. հասցե՝ Paul.Haidostyan@haigazian.edu.lb
3. **Արամ Սինոնյան** – ԵՊՀ ռեկտոր, պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ
էլ. հասցե՝ info@ysu.am
4. **Ռազմիկ Փանոսյան** – քաղաքական գիտ. դոկտոր
էլ. հասցե՝ rpanossian@yahoo.co.uk
5. **Անդրանիկ Տազեսյան** – քաղաքական գիտ. դոկտոր, «Հայկազյան հայագիտական հանդես»-ի պատասխանատու քարտուղար, Հայկազյան համալսարանի «Հայկական սփյուռք» կենտրոնի տնօրեն
էլ. հասցե՝ antranig.dakessian@haigazian.edu.lb
6. **Շահան Գանտահարյան** – «Ազդակ» օրաթերթի գլխավոր խմբագիր
էլ. հասցե՝ shahank@hotmail.com
7. **Արտա Էքմեքժի** – հնագիտության դոկտոր, Հայկազյան համալսարանի Արվեստների և գիտության բաժանմունքների տեսուչ
էլ. հասցե՝ ARDA.EKMEKJI@haigazian.edu.lb
8. **Յուրի Ավետիսյան** – ԵՊՀ սփյուռքագիտության ամբիոնի վարիչ, բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
էլ. հասցե՝ spyurq2009@yahoo.com
9. **Էդուարդ Մելքոնյան** – ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող, պատմ. գիտ. դոկտ.
էլ. հասցե՝ meled@yandex.ru
10. **Սերժ Սրապիոնյան** – ԵՊՀ հայ գրականության ամբիոնի դոցենտ, բան. գիտ. թեկնածու

11. **Սհեր Յովհաննիսյան** – ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի վիրտուալ հայագիտության և տեղեկատվության բաժնի վարիչ, պատմ. գիտ. թեկնածու
Էլ. հասցե՝ mh@armin.am
12. **Արծրուն Ավագյան** – ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի դեկան, բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
Էլ. հասցե՝ a.avagyan@ysu.am
13. **Վազգեն Գաբրիելյան** – ԵՊՀ հայ նորագույն գրականության ամբիոնի վարիչ, բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
14. **Արման Եղիազարյան** – ՀՀ սփյուռքի նախարարության հայրենադարձության և հետազոտությունների վարչության պետ, պատմ. գիտ. դոկտոր
Էլ. հասցե՝ armyegh@yahoo.com
15. **Համազասպ Դանիելյան** – ԵՊՀ սփյուռքագիտության ամբիոնի դասախոս, քաղաք. գիտ. թեկնածու
Էլ. հասցե՝ hdanielyan@ysu.am
16. **Արմեն Մարության** – ՀՀ ԳԱԱ պատմության Հայկական հարցի և Հայոց ցեղասպան. պատմության բաժնի վարիչ, պատմ. գիտ. թեկնածու
Էլ. հասցե՝ mararmts@yahoo.com
17. **Յովհաննես Ալեքսանյան** – ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտաշխատող, պատմ. գիտ. թեկնածու
Էլ. հասցե՝ alhs@mail.ru
18. **Հայկ Ենգիբարյան** – ԵՊՀ սփյուռքագիտության ամբիոնի հայցորդ
Էլ. հասցե՝ haykengibaryan@gmail.com
19. **Հասմիկ Եսայան** – ԵՊՀ սփյուռքագիտության ամբիոնի հայցորդ
Էլ. հասցե՝ hasmiktk@yahoo.com
20. **Մանուկ Ֆելեքյան** – ԵՊՀ սփյուռքագիտության ամբիոնի դասախոս, բան. գիտ. թեկնածու
Էլ. հասցե՝ manukfeleqyan@gmail.com
21. **Էդիկ Գևորգյան** – ԵՊՄՀ պատմության և իրավագիտության ֆակուլտետի դեկան, պատմ. գիտ. թեկնածու
Էլ. հասցե՝ jurhistfac@armspu.am
22. **Յովհաննես Եղոյան** – ԵՊՄՀ «Սփյուռք» կենտրոնի մեթոդիստ
Էլ. հասցե՝ spurksd@spurk-center.am

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու խոսք 3

1. ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ-ՍՓՅՈՒՌՔ ԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ. ԵՐԵՎ, ԱՅՍՕՐ ԵՎ ՎԱՂՆ

(ՀՀ անկախության 20-ամյակին և Հայկազյան համալսարանի
55-ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր)

Ողջույնի խոսք 6

Հրանուշ Հակոբյան

ՀՀ-Սփյուռք գործակցության զարգացման պետական քաղաքականության
հիմնախնդիրները 11

Ռազմիկ Փանոսեան

Տեսական հայեցակարգ հայրենիք-սփիւռք յարաբերութիւններու.
հետեւութիւններ, նկատողութիւններ եւ առաջարկներ 31

Անդրանիկ Տազեսեան

Հայաստանցի հարսերու համարկունը լիբանահայութեան 44

Շահան Գանտահարեան

Սփիւռքահայ մամուլի դիմագրաւած հիմնախնդիրները` ՀՀ-Սփիւռք
տեղեկատուական ծիրին մէջ. լիբանանեան կտրուածքով 76

Յուրի Ավետիսյան

Սփյուռքին առնչվող գիտակրթական կառույցները Հայաստանում 87

Էդուարդ Մելքոնյան

Հայաստանի երրորդ Հանրապետության և Սփյուռքի
քաղաքական փոխհարաբերությունների հարցի շուրջ 102

Սերժ Սրապիոնյան

Լիբանանահայ գրականությունը սփյուռքահայ գրականության
համապատկերում 123

Միեր Հովհաննիսյան

Համացանցի հայագիտական ռեսուրսները Հայաստան-Սփյուռք
գիտակրթական գործակցության համատեքստում 142

2. ՀՈՂՎԱԾՆԵՐ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արժրուն Ավագյան

Հայ գրականության պատմամշակութային և ազգային արժեքը 152

Վազգեն Գաբրիելյան

Վահան Թեքեյանի սիրո համասփռումի շառավիղները..... 167

Արման Եղիազարյան

Վահան Տերյանի «Հոգևոր Հայաստան»-ի տեսլականը և սփյուռքյան
«Հոգևոր Հայաստան»-ը 180

Համազասպ Դանիելյան

Արտասահմանում գտնվողների ընտրական մասնակցության խնդիրը և
իրականացման եղանակները Հայաստանում 193

Արմեն Մարության

Հայաստան-Սփյուռք համագործակցության հիմնախնդիրները
Հայոց ցեղասպանության հետևանքները հաղթահարելու
գործընթացում 216

Հովհաննես Ալեքսանյան

Հայ ազգաբնակչության թվաքանակն ու տեղաբաշխումը Ուկրաինայի և
Բելոռուսիայի ԽՍՀ-ներում 228

Հայկ Ենգիբարյան

Քեսապի հայոց կաթողիկե համայնքի պատմության համառոտ ակնարկ..... 238

Հասմիկ Եսայան

Հայերի գյուղատնտեսական գործունեությունը Ֆրեզոնոյում
(XIX դ. վերջից XX դ. սկիզբ)..... 248

3. ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մանուկ Ֆելեքյան

Ռ. Կ. Սաքապետոյեան. – Արևմտահայերեն – արևելահայերեն նոր
բառարան..... 263

Յուրի Ավետիսյան

Հայկազեան հայագիտական հանդես. հատոր LP. 268

Էդիկ Գևորգյան

Հայ-ուկրաինական, հունգարական և մոլդովական հարաբերությունների պատմությունից (Հոդվածների և նյութերի ժողովածու)278

Մանուկ Ֆելեքյան

Յու. Ս. Ավետիսյան. – Արևմտահայ բանաստեղծների ստեղծագործական մշակումների լեզվաոճական վերլուծություններ. Պետրոս Դուրյան, Միսաք Մեծարենց, Դանիել Վարուժան283

Յովհաննէս Եղոյեան

Գեորգ Աճէմեանի գրական նոր, շոնդալի մուտքը289

Հեղինակների մասին տվյալներ 293

**ՄՓՅՈՒՌՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
ՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ**

Տ Ա Ր Ե Գ Ի Ր Ք

Համակարգչային ձևավորումը՝ **Լ.Ս. ՄԱՐԳՍՅԱՆԻ
Ն.Օ. ԽՆԿԻԿՅԱՆԻ**

Ստորագրված է տպագրության 11.02.2013 թ.:
Չափսը՝ 60x84¹/₁₆: 18.75 տպագր. մամուլ
Տպաքանակ՝ 500: Պատվեր՝ 20:

ԵՊՀ հրատարակչություն, Երևան, Ալ. Մանուկյան 1:

Երևանի պետական համալսարանի
օպերատիվ պոլիգրաֆիայի ստորաբաժանում
Երևան, Ալ. Մանուկյան 1: